ՀԱՅԵՐԻ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

ԵՐԵՎԱՆ


ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ГЕНОЦИД АРМЯН

ПО ДОКУМЕНТАМ СУДЕБНОГО ПРОЦЕССА МЛАДОТУРОК

Предисловие, перевод и комментарии
А. А. ПАПАЗЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1989

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ДУБЛЕТ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները
Ա. Հ. ՓԱՓԱԶՅԱՆԻ

А-II 78376

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1989

ԳՄԴ 63. 3(2Հ)
Հ 249

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր Ռ. Գ. Սահակյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Ե. Ղ. Սարգսյանը
և պատմական գիտությունների թեկնածու Ռ. Պ. Կոնդակչյանը

Հ 249 Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի/ՀՍՍՀ ԳԱ. Արևելագիտ. ինստ.: Առաջաբանը, թարգմ. և ծանոթագր. Ա. Հ. Փափազյանի; [Պատ. խմբ.՝ Ռ. Գ. Սահակյան].—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989.—256 էջ.

Գրքում հայերեն թարգմանությամբ տրված են 1919 թ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցած երիտթուրքական կուսակցության ղեկավար գործիչների դատավարության այն փաստաթղթերը, որոնք առնչվում են արևմտահայերի զանգվածային տեղահանության ու ջարդերի հետ։ Նյութերը վերցված են 1919—1920 թթ. Կ. Պոլսում հրատարակվող «Թաքվիմ-ի վեքայի» թուրքական պաշտոնաթերթից։ Առաջին անգամ հրապարակվող փաստաթղթերի այս ամբողջությունը, ի թիվս այլ վավերագրերի անհերքելիորեն վկայում է երիտթուրքական կուսակցության կենտկոմի ու կառավարության կողմից ծրագրված հայերի ցեղասպանության փաստը, որն այսօր փորձում են ժխտել թուրք պետական գործիչներն ու պատմաբանները։

Նախատեսվում է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար։

0505040000
Հ ———————— 34—88
103(02)—89

ԳՄԴ 63 3(2Հ)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն 1989

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դաժան ճակատագիր էր վիճակված արևմտահայությանը։ 1915—1916 թթ. երիտթուրքական կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության հետևանքով արևմտահայությունը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջև։

Զանգվածային տեղահանություններն ու կոտորածները Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև Փոքր Ասիայի տարածքում գտնվող հայաբնակ վայրերում, չէին առնչվում ռազմական նկատառումներով կատարվող միջոցառումների հետ, քանի որ հայության բնաջնջման հարցը նախօրոք մշակված և որոշված էր «Իթթիհատ վե Թերաքքի»[1] (Միություն և առաջադիմություն) կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից։ Հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արևմտահայությունը իսպառ բնաջնջելու ճանապարհը։ Պատերազմը պատեհ առիթ հանդիսացավ, որպեսզի նրանք ոչընչացնեն ոչ միայն հայերին, այլև հաշվեհարդար տեսնեին քրիստոնյա մյուս ժողովուրդների հետ[2]։

«Ամենուրեք սկսեցին հավաքել հայերին,—գրում է երիտթուրքական գործիչներից Մեվլան Զադե Ռիֆաթը,—նույնիսկ առանց հաշվի առնելու հիվանդներին, ծերերին ու երեխաներին։ Նրանց, ովքեր ընդունում էին մահմեդականություն, ժամանակավորապես դուրս էին հանում քարավաններից, իսկ մյուսներին խմբերով, ժանդարմների հսկողության ներքո ուղարկում էին նախատեսված ճանապարհներով»[3]։ Այնուհետև այդ անզեն ու անպաշտպան քաթավանները մարդկանց տեսողությունից հեռու, ամայի վայրերում ենթարկվում էին հայերի բնաջնջման նպատակով ստեղծված «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի (Հատուկ կազմակերպություն) հրոսակախմբերի հարձակմանը։ Իսկ հրաշքով ազատվածները, քաղցից և ծարավից ծայրաստիճան հյուծված և ոսկրացած ուրվականների նման հայտնվում էին Միջագետքի և Սիրիայի անապատներում։

Արևմտահայության զանգվածային բռնագաղթի ու գազանային կոտորածների լուրը շուտով տարածվեց ամբողջ աշխարհով մեկ՝ ամենուրեք առաջացնելով բուռն զայրույթ ու բողոք։ Առաջադեմ մարդկության ներկայացուցիչները, առանձին կազմակերպություններ դատապարտում էին երիտթուրքերի գործադրած բարբարոսային ցեղասպանության քաղաքականությունը և պահանջում անհապաղ դադարեցնել այն, տարագրված հայերին վերադարձնել իրենց բնակավայրերը։ 1915 թ. մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները համատեղ նախազգուշացրին Բարձրագույն Դռանը, հայտարարելով հետևյալը.

«Ամբողջ վերջին ամսվա ընթացքում Հայաստանում տեղի են ունենում հայկական կոտորածներ՝ քրդերի ու թուրքերի կողմից, օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ։ Նոր տոմարով ապրիլի կեսերին հայկական կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում։ Վանի շրջակա հարյուրավոր գյուղերի բնակիչները մորթվել են մինչև վերջին մարդը։ Բուն Վանում հայկական թաղամասը պաշարման մեջ են առել քրդերը։ Միևնույն ժամանակ, Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը ձերբակալում և աններևակայելի ճնշումների է ենթարկում հայ ազգաբնակչությանը։ Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կատարած այս նոր հանցագործությունները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները այսու հրապարակավ հայտարարում են Բարձրագույն Դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա՝ տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածին»[4]։

Երիտթուրքերի կառավարությունը, սակայն, անողոք դաժանությամբ շարունակեց իրականացնել իր որդեգրած քաղաքականությունը, որի զոհը դարձան ավելի քան մեկուկես միլիոն հայեր։

Արևմտահայության բնաջնջման ծրագիրը խարսխված էր նախորդ ժամանակներում սուլթանական Թուրքիայի գործադրած ջարդարարական քաղաքականության վրա։ 1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո, երբ Հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային ու կրոնական հալածանքները, կյանքի ու գույքի անապահովությունը, հարկային ծանր լուծն ու գավառային պաշ-

տոնյանների չարաշահումներն ավելի մեծ չափերի հասան։ «Ախտ հրկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները։ Այդ պահից սովորական երևույթ դարձավ աքսորը։ Կուսակալների կողմից քննության առնվեցին հայոց եկեղեցիների և դպրոցների մասին տրված հրովարտակները։ Վերջին տարիների ընթացքում փակվեցին այն հայկական դպրոցները, որոնք բացվել էին ոչ թե հրովարտակով, այլ միայն կառավարության թույլտվությամբ։ Խստություններ ու բռնություններ գործադրվեցին նաև հարկերի գանձման հարցում»[5],—գրում է թուրք գործիչ Օսման Նուրին։ Հրահանգ տրվեց մամուլի գրաքննչական վարչությանը՝ արգելել «Հայաստան» բառի, հայ ժողովրդի պատմությանը և աշխարհագրությանը վերաբերող անունների հիշատակումը[6]։

Այդ նույն թվականին Օսմանյան կայսրության մեծ վեզիր Հայատյաց Քյամիլ փաշան ցինիկաբար հայտարարում էր. «Հայ ազգը վերացնելու, անհետ և անճետ ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիլ մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք՝ բուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ, կրոնական պատերազմ մը կը հրապարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք զենք էլ ունինք, զինվորություն էլ, աշխարհիս ամենամեծ տերություններերեն մեկը (Անգլիան — Ա. Փ.) և ամենեն հարուստը մեզ զինակից է և մեր Ասիական աշխարհին երաշխավոր։ Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպա կրոնակից մը փնտրե և չի գտնե տաճկական Ասիո մեջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կը զբաղինք ներքին գործերով և բարեկարգությամբ[7]»։ Քյամիլ փաշայի այս նենգ մտահղացումը իրոք որ դարձավ արևմտահայության բնաջնջման հարցում թուրքական պետական քաղաքականության առանցքը։

1890-ական թվականներին Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ կազմակերպվեցին հիմնականում քրդերից կազմված «Համիդիե» անկանոն զորագնդերը, որոնց գլխավոր նպատակներից մեկն էր հալածել ու կոտորել հայ բնակչությանը։ Քաղաքային և զինվորական իշխանությունների տված հրահանգներով այդ գնդերը հարձակվում էին գյուղերի վրա։ Գյուղերն այրվում էին, ժողովուրդը կոտորվում էր[8]։

1894—1896 թթ. Սասունում և հարակից հայաբնակ նահանգներում, ինչպես նաև Ստամբուլում տեղի ունեցան սոսկալի կոտորածներ, որոնք

Նույնիսկ թուրք գործիչներ Օսման Նուրիի և Սադրկ Շահիդի կողմից բնութագրվեցին որպես «ահարկու եղեռն մարդկության դեմ»[9]։

Հայերին զանգվածաբար բնաջնջելով և նրանց թիվը արհեստականորեն նվազեցնելով՝ թուրքական կառավարությունը ձգտում էր ազատվել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից, և ընդհանրապես բարենորոգումների պարտադրված ծրագրերից։

Մինչև համիդյան բռնապետության տապալումը երիտթուրքերը աշխատում էին ոչ թուրք ժողովուրդներին ներշնչել այն միտքը, որ 1876 թ. սահմանադրության վերահաստատումով կվերանա ազգային խտրականությունը, և բոլոր հպատակները հավասար կլինեն օրենքի առջև։ Մինչդեռ, 1909 թ. իշխանության գլուխ անցնելուց հետո, երիտթուրքերը ոչ միայն մոռացան իրենց տված խոստումները, այլև ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նկատմամբ տրամադրվեցին բացահայտ թշնամանքով։

Երիտթուրքական գաղափարախոսները ամեն կերպ փորձում էին միաձուլել Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին մեկ «օսմանյան ազգության» մեջ, որը իրականում զրկում էր ոչ թուրք ժողովուրդներին ազգային ինքնորոշման արդարացի իրավունքից։ Երիտթուրքերի ղեկավարները հետևողականորեն ջատագովում էին «օսմանիզմի» գաղափարախոսությունը, այն է, որ Օսմանյան կայսրությունում բացի օսմանյան ազգից ուրիշ ազգություններ չկան, կայսրությունում մեկ ազգ կա՝ օսմանցի ազգը։ Ջելալ Նուրին հպատակ ժողովուրդներից բացահայտորեն պահանջում էր հաշտվել իրենց իրավազուրկ վիճակի հետ և հրաժարվել ազգային ինքնորոշման ձգտումներից. հայերը, արաբները, քրդերը, ալբանացիները չպետք է պայքարեին իրենց ազատագրության համար, քանի որ կայսրությունում տիրապետող կարգերը առաջավոր ու իդեալական են։ Նա ամեն կերպ գովաբանում էր իսլամը, մատնանշելով, որ այն միաժամանակ բարոյական օրենսդիրք ու կառավարման ձև է[10]։

Իրականում կայսրությունում «իսկական» քաղաքացի կարող էին ճանաչվել թուրքերը, և նրանք, ովքեր հավատափոխ կլինեին, կմոռանային սեփական լեզուն և կձուլվեին թուրքերի հետ։ Դեռևս 1910 թ. Սալոնիկում կայացած «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական կոմիտեի գաղտնի նիստում Թալաաթը հայտարարել է. «Դուք գիտեք, որ սահմանադրությամբ մահմեդականների և քրիստոնյաների հավասարություն է հաստատվել, բայց դուք բոլորդ միասին և ամեն մեկդ առանձին գիտեք և զգում եք նաև, որ դա անիրականալի գա-

զափար է։ Շարիաթը, մեր անցյալի ամբողջ պատմությունը, հարյուր հազարավոր մահմեդականների զգացմունքները և նույնիսկ իրենց՝ քրիստոնյաների զգացումը, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանականացման ամեն մի փորձի դեմ, անհաղթահարելի պատնեշ են իսկական հավասարության համար։ Ուստի հավասարության մասին խոսք անգամ չի կարող լինել մինչև այն ժամանակ, քանի դեռ մենք հաջողությամբ չենք պսակել կայսրության օսմանականացման մեր նպատակը»[11]։

Երիտթուրքերի կուսակցության գլխավոր զենքերից էր նաև պանթուրքիզմը, որն աշխուժացավ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Զելալ Նուրին, Զիա Գյոքալփը, Ֆուադ Քյոփրյուլյուն և երիտթուրքական այլ գործիչներ ամեն կերպ փորձում էին պանթուրքիզմն օգտագործել թյուրքալեզու ժողովուրդների վրա իրենց ազդեցությունը տարածելու համար։ Պանթուրքիզմը միաժամանակ Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդներին բռնի ուծացնելու խնդրում երիտթուրքերի աղգայնամոլ քաղաքականության մի նոր ուղղություն էր[12]։ Այսպիսով երիտթուրքերը ամբողջապես որդեգրեցին Աբդուլ Համիդի արյունարբու քաղաքականությունը՝ իրենց դաժանությամբ գերազանցելով նրան։ Կայսրությունում ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին ազգերին ոչնչացնելու ճանապարհը։ Նրանց այս հանցավոր մտահղացման առաջին դրսևորումը եղավ 1909 թվականին Ադանայում և Կիլիկիայի մի շարք քաղաքներում հայերի կոտորածը։

Արևմտահայությունը ամենադաժան հալածանքների և ֆիզիկական ոչնչացման ենթարկվեց հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարության գործադրած նենգ և բարբարոսական քաղաքականության հետևանքով։

Արևմտահայության զանգվածային կոտորածների նախաշեմին տեղի ունեցած Կ. Պոլսի (Ստամբուլ) առաջին մահասարսուռ դեպքերի ժամանակակից Ա. Ալպոյաճյանը գրում է. «Առաջին աղդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսի բնակչությունը անակնկալի մը առջև կդներ, 1915 ապրիլ 11 (24)-ի ձերբակալությունները եղան։ Մեկ գիշերվան մեջ Կ. Պոլսոյ մտավորական դասակարգին ամենեն կարկառուն դեմքերը և ժողովրդին ամեն դասակարգերեն 250 հոգիի չափ անձեր, ձերբակալվեցան և Չանկըրը և Այաշ տարագրվեցան»[13]։

Փաստերը վկայում են, որ տեղահանվեց ու աքսորվեց ճակատամարտի գոտիներից ընդհանրապես շատ հեռու գտնվող շրջանների, գյուղերի և քաղաքների հայ բնակչությունը։ Այս մասին Թուրք պաշտոնյա Նայիմ բեյի հուշագրության մեջ կարդում ենք. «Ծփրատի ափերն արտաքսված-

ները ոչ միայն Ստամբուլի շրջակայքից էին, այլև՝ Ռոդոստոյից, Նիկոմեդիայից, Պարտիզակից, Ադաբազարից, Ջիզրեից (Ջեզիրե), Կոնիայից, մի խոսքով, նրանք Կեսարիայի և Անատոլիայի երկաթգծի երկարությամբ ընկած տարածքից աքսորված հայերն էին։ Այս նոր տարագրումը ընդհանուր զարմանքի առիթ տվեց։ Անհասկանալի էր, թե ինչու մարդկանց հղում են [Տեր]-Զորի ուղղությամբ։ Սակայն անհանգստանալու համար առավել էական պատճառներ կային։ Ռաս-ուլ-Այնում և այլուր տեղի ունեցած կոտորածները տարածվեցին նաև Մեսքենեում։ Մի քանի տարի շարունակաբար կատարվող կոտորածները գաղտնի չմնացին նաև խուլ անապատում։ ...Կառավարության նպատակը ամբողջ հայերի ոչնչացումն էր։ Նրանք իրավունք չունեին այլևս գոյատևելու»[14]։

Որ տեղահանությունն ու կոտորածը կատարվում էին կանխամտածված ծրագրով, հաստատվում է նաև Մեվլան Զադե Ռիֆաթի բերած փաստարկներով. «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը որոշում կայացրեց՝ ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպանել և ոչնչացնել հայերին։ Այս հրամանը իրականացնելու համար նախագահությունը ստեղծեց Բհհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ և հանրակրթական մինիստր Շյուքրի բեյերից կազմված մի հանձնաժողով՝ տալով «Երիտքի գործադիր կոմիտե» անվանումը։ Այս երիտքի գործադիր կոմիտեն «Թեշքիլաթ-ը մահսուսե» անվան տակ սկսեց բանտերից հավաքագրել քրեական հանցագործներին և ստեղծել չեթեների հրոսակներ։ «Թեշքիլաթ-ը մահսուսե» պիտակի տակ ստեղծված այս չեթեների կատարած հանցագործություններն ու բռնությունները, արատավորելով թուրք ժողովրդին աշխարհի հասարակայնության առջև, արյունալի և բարբարոսական էջեր արձանագրեցին նրա պատմության մեջ»[15]։

Գերմանիան ևս հանցավոր է հայկական ջարդերի համար։ 1915 թ. հուլիսի 4-ին թուրքական կառավարությանն ուղղված գաղտնի գրությամբ Գերմանիան լիովին հավանություն է տվել և պաշտպանել երիտթուրքերի հայաջինջ ծրագիրը։ Գերմանական հյուպատոսները խրախուսել, իսկ գերմանացի սպաները մասնակցել են երիտթուրքերի վայրագություններին[16]։ Այդ օրերին բողոքի բուռն ցասումով հանդես եկած միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկնեխտը, անարգանքի սյունին գամելով Գերմանիայի իմպերիալիստական կառավարության դավադիր գործողությունները, նկատում է. «Թուրքական կառավարությունը կազմակերպեց հայկական զարհուրելի կոտորածները, ամբողջ աշխարհն այդ գիտե և ամբողջ աշխարհն այդ ոճրագործության համար հանցավոր է համարում նաև Գերմանիային, չէ՞ որ

Կոստանդնուպոլսում թուրքական կառավարությանը դեկավարում են գերմանական սպաները։ Ո՛չ մի բան չգիտեն միայն Գերմանիայում, որովհետև գերմանական մամուլի բերանի մեջ դրված է գելանարակ»[17]։

Տեղահանության և կոտորածի ընթացքում գործի է դրվել նաև հայերին մահմեդականացնելու քաղաքականությունը։ Այդ քայլը ջատագովել է երիտթուրքական հանրահայտ կին գործիչ Հալիդե Էդիբը, չնայած աշխատել է ցույց տալ, որ ինքը դեմ է եղել երեխաներին մահմեդականացնելու ծրագրին[18]։ Մինչդեռ նրա ժամանակակիցների վկայություններից հայտնի է դառնում, որ Հալիդե Էդիբը ևս, «Հայ որբերին հավաքելով, մահմեդականացնում էր և դաստիարակում որբանոցներում որպես թուրքերի»[19]։

Քրիստոնյա երեխաներին մահմեդականացնելով թուրքացնելը նոր երևույթ չէր, գալիս էր դեռևս միջնադարից։

Տեղահանության և կոտորածների ընթացքում թուրքերն աշխատել են մահմեդականացնել հատկապես Սիրիա տարագրված հայերին։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Ֆալիհ Ռըֆքը Աթայը. «Չերքեզների, քրդերի և մյուսների նման հայերի արտաքսումը դեպի Սիրիայի խորքերը նոսրացնելու էր արաբներով խիտ բնակեցված վայրերը։ Նույնիսկ մի հանձնաժողով կազմվեց, որպեսզի հայերին և՛ տուն և՛ հող տրամադրվի՝ մահմեդական դառնալու պայմանով»[20]։

Տեղահանելով հայերին, թուրքական իշխանությունները նաև կեղծ բարբաջանքներով ջանում էին հավաստիացնել, թե իբր նրանց թողած հողային ունեցվածքն ու գույքը պահպանվելու են պետության կողմից և պատերազմի ավարտից հետո կրկին վերադարձվելու են։ Այս կապակցությամբ թուրքական կառավարությունը հայերի ունեցվածքի բացահայտ կողոպուտն ու թալանը աշխատեց «օրինականացնել» մի շարք օրենքներով, որոնք բնավ չգործադրվեցին[21]։ «Այսպես ժողովուրդին բռլոր շարժական ստացվածքը կփշանար կամ լավ ևս է ըսել թուրքերու ձեռքը կանցներ, կառավարությունը ոչ մեկ տեղ հոգածու չգտնվեցավ այդ գույքերը հավաքելու կամ դրամի վերածելուն»[22],—վկայում է Զավեն պատրիարքը։

Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Մորգենթաուն այս փաստի մասին վկայում է. «Հազիվ թե նախկին սեփականատերերը հեռանային գյուղեն՝ մահմեդական մուհաճիրներ-թուրքիո այլ կողմերեն գաղթողներ կփոխադրվեին հայկական բնակավայրերեն ներս։ Նույնպես հայերուն բռլոր արժեքավոր առարկաները-դրամ, մատանիներ, ժամացույցներ և գոհարեղեններ-կտարվեին ոստիկանատուներ «ապահով պահվելու հա-

մար» մինչև հայերուն վերադարձը, և ապա կբաժանվեին Թուրքերուն»[22]։

Ահա են բաղմաթիվ հեռագրեր, հրահանգներ, առանձին կարգադրություններ, առաքված երիտթուրքերի կառավարության կողմից, որոնք լիովին բացահայտում են հայության ոչնչացված կուլ տալու ծրագիրը[24]։ Սովետահայ պատմաբան Հ. Գ. Ինճիկյանի հաշվումներով կողոպուտի ու ոչնչացման են ենթարկվել 66 քաղաքների ու 2500 գյուղերի հայ ու քրիստոնյա ազգաբնակչությունը, կողոպտվել ու քանդվել են ավելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ և վարժարաններ։ Ազգային հատուկ հանձնաժողովի տվյալներով, Օսմանյան կայսրությունում միայն հայ ժողովրդին հասցված նյութական վնասը 1919 թ. կուրսով կազմել է մոտ 15 մլրդ. ֆրանկ[25]։

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո համաշխարհային հասարակայնությունը պահանջում էր պատասխանատվության ենթարկել արևմտահայության սպանդը կազմակերպող թուրք ոճրագործներին։ Այդպիսի պահանջով հանդես եկան նշանավոր արևելագետներ՝ ֆրանսիացի հնագետ-պատմաբան Ժակ դը Մորգանը, գերմանացի հայագետ Յոզեֆ Մակվարտը։ Դատապարտող սուր հոդվածներով և աշխատություններով բողոքի ձայն բարձրացրին տարբեր ազգությունների քաղաքական, գիտության և մշակութային ականավոր գործիչներ՝ Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Մարտին Նիպագեն, Անատան Մեյեն, Ֆրեդերիկ Մակլերը, Ռընե Պինոնը, Վիկտոր Բերարը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին, Անդրեյ Մանդելշտամը, Հենրի Մորգենթաուն, Հերբերտ Ադամս Գիբբոնսը և շատ ուրիշներ։

Հանդես գալով Մեծ Բրիտանիայի համայնքների պալատում 1918 թ. նոյեմբերի 12-ին, Ռայթը անգլիական կառավարությունից պահանջել է, որ դաշնակիցների ներկայացուցիչները Թուրքիայի հետ խաղաղության պայմանները քննարկելիս հատուկ կանգ առնեն հայկական կոտորածների հանցագործներին պատժելու հարցի վրա[26]։

Թուրք գործիչների և պաշտոնյաների մեջ ևս գտնվել են առանձին մարդիկ, որոնք ոչ միայն կողմնակից չեն եղել հայերին կոտորելու հրնշակյան ծրագրի իրականացմանը, նողկանքով ու ատելությամբ են վերաբերվել ձեռք առնող վայրագություններին, հրաժարվել են կատարելու կենտրոնական կառավարության՝ «Միություն և առաջադիմություն» գաղտնի կազմակերպության կենտրոնական կոմիտեի գաղտնի հրամաններից՝ հայ ժողովրդին տեղահանելու և կոտորելու հարցում (այդպիսիները անմիջապես հեռացվել են պաշտոնից, պատասխանատվության ենթարկվել և նույնիսկ ներքին կարգով գնդակահարվել մահվան)[27], այլև հետագայում

ռեկտիվ գործունեություն են ծավալել կազմակերպելու հանցագործների դատավարությունը։

1919 թվականին մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան դատապարտել է երիտթուրքերի կառավարության գործադրած հանցագործ ծրագիրը՝ գտնելով, որ հայերի կոտորածները ծնունդ չեն եղել ցեղային բախումների և կամ կրոնական մոլեռանդության։ «Ես իմ առջև նպատակ եմ դնում փաստերը ձեռքիս ցույց տալ ամբողջ աշխարհին, թե ու՞մ վրա է ընկնում իսկական պատասխանատվությունը այդ սարսափելի հանցագործությունների համար»[28],—հայտարարել է նա։

Տեղի տալով բողոքի այս ուժեղ հոսանքին և ձգտելով սահմանազատվել երիտթուրքերի վարկաբեկված վարչակարգից, 1918 թ. Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո, Ահմեդ Իզզեթ փաշայի գլխավորությամբ կազմված նոր կաբինետը որոշում է կայացնում՝ Օսմանյան կայսրությունը առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին։ Այնուհետև, 1918 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով[29] կազմվում են հարցաքննիչ հանձնախմբեր (գլխավոր նախագահն էր Անկարայի նախկին վալի Մազհար բեյը), որոնք սկսում են հավաքել արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ և հրամաններ, ինչպես նաև ականատեսների վկայություններ։ Օսմանյան կայսրության նահանգները բաժանվում են 10 դատաքննչական շրջանների, յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում են դատախազներ, հարցաքննիչ դատավորներ, և քարտուղարներ։ Միևնույն ժամանակ մամուլը լայն աշխատանք է ծավալում հանցագործներին բացահայտելու և դատաքննության հանձնելու կապակցությամբ[30]։

Ձերբակալվում են երիտթուրքական մի շարք մինիստրներ ու կուսակցության ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, լիազորներ, կուսակալներ, զինվորականներ և այլ պաշտոնատար անձինք։ Սակայն հայկական կոտորածների անմիջական մտահղացողներն ու կազմակերպիչները հասցրել էին դիմել փախուստի՝ ապաստան գտնելով Գերմանիայում։

1919 թվականի հունվարի 8-ին Կ. Պոլսում կազմվում են Առաջին, Երկրորդ և Երրորդ ռազմական արտակարգ ատյաններ։ Օրենքը հան-

գործողներին թեև նախատեսում էր դատել ոճրի գործադրված վայրում ռակայն 1919 թ. փետրվարի 5-ին, Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանը Յողղաթի տեղահանության և կոտորածի հանցագործների գործակալության առաջին իր նիստում հատուկ որոշում է կայացնում մեղադրյալներին Կ. Պոլսում դատելու մասին[31]։

1919 թվականի մարտի 8-ին, սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918—1922) հատուկ հրամանագրով, երիտթուրքական կուսակցության պարագլուխներն ու մինիստրները հանձնվում են Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը[32]։

Երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների գործակալությունը սկսվում է 1919 թ. ապրիլի 27-ին Կ. Պոլսում և ընդհատումներով տևում մինչև հունիսի 26-ը[33]։ Մայիս ամսին տեղի ունեցած 6 նիստերի[34] ընթացքում հիմնականում հարցաքննության են ենթարկվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամները, մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և մի քանի մինիստրներ։ Սակայն անբացատրելի պարագաներով մայիսի 28-ին անգլիական հրամանատարության կողմից 77 հոգի բանտից աքսորվում է Մալթա կղզի և ընդհատվում է դատաքննությունը։ Հունիսի սկզբին մեղադրական նոր ապացույցների հիման վրա շարունակվում է գործաքննությունը։ Հունիսյան դատաքննության 7 նիստերում լսվում են պետական պաշտոնական անձանց՝ փոստի և հեռագրական մինիստր Ալեսանդր Հաշիմ բեյի, սենատի նախագահ Ռիֆաթ բեյի, նաև երկրի հոգևոր առաջնորդներ (շեյխ-ուլ-իսլամներ) Էսադ, Հայրի և Մուսա Քյազիմ էֆենդիների[35] դատաքննությունը։ Դատավճիռը կայացվում է 1919 թ. հուլիսի 5-ին։

Այս դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրյալ են 11, իսկ դատավարությանը ներկա 20 կուսակցական և պետական գործիչներ։

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալներն էին.

1 Թալեաթ փաշա — Ներքին գործերի մինիստր, մեծ վեզիր (1917—1918 թթ.)։

2 Էնվեր փաշա — ռազմական մինիստր։

3 Ջեմալ փաշա — ծովային մինիստր։

4 Բեհաէդդին Շաքիր բեյ — երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահը

5 Թեկտ. Նազըմ բեյ — *կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, հանրակրթական մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի անդամ։*

6 Ջավիդ բեյ — *ֆինանսների մինիստր։*

7 Սուլեյման Էլբիստանի բեյ — *հողագործության և առևտրի մինիստր (1915—1917 թթ.)։*

8 Մուսաֆա Շերեֆ բեյ — *հողագործության և առևտրի մինիստր (1917—1918 թթ.)։*

9 Օսկան էֆենդի — *փոստի և հեռագրատան մինիստր (1914—1917 թթ.)։*

10 Թեկտ. Ռուզումի էֆենդի — *կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ։*

11 Ազիզ էֆենդի — *հասարակական անվտանգության մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի անդամ։*

Դատարանում ներկա գտնվող մեղադրյալներ՝

1 Սայիդ Հալիմ փաշա — *մեծ վեզիր (1913—1916)։*

2 Միդհատ Շյուքրի բեյ — *կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար։*

3 Ահմեդ Ջեվադ բեյ — *կ. Պոլսի պարետ, «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի անդամ։*

4 Աբիֆ բեյ — *Անկարայի պատգամավոր, «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի անդամ։*

5 Զիա Գյոքալփ — *կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ։*

6 Քյուչյուկ Թալաաթ բեյ — *կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ։*

7 Ռիզա բեյ — *կուսակցության կենտրոնական կոմիտեի և «Թեշքիլաթ-ի մահսուսեա»-ի անդամ։*

8 Իբրահիմ բեյ — *մեջլիսի նախագահ։*

9 Հայրի էֆենդի — *շեյխ ուլ-իսլամ։*

10 Մուսա Քյազիմ էֆենդի — *շեյխ ուլ-իսլամ։*

11 Խալիլ էֆենդի — *արդարադատության և արտաքին գործերի մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի անդամ։*

12 Ահմեդ Նեսիմի բեյ — *ներքին գործերի մինիստր (1917—1918)։*

13 Իսմայիլ Ջանփոլատ բեյ — *ներքին գործերի մինիստր (1917—1918 թթ.)։*

14 Աբդաս Հալիմ փաշա — *հասարակական աշխատանքների մինիստր (1915—1917 թթ.)։*

15 Ալի Մյունիֆ բեյ — *հասարակական աշխատանքների մինիստր (1917—1918 թթ.)։*

16 Շյուքրի բեյ — *հանրակրթական մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ։*

17 Քեմալ բեյ — *պարենավորման մինիստր, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ։*

18 Հյուսեյն Հաշիմ բեյ — *փոստի և հեռագրատան մինիստր (1917—1918 թթ.)։*

19 Ռիֆաթ բեյ — *սենատի նախագահ։*

20 Մեհմեդ Էսադ էֆենդի — *շեյխ ուլ-իսլամ։*

Ըստ դատաքննության կարգի, հանձնաժողովի նախագահ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշան առաջին հերթին հաստատում է մեղադրյալների ինքնությունը, ինչպես նաև նրանց դատապաշտպանների առկայության հարցը։ Միևնույն ժամանակ հայտարարում է, որ ռազմական արտակարգ ատյաններում մեղադրյալների պաշտպանության համար օրենքը չի նախատեսում դատավարության ընթացքում դատապաշտպանների ներկայությունը։ Դատական քարտուղար Շեֆիկ բեյը ընթերցում է մեղադրական եզրակացությունը։ Միևնույն ժամանակ քրեական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիման վրա տրվում է գլխավոր դատախազ Մուստաֆա Նազըմ փաշայի հավանությունը բացականերին հեռակա կարգով դատելու մասին։ Մուստաֆա Նազըմ փաշան, նկատի ունենալով նաև թե՛ դատասկզբում և թե՛ ընթացքում դատապաշտպանների առարկությունները այն մասին, որ «մինիստրների և այլ պետական բարձր պաշտոնյաների հետ առնչվող դատական հարցերը քննարկման են ենթակա ոչ թե ռազմական արտակարգ ատյանում, այլ գերագույն դատարանում», իր ելույթում նշում է, որ մեղադրական եզրակացության մեջ թվարկված հանցագործությունները կատարվել են ոչ թե կառավարության անունից, այլ կուսակցության կենտրոնական կոմիտեի և նրա պլենումների որոշումներից ելնելով։

Առաջին և հաջորդ մեղադրական եզրակացություններում բերված փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, վկայում են, որ արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական ժամի կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնույթ չեն կրել, այլ եղել են կանխամտածված և իրականացվել են բացարձակապես կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ, հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով

A II 78376

Մեղադրական եզրակացություններում և դատական նիստերի ընթացքում հիմնական շեշտը դրվում է արևմտահայության կոտորածի վրա։

Կովկասյան ճակատի երրորդ բանակի նախկին հրամանատար գեներալ-լեյտենանտ Վեհիբ փաշան դատաքննության ներկայացրած իր վկայության մեջ այդ մասին հայտնում է, որ հայերի բնաջնջման և ունեցվածքի կողոպտման հարցը վճռվել է «Միության և առաջադիմության» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում աքսախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Բեհաէդդին Շաքիր բեյն է[36]։

Իսկ ներքին գործերի մինիստրության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը նույնպես վկայում է, որ երբ ինքը Քիլիսի կայմակամն էր, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «[հայերի] տեղահանման հիմնական նպատակը նրանց ոչընչացումն է», որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալաաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորելու հրաման, որ նա [Թալաաթը] ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը[37]։

Հետագայում, իր հուշագրության մեջ նույնիսկ Թալաաթը ընդունում է, որ հայերի տեղահանության ժամանակ տեղի են ունեցել բռնություններ և կոտորածներ[38]։ Թալաաթը, ինչպես վկայում է Հալիդե Էդիբը, խոստովանել է իր անմարդկային արարքը և արդարացում է որոնել ազգային շահերի տեսակետից՝ համոզված լինելով, «որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ, և հաջողվում է, աշխարհն ընդունում է այդ։ Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի և ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար»,—հայտարարել է նա[39]։

Դատավարության 2-րդ, 5-րդ և 6-րդ նիստերում հարցաքննության է ենթարկվում արևմտահայության կոտորածն իրականացնող «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն, որը կյանքի էր կոչվել «Միության և առաջադիմության» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների կողմից՝ հատուկ որոշմամբ։ Դատաքննությունը բացահայտում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հանցագործ գործունեությանը մասնակցություն են ունեցել կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյը, անդամներ՝ Բեհաէդդին Շաքիրը, դոկտ. Նազըմը, Թիզա բեյը, Անկարայի պատգամավոր Աթիֆ բեյը, հանրակրթական մինիստր Շյուքրի բեյը, մեջլիսի նախագահ Խալիլը, հասարակական անվտանգության մինիստր Ազիզ բեյը, կ. Պոլսի պարետ Ջեվադը։ Հանցագործներին ղեկավարել է ներքին գործերի մինիստր Թալաաթը։

ՀԱՍԿ ԱՍՄ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«Թեշքիլաթ-ը մահսուսեա» անվան տակ գործել է երկու գաղտնի կազմակերպություն։ Մեկը եղել է գինվորական կազմակերպություն և ստեղծվել է ռազմական մինիստրության հրամանով։ Ղեկավարն է եղել Շուվեյման Ասքերի բեյը։ Կենտրոնը գտնվել է Կ. Պոլսում։ Դատավարության 5-րդ նիստի ժամանակ մեղադրյալ Աբիֆ բեյը խոստովանում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի համար հատուկ պաշտոնատեղի է եղել Նուրի Օսմանիեում, «Թասֆիր-ի էֆքյար» թերթի տպարանի դիմաց վարձված № 32 տունը»[40]։ Այս կազմակերպության խնդիրն է եղել կովկասյան մահմեդական ժողովուրդների մեջ Ռուսաստանի դեմ խռովություն սերմանելու նպատակով հավաքագրել Կովկասի տարածքին ծանոթ, տեղի ժողովուրդների լեզուներին տիրապետող մարդկանց և խմբերով, գաղտնի ուղարկել սահմանից այն կողմ։

Երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ն գտնվել է ներքին գործերի մինիստրության անմիջական տրամադրության տակ, և Բեհաէդդին Շաքիրի ղեկավարությամբ իրականացրել է արևմտահայության տեղահանությունն ու կոտորածը։ Դա հաստատվում է կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Ռիզա բեյի ցուցմունքով։ «Իմ կարծիքով,— նշում է նա,—ռազմական մինիստրության հրամանով կազմակերպված «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ն գործել է ռազմաճակատում և ընդհանրապես հակառակորդի գտնված շրջաններում։ Մյուս՝ երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ն ստեղծվել է, որպեսզի մի շարք վիլայեթներում, սանջակներում, կազաներում իրականացնի տեղահանությունը»[41]։

Հետաքննությունների նյութերից պարզվում է նաև, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի և «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ին վերաբերող կարևոր գրությունները մեծ մասամբ ոչնչացվել են։ Դրանում հիմնականում մեղավոր է դոկտ. Նազըմը։ Նա կոմիտեի գործարքներն ու կատարված հանցագործությունները ծածկելու նպատակով փախցրել է կուսակցության արխիվը։ Սակայն գործադրված բոլոր ջանքերով հանդերձ (հաճախ հրահանգները տրվել են բանավոր) ռազմական արտակարգ ատյանի ձեռքն են անցել բավականաչափ թվով հեռագրեր, նամակներ և այլ գրավոր փաստաթղթեր, որոնք անվիճելիորեն հաստատում են հայերի տեղահանության և ոչնչացման ընթացքում «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի, ներքին գործերի մինիստրության և «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի միջև եղած համագործակցությունը, ինչպես նաև ցույց են տալիս, թե ինչպիսի ակտիվ գործունեություն են ծավալել շրջ-

քանային պատասխանատու քարտուղարները «Թևշքիլաթ-ը մահսուսեթ»-ի համար քրեական հանցագործներ հավաքագրելու գործում:

Հարցաքննության ընթացքում մեղադրյալներն անընդհատ փորձել են շեղվել ճշգրիտ պատասխաններից: Խոստովանությունից խուսափելու համար նրանք հաճախ օգտագործել են «չեմ կարողանում հիշել», «հիշողությունս թույլ է» արտահայտությունները: Այնուհանդերձ, խաչաձև հարցաքննության ժամանակ, որպես մեղադրական ապացույց բերված հեռագրերի, նամակների և վկայությունների հիման վրա լիովին բացահայտվում է իսկությունը, այն է՝ որ տեղահանությունն ու կոտորածը հավանության են արժանացել կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստերից մեկում՝ ձայների մեծամասնությամբ:

Դատարանը պաշտոնատար անձանց հատկապես մեղավոր է ճանաչում, որ իրազեկ լինելով կոտորածների և այլ բռնությունների մասին, ո՛չ մի գործնական քայլի չեն դիմել դրանք կանխելու գործում: Ընդհակառակը, նպաստել են, որ շարունակվի տեղի ունեցող այդ ողբերգությունը: Այսպես, շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին, որը որպես կրոնական առաջնորդ կարող էր մեծ ազդեցություն ունենալ այդ վայրագությունները խափանելու խնդրում, ո՛չ մի էական քայլի չի դիմել: Նա թեև փորձում է արդարանալ դատարանում, որ ինքը պատասխանատու չէ կառավարության անդամների գործադրած հանցագործ արարքների համար, որ մեղավոր է ներքին գործերի մինիստրությունը[42], սակայն նա խոստովանում է, որ իսլամը և կուսակցությունը համաձույլ մի ամբողջություն է և կուսակցության որոշումները ենթակա են անհապաղ իրականացման, «որ կուսակցությունից դուրս գալը նշանակում է իսլամի կրոնից հրաժարվել»[43]:

1919 թվականի հուլիսի 5-ին արձակված դատավճռում շեշտը դրվում է արևմտահայության կոտորածների և ունեցվածքի կողոպտման մանրամասնությունների վրա, նշվում է կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության ղեկավարների կողմից սահմանադրության ոտնահարման փաստերի մասին: Կարևոր հանցանշաններից մեկն է համարվում առանց մեջլիսի որոշման առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու խնդիրը, ինչպես նաև առևտրի և հատկապես պարենային հարցում տեղ գտած չարաշահումներն ու սպեկուլյացիան:

Քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով դատարանը մահվան վճիռ է կայացնում Թալաաթի, Էնվերի, Ջեմալի և Նազըմի նկատմամբ, իսկ 45-րդ հոդվածի երկրորդ կետի և 55-րդ հոդվածի վերջին կետի համաձայն Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը և Մուսա

Ջյազիմբ գտատապարտվում են 15-ական տարի ժամկետով աքսորի: Իբրև թե բավարար հանցանշաններ չլինելու պատճառաբանությամբ, ազատ են արձակվում սենատի նախկին նախագահ Ռիֆաթ բեյը, փոստի և հեռագրատան մինիստր Հաշիմ բեյը: Այս վերջին երկուսի նկատմամբ գտատարանի վճռին հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են եղել համաձայն: Դատավճռում մոռացության են մատնված դաշնակիցների հովանավորությամբ կալանատնից Մալթա կղզի աքսորված հանցագործները:

«Միության և առաջադիմության» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների և այլ պաշտոնատար անձանց դատաքննության նիստերը տեղի են ունենում 1919 թվականի հունիսի 21-ին, 23-ին և 28-ին: Դատավճիռը կայացվում է շատ ուշ, այն էլ՝ կ. Պոլսի ռազմական Առաջին արտակարգ ատյանի հանձնախմբի կողմից՝ 1920 թ. հունվարի 8-ին[44]: Մեղադրական եղրակացության և դատավճռի տվյալներով ամբաստանվում էին 36 անձինք.

1 Ավնի բեյ — կուսակցության Մանիսայի պատասխանատու քարտուղար:
2 Հասան Սելաճեդդին բեյ — վերակազմյալ կուսակցության Բնյօղլուի պատասխանատու քարտուղար:
3 Հիլմի բեյ — Անկարայի պատգամավոր:
4 Միդհատ բեյ — կուսակցության Բաղուի պատասխանատու քարտուղար:
5 Բեսիմ Զունդի բեյ — կուսակցության Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար:
6 Մեհմեդ Ջեմալ բեյ — կուսակցության Հալեպի պատասխանատու քարտուղար:
7 Ազաօղլու Ահմեդ — Կարահիսարի պատգամավոր:
8 Դոկտ. Ահմեդ Միդհատ բեյ — կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար:
9 Մումբազ բեյ — Սուազիի կայմակամ:
10 Հասան Ֆեհմի բեյ — Սինոպի պատգամավոր:
11 Սաբրի բեյ — Մարուխանի պատգամավոր և վերակազմյալ կուսակցության անդամ:
12 Ջևդեթ բեյ — կուսակցության Միրգունի պատասխանատու քարտուղարի տեղակալ:

13 Սելաճեդդին Ջիմջոզ — Կ. Պոլսի պատգամավոր։
14 Հյուսեյն Թոսուն — Էրզրումի պատգամավոր և աղգային գործակալության տնօրեն։
15 Հասան Նամըք բեյ — կուսակցության Սալոնիկի պատասխանատու քարտուղար, Ստամբուլի բանկի ներկայացուցիչ։
16 Ֆլի Ռիզա — կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար։
17 Աբդուլ Քադիր — կուսակցության Կոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ։
18 Թոսունաբի բեյ — Կոնիայի գյուղատնտեսության տեսուչ։
19 Սամիհ Ռիֆաթ բեյ — Կոնիայի վալի։
20 Սադեդդին բեյ — Կոնիայի ոստիկանության պետ։
21 Ֆերիդ բեյ — կուսակցության Կոնիայի ներկայացուցիչ։
22 Ֆեհմի բեյ — Ակշեհիրի Ջիհանբեյլի նահիեի կառավարիչ։
23 Մյուֆթի զադե Քյամիլ բեյ — Ակշեհիրի վալի։
24 Հասան Բասրի բեյ — Ակշեհիրի ոստիկանապետի տեղակալ։
25 Համիդ բեյ — կուսակցության Ադաբազարի ներկայացուցիչ։
26 Հյուսեյն Նեջատի բեյ — Հալեպի շրջանի չեթեների առաջնորդ։
27 Ղանի բեյ — կուսակցության Սիվասի ներկայացուցիչ։
28 Մյուֆթի Մեհմեդ Ալի — կուսակցության Բոլվադինի ներկայացուցիչ։
29 Հաջի Աթա բեյ — կուսակցության Բոլվադինի ներկայացուցիչ։
30 Կարա կաղը Հասան — կուսակցության Բոլվադինի ներկայացուցիչ։
31 Սբդուլ Ղանի բեյ — կուսակցության էդիրնեի ներկայացուցիչ։
32 Հաջի Ահմեդ փաշա — էնվերի հայրը, կուսակցության էդիրնեի ներկայացուցիչ։
33 Մյունիր բեյ — կուսակցության Կաստամոնուի պատասխանատու քարտուղար։
34 Հասան Ֆեհմի բեյ — կուսակցության Կաստամոնուի պատասխանատու քարտուղարի տեղակալ։
35 Սկյան բեյ — Կարահիսարի սանիտարական հանձնաժողովի նախագահ։
36 Հայրեդդին բեյ — Կարահիսարի սանիտարական պաշտոնյա։

1919 հունիսի 19-ի թվագրությամբ մեղադրական եզրակացության մեջ մատնանշվում է, որ շրջանային պատասխանատու քարտուղարներն իրենց գործունեության ընթացքում, կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության կողմից ստացված բանավոր և գրավոր գաղտնի հրամանների համաձայն, անօրինական կերպով մի-

ջամտել են կառավարության գործերին և մասնակցել Թալեաթ փաշայի և նրա գործընկերների կատարած հանցագործություններին։

Պատասխանատու քարտուղարների հարցաքննության ընթացքում հիմնական շեշտը նույնպես դրվում է արևմտահայության տեղահանության, կոտորածների և ունեցվածքի կողոպտման հարցի վրա։ Էդիրնեի պատասխանատու քարտուղարն ու մյուս մեղադրյալներն իրենց հանցանքը թեթևացնելու համար աշխատել են արդարանալու ուղիներ որոնել, որ տեղահանությունը կատարվել է իբրև թե օրենքի հիման վրա և կառավարության կարգադրությամբ։ Հանձնաժողովի նախագահ Մուստաֆա Նազըմ փաշան, հերքելով նրանց կեղծ ցուցմունքները, բացահայտում է, որ տեղահանությունը եղել է լոկ պատրվակ՝ իրականացնելու համար հայերի ոչնչացումը։

1920 թվականի հունվարի 8-ի դատավճռում նշվում է, որ վերոհիշյալ պատասխանատու քարտուղարներից և լիազորներից մի քանիսը օժանդակել են կենտրոնական կոմիտեի նախաձեռնությանը և իրենց մասնաճյուղերում հավաքագրած մարդասպանների և այլ քրեական հանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը և նրանց ունեցվածքի կողոպուտը։

Քրեական օրենսդրության 45-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի վերջին կետի համաձայն Սինոպի դեպուտատ Հասան Ֆեհմի բեյը, էդիրնեի պատասխանատու քարտուղար Աբդուլ Ղանի բեյը, Բալուի պատասխանատու քարտուղար Միդհատ բեյը դատապարտվում են տասը տարուց ավելի, իսկ մյուսները մի քանի տարի ժամկետով բանտարկության։ Այս դատավճռում ևս մոռացության են մատնվում Մալթա կղզի աքսորված հանցագործները։

Վերոհիշյալ դատավարությունների ընթացքում Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանը մանրամասն հետաքննություն էր կատարում նաև գավառներում տեղի ունեցած տեղահանության և կոտորածների անմիջական իրականացնողների նկատմամբ։ Առաջինը լսվում է Յոզղաթի հայության տեղահանության և կոտորածի գլխավոր հանցավորներ Յոզղաթի մութասարրիֆի տեղակալ և Բողաղլյանի կայմակամ Քեմալ բեյի և Յոզղաթի ոստիկանության պետ մայոր Թեվֆիկ բեյի կատարած հանցագործությունների հարցը։

Յոզղաթը գտնվում էր պատերազմական թատերաբեմից շատ հեռու տարածքում, բայց տեղի հայությունը նույնպես ենթարկվեց դաժան հալածանքների։ 1919 թ. ապրիլի 8-ի դատավճռում[45] բերված մեղադրական ապացույցները վկայում են, որ տեղի հայությանը կոտորելու հա-

մար Քեմալ բեյը ոտքի է հանել ոչ միայն ի՛ր տրամադրության տակ գտնվող սանջակի թուրքերին, այլև կոչ է արել բոլոր մահմեդականներին ոտքի կանգնել հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու համար։ Դատարանը միաձայն մեղավոր ճանաչելով նրան, կայսերական քրեական օրենսգրքի 170 և 171-րդ հոդվածների հիման վրա դատապարտում է մահվան, իսկ Թևֆիկ բեյը նույն օրենսգրքի 45-րդ հոդվածով դատապարտվում է 15 տարվա տաժանակիր աքսորի։

Տրապիզոնի հայերի տեղահանությանը և կոտորածին վերաբերող 1919 թվականի մայիսի 22-ի դատավճռով մեղադրվում են 8 հանցագործներ.

1 Ջեմալ Ազմի բեյ — *Տրապիզոնի վալի։*
2 Նայիլ բեյ — *կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար։*
3 Մեհմեդ Ալի բեյ — *Տրապիզոնի հարկային տեսուչ։*
4 Նուրի բեյ — *Տրապիզոնի ոստիկանության պետ։*
5 Մուստաֆա Էֆենդի — *Տրապիզոնի [գաղտնի] գործակալության տեսուչ։*
6 Թալաաթ բեյ — *Տրապիզոնի ոստիկանության քննիչի օգնական և կայմակամ։*
7 Նիազի Էֆենդի — *Տրապիզոնի հյուրանոցի տնօրեն։*
8 Ալի Սայիբ բեյ — *Տրապիզոնի բժշկական տեսուչ։*

Դատավճռում նշվում է. «Մեղադրյալներ՝ Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի բեյը, «Միություն և առաջադիմություն» կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը սերտորեն համագործակցել են գաղտնի հրահանգները իրականացնելու գործում։ Արտաքուստ նրանք իբրև թե գործել են տեղահանության օրենքի համաձայն, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների իրականացման ժամանակ նրանք հանդես են բերել անձնական ակտիվ միջոցներ՝ հայերին կոտորելու գործում[46]։

Տրապիզոնի դատավճռում մանրամասն խոսվում է նաև հայերի լքյալ գույքի կողոպտման մասին։ Տրապիզոնի ոստիկանապետ Նուրի էֆենդիին իբրև թե հանձնարարված է եղել տեղահանված հայերի լքյալ գույքի հավաքման, գրանցման և պահպանման հարցը։ Մինչդեռ, նրա հրամանով լքյալ գույքը հափշտակվելով, մատնվել է կատարյալ կորստի։

Գործադրված ծանր հանցագործությունների համար դատարանը վերոհիշյալ 170, 171-րդ հոդվածների հիման վրա հեռակա կարգով մահվան է դատապարտել Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերին։ Դատարանում ներկա Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյը դատապարտվում է տասը տարի ժամկետով տաժանակիր աքսորի, իսկ մյուս մեղադրյալները՝ 1—2 տարվա բանտարկության։

Հայտնի է, որ պատերազմի ընթացքում երիտթուրքերը մի շարք վայրերում դատաստան են տեսել նաև արաբների, ասորիների և հատկապես հույների նկատմամբ։ Բյուլուք Դերեի (Կ. Պոլսի արվարձաններից) ոչ մահմեդական բնակչության տեղահանության ժամանակ հայերի հետ ծանր հալածանքների են ենթարկվել նաև հույները։

1919 թվականի մայիսի 24-ին Բյուլուք Դերեի տեղահանությանը վերաբերող դատավճռում նշվում է, որ տվյալ շրջանի ղեկավարները բնակչության տեղահանության ժամանակ, ոտնահարելով մարդկային ամենատարրական իրավունքները, իրենց անձնական շահերն ու ստոր մտադրությունները իրականացնելու համար բնակչությանը տրամադրել են պատրաստության կարճ ժամանակամիջոց, որպեսզի նրանք ստիպված լինեն թողնել իրենց ունեցվածքն ամբողջությամբ և հեռանալ։

Բյուլուք Դերեի դատավճռով բոլոր մեղադրյալները դատապարտվում են մի քանի տարի ժամկետներով բանտարկության։ Դրանք են՝

1 Աբդուլ Քերիմ բեյ — *Բյուլուք Դերեի ոստիկանապետ։*
2 Ռեֆիկ Հըֆզի բեյ — *սալոնիկցի առևտրական։*
3 Ռիզալի Ջելալ էֆենդի — *Բյուլուք Դերեի մուխտար։*
4 Հաֆըզ Մահմուդ էֆենդի — *մեծահարուստ առևտրական*[47]։

Դեռևս երիտթուրքերի կառավարության պարագլուխների դատավարության ժամանակ կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյը հեռակա կարգով մեղադրվում է արևմտահայության տեղահանության և կոտորածների մտահղացման ու հիմնական կազմակերպիչներից մեկը լինելու ծանր հանցանքով։ Բեհաէդդին Շաքիր բեյը և կուսակցության խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազըմ բեյը իրենց կատարած ծանր հանցագործությունների համար դատապարտվում են Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածին վերաբերող 1920 թ. հունվարի 13-ի դատավճռով։ Բեհաէդդին Շաքիր բեյը հեռակա կարգով դատապարտվեց մահվան, իսկ Ռեսնելի Նազըմ բեյը՝ 15 տարի տաժանակիր աքսորի։ Հետաքրքիր է, որ դատավճռի վերջում դատական կայանի երեք անդամ-

ներ հատուկ նշում են կատարել, որ Ռեսնելի Նազըմ բեյը նույն աստիճանի հանցագործ է, ինչ Բեհաէդդին Շաքիրը և պահանջել են նույնպես մահավճիռ կայացնել նրա նկատմամբ։

Այսպիսով, դատավարության նյութերը որոշակի պատկերացում են տալիս արևմտահայության տեղահանության և կոտորածների կազմակերպման ու իրագործման մասին։ Դատավարությունը իրականում չլուծեց և չէր էլ կարող լուծել մեկուկես միլիոնից ավելի նահատակված հայերի արյան և միլիարդների հասնող լքյալ գույքի նյութական արժեքի հատուցումը։ Հայ ժողովուրդը զրկվեց իր բնօրրանից՝ Արևմտյան Հայաստանից։

Դատավորները, իհարկե, ոչ բոլոր դեպքերում ցուցաբերեցին անհրաժեշտ հետևողականություն։ Նրանցից շատերը, կապված լինելով երիտթուրքերի հետ, հաճախ հակված էին չխորանալ կատարված փաստերի մեջ և չընդունել խիստ որոշումներ։ Դատաքննության ընթացքում թույլ են տրվել թերացումներ։ Օրինակ՝ շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարությունը տեղի է ունեցել 1919 թ. հունիս ամսին, մինչդեռ դատավճիռը ձգձգվելով հաստատվել է 1920 թ. հունվարին։ Եթե հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների նկատմամբ մահվան դատավճիռ կայացնելու խնդրում տարակուսանք չի առաջանում, ապա ներկա գտնվող հանցագործների հանդեպ պատիժ սահմանելու հարցում հանդես է բերվել ավելորդ հանդուրժողականություն։

Այդ օրերին իթթիհատականները զանազան նենգ որոգայթներ են լարում խանգարելու համար դատավարության բնականոն ընթացքը։ Հատկապես ջանացել են ազդել ռազմական ատյանի անդամների վրա՝ թեթևացնելու մեղադրյալների հանցանքը։ Կ. Պոլսում լույս են տեսնում մի քանի կեղծ հրապարակումներ, որոնց հեղինակները փորձում են ապացուցել, որ հայերն են իբրև բռնություններ գործադրել թուրքերի նկատմամբ[48]։

Կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների և երիտթուրքական պետական գործիչների գատավարության վերջում, գլխավոր դատախազի օգնական Ռիշադ բեյը իր ընդարձակ ելույթում քաղաքական նենգ նպատակներով կանգ է առել հայ-թուրքական հարաբերությունների անցյալի իրադարձությունների վրա, մեղադրել հայերին իրենց աղաժամագրական պայքարի համար՝ հայտարարելով, որ «Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունից հետո, երբ Հունաստանը անկախություն ձեռք բերեց, հայերը մի ազատ Հայաստան հիմնելու նպատակով սկսեցին ապստամբական շարժումներ ծավալել օսմանյան պետու-

թյան դեմ, առանց մտածելու, որ Օսմանյան կայսրության ոչ մի տարածքում հայերը մահմեդականության հետ համեմատած մեծամասնություն չեն կազմել»[49]*։ Ռեշադ բեյը դեմագոգիկ կերպով անտեսում է այն հանգամանքը, որ հայերն ապրում էին իրենց հայրենիքում։*

Ռեշադ բեյը 1909 թվականի Ադանայի ողբերգական դեպքերը նույնպես հետևանք է համարում հայերի ապստամբական շարժման։ Իսկ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իբր հայերը թիկունքից սպառնացել են թուրքական բանակի գործողություններին։ Այսպիսի կեղծ հայտարարություններից հետո, այնուհանդերձ, Ռեշադ բեյը իր ելույթի վերջում ստիպված խոստովանում է, որ հայերի նկատմամբ գործադրված տեղահանության օրենքը ի չարն է գործադրվել, տեղահանության է ենթարկվել նույնիսկ ռազմաճակատից հեռու գտնվող վիլայեթների հայ բնակչությունը, և գործադրված բռնությունների հետևանքով տեղի է ունեցել այդ ողբերգությունը։

Հարկ է նշել, որ արևմտահայերի բնակորնների հալածանքի, բնաջնջման քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում՝ քեմալականների վարած ազգայնական շարժման շրջանում։ 1919—1922 թվականներին նրանք զանգվածային նոր կոտորածներ կազմակերպեցին Արևմտյան և Արևելյան Հայաստանում, Կիլիկիայում և Թուրքիայի մի շարք վայրերում, որոնց զոհ գնացին մոտ 250 հազար հայեր։

Մեր օրերում թուրքական կառավարող շրջաններն ու թուրք պատմաբանները համառորեն շարունակում են մերժել արևմտահայության հանդեպ կատարված ցեղասպանությունը և ընդհանրապես ձգտում են զանազան միջոցներով և հակագիտական հրատարակություններով նենգափոխել հայ ժողովրդի պատմությունը։ Նրանց կարծիքով «հայ-թուրքական բախումները» իբր առաջ են եկել մեծ պետությունների գործադրած խարդավանքների հետևանքով, որ 1915—1916 թթ. հայերն են բռնություն գործադրել թուրքերի նկատմամբ։ Իսկ 1919 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի պարագլուխների դատաքննությունը համարում են իթթիհատականների և իթիլաֆականների միջև գոյություն ունեցող միջկուսակցական ոխակալության արդյունք[50]*։*

Հակառակ թուրք կեղծարարների գործադրած չարամիտ ջանքերի, համաշխարհային հասարակական կարծիքը դատապարտել և դատապարտում է հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը։ Բնականաբար, պատերազմի ավարտից հետո երիտթուրքերի պարագլուխների դատավարությունը խոշոր երևույթ էր արևմտահայության նը-

կատմամբ տեղի ունեցած հալածանքներն ու ցեղասպանությունը համայն մարդկության առաջ բացահայտելու տեսանկյունից։

* * *

Դատավարությունների արձանագրություններն ու որոշումները 1919—1920 թթ. շատ քիչ տպաքանակով հրատարակվեցին թուրքական պաշտոնական «Թաքվիմ-ի վեքայի»[51] թերթի հավելվածներում (արաբատառ)։ Բոլոր անվանաթերթերը կրում են հետևյալ խորագիրը. «Նորին մեծություն փադիշահի 1335 թ. (1919) մարտի 8-ի կայսերական հրամանով կազմված ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը»։ Թերթերի հավելվածների պատճենները պահվում են Հայկական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվում (ֆոնդ 450, ցուցակ № 52)։ Հարկ է երախտագիտությամբ նշել, որ այդ փաստաթղթերը արխիվին է հանձնել ֆրանսահայ հասարակական գործիչ Ռուժե (Կարապիս) Ջրբաշյանը։

Առայսօր երիտթուրքերի դատավարության նյութերի առանձին մասեր հրապարակվել են ֆրանսերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով։ Ֆրանսիացի հեղինակ Ժան-Մարի Կարղուն 1975 թ. հրատարակած իր «Ընդօրինակելի ցեղասպանություն. Հայաստան, 1915»[52] արժեքավոր աշխատության հավելվածում, թուրքերեն բնագրից պատշաճ մակարդակով թարգմանված՝ բերել է Յոզղաթի, Տրապիզոնի և Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուների դատավարության վճիռները։ Երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միության և առաջադիմության» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարության մեղադրական եզրակացության ռուսերեն թարգմանությունը (ֆրանսերենից) առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեց ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի և պատմ. գիտ. դոկտոր Ռ. Գ. Սահակյանի կազմած «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ»[53] փաստաթղթերի ժողովածուում, որտեղ որոշ կրճատումներով բերված են նաև Տրապիզոնի և Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուների վերաբերյալ կայացված դատավճիռները։ Յոզղաթի հայերի տեղահանության և կոտորածի պատասխանատուների դատավճիռը արևմտահայերեն է թարգմանել Գրիգոր Կէրկերյան) «Յոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը»[54] շահեկան աշխատության մեջ։ Գրիգէրը բերել է նաև Յոզղաթի դատաքննությանը վերաբերող մի շարք վավերագրական նյութերի թարգմանություններ՝ թուրքերեն բնագրերով։ Դատավարությանը վեր-

բերող առանձին նյութերի հայերեն (համառոտագրված) թարգմանությունները՝ 1919—1920 թթ. մամուլից քաղված, բերված են նաև Ջ. Ս. Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ»[55] գրքում։

Ստորև ամբողջությամբ հրապարակվում են բնագրից հայերեն թարգմանված «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների, երիտթուրքական կառավարության դեկավարների, կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների, պաշտոնյաների դատաքննության նյութերը, որոնք առնչվում են արևմտահայության տեղահանության և կոտորածների հետ։ Թարգմանության մեջ չեն ընդգրկված կուսակցության համագումարների, կարգապահական հարցերի, ինչպես նաև պարենային և առևտրի խնդրում տեղի ունեցած չարաշահումներին վերաբերող նյութերը։

Իհարկե, դատաքննության նյութերը ամբողջական չեն, քանի որ հարցաքննությունների բոլոր արձանագրությունները չեն հրապարակվել «Թաքվիմ-ի վեքայի»-ի հավելվածներում։ Արևմտահայության տեղահանության և կոտորածին վերաբերող վավերագրական նյութերը (հեռագրեր, հրահանգներ, մեղադրյալների նախնական հարցաքննության արձանագրություններ, ականատեսի վկայություններ և այլն) ամփոփված են եղել ռազմական արտակարգ ատյանի 293 թղթապանակներում[56]։ Բնական է, որ դրանց ամբողջական հրատարակումը առավել մանրամասն կբացահայտեր երիտթուրքերի գործադրած վայրագությունները։

Դատավարության նյութերը թարգմանելիս աշխատել ենք հարազատ մնալ բնագրին։ Վերջում տրված են անհրաժեշտ ծանոթագրություններ, տերմինների բառարան և դատավարության օսմաներեն բնագրից մի շարք լուսապատճեններ, ինչպես նաև մեղադրական եզրակացության լատիներեն փոխադրությունը։

ՄԱՍՆ ԵՒԱՋԻՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335 Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ։

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ.
Գերագույն դատախազ՝ Մուստաֆա Նազմի բեյ։

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
1335 թ. (1919), ապրիլի 27, երկուշաբթի

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները — *Սայիդ Հալիմ փաշա, Խալիլ բեյ, Ահմեդ Նեսիմի բեյ, Իբրահիմ բեյ, [Քյուչյուկ]ª Թալաաթ բեյ, Ռիզա բեյ, Միդհատ Շյուքրի բեյ, Զիյա Գյոքալփ բեյ, Քեմալ բեյ, Ջեվադ բեյ, Աթիֆ բեյ։*

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների անունները — *Թալաաթ էֆենդի, Էնվեր էֆենդի, Ջեմալ էֆենդի, դոկտ. Նազըմ էֆենդի, դոկտ. Բեհաէդդին Շաքիր էֆենդի, դոկտ. Ռուզուհի էֆենդի, Ազիզ էֆենդի։*

Նախագահ — *Ձերդ մեծության անունը։*
Սայիդ Հալիմ փաշա — *Մեհմեդ Սայիդ Հալիմ։*
Նախագահ — *Հայրանունը։*
Սայիդ Հալիմ փաշա — *Հալիմ։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Սայիդ Հալիմ փաշա — *Հիսունվեց։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Սայիդ Հալիմ փաշա — *Կահիրեում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Սայիդ Հալիմ փաշա — *Ենի Քյոյում*[3]*։*
Նախագահ — *Ի՞նչ կրթություն ունեք։*
Սայիդ Հալիմ փաշա — *Բարձրագույն։*
Նախագահ — *Ամուսնացած ե՞ք։*
Սայիդ Հալիմ փաշա — *Այո՛։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*
Սայիդ Հալիմ փաշա — *Ո՛չ։*
Նախագահ — *Նստե՛ք։ Ձերդ մեծության անունը։*
Խալիլ բեյ — *Խալիլ։*
Նախագահ — *Հայրանունը։*
Խալիլ բեյ — *Սալիհ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Խալիլ բեյ — *Քառասունչորս։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Խալիլ բեյ — *Միլաս*[4] *կասաբայում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Խալիլ բեյ — *Ընշանթաշում*[5]*։*
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Խալիլ բեյ — *Բարձրագույն։*
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*
Խալիլ բեյ — *Մեջլիսի նախկին նախագահ։*
Նախագահ — *Ամուսնացած ե՞ք։*
Խալիլ բեյ — *Այո՛, ամուսնացած եմ։*
Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*
Ահմեդ Նեսիմի բեյ — *Ահմեդ Նեսիմի։*
Նախագահ — *Հայրանունը։*
Ահմեդ Նեսիմի բեյ — *Իբրահիմ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Ահմեդ Նեսիմի բեյ — *Քառասուներեք։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Ահմեդ Նեսիմի բեյ — *Հանիայում, Կրետե[կղզի]։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*

Ահմեդ Նեսիմի բեյ — *Ջաղալ-օղլու, Մահմուդին պողոտայում*[6]։
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Ահմեդ Նեսիմի բեյ — *Բարձրագույն։*
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*
Ահմեդ Նեսիմի բեյ — *Արտաքին գործերի մինիստր։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*
Ահմեդ Նեսիմի բեյ — *Ո՛չ, էֆենդի։*
Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*
Աբիֆ բեյ — *Աբիֆ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Աբիֆ բեյ — *Երեսունյոթ։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Աբիֆ բեյ — *Ջանակկալեում*[7]։
Նախագահ — *Որտե՞ղ եր բնակվում։*
Աբիֆ բեյ — *Կադը Քյոյում*[8]։
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*
Աբիֆ բեյ — *Անկարայի նախկին պատգամավոր։*
Նախագահ — *Կրթությունը։*
Աբիֆ բեյ — *Բարձրագույն։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*
Աբիֆ բեյ — *Ո՛չ, էֆենդի։*
Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*
Իբրահիմ բեյ — *Իբրահիմ։*
Նախագահ — *Հայրանունը։*
Իբրահիմ բեյ — *Մահմեդ Սահիբ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Իբրահիմ բեյ — *Հիսունութ։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Իբրահիմ բեյ — *Ստամբուլում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Իբրահիմ բեյ — *Փաշա-բաղչե, Ինջիր Քյոյում*[9]։
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Իբրահիմ բեյ — *Բարձրագույն։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*
Իբրահիմ բեյ — *Փառք աստծո, չունեմ։*
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*

Իբրահիմ բեյ — *Ավագանի եմ։ Նախկինում պետական խորհրդի նախագահ։*

Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*

Թալաթ բեյ — *Թալաաթ։*

Նախագահ — *Հայրանունը։*

Թալաթ բեյ — *Թահիր։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*

Թալաթ բեյ — *Երեսունութ։*

Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*

Թալաթ բեյ — *Պնշիկբաշում*[10]*։*

Նախագահ — *Կրթությունը։*

Թալաթ բեյ — *Բարձրագույն։*

Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*

Թալաթ բեյ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ։*

Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*

Թալաթ բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Ձեր ինքնությունը։*

Ռիզա բեյ — *Իմը հայտնի է։ Տրապիզոնի տեղահանության ընթացքում հայտնել էի*[11]*։*

Նախագահ — *Ձեր անունը*

Միդհատ Շյուրի — *Միդհատ Շյուքրի։*

Նախագահ — *Հայրանունը։*

Միդհատ Շյուրի — *Մեհմեդ Շյուքրի։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*

Միդհատ Շյուրի — *Քառասունհինգ։*

Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*

Միդհատ Շյուրի — *Սալոնիկում։*

Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*

Միդհատ Շյուրի — *Նուրի Օսմանիեյում*[12]*։*

Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*

Միդհատ Շյուրի — *Եղել եմ Բուրդուրի նախկին պատգամավոր։*

Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*

Միդհատ Շյուրի — *Ո՛չ, էֆենդի։*

Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*

Ջևդեթ բեյ — *Ահմեդ Ջևդեթ։*

Նախագահ — *Հայրանունը։*

Ջեվադ բեյ — *Մուստաֆա։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Ջեվադ բեյ — *Քառասունյոթ։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Ջեվադ բեյ — *Կազանլըքում*[13]։
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Ջեվադ բեյ — *Բայազեդի շրջանում*[14]։
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Ջեվադ բեյ — *Ավարտել եմ հրնտանային ուսումնարանը։*
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*
Ջեվադ բեյ — *Նախկինում եղել եմ մայրաքաղաքի պարեռը։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*
Ջեվադ բեյ — *Ո՛չ, էֆենդի։*
Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*
Զիյա Գյոքալփ — *Զիյա Գյոքալփ։*
Նախագահ — *Հայրանունը։*
Զիյա Գյոքալփ — *Թեվֆիկ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Զիյա Գյոքալփ — *Քառասուներեք։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Զիյա Գյոքալփ — *Դիարբեքիրում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Զիյա Գյոքալփ — *Ջաղալ - օղլույում*[15]։
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Զիյա Գյոքալփ — *Բարձրագույն։*
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*
Զիյա Գյոքալփ — *Նախկինում եղել եմ համալսարանի դասախոս։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*
Զիյա Գյոքալփ — *Այո՛, մի քաղաքական հարցով։*
Նախագահ — *Ո՞ր դատարանում։*
Զիյա Գյոքալփ — *Թաշ-Քըշլայի*[16] *դատարանում։*
Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*
Քեմալ բեյ — *Քեմալ։*
Նախագահ — *Հայրանունը։*
Քեմալ բեյ — *Արիֆ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Քեմալ բեյ — *Քառասուն։*

Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Քեմալ բեյ — *Ստամբուլում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Քեմալ բեյ — *Նուրի Օսմանիեյում։*
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Քեմալ բեյ — *Բարձրագույն։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցել ե՞ք։*
Քեմալ բեյ — *Ո՛չ, էֆենդի։*
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*
Քեմալ բեյ — *Եղել եմ պարենավորման նախկին մինիստր։*
Նախագահ — *Նստե՛ք։ Ձեր անունը։*
Շյուքրի բեյ — *Շյուքրի։*
Նախագահ — *Հայրանունը։*
Շյուքրի բեյ — *Հյուսեյն։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Շյուքրի բեյ — *Կաստամոնուում։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Շյուքրի բեյ — *Քառասուներեք։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Շյուքրի բեյ — *Տիշլիում*[17]*։*
Նախագահ — *Նախկին և ներկա պաշտոնը։*
Շյուքրի բեյ — *Նախկինում եղել եմ հանրակրթական մինիստր։*
Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցե՞լ եք։*
Շյուքրի բեյ — *Ո՛չ, էֆենդի։*

Նախագահ — *(Խոսքն ուղղելով քարտուղարին)- Փախուստի մեջ գտնվողներից որևէ մեկը ներկայացե՞լ է, թե՞ ոչ։ Կարդացե՛ք [որոշումը]։*

ՈՐՈՇՈՒՄ

«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի և մեջլիսի գլխավոր խորհրդի փախուստի մեջ գտնվող անդամներից նախկին մեծ վեզիր Թալաաթ փաշան, զինվորական շարքերից վտարված նախկին ռազմական մինիստր Էնվեր էֆենդին, նախկին ծովային մինիստր Ջեմալ էֆենդին, Հանրակրթական նախկին մինիստր դոկտ. Նազըմ բեյը, դոկտ. Բեհաէդդին Շաքիր բեյը, դոկտ. Ռուսուհի բեյը, և նախկին հասարակական անվտանգության տեսուչ Ազիզ բեյը մեղադր-

վում են [երկիրը] պատերազմի մեջ ներքաշելու, «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի («Հատուկ կազմակերպություն») հետ սերտ առնչություն ունենալու և այլ հանցագործություններ կատարելու համար։ Դատարան ներկայանալու համար քրեական օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն, նախագահության կողմից հատկացվել էր 10 օր։ Այդ ընթացքում չներկայանալու դեպքում նրանք համարվում են օրինազանցներ, և դատավարությունը նրանց նկատմամբ ընթանալու է հետևակա կարգով։ Այսպիսով, նրանք, չներկայանալով դատավարության, զրկվում են քաղաքացիական իրավունքից՝ ունեցվածքի բռնագրավումով, և այդ կապակցությամբ նրանք երբեք իրավունք չունեն դատական հայց ներկայացնելու։ Դատական պրոցեսի ընթացքում մեղադրյալների թաքստոցները իմացողները պետք է հայտնեն դատարանին, իսկ արդարադատության պաշտոնակատարները պարտավոր են անհապաղ ձերբակալելու նրանց։ Գլխավոր դատախազության կողմից վերոհիշյալներին կալանքի տակ առնելը և ունեցվածքի բռնագրավումը բխում է քրեական օրենսգրքի 372 հոդվածից։

Գլխավոր դատախազ Մուստաֆա Նազմի բեյ — *Նշե՛ք ամսաթիվը։*

Դատական քարտուղար — *Ապրիլի 14։*

Գլխավոր դատախազ — *Առայսօր չեն ներկայացել, ուստի պահանջում եմ նրանց դատել հետևակա կարգով։*

Նախագահ — *Նորին մեծություն Սայիդ Հալիմ փաշա՛. Ջելալեդդին Արիֆ և Հասան Հայրի բեյերը ձեր դատապաշտպաննե՞րն են։*

Սայիդ Հալիմ փաշա — *Այո՛, էֆենդի։*

Նախագահ — *Շատ լավ։ Խալիլ բեյ-էֆենդի. Էսադ և Քյազիմ բեյերը, ինչպես նաև Թահսին էֆենդին ձեր դատապաշտպաննե՞րն են։*

Խալիլ բեյ — *Այո՛, էֆենդի։*

Նախագահ — *Ահմեդ Նեսիմի բե՛յ. Շաքի և Էսադ Մուհլիս բեյերը ձեր դատապաշտպաննե՞րն են։*

Ահմեդ Նեսիմի բեյ — *Այո՛, էֆենդի։*

Նախագահ — *Հանրակրթության նախկին մինիստր Շյուքրի բեյ էֆենդի՛. Սադիդդին Ֆերիդ բեյը ձեր դատապաշտպանն է՞։*

Շյուքրի բեյ — *Այո՛, էֆենդի։*

Նախագահ — *Իբրահիմ բեյ էֆենդի՛. դուք ու՞մ եք դատապաշտպան ընտրել։*

Իբռահիմ բեյ — *Մահիր, Յուսուֆ, Ջեմալ և Կադրի բեյերին։*

Նախագահ — *Ջեմալ բե՛յ. Սադեդդին, էմին Ադիլ, Ահմեդ Ռամիզ և Հասան Հայրի բեյերը ձեր դատապաշտպաննե՞րն են։*

Միդհատ Շյուքրի բեյ — Այո՛, ինչպես նաև Սադեդդին Ֆերիդ և Ռամիզ բեյերը։

Նախագահ — Այստեղ նրանց անունները չկան, ուրեմն՝ նրանք ևս ձեր դատապաշտպաններն են։

Միդհատ Շյուքրի բեյ — Այո՛, էֆենդի։

Նախագահ — Զիյա Գյոքալփ բե՛յ. Հայդար Ռիֆաթ և Իսմայիլ Թևֆիկ բեյերը ձեր դատապաշտպաննե՞րն են։

Զիյա Գյոքալփ — Այո՛, էֆենդի։

Նախագահ — Փաստաբան էֆենդինե՛ր. ռազմական ատյաններում, ավելի ճիշտ ռազմական արտակարգ ատյաններում մեղադրյալների պաշտպանությունը դյուրացնելու կամ անհրաժեշտության դեպքում նրանց օժանդակելու համար օրենքը երբեք չի ստիպել և ընդհանրապես անհրաժեշտ էլ չի եղել դատավարության ընթացքում դատապաշտպանների ներկայությունը։ Այնպես որ, այս դատավարության բացարձակ արդար և անշահախնդիր ընթացքը վկայակոչելու համար ռազմական ատյանը թույլատրեց, որ այն ընթանա դռնբաց։ Այնուհանդերձ, ստիպված ենք ձեզ զգուշացնելու, որ այս թույլտվությունը չչարաշահեք և մինչև հարցաքննության ավարտը հակառակ օրենքի որևէ միջամտություն չկատարեք և բացարձակ լուռ մնալով՝ ունկնդրեք։

(Դիմելով դատական քարտուղարին)

— Խնդրեմ կարդացեք մեղադրական եզրակացությունը։

(Մեղադրական եզրակացությունը ընթերցում է դատական քարտուղար Շեֆիք բեյը)։

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանրամասն քննարկեցինք հարցաքննության վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև ռազմական ատյանի գլխավոր դատախազության վերոհիշյալ որոշումը, որը վերաբերում է լուծարքի ենթարկված «Միություն և առաջադիմություն» կուսակցության նախագահ՝ Սայիդ Հալիմ փաշայի, Մեջլիսի գլխավոր խորհրդի անդամներ Թալաաթի, Ջեմալի, Իբրահիմի, Շյուքրիի, Խալիլի, Ահմեդ Նեսիմիի, կուսակցության գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրիի, կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ստամբուլի պատգամավոր Քեմալի, Զիյա Գյոքալփի, դոկտ. Ռուսուհիի, Քյուչուկ Թալաաթի, ինչպես նաև նույն կոմիտեի անդամներ և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ղեկավարներ դոկտ. Բեհաէդդին Շաքիրի, դոկտ. Նազըմի, Ռիզայի և նույն կազմակերպության գործադիր կոմիտեի անդամներ՝ Նախ-

կին հասարակական անվտանգության տնօրեն Ազիզ բեյի և մայրաքաղաքի նախկին պարետ Ջեվադ բեյի դատաքննության։

Դատական փաստաթղթերը վկայում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն միաժամանակ բաղկացած է եղել երկու հատուկ կազմակերպություններից, որոնցից մեկը գործել է հրապարակայնորեն՝ կուսակցության ներքին կանոնադրության և ծրագրի համաձայն, իսկ մյուսը գործել է ընդհատակյա և գաղտնի հրահանգներով։ Փաստերը, որոնք հաստատում են այդ կոմիտեի վերոհիշյալ ադդենիկ ղեկավարների պատասխանատվությունը, վկայում են, որ կոմիտեն, նրա իրավական դեմքը, մեղադրվում է օրինազանցության, չարաշահումների և մի շարք կոտորածներ կատարելու հանցանքով։ Ստորև բերված փաստարկները լիովին ապացուցում են նրանց գործադրած հանցագործությունների չափը։

Անցած 1330 (1914) թվականի հուլիսին կուսակցության ադդենիկ ղեկավարների, այդ թվում ներկայումս զինվորական շարքերից վտարված, փախուստի մեջ գտնվող Էնվերի, Ջեմալի, Թալեաթի և մյուս գործընկերների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունից անմիջապես հետո, երբ պատերազմ հայտարարվեց, նրանք ձգտեցին օգտագործել այն առիթը, որ Եվրոպան զբաղված է համաշխարհային պատերազմով և աշխատեցին ահաբեկությամբ, բռնի ուժով լուծել այնպիսի հարցեր, որոնք կարելի էր հարթել հանդարտորեն, արդար և առողջ բանականությամբ։ Այդպիսով, իրենց ճակատագրական գործունեությամբ ստեղծեցին անվերջ խռովահույզ վիճակ՝ խիստ ծանրացնելով ժողովրդի կացությունը։

Արտաքուստ նրանք այնպես էին ձևացնում, թե իբր պայքարում են ազգային շահերի համար, մինչդեռ իրականում հետապնդում էին միայն իրենց անձնական շահը և պատերազմի հետ կապված ծանր հոգսեր ստեղծելով՝ աշխատում էին լռեցնել ժողովրդին։ Իրենց նենգ դիտավորությունները իրականացնելու համար նրանք ի վերջո կարողացան երկիրը ներքաշել համաշխարհային պատերազմի մեջ։ Ռազմական գործողությունների ընթացքում, իրենց գաղտնի ծրագրերը իրականացնելու համար, սկսեցին աշխուժացնել գաղտնի կոմիտեների գործունեությունը։ Այսպես, հանցագործներին բանտերից ազատ արձակելով, ստեղծվեց «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն, որն իր գաղտնի հրամաններն ու հրահանգներն ստանում էր Սաամբուլում ստեղծված հատուկ կոմիտեից, որի կազմի մեջ մտնում էին հասարակական անվտանգության տնօրեն Ազիզ բեյը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ Աբիֆ և դոկտ. Նազըմ բեյերը։ Կոմի-

տեի որոշումները հաստատվում և կյանքի էին կոչվում ռազմական շտաբի կամ Ստամբուլի պարետ Ջեվադ բեյի կողմից։

[«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի] գործակալներին և ընդհանրապես նրա գործունեության շրջաններն առաքվում էին հսկայական գումարներ։

Դոկտ. Բեհաէդդին Շաքիրը «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ղեկավարներին տվել էր ծածկագրի բանալին, տրամադրել ավտոմեքենաներ, դրամական մեծ գումարներ և այլ անհրաժեշտ միջոցներ։ Այս ձևով նա սկսել էր գաղտնապես իրագործել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրերը։

Առանձին շրջաններ ուղարկված այս կազմակերպության գործակալներից մի քանիսը, իրենց ղեկավարների ցուցմունքներով, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության այլ վայրերի կոմիտեների ներկայացուցիչներն ու պետական պաշտոնյաները, իբրև թե կուսակցության հրամանները կատարելու մղումով, կամ էլ որոշ մարդկանց գործադրած հարկադրանքի ներքո, առանց ազգի և հավատքի խտրականության, սկսեցին ժողովրդին կոտորել, կողոպտել, ունեցվածքը այրել և շատերին տանջամահ անել։ Չնայած որ ահաբեկման սլաքը հիմնականում ուղղված էր հայերի դեմ, այնուհանդերձ տուժեցին նաև [կայսրության] այլ տարրերն ու մեծ թվով թուրքեր[18]։

Ներկա հետաքննության գլխավոր հարցն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում, տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և հատկապես յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են վերոհիշյալ անձերից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով և գաղտնի հրամաններով։ Գրավոր ապացույցների, փաստաթղթերի և հավաստի վկայությունների հետաքննության արդյունքը հետևյալն էր։ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների կողմից սկզբնական շրջանում պատերազմական գործողություններին մասնակցելու համար ստեղծված «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն, ինչպես պարզ երևում է մեղադրական փաստաթղթերից, բացառապես գաղտնի բնույթ էր կրում, և նրա բուն նպատակը հանցագործ արարքներ կատարելն էր։ Այդ գաղտնի ցանցը ղեկավարում էին կենտրոնական կոմիտեի անդամներ՝ դոկտ. Նազըմը, Բեհաէդդին Շաքիրը, Աթիֆը, Ռիզան և հասարակական անվտանգության նախկին տնօրեն Ազիզ բեյը։ Սրանցից Բեհաէդդին Շաքիր բեյի կենտրոնը էրզրում քաղաքն էր, որտեղից նա ղե-

կավարում էր արևելյան վիլայեթների ուժերը։ Ազիզ, Աթիֆ և Նազըմ բեյերը գործում էին Ստամբուլում, որոնց արարքները հաստատում և կյանքի էր կոչում մայրաքաղաքի պարետ Ջևվադ բեյը։ Բեհաէդդին Շաքիր բեյին ուղղված № 150 գաղտնի կարգադրությունը բովանդակում է հետևյալը. «Կոմիտեն պահանջում է, որպեսզի գալաթացի Խալիլը պատժվի։ Ավանդադրված դրամը վերցվելու է փոստատնից և անհրաժեշտության դեպքում բաժանվելու է բնակչությանը» (տե՛ս գործ № 10, փաստաթուղթ № 1)[19]։

Այս փաստաթուղթը ստորագրել են Ազիզ, Աթիֆ և Նազըմ բեյերը և վավերացված է Ջևվադի ստորագրությամբ։ Ներքևում գրված է նաև «Դրդապատճառը՝ խարդավանք. դրամ հավաքելն է»։ Վերոհիշյալ կարգադրության հետ ուղարկված է նաև մի ծածկագիր հեռագիր «Ա. Ջևվադ» ստորագրությամբ, որտեղ ասված է. «Արդվին, Բեհաէդդին Շաքիր բեյին, վերծանել անձամբ»։

Խալիլ, Նազըմ, Աթիֆ և Ազիզ բեյերի ստորագրություններով Միդհատ Շյուքրի բեյին ուղղված № 59 գրությունը ցույց է տալիս, որ փախուստի մեջ գտնվող էնվեր բեյի հորեղբայր Խալիլ փաշան, Ստամբուլի պարետ եղած ժամանակ, նույնպես ընդգրկված է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ, որ տվյալ կազմակերպությունը ներքին կապ է ունեցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ։ Այդ ապացուցվում է նաև Խալիլ բեյի Իզմիտի քաղաքագլխին ուղարկած № 67 հեռագրով, որտեղ խոսվում է կալանավորներին բանտից ազատելու, առաջնորդներ նշանակելու և այլ ծրագրերի մասին (տե՛ս գործ № 10, փաստաթուղթ № 4)։

1330 (1914) թվականի նոյեմբերի 16-ին Խալիլ բեյի՝ ռազմական գերատեսչությանն ուղղված № 68 գրությունից պարզվում է, որ կործանիչ սարքերը ուղարկված են «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի համար։ Այս կազմակերպության վերաբերող թղթապանակներում գտնվում են նաև համանման այլ փաստաթղթեր։

Հետաքննությունից պարզվում է նաև, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին և կուսակցության կենտրոնական կոմիտեին վերաբերող կարևոր գրությունները մեջտեղից վերացված են։ Հավաստի ապացույցները վկայում են նույնպես, որ Թալաաթ բեյի պաշտոնանկությունից առաջ ներքին գործերի մինիստրությունից Հասարակական անվտանգության նախկին տնօրեն Ազիզ բեյին ուղղված հրահանգներն ու այլ կարևոր թղթակցությունները ետ չեն վերադարձվել (տե՛ս գործ № 31)։ Պարզվում է նաև, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն, դեռևս պատերազմ հայտարարելուց առաջ, նպատակադրված է եղել պատերազմի մեջ մտնելու։ Այս պա-

րագան անհերքելիորեն հաստատվում է 1330 (1914) թվականի օգոստոսի 17-ի կուսակցության գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյի ստորագրությունը կրող գրությունից, որը էրզրումի քաղաքագլխի միջոցով հանձնվել է Բեհաէդդին Շաքիր բեյին։

Դիարբեքիրում տեղի ունեցած խոշտանգումներն ու կոտորածները տեղի են ունեցել փախուստի մեջ գտնվող Թալաաթ բեյի դրդմամբ։ Այն հաստատվում է [Տեր]-Զորի մութասարրիֆ Ալի Սուադ բեյի կողմից հիշյալ Թալաաթ բեյին ուղարկված ծածկագիր հեռագրի բովանդակությունից, ուր խոսվում է վալիին և կոմիսար Մեմդուհին իր համհարզի հետ մահապատժի ենթարկելու անհրաժեշտության մասին։ Վերծանված պատասխան ծածկագիր հեռագրում կա «ի պահ դնել» նշումը։ (Գործ № 8, փաստաթուղթ № 1)։

Ներքին գործերի մինիստրության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնվելիս է եղել Քիլիսե կայմակամի պաշտոնում, Ստամբուլից Հալեպ գործուղված Արդուլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը [հայերի] ոչնչացումն է» և ավելացրել է նաև, որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալաաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրամանը, որ նա [Թալաաթը] ձգտել է համոզել իրեն, որ դա՛ է երկրի փրկությունը։ (Տե՛ս հարցաքննության փաստաթղթերը, էջ 15)։

Բալուի քաղաքագլուխ Մյուֆիդ բեյը 1331 (1915) սեպտեմբերի 11-ի թվագրությամբ ներքին գործերի մինիստրության ուղարկած ծածկագիր հեռագրով հաղորդել է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյը դեռևս Բալուի պատասխանատու քարտուղար եղած ժամանակ, Չանկըրիից դեպի Բալուի մութասարրիֆություն ուղարկած հեռագրով հայտնել է, որ Անկարայի վիլայեթից աքսորված հայերի ընդհանուր թիվը հասել է 61 000-ի, որ այդ տեղահանությունը նպատակահարմար է նախ տեղի մահմեդականների թիվը կայունացնելու, մյուս կողմից էլ, այն հետագայում նպաստավոր կլինի Բալուի համար (գործ № 8, փաստաթուղթ № 2)։ Այս փաստը վկայում է, որ տեղահանությունը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ այն տեղի է ունեցել գուտ կոմիտեի ցանկությամբ և նախաձեռնությամբ, ինչից և ներշնչվել է Միդհատ բեյը։

Կարճ ժամանակով Չանկըրիում գտնվող այս անձը հեռվից չէր կարող տպավորություն ունենալ Անկարայի վիլայեթի բնակչության մասին։ Նա սխալ կարծիք ուներ նաև իր վիլայեթի բնակչության մասին։ Չանկըրին մտնում է Կաստամոնուի մեջ և այդտեղի մահմեդականները շրջակա վայ-

գերում տնօրի ունեցող դեպքերին վերաբերվել են ատելությամբ։ Նույնիսկ մի օր, մի խումբ մեծամեծներ և ավագանիներ իրենց մյուֆթիի հետ դիմել են քաղաքագլուխ Ռեշիդ փաշային հետևյալ խոսքերով. «Շրջակա վիլայեթներից հայերին իրենց երեխաներով միասին մորթվող անասունների նման քշում են դեպի լեռները և այնտեղ կոտորում։ Մենք չենք ուզում, որ մեր վիլայեթում այդպիսի բան կատարվի։ Մենք վախենում ենք աստծո ցասումից։ Պետությունը ոչ թե դաժանությամբ է կառավարվում, այլ բանականությամբ։ Խնդրում ենք, որպեսզի մեր վիլայեթում այսպիսի կոտորած տեղի չունենա»։ Այս անձինք արտասվալի աչքերով հեռացել են քաղաքագլխի մոտից, խոսք առնելով, որ իրենց վիլայեթում նման արարք չկատարվի։ (Այս մասին արձանագրված է վկայությունների երկրորդ մասի 15-րդ էջում)։

Ստորև բերվում է էրզրումի վիլայեթի վալի Թահսին բեյի 1331 (1915) հուլիսի 15-ի թվագրությամբ ծածկագիր հեռագիրը, ուր խոսվում է «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի և նրա հետ համագործակցող ժանդարմների կողմից հայերի հանդեպ գործադրված բռնությունների և վայրագությունների մասին. «Ջայիք անունով մի լեյտենանտ տիրացել է Արաբյանի 4 աղջիկներին, իսկ լեյտենանտ Քյամիլ էֆենդին հափշտակել է 1863 լիրա գումար, 35 բեռ ապրանք և մեծ քանակությամբ գոհարեղեն։ Դրամի հափշտակությունը և կանանց հանդեպ գործադրված բռնությունները չափազանց ամոթալի և քաջության հետ ոչ մի առնչություն չունեցող երևույթներ են։ Անհրաժեշտ է այդ վայրագություններին վերջ տալ, հատկապես «Թեշքիլաթ-ը մահսուսե» անվան տակ բոլոր կողմերում դեգերող հրոսակներին։ Խարբերդի վալին հաղորդում է, որ բոլոր ճանապարհները լի են կանանց և երեխաների դիակներով, որոնց չեն հասցնում թաղել։ Լավ կլինի, որ մենք պաշտպաննենք մեր անցյալի քաջության նկարագիրը»։ (Գործ № 8, փաստաթուղթ № 4)։ Փախուստի մեջ գտնվող Թալաաթ բեյին ուղղված այս հեռագիրը պահվում է մեջլիսի 5-րդ բաժնի թղթապանակում։ Այս հեռագիրը հաստատում է [Տեր]-Զորի քաղաքագլուխ Ալի Սուադ բեյի վերոհիշյալ ծածկագիր հեռագրում արտահայտված գաղտնի նպատակները։

Ստորև բերվում է էրզրումի «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյի ստորագրությամբ Խարբերդի վալի Սաբիթ բեյին և Նազըմ բեյին ուղղված ծածկագիր հեռագրի բովանդակությունը, որի ֆոտոպատճենը գտնվում է № 9 գործում։

«Ընդբայր իմ, մեզ պարզորոշ տեղեկացրեք, այդտեղից ուղարկվող հայերին զտու՞մ եք, թե՝ ոչ։ Վտանգավոր մարդկանց, որոնց վտարման

ու աքսորի մասին հայտնել եք, ոչնչացնում եք, թե համփու եք դնում»։

Այս փաստը ցույց է տալիս, որ մինչև այսօր փախուստի մեջ գրտնըվող վերոհիշյալ Ռեսնելի Նազըմ բեյը, այդ ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի քննիչ-լիազորը լինելով, գաղտնի կապ է ունեցել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ և ըղբաղվել է հայերի բնաջնջման գործով։

Սամսոնի պատասխանատու քարտուղար Ռյուշդի բեյի ստորագրությամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին ուղղված հեռագիրը, ինչպես նաև Միդհատ Շյուքրի բեյի կողմից «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ներկայացուցիչ՝ դոկտ. Նազըմին հասցեագրված 1330 (1914) դեկտեմբերի 16-ի թվագրությունը կրող հետևյալ բովանդակությամբ հեռագիրը՝ «55 հոգուց բաղկացած չեթեների 5-րդ խումբը Թուֆան աղայի գլխավորությամբ մոտորային նավով ուղարկեք», լիովին հաստատում է, որ կուսակցության կոմիտեն կապված է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ և այլ վայրերում գտնվող նրա մասնաճյուղերը վաղուց ի վեր զբաղված են եղել հրոսակախմբեր պատրաստելու գործով։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության Բալըքեսիրի քննիչ-լիազոր Մուսայի ստորագրությամբ 1330 (1914) նոյեմբերի 20-ի թվագրությամբ Միդհատ Շյուքրի բեյին և դոկտ. Նազըմին հասցեագրված նամակների բովանդակությունից լիովին բացահայտվում է, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն համագործակցել է ներքին գործերի մինիստրության հետ՝ հրոսակախմբեր պատրաստելու գործում։

Կուսակցության Բրուսայի ներկայացուցչի 1330 (1914) թվականի դեկտեմբերի 19-ին կենտրոնական կոմիտեին ուղարկված գրությունը նույնպես հաստատում է, որ բանտերից դուրս բերված հանցագործներն ու ավազակներն ընդգրկվելու են «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ։ Նվ այս կապակցությամբ սկզբնական շրջանում ջանք գործադրվեց միամիտ մարդկանց համոզելու, որ այդ ավազակախմբերը իբրև թե մասնակցելու են պատերազմական գործողություններին։ Մինչդեռ վերոհիշյալ ապացույցներն ու բոլոր փաստաթղթերը ցույց են տալիս, որ այդ հրոսակախմբերը ստեղծված էին տեղահանված [հայերի] քարավաններն կոտորելու և ոչնչացնելու նպատակով։

Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալաաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և գիտությամբ (գործ 11)։ 1331 (1915) հուլիսի 21-ի թվագրությունը կրող Թալաաթ բեյի ծածկագիր հեռագիրը, որն ուղղված է Գիւարբեքիրի, Խարբերդի

քերդի, Ուրֆայի և [Տեր]-Զորի վալիներին և մութասարրիֆներին, հրահանգում է ճանապարհներին մնացած դիակները թաղելու, լքյալ գույքը վառելու և ընդհանրապես դիակները ձորերը, գետերը և լճերը չգցելու մասին։

Զորրորդ բանակի հրամանատար Ջեմալ բեյի 1331 (1915) հուլիսի 1-ի թվագրությամբ Դիարբեքիրի վալիին ուղղված մի այլ հեռագրից ենթադրվում է, որ Եփրատ գետի հարավային մասում, ջրի երեսին հայտնվող դիակները կարող են ապստամբական[20] շարժման ընթացքում սպանված հայեր լինեն, ուստի պահանջվում է, որ դրանք հավաքվեն և թաղվեն իրենց բնակավայրերում (գործ 11, փաստաթուղթ № 3)։

Ի պատասխան Ջեմալ բեյին, 1331 (1915) հուլիսի 3-ի թվագրությամբ «անձամբ» նշումը կրող հեռագրում ասված է. «Եփրատը առնչություն չունի մեր վիլայեթի հետ, հավանական է, որ այդ դիակները գալիս են Էրզրումի և Խարբերդի կողմերից։ Այստեղ, ապստամբության ընթացքում սպանվածների դիակները գցվում են ամայի վայրերում գտնվող խոր քարայրները կամ էլ այրվում են։ Թաղելը բացառված է»։

[Տեր]-Զորի նախկին մութասարրիֆ Ալի Սուադ բեյը հիշյալ լիվան ուղարկվող հայերի ճակատագրի մասին տեղեկություն տալով, նշել է, որ Հալեպի հեռագրական գործակալությունում աշխատող «Թասվիր-ի էֆքյար»[21] թերթի նախկին թղթակից Ակյահ բեյը [Տեր]-Զորի մութասարրիֆ Սալիհ Զեքի բեյի հետ զրուցելիս հարցրել է.«Քո մասին ասում են, որ 10 հազար հայ ես ոչնչացրել, ճի՞շտ է»։ Ի պատասխան այդ հարցումի, Զեքի բեյը պարծենալով ասել է, «Ես նամուս ունեմ, 10 հազարը ի՞նչ է որ, մի քիչ վերև բարձրացիր». (տես գործ 6 և 14, փաստաթուղթ № 4, ինչպես նաև գործ 11, փաստաթուղթ № 1)։

Խարբերդի վալիի կողմից Մալաթիայի մութասարրիֆին ուղարկված ծածկագիր հեռագրի առաջին մասում հաղորդվում է, որ ճանապարհներին շատ մեծ թվով դիակներ կան, և նրանք կարող են վտանգավոր հերին տևանքներ ունենալ։ Խորհուրդ է տրվում ղգուշացնել ներքին գործերի մինիստրությանը, որպեսզի վճռական քայլեր ձեռնարկվի այս հարցը անուշադրության մատնող պաշտոնյաներին պատժելու համար։ Նշվում է նաև, որ անհրաժեշտ է մի քանի ազդեցիկ ղեկավարների տրամադրության տակ բավարար թվով ժանդարմներ նշանակել՝ սահմանի ներսում գտնվող բոլոր դիակները թաղելու համար։ 1331 (1915) սեպտեմբերի 15-ի թվագրությամբ Ռեշիդի կողմից ներքին գործերի մինիստրությանն ուղարկված ծածկագիր հեռագրում նշվում է, որ Դիարբեքիրից արտաքսված հայերի թիվը հասնում է հարյուր քսան հազարի, որը ցույց է

տալիս կատարվող գործողության ծավալն ու նշանակությունը (գործ 12, փաստաթուղթ № 1)։

Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի ստորագրությունը կրող հեռագրում նշված է, որ հայերից որևէ մեկին հովանավորող մահմեդականը մահապատժի է ենթարկվելու իր բնակավայրում, և տունն էլ հրդեհվելու է։ Եթե հովանավորողը պետական պաշտոնյա լինի, ապա գործից վտարվելով՝ դատվելու է զինվորական դատարանով։ Եթե էլ զինվորական լինի, ապա որպես հանցագործ՝ կանգնելու է ռազմական բարձրատյանի առաջ, (գործ 13, փաստաթուղթ № 1)։ Այս խստությունները ցույց են տալիս, թե ինչու տվյալ վայրի մահմեդականները և մանր պաշտոնյաները չէին կարողանում տեղի ունեցող գազանությունների առջևն առնել։

Տրապիզոնի նախկին պատգամավոր Հաֆըզ Մեհմեդ բեյի տված ցուցմունքից (գործ № 15) բացահայտվում է, թե ինչպես հայերին Սև ծովի ափերին նավ նստեցնելով խեղդամահ են արել։ Նույնիսկ այս ողբերգության մասին, երբ ինքը հայտնել է Թալաաթ բեյին, վերջինս ոչ մի քայլ չի ձեռնարկել [Տրապիզոնի] վալի Ջեմալ Ազմիի նկատմամբ։ Այս հանգամանքն առավել ևս ծանրացնում է Թալաաթ բեյի հանցագործությունը։

Էրզրումի վալի Մյունիր բեյի 1331 (1915) դեկտեմբերի 14-ի թվագրությունը կրող ծածկագիր հեռագիրը (գործ № 16) ցույց է տալիս, որ հակառակ նախկին վալի Թահսին բեյի գործադրած ջանքերին, Էրզրումից Քըղիի ճանապարհով ուղարկված հայերի քարավանները կոտորածի են ենթարկվել Ներքին կոմիտեի անդամ Բեհաէդդին Շաքիր բեյի կազմած հրոսակախմբերի և դերսիմցիների[22] կողմից։

Ջեմալ Ասաֆ բեյի գրավոր ցուցմունքի մեջ (գործ № 18) նշված է, թե ինչպես տեղահանվածները կոտորածի են ենթարկվել քուրդ Ալոի ավազակախմբի կողմից, որը կազմակերպել էր Ջանկըրիի կուսակցության նախկին պատասխանատու քարտուղար, այժմ առևտրական Ջեմալ Օղուզ բեյը։ Այս հանգամանքը ևս ցույց է տալիս, թե ինչպես կենտրոնական կոմիտեն այս խնդրում համագործակցել է կուսակցության [շրջանային] ներկայացուցիչների հետ։

Հատկապես ուշադրության արժանի տեղեկություններ կան գնդապետ Խալիլ Ռիջայ բեյի ընդարձակ տեղեկագրում, որը կազմված է որոշակի անուններով և փաստացի վկայությունների հիման վրա (տե՛ս գործ № 2, էջ 1)։ Այսպես, Անկարայի տեղահանության քննիչ դատարանում «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական ակումբի

վարիչի մոտ ուղարկելով Թայիբ անունով մեկին, կենտրոնական կոմիտեն հրահանգել է, որպեսզի պաշտոնից հեռացվեն զինվորական առողջապահության հայ ծառայողները։ Մեմդուհ Շեվքեթ բեյը և նրա եղբայր Ռաֆեթ բեյը, այդ ժամանակամիջոցին Անկարայում լինելով, գործակցել են կենտրոնական կոմիտեի հետ և ձեռք բերել հսկայական կարողություն։ Տեղեկագրում նշվում է, թե ինչպես կուսակցության ներկայացուցիչ-քարտուղար Նեջատի բեյը միջամտել է Անկարայի տեղահանության գործին և այդ խնդրում իր եռանդուն մասնակցությունն է ցնցել նաև հիշյալ վիլայեթի նախկին ոստիկանապետ մանաստըրցի Բեհաէդդին բեյը։

Այն ժամանակ, երբ տեղի ռազմական դատարանը մեղադրական գործ է հարուցել վերոհիշյալ Բեհաէդդին բեյի նկատմամբ, նրան շտապ կանչել են Ստամբուլ։ Հակառակ ներքին գործերի մինիստրության ներկայացրած պահանջին, նրան վերաբերող հետաքննության փաստաթղթերը մնացել են տեղում։ Հետագայում նրա գործը քննարկվել է ռազմական մինիստրությունում, և այդպիսով վերջինս ազատվել է դատաքննությունից։

Հետաքննության արդյունքների համաձայն, նրանք, ովքեր քննադատել և չեն մասնակցել կատարվող ողբերգություններին, համարվել են հայրենիքի դավաճաններ, իսկ [մանաստըրցի] Բեհաէդդինի նման ակտիվ գործիչներն արժանացել են չափից ավելի հովանավորության։ Նույնիսկ ներքին գործերի նախկին մինիստր Թալաաթ բեյը հիշյալ [մանաստըրցի] Բեհաէդդին բեյին հատուկ ծանուցագրով ծառայության է ուղարկել արևելյան զորքերի օպերատիվ գործառնության հրամանատար Վեհիբ փաշայի մոտ։ Միաժամանակ նա աշխատել է Սամսոնի ռազմական ատյանում, այնուհետև նոր նշանակում ստանալով, մեկնել է անհայտ ուղղությամբ։ (Նրա մասին տրված ցուցմունքները գտնվում են Վեհիբ փաշային վերաբերող թղթապանակում)։

Փաստերը ցույց են տալիս, որ Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան ծածկագիր հեռագիր է ստացել Բեհաէդդին Շաքիր բեյից, ուր նշված է եղել, որ հայերի տեղահանության հարցը խիստ անհրաժեշտություն է (տե՛ս գործ № 2, էջ 13)։ Իսկ կուսակցության Կաստամոնուի քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդին, չնայած, որ իր ժամանակին զգուշացրել է [Ներքին գործերի] մինիստրությանը տեղի ունեցող տեղահանության, կոտորածի և այլ վայրագությունների մասին, սակայն նրա գործադրած ջանքերը մնացել են ապարդյուն։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության դումարած մի ժողովում նախագահը թաքրիր է ներկայացրել Թալաաթ բեյին, ուր նըկարագրված են եղել հայերի հանդեպ գործադրված դաժանություններն ու կոտորածները, և այս կապակցությամբ պահանջել է դատաքննության ենթարկել կուսակցության մի շարք շրջանային պատասխանատու քարտուղարների, այդ թվում դոկտ. Ռեշիդին, Ջեմալ Ազմիին, Սաբիթին, Մուամմերին, Աթիֆին և կալանատների ընդհանուր տնօրեն Իբրահիմ բեյին: Մինչդեռ Թալաաթ բեյը մի կողմ է շպրտել այդ թաքրիրը, ակնարկելով, որ այն պահվի:

Իզմիրի պատգամավոր Իհսան Օննիկ էֆենդիի յուցմունքում նշված է, որ երբ ինքը Իզմիրի «Սպորտինգ կլուբի» մեջ Թալաաթ բեյին ասել է, որ դոկտ. Նազըմը և իր գործընկերներն են իսկական բռնություն գործադրողները, Թալաաթը պատասխանել է. «Ես այս տեղացիներին մյուսների նման կենթարկեի նույն ճակատագրին» (տե՛ս գործ № 3):

Վահիբ փաշայի վկայության մեջ (տե՛ս գործ № 7, էջ 3) նշվում է, որ հայերի նկատմամբ կատարված վայրագություններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից: Նվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր գազանությունների իրագործման համար, Բեհաէդդին Շաքիր բեյը երրորդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մարդասպաններ և անձամբ ղեկավարել նրանց: Նույնիսկ պետության ղեկավարները ենթարկվել են Բեհաէդդին Շաքիրի հրամաններին և հրահանգներին: Երրորդ բանակի կողմից կատարված բոլոր բռնությունների, խարդավանքների և բանսարկությունների մտահղացողը նույնպես եղել է Բեհաէդդին Շաքիրը: Նրա կողմից հավաքագրված մարդկանց մի մասը եղել են մահապատժի ենթակա հանցագործներ, իսկ մի մասն էլ՝ արնախում ժանդարմներ ... Գրավոր բերված բոլոր յուցմունքները մեղադրական հավաստի ապացույցներ են՝ ուղղված «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի և մեջլիսի անդամների դեմ:

Հարցաքննության վերաբերող փաստաթղթերի 6-րդ էջում նշված է, որ Սուլեյման Նազիֆ բեյը Բաղդադից դեպի Դիարբեքիրի սահմանամերձ շրջանները գալու ժամանակ դիակների գարշահոտությունից փակել է քիթը[23]: Երբ Ջեմալ փաշան հարցում է կատարել Թալաաթ բեյին Կոնիայի նախկին վալի Ջելալ բեյին Հալեպից հեռացվելու մասին, վերջինս պատասխանել է, որ հայկական հարցին վերաբերող իր տեսակետը համընկնում է կենտրոնական կառավարության տեսակետի հետ, որ

գոկտ. Նազըմի կողմից ուղարկված պատգամավոր Ալի Ռիզայի նշանակման հարցը վճռված է եղել կաբինետական կոմիտեում մանրամասն քննարկվելուց հետո։

[Ջելալ բեյի][24] հեռացման պատճառը այս ձևով բացատրվելուց հետո, երբ [Ջեմալ փաշան] այս հարցի վտանգավորության մասին Ստամբուլում զգուշացրել է Թալաաթին և Նազըմին, նրանք պատասխանել են, որ դա անհրաժեշտ է և օգտակար։ Դոկտ. Նազըմը նույնիսկ ասել է, որ այս նախաձեռնությունը վերջնականապես կլուծի արևելյան հարցը։

Հայրի էֆենդին իր վկայության մեջ նշում է, որ ինքը ամեն ջանք գործադրել է այդ բոլորը կանխելու, բայց և այնպես տեղահանության և կոտորածին հակառակվելու համար իրեն ևս հեռացրել են պաշտոնից (հարցաքննության թղթապանակ, էջ 17)։ Քաղաքացիական հետաքննության հանձնաժողովի նախկին տնօրեն Համիդ բեյի տված ցուցմունքից պարզվում է, որ Անկարայի նախկին վալի Մազհար բեյը հեռացվել է պաշտոնից, իսկ Դիարբեքիրի վալին ոչնչացրել է իր երկու կայմամեկամներին այն բանի համար, որ նրանք դեմ են եղել [հայերի] տեղահանությանը, ինչպես նաև արաբների դեմ գործադրվող բռնություններին ու սպանություններին։

Հարցաքննության վերաբերող թղթապանակի 34, 38, 43 էջերում տրված է ֆինանսների մինիստրության եկամուտի բաժնի ընդհանուր տնօրեն Լութֆի բեյի ցուցմունքը, որը վերաբերում է կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյի գործունեությանը, ինչպես նաև Տրապիզոնում կատարված ողբերգությանը և նրա պատասխանատուներին։

Բեհաէդդին Շաքիր բեյի էրզրումից Անթալիայի մութասարրիֆին ուղարկած ծածկագիր հեռագրում նշված է. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ո՛չ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսվել են Մոսուլի և [Տեր]-Զորի կողմերը։ Իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»։

Անթալիայի նախկին մութասարրիֆ Սաբուր Սամի բեյը իր բացատրագրում (հարցաքննության թղթապանակ, էջ 44) նշում է, որ այս հեռագրի պատճենը ինքն ուղարկել է Թալաաթ բեյին, բայց ոչ մի պատասխան չի ստացել։ Անկարայի տեղահանության և այդ տեղի կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջատի բեյի մասին Ռաուֆ բեյի տված տեղեկությունները բավարար ապացույցներ են այդ ամբաստանության հաստատելու համար։

Բնհաէդդին Շաքիր բեյը ներքին գործերի մինիստր Թալաաթ բեյի միջոցով ծածկագիր հեռագիր է ուղարկել կենտրոնական կոմիտե՝ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի փաստաթղթերի թղթապանակներից մեկում հայտնաբերված և 69 համարի տակ վերծանված այդ հեռագրի հակառակ կողմում, որպես պատասխան, գրված է հետևյալը. «Քանի որ այլևս այդտեղ գործ չունեք, Արդվինից առավել կարևոր մի պաշտոն ստանձնելու համար շտապ շարժվեք դեպի Տրապիզոն։ Այստեղից մեկնող Յաֆուբ Ջեմիլ[25] բեյը ձեզ կբերի անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը»։

Այս [հեռագիրը] լիովին հաստատում է նրանց միջև գոյություն ունեցող ներքին կապն ու համագործակցությունը[26]։

Մեղադրվող մինիստրները հարցաքննության ընթացքում պատճառաբանել են, որ իրենց գործը ըստ պաշտոնավարության լսվելու է ոչ թե ռազմական ատյանում, այլ սահմանադրական սկզբունքով կազմված գերագույն դատարանում։ Ավելորդ է բացատրել, որ նրանց կողմից հիշատակված 92-րդ հոդվածը «մինիստրի կամ մինիստրների խորհրդի անդամի պաշտոնավարությամբ» վերաբերում է քաղաքական հանցագործությանը։ Սահմանադրական օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն մինիստրներին սովորական հանցագործություն կատարելու կամ մասնակցություն ունենալու դեպքում ոչ մի արտոնությունից օգտվելու իրավունք չի վերապահվում։ Նման հանցագործությունները քննելու հարցը մտնում է սովորական դատարանների իրավասության մեջ։ Արտակարգ դրություն հայտարարված շրջաններում քաղաքացիական օրենքների և դատարանների փոխարեն իրավասություն են ձեռք բերում ռազմական ատյանները։

Սպանություններին և բռնագրավումներին վերաբերող հոդվածների հաստատումը մտնում է ռազմական ատյանի իրավասության մեջ և ըստ մեղադրական եզրակացության բովանդակության, պաշտոնի հարցում ոչ մի վերապահություն չի կատարվելու։

Այսպիսով, մեղադրյալների դատապաշտպանների կողմից առաջ քաշված դատական անիրավասության հարցը վերացվում է։ Վերևում բերված փաստերի ու վկայությունների հիման վրա դոկտ. Բնհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ, Աբիֆ, Ռիզա, Ջեվադ, Ազիզ, Էնվեր, Ջեմալ և Թալաաթ բեյերը, որպես հանցագործության անմիջական մասնակիցներ՝ մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին կետով և 171-րդ հոդվածով[27]։ Սայիդ Հալիմ փաշան, Միդհատ Շյուքրի, դոկտ. Բեհաէդդին, Քյուչյուկ Թալաաթ, Զիյա Դյոքյոլփ, Քեմալ, Ահմեդ Նեսիմի,

Շյուքրի, Իբրահիմ, Խալիլ բեյերը, չնայած որ անմիջական մասնակցություն չեն ունեցել կատարված հանցագործություններին, բայց գիտակցաբար համագործակցելով, անուղղակիորեն մասնակցել են վերոհիշյալ հանցագործություններին, որի համար էլ մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի երկրորդ մասով։ Մեղադրյալների դատաքննության գործը ներկայացվում է Ստամբուլի կայսերական ռազմական ատյանին, իսկ մեղադրական փաստաթղթերի մանրամասն հետաքննությանը՝ նույն ատյանի դատախազությանը[28]։

10 ռեջեբ 1337 թ. [1919 թ. ապրիլի 12]։

Նախագահ — «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներ հանդիսացող այս անձինք ընդհանուր ժողովի և կենտրոնական կոմիտեի որոշմամբ ընթացան սխալ ճանապարհով և, հատկապես, օգտվելով համաշխարհային պատերազմի ճգնաժամից, իրենց մոլի նպատակներն ու տհաճ թվացող հարցերը ձգտեցին իրագործել հափճապորեն և դաժանությամբ։ Ո՛չ մի ողջամիտ մարդ չէր կարող համաձայնվել նրանց գործադրած այդ արարքների հետ։ Նրանք արտաքուստ ցույց էին տալիս, թե իբր պաշտպանում են ազգային շահերը և ապահովում երկրի ամբողջականությունը, մինչդեռ իրականում իրենց նախաձեռնած գործողություններով մեծ դժվարություններ ստեղծեցին պետության քաղաքականության և տնտեսության ասպարեզում։ Այդ ձևով ընդհանուր զորահավաքի կապակցությամբ բոլոր կողմերում հայտարարված արտակարգ դրությունից օգուտ քաղելով, սկսեցին ժողովրդին բարոյապես ճնշել, բռնություններ գործադրել և մեծ դժվարություններ ստեղծել պետության կառավարման գործում։ Խոսքի ազատության նշույլն անգամ չէր մնացել։ Ժողովրդին հասցված վնասը չափ ու սահման չուներ։ Մյուս կողմից, իրենց դիվային ծրագրերը իրականացրին իրենց իսկ կազմակերպած մարդասպան հրոսակախմբերի միջոցով։ Գործադրված դաժան արարքները ոչ միայն առնչություն չունեն օսմանյան օրենքների և կանոնադրությունների հետ, այլև անհամատեղելի են մեր հավատքին[29]։ Բնական է, որ այդ բաղում բռնություններն ու վայրագությունները խոր ատելություն առաջացրին մարդկանց սրտերում։ Արդ, որպես անմիջական մասնակիցներ, դուք ևս մեծ դեր եք խաղացել այդ հանցագործությունները գործադրելու խնդրում, որի համար էլ մեղադրվում եք։ Ուշադիր եղեք, այդ մեղադրանքը բացահայտվելու և ապացուցվելու է դատախազի կողմից (խոսքն ուղղելով դատախազին)՝ խնդրեմ։

Դատախազ Մուստաֆա Նազմի բեյ — Դատարանում ներկա գտնվողների և բացակաների ամբաստանության վերաբերող քրեական հոդվածները պարզաբանված են մեղադրական եզրակացությունում։ Իսկ մեղադրանքին վերաբերող բոլոր փաստաթղթերն ու վկայություններն անվանական կարգով դասավորված են թղթապանակների մեջ։ Ես կարծում եմ, որ ավելորդ ժամանակ չվատնելու համար անհրաժեշտություն չկա այդ բոլորի վրա կրկին կանգ առնելու և այսօրվա համար նշանակված դատաքննությունը հետաձգելու հաջորդ օրվան։ Հարցաքննության ընթացքում ճշմարտությունը բացահայտվել է կատարելապես։ Այնուհանդերձ դատաքննության կարևորության և նրա միայն արդարության վրա հիմնվելու փաստը ապացուցելու նկատառումով ուզում եմ մի քանի խոսք ևս ավելացնել։ Հայտնի է, որ ազգերի համատեղությունը, պետությունների գոյատևումը ուղղակի առնչվում են իրավունքի, արդարության և հավասարության կատարյալ ապահովության հետ։ Հետևաբար, մի երկրում իրավունքի և արդարության առկայությամբ է պայմանավորված այդ երկրի հասարակական կյանքի գոյատևումը։ Այդ գործոնների բացակայության դեպքում հասարակությունը չի կարող հարատևել։ Տարիներ ի վեր Օսմանյան կայսրության մեջ տարբեր ազգությունների առկայությունը մեծ դժվարություններ է հարուցել և դրժբախտաբար երբեմն նրանք իրար հետ բախվելով, արյունալի էջեր են արձանագրել նրա պատմության մեջ[30]։ Օսմանյան օրենսդրության, օսմանցու խղճին անհարիր այնպիսի հանցագործություններ են տեղի ունեցել, որոնք երբևէ չէին կարող ընդունվել սուլթանության և մեծն խալիֆայության կողմից։ Օսմանյան օրենքները, որոնց թարգմանն եմ ես այսօր, երբեք չեն կարող հանդուրժել և ներել այդ բոլորը։ Օսմանյան տարածքում անպատիժ մնացած հանցագործություններն պատժվելու են օսմանյան օրենքի համապատասխան հոդվածներով։ Պիտի հատուցվի զոհ գնացած անմեղ մարդկանց արյունը և արդարություն տենչացող օսմանյան ժողովուրդներն ի վերջո պիտի հասնեն դրան։ Իրականում օսմանյան տարածքում գտնվող երկրները ծարավի են արդարության։ Դարերի ընթացքում իսլամի բոլոր ավանդույթների աստիճանաբար թուլացման հետևանքով այդ երկրները չեն կարողացել ինչպես հարկն է օգտվել նրա իրավական կանոններից։ Իրավունքն ու արդարությունը վերականգնելու ներշնչանքով է, որ մահմեդականները, քրիստոնյաները և բոլոր ազգություններն ամեն կերպ նեցուկ են կանգնել 1908 թվականի սահմանադրությանը։ Չնայած այն բանին, որ բոլոր մտավորականներն ու պետականից մարդիկ իրենց ուժերով ջանացին վերահաստատել սահմա-

նադրությունը, ավա՜ղ, արդարության ու իրավունքի պաշտպանության փոխարեն երկրում ծայր առան անթիվ անհամար վատ երևույթներ, որոնց հետևանքով էլ օսմանյան ազգությունները սկսեցին իրարից մեկուսանալ։ Հուսախաբ եղան նաև բազմաթիվ հայրենասեր անձինք։ Սահմանադրության հռչակումից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցության թելադրանքով կատարված սպանությունները, ավերածությունները, վայրագությունները, չարաշահումները ծանր հետևանքներ թողեցին ժողովրդի վրա։ Օսմանյան պետության համար մեծ աղետ եղան նաև համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արյունահեղություններն ու կոտորածները։

Բարբարոսաբար իրականացված կոտորածները, անարգ չարաշահումները, դժբախտաբար, նույնպես վերագրվում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին, նրա պլենումներին և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի գործունեությանը։ Եվ այս անձնավորությունները դատի են տրված ոչ թե մինիստրի պաշտոնում գտնվելու համար, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության մեջ դեկավար դիրք ունենալու և կենտրոնական կոմիտեի անդամ լինելու հանգամանքով։ Կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը, օսմանցիների ճակատը մրոտած սև բծերը կարելի է ջնջել միմիայն արդարության գրչով։ Եվ այս ձևով ջնջելու համար նրանց դեմ հայտարարվում է չիհատ։ Պատժվելու են հանցագործություն կատարած մահմեդական թե քրիստոնյա անձինք։ Դատախազությունը չի կոչված միակողմանի հետաքննություն կատարելու։ Բոլոր դատախազությունների նման մենք ևս պատրաստ ենք բողոքները քննարկելու և լսելու տուժած կողմի գանգատները։ Լինի մահմեդական կամ քրիստոնյա, օսմանցու թափած արյունը անհատույց չի մնալու։ Այդ աղետալի բախումների ընթացքում մահմեդական սպանող քրիստոնյա օսմանցիների նկատմամբ նույնպես հետաքննություն եմ կատարելու[31]։ Այնպես որ, հանցագործները պատժվելու են, և արկածախնդրական պատերազմի պատճառով անմեղ մարդկանց խորցրած արյունը հատուցվելու է այս բարձր ատյանում։ Ամբողջ մահմեդական աշխարհի խալիֆ, օսմանցիների փադիշահ՝ Նորին մեծություն Մեհմեդ խանը[32] հաստատակամորեն վճռել է, որ լիովին վերականգնվի իսլամի արդարությունը։ Նույն նպատակն է հետապնդում նաև ներկայիս կառավարությունը։ Մի խոսքով, օսմանյան ազգությունները խորը վստահություն են տածում իրենց փադիշահի արդարացի որոշման և այս Բարձր ատյանի[33] արդարադատ գործունեության նկատմամբ։ Համոզված ենք, որ դաշնական այս հանձնաժողովը գործադրելու է իր բո-

լոր կարողությունները՝ հիմնվելով միմիայն խղճի և արդարության վրա։ Բնական է, որ արդար դատարանի վրա չի կարելի քաղաքական վրեժխնդրության նկատառումներով ճնշում գործադրել և կամ վերապահումներ անել։ Ո՛չ մի պետություն կամ քաղաքակիրթ ժողովուրդ օսմանյան պետությունից և դատարանից ցայսօր չեն պահանջել և չեն էլ կարող պահանջել, որպեսզի պատժի ենթարկված հանցագործը արդարացվի։ Մեզանից պահանջվում է հանուն մարդկային իրավունքի պաշտպանության գործադրել արդարադատությունը։ Նույնիսկ մեծն խալիֆները հարգանքով գլուխ են խոնարհել իսլամի արդարադատության առաջ։ Օսմանյան դատարանի և դատավորների առաջ նույն վերաբերմունքը պիտի ունենան նաև մինիստրներն ու վեզիրները։

Մեղադրական եզրակացությունում ցույց տրված և անմիջական իրենց հեղինակությամբ կատարված հանցագործությունների համար մեղադրվում են դոկտ. Բեհաէդդին Շաքիրը, Նազըմը, Աթիֆը, Ռիզան, Ջևվադը, Ազիզը, Էնվերը, Ջեմալը և Թալաաթը։ Այդ հանցագործություններին անուղղակիորեն մասնակցություն ունենալու համար մեղադրվում են Միդհատ Շյուքրին, դոկտ. Ռուշտուին, Քյուչյուկ Թալաաթը, Զիյա Գյոքալփը, Քեմալ բեյը, Սայիդ Հալիմ փաշան, Ահմեդ Նեսիմին, Շյուքրին, Իբրահիմը և Խալիլը։ Օսմանյան արդարադատության հիման վրա պահանջում եմ սրանց ենթարկել դռնբաց դատաքննության։

(Նախագահից ձայն է խնդրում դատապաշտպան Ջելալեդդին Արիֆ բեյը)։

Ջելալեդդին Արիֆ բեյ — Տվյալ դատաքննության՝ այս բարձր ատյանի իրավասության մեջ մտնելու հարցը, ըստ օրենքի քննարկելու անհրաժեշտություն է զգացվում։ Հայտնի է, որ Սայիդ Հալիմ փաշան, Խալիլ, Նեսիմի, Իբրահիմ և Շյուքրի բեյերը մինիստրներ են եղել նախկին կառավարության մեջ։ Եթե ուշադրություն դարձնենք սահմանադրության պետական մինիստրներին վերաբերող 31 և 33-րդ հոդվածներին, ապա կտեսնենք, որ մինիստրների և այլ պետական բարձր պաշտոնների հետ առնչվող դատական գործերը քննարկվելու են միմիայն գերագույն դատարանում, իսկ պաշտոնից զուրս իրենց անձին վերաբերող դատական գործերը կարող են լսվել ընդհանուր դատարաններում։ Սահմանադրության 23-րդ հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր անձի դատական գործը լսվելու է միմիայն օրենքով հաստատված դատարաններում»։ Արդիսով, մինիստրների գործը, օրենքի նշած այդ կետերի համաձայն, պետք է լսվի գերագույն դատարանում[34]։

Դատախազ՝ Մուստաֆա Նազմի բեյ — *[Դատապաշտպանների] կողմից առաջ քաշված պաշտոնի և իրավասության հարցի մասին ես ևս ուզում եմ հայտնել իմ տեսակետը (ձայներ՝ չի լսվում)։ Այս դատաքննության ռազմական ատյանում կամ սահմանադրության մեջ նշված գերագույն դատարանում լսելու հարցը բխում է այդ հանցագործությունները պաշտոնավարության ընթացքում կատարելու կամ չկատարելու հանգամանքից։ Ինչպես բացահայտվեց մեղադրական եզրակացության մեջ, ցույց տրված հանցագործությունները տեղի են ունեցել ոչ թե պաշտոնավարության բերումով, այլ կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև նրա պլենումների գործադրած հանցագործություններին մասնակից գառնալու հանգամանքով։ Հետևաբար այս դատավարությունը պաշտոնավարության հիման վրա մեկնաբանելու խնդիրը բացառված է։ Երդմնակային հանցագործության մասնակից դառնալու Իբրահիմ բեյի խնդիրը դեռևս պարզորոշ չէ։ Մեզ տեղեկացրին, որ մինիստրների խորհրդից մի շարք փաստաթղթեր հանձնվելու են դատախազությանը։ Դատաքննության ընթացքում հանցանքի միմիայն պաշտոնավարության հետ կապ ունենալը եթե հաստատվի, ապա այդ ժամանակ տվյալ կետին ուշադրություն կդարձվի։ Այլ դեպքում պաշտոնի և իրավասության հարցը բնավ օրակարգի հարց չի կարող դառնալ, քանի որ առկա փաստերը վկայում են, որ այդ դատավարությունը մտնում է ձեր իրավասության մեջ։ Մեղադրական եզրակացությունում փաստերը ցույց են տալիս, որ գործադրված հանցագործություններն անձնական բնույթ են ունեցել։ Եթե դատավարության ընթացքում [հարցն] այլ բնույթ ընդունի, ապա այդ հանգամանքը նկատի կառնվի։*

Նախագահ — *Մենք մեր վճիռը կհայտնենք անհրաժեշտ քննարկումից հետո։*

Takvim-i Vekai, 27 Nisan 1335 (1919) № 35 0 (ilave)

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ[35]

1335 (1919) թ. մայիսի 4

[Սեամբուլի ճակատին պարետ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ՝ Ահմեդ Ջեվադ բեյի հարցաքննությունը]։

Նախագահ — *Համաշխարհային պատերազմի ընթացքում կուսակցության կողմից կազմակերպված «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ որևէ պաշտոն ա՞ռել եք։*

Չեվադ բեյ — [1914 թ.] դեկտեմբերի կեսերին ընդունեցի մայրաքաղաքի պարետի պաշտոնը, դրա հետ առնչվող հրշեջային գունդը և այլ զորամասեր։ Ինձ հետո ասացին, որ դրանք ռազմական մինիստրության հետ կապ ունեցող «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի [զորագնդերն են]։

Նախագահ — Ինչպիսի՞ն էր այդ «Թեշքիլաթ»-ը։

Չեվադ բեյ — Ես չգիտեմ, թե մինչև իմ ընդունելը այն երբ է կազմակերպվել։ Սկզբում նրա ղեկավարը Սուլեյման Ասքերի բեյն էր, հետո Խալիլ բեյը նշանակվեց։ Նրանից հետո էլ ես ընդունեցի։ Ինձ հանձնված ռազմամթերքի և օպերատիվ գործողությունների ծրագրերն իրագործելու համար ես միջնորդի դեր էի կատարում ռազմական մինիստրության պաշտոնատների միջև։ Այդ գործողություններն իրագործելու համար կային բավականաչափ թվով սպաներ, որոնք ծառայում էին զանազան մասնաճյուղերում։ Այդ ժամանակ նրանց շարքերում էին գտնվում նաև դոկտ. Նազըմը, Աթիֆ բեյը և հասարակական անվտանգության տնօրեն Ազիզ բեյը։

Նախագահ — Բացատրություն տվեք «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մասնաճյուղերի մասին։

Չեվադ բեյ — Այդ ժամանակ հատկապես զբաղված էինք Կովկասի գործերով։

Նախագահ — Քանի՞ մասնաճյուղ կար։

Չեվադ բեյ — Իմ պաշտոնավարության ընթացքում զբաղված էինք միայն կովկասյան գործողություններով և մեկ էլ Տրիպոլիի հարցերով։

Նախագահ — Այն բաժանված էր արդյո՞ք մասնաճյուղերի։

Չեվադ բեյ — Այո, բաժանված էր և յուրաքանչյուր մասնաճյուղի համար նշանակված էր մի սպա։

Նախագահ — Ի՞նչ պարտականություններ ունեին այդ մասնաճյուղերը։

Չեվադ բեյ — Մասնաճյուղերի պարտականությունը Կովկասի ներսում մի շարք կամավորական կազմակերպություններ ստեղծելն էր։

Նախագահ — Ո՞ր մասնաճյուղի մասին է խոսքը։

Չեվադ բեյ — Կովկասի մասնաճյուղի։

Նախագահ — Ինչպե՞ս հասկանալ. «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին հետևում էր մի կազմակերպություն, իսկ ֆինանսական հաշիվներին մի՞ այլ կազմակերպություն։ Բացատրություն տվե՛ք. ֆինանսական հաշիվներին, ռոճիկներին, համազգեստին հետևելը ո՞ր մասնաճյուղերի պարտականության մեջ էր մտնում։

Չեվադ բեյ — Դրանց համար նշանակված էին մի շարք սպաներ, որոնք հետագայում միացան [գինվորական] անձնակազմին։ Ռիզա անունով մեկը հետևում էր Կովկասի «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին։

Նախագահ — Ես հարցնում եմ կենտրոնական [կոմիտեի] «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մասին։ Ձեր գործընկերներից ովքեր էին գտնվում նրա կազմում։

Չեվադ բեյ — Մեծարգո փաշա, նրանք անմիջականորեն իմ տրամադրության տակ չէին գտնվում։ Պարետային հրամանատարությունը և նրանց ղեկավարությունը տարբեր պաշտոնատներում էին կատարում իրենց պարտականությունները։

Նախագահ — Միթե՞ նրանց պաշտոնավարությունը ձերի համեմատ տարբեր բնույթ էր կրում։

Չեվադ բեյ — Այո՛, էֆենդի։

Նախագահ — Որտե՞ղ էր գտնվում ձեր պաշտոնատեղին։

Չեվադ բեյ — Պարետային հրամանատարությունը գտնվում էր ռազմական մինիստրությունում։

Նախագահ — Իսկ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի պաշտոնատեղին որտե՞ղ էր գտնվում։

Չեվադ բեյ — Նուրի Օսմանիեի կողմերում։

Նախագահ — Այդ գործերով զբաղվող քանի՞ մասնաճյուղ կար այնտեղ։

Չեվադ բեյ — Արիֆ բեյ անունով մեկը կար, որը հետևում էր միայն Մակեդոնիայի գործերին։

Նախագահ — Բնութագրեք Արիֆ բեյին։

Չեվադ բեյ — Խոսքը կապիտան Արիֆ բեյի մասին է։ Ռիզա անունով մի կապիտան կար, որը լայն արտոնություններ ուներ։ Կար նաև Մուխտար բեյ անունով մի այլ կապիտան, ինչպես նաև կայմակամ Հյուսամեդդին բեյը։

Նախագահ — Սրանք ի՞նչ պաշտոն ունեին։

Չեվադ բեյ — Ղեկավարում էին օպերատիվ գործողությունները։

Նախագահ — Քիչ առաջ Ձեր կողմից նշված դոկտ. Նազըմ բեյը և նրա գործընկերները ի՞նչ պարտականություն ունեին։

Չեվադ բեյ — Նրանք ընդգրկված էին կամավորներ հավաքագրելու գործին։ Դրա համար էլ գտնվում էին այնտեղ։

Նախագահ — Նրանք ի՞նչ կապ ունեին ձեզ հետ։

Չեվադ բեյ — Ոչ մի կապ, էֆենդի։

Նախագահ — Եթե ոչ մի կապ չունեին, ինչու՞ էին ձեզ մոտ գտնվում։

Չեվադ բեյ — Նրանք մեզ մոտ չէին գտնվում։

Նախագահ — Այսինքն ձեր պաշտոնատեղիում։

Չեվադ բեյ — Նրանք «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի պաշտոնատանն էին գտնվում։

Նախագահ — Դուք այնտեղ չէի՞ք լինում։

Չեվադ բեյ — Ես հաղվադեպ էի այնտեղ լինում։

Նախագահ — Գնալ-գալու ժամանակ ձեզ հետ չէի՞ն տեսակցում։

Չեվադ բեյ — Տեսակցում էին։

Նախագահ — Ի՞նչ հարցերի կապակցությամբ։

Չեվադ բեյ — Մի շարք անձեր և կամ կամավոր ջոկատներ Կովկաս ուղարկելու համար։

Նախագահ — Այդ անձերը, զինվորական չինելով հանդերձ, ինչպե՞ս էին ղեկավարում այդ գործերը։

Չեվադ բեյ — Հավանական է, զինվորական անձնակազմի հետ կապ չունեցող կամավորներ հավաքագրելու խնդրով։

Նախագահ — Այդ կապակցությամբ գրավոր հրահանգ կա՞ր։

Չեվադ բեյ — Ես նրանց էի հաղորդում ռազմական մինիստրությունից ստացված հրամանի այն մասերը, որոնք վերաբերվում էին իրենց։

Նախագահ — Հատուկ հրահանգ չկար, այդպես չէ՞։

Չեվադ բեյ — Ես նրանց էի հաղորդում ռազմական մինիստրության օպերատիվ գործողությունների մասնաճյուղից և գլխավոր շտաբից ստացված հրամանները։

Նախագահ — Ո՞ւմ էիք հաղորդում այդ հրամանները։

Չեվադ բեյ — Այդ հրամանները տրվում էին պարետային հրամանատարության անունով։ Պարետային հրամանատարության միջոցով էլ մի օրինակ ուղարկվում էր նրանց։

Նախագահ — Ո՞ւմ էր ուղարկվում։

Չեվադ բեյ — «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի որևէ մասնաճյուղի՞ն։

Չեվադ բեյ — Ո՛չ, էֆենդի, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի գրասենյակին։ Նրանք ևս փաստաթղթեր, թղթապանակներ ունեին և ընդունում էին այդ հրամանագրերը։ Երբեմն մի շարք վավերագրեր ևս էին վերադարձնում, երբեմն էլ պահանջում որոշ վավերագրերի պատճեններ։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ ցուցակագրվածները զինվորականության հետ որևէ առնչություն ունե՞ն։

Չեվադ բեյ — Օպերատիվ գործողությունների [կենտրոնից] նշանակված սպաներ կային։

Նախագահ — Սպաներից բացի զինվոր կա՞ր։

Չեվադ բեյ — Մի խումբ զինվորներ կային, որոնք ծառայում էին վարձատրությամբ։

Նախագահ — Նրանք ի՞նչ առնչություն ունեին զինվորական [պարտադիր] ծառայության հետ։

Չեվադ բեյ — Ստացված հրամանի համաձայն ծառայության էին վերցնում զինվորականության հետ առնչություն չունեցող մարդկանց։

Նախագահ — Ո՞վ էր հոգում նրանց սնունդը, համազգեստը և զինամթերքի ծախսերը։

Չեվադ բեյ — Մեզ մոտ գտնվողները դռնապահ և սահմանափակ թվով ծառաներ էին։

Նախագահ — Ճակատ գնացողների զինումը և ռազմամթերքով ապահովումը ձեր միջոցով է՞ր կատարվում։

Չեվադ բեյ — Նրանց կարիքների ապահովումը մասամբ կատարում էինք մենք, անհրաժեշտ պաշտոնատեղիներ դիմելու միջոցով։

Նախագահ — Իսկ մյուս մասը ինչպե՞ս էր կատարվում։

Չեվադ բեյ — Մի շարք սովորական գործողությունները իրենք էին կատարում։

Նախագահ — Դուք ասացիք մասամբ։ Իմ հարցը վերաբերում է ուտելիքին, հագնելիքին և զինամթերքին։ Այդ ծախսերը ո՞վ էր հոգում։

Չեվադ բեյ — Էֆենդի, բոլորն էլ այնտեղից էր կատարվում[36]։

Նախագահ — Այս խնդրի հետ առնչվող [մարդկանց] ի՞նչ միջոցներով էիք ուղարկում։

Չեվադ բեյ — Կամավորների ջոկատը կազմակերպվելուց հետո, ռազմական մինիստրության հրահանգի համաձայն, հաշվարկվում էր բանակի հրամանատարությանը։ Իմ պաշտոնավարությունից առաջ մի քանի խմբեր գնացել էին Կովկաս։ Իսկ պաշտոնավարության ընթացքում նրանք գնում էին բանակի հրամանատարության կարգադրությամբ։

Նախագահ — (...)[37]։

Չեվադ բեյ — Սպաների և զինվորների համար մի դավթար կազմվելով՝ հանձնվում էր իրենց։ Իջևանատներում նրանց ապահովում էին ուտելիքով։ Այնուհետև անցնում էին բանակի շարքերը։ Միայն թե զինվորական ծառայության հետ առնչություն չունեցողների ընտանիքներին այստեղ ռոճիկ էր հատկացվում։ Սրանց մի մասն էլ զինապարտ-

ների նման վերցվում էին ծառայության, բայց վարձատրվում էին իրենց պաշտոնատեղիներից։

Նախագահ — Սրանց ընդհանուր թիվը միշտ չէ, որ որոշակի է եղել։ Այդ մասին ձեզ տեղեկություն տալիս էի՞ն, թե ոչ։

Չեվադ բեյ — Ոչ, էֆենդի, Թղթապանակներում բազմաթիվ հրամաններ կան այն մասին, որ [այդ խմբերը] գնալուց հետո բոլորովին թղթակցություն չունենան այստեղի հետ։ Նույնիսկ հրահանգ էր եղել, որ կոշիկ և այլ անհրաժեշտ իրերը ստանան բանակից։

Նախագահ — Իրենց կատարած գործունեության մասին տեղեկություն տալիս էի՞ն, թե ոչ։

Չեվադ բեյ — Ո՛չ։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հրամանատարների նշանակումը այստեղ է՞ր կատարվում։

Չեվադ բեյ — Իմ պաշտոնավարության ընթացքում մեկնող զոկատների հրամանատարները այստեղից էին նշանակվում։

Նախագահ — Կարող է՞ր պատահել, որ այդ հրամանատարները փոփոխության ենթարկվեին իրենց գտնված վայրերում։

Չեվադ բեյ — Նկատի ունենալով, որ նրանք իրենց պարտականությունները կատարելու էին բանակի շարքերում, [հրամանատարները] նշանակվում էին այստեղից։

Նախագահ — Ռազմաճակատներում գտնվող «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի զոկատները, բացառապես բանակի հրամանատարության՞ն էին ենթարկվում։

Չեվադ բեյ — Անկասկած, էֆենդի, նրանք մտնում էին բանակի անձնակազմի մեջ։ Մինչև այսօր էլ նրանց մի մասը գտնվում է այդ զորագնդերում։ Նրանց կազմը համալրվում էր զինվորներով, բանակի հրամանատարության կողմից, և այդ ձևով էլ շարունակում էին ծառայությունը։

Նախագահ — Ասում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներից մի քանիսը[38] այդ զոկատների գլուխն անցած, որոշակի գործողություններ են ծավալել։ Ճի՞շտ է։

Չեվադ բեյ — Դա տեղի չի ունեցել իմ պաշտոնավարության ընթացքում։ Տվյալ ժամանակ ես գտնվում էի Եվրոպայում։ Դա տեղի է ունեցել իմ բացակայության ժամանակ։

Նախագահ — Որքա՞ն ժամանակ պաշտոնավարեցիք։ Ե՞րբ հեռացաք պաշտոնից։

Չեվադ բեյ — Պաշտոնի անցա 1330 [1914] թվականի դեկտեմբերի սկզբին, իսկ 1334 [1918] թվականի վերջերին Թողեցի մայրաքաղաքի պարետի հրամանատարությունը։

Նախագահ — Եվրոպայում եղաք։

Չեվադ բեյ — Այո՛, ընդհանուր զորահավաքի ընթացքում գտնվում էի Եվրոպայում։ 1330 թ. դեկտեմբերին նշանակվեցի մայրաքաղաքի պարետ։

Նախագահ — Ձեզանից առաջ ո՞վ էր զեկավարում «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն։

Չեվադ բեյ — Ինձանից առաջ մայրաքաղաքի պարետը Խալիլ բեյը[39] էր։ Այդ ժամանակ...

Նախագահ — Խալիլ բեյի զեկավարության ժամանա՞կ։

Չեվադ բեյ — Այո՛, էֆենդի։

Նախագահ — Այդ «Թեշքիլաթ»-ը զինվորական հրամանատարության կողմի՞ց էր ստեղծվել։

Չեվադ բեյ — Մի ժամանակ այն ստեղծվեց ռազմական մինիստրությունում։

Նախագահ — [Կուսակցության] կենտրոնական կոմիտեն ի՞նչ ձեվով է օժանդակել այդ «Թեշքիլաթ»-ին։

Չեվադ բեյ — Ես չեմ հիշում, թե կենտրոնական կոմիտեն ի՞նչ օժանդակություն է ցույց տվել։ Մեծարգո փաշա, կենտրոնական կոմիտեն ոչ մի օժանդակություն ցույց չի տվել։

Նախագահ — Այդ դեպքում ի՞նչ դրդապատճառներով են դոկտ. Նազըմ բեյը և մյուսները ենթարկվել ձեզ։

Չեվադ բեյ — Երբ ես պաշտոնի անցա, նրանք արդեն գտնվում էին դրա կազմում։ Մեծարգո փաշա, ես տեղեկություն չունեմ նախկին [նշանակումների] մասին։

Նախագահ — Այդ ջոկատների կազմը նվազել է։ Հետագայում, որտեղի՞ց էր այն համալրվում։

Չեվադ բեյ — Կամավոր ջոկատները անցնում էին բանակի...

Նախագահ — Մի՞թե բանակում կամավոր ջոկատներ կային։

Չեվադ բեյ — Նրանք մտնում էին բանակի անձնակազմի մեջ։

Նախագահ — Այդ մասին ասացիք։ Շատ լավ, կազմը նվազելու դեպքում այն որտեղի՞ց էր համալրվում։

Չեվադ բեյ — Այստեղից չէր համալրվում։

Նախագահ — Շատ լավ, որտեղի՞ց էր կատարվում։

Ջևդադ բեյ — Այն համալրվում էր ծառայության համար բանակ եկած զինվորներից։

Նախագահ — Նրանք այդպես խառը ձևով էի՞ն ծառայում։

Ջևդադ բեյ — Մեծարգո փաշա, ես ինքս էլ չգիտեմ։ Միայն թե մի քանի ջոկատներ, իբրև թե բանակում ծառայելու համար սպաների և զինվորների հետ ...

Նախագահ — Հանձնվել են մի շարք վալիների տրամադրությանը։ Այդ հրամանը ի՞նչ ձևով եք տվել։

Ջևդադ բեյ — Ես տեղեկություն չունեմ։ Կարելի է ստուգել իմ պաշտոնավարության ընթացքում կամավոր մեկնած ջոկատների թղթապահակները։ Նրանց գտնված և ծառայած վայրերի մասին կարելի է տեղեկանալ նաև նրանց հրամանատարներից։

Նախագահ — Պատերազմական դրության պատճառով նրանց թիվը բնական է, որ նվազում էր։ Այդ ուղղությամբ ինչպիսի՞ միջոցներ էիք ձեռնարկում։

Ջևդադ բեյ — Ստամբուլից մեկնելուց հետո մենք ոչ մի հարաբերություն չէինք ունենում նրանց հետ։

Նախագահ — Եթե ձեր պաշտոնավարությունը միմիայն այստեղի համար էր, ուրեմն դրանք ստեղծված պետք է լինեին պատերազմի սկզբում մի քանի ամիսների համար։ Բայց նրանց գործունեությունը շարունակվել է։ Մի՞թե դուք իրազեկ չպետք է լինեիք նրանց հետագա գործերի ընթացքի մասին։

Ջևդադ բեյ — Մեծարգո փաշա, նրանց գործունեությունը չի շարունակվել։ Ռազմական մինիստրությունից ստացված հրամանի համաձայն կամավոր «Թեշքիլաթ»-ի [գործունեությանը] վերջ է տրվել։

Նախագահ — Այդ ե՞րբ։

Ջևդադ բեյ — Հունվար ամսվա ընթացքում։ Այդ մասին ռազմական մինիստրության կողմից բանակներին և զորամիավորումներին ուղղված հրամանի մի օրինակը գտնվում է ինձ մոտ։

Նախագահ — Ո՞ր թվականին։

Ջևդադ բեյ — 1330 [1914] թվականի ...

Նախագահ — Այդ թվականից հետո մի՞թե «Թեշքիլաթ»-ը լուծարքի ենթարկվեց։

Ջևդադ բեյ — Ստացված հրամանագրում նշված էր գոյություն ունեցող ջոկատները ուղարկելու մասին։ Բանակի հրամանատարներին առաքված գրությունը նույնությամբ ուղարկել էին ինձ։

Նախագահ — *Ինչպե՞ս էր այդ շրջաբերականի բովանդակությունը։*

Ջևդադ բեյ — «*Բանակի հրամանատարներին, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ զորամիավորումների և Իզմիրի շրջանի հրամանատարներին։ Ջեթեների կազմակերպությանը*[40] *տրված ռազմական մինիստրության հրամանի բովանդակությունը հետևյալն է.*

«*Թեշքիլաթ*»-*ի ջեթեների համալրված [ջոկատները] ուղարկել նշանակված վայրերը։ Մինչ այդ ուղարկվածները շարունակելու են ծառայել [բանակում]։ Այնուհետև վերջ է տրվելու ջեթեների ստեղծմանը։ Ուղարկված զինվորները բաժանել զորամասերին և կամ պահեստային գումարտակներին*»։

Այս հրամանը տրվելուց հետո առկա [ջոկատները] ուղարկվեցին և այդ աշխատանքներին վերջ տրվեց։

Նախագահ — *Ո՞ր թվականին։*

Ջևդադ բեյ — *1330 (1915) թվականի հունվարի 21-ին։*

Նախագահ — *Ո՞վ է ստորագրել։*

Ջևդադ բեյ — *Բանակի հրամանատարության շտաբի անունից Բիհիջը։*

Նախագահ — *Տվե՛ք դրա պատճենը։*

Ջևդադ բեյ — *Այն իմ դատապաշտպանի մոտ է։*

Նախագահ — *Ձեր ընթերցածը տվեք, դուք մյուսը վերցրեք։*

Դատապաշտպան Խուլուսի բեյ — *Հրամմեցեք։*

Նախագահ — *(խոսքն ուղղելով քարտուղարին) Կարդացե՛ք։*

ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱԿԻ ՇՏԱԲ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՊԱՐԵՏԱՅԻՆ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ
ՍՏԱՄԲՈՒԼ, 1330 թ.
[1915 հունվարի 21]
№ 1117

Ի պատասխան 17 նոյեմբեր 1330 (1914) թվակիր № 159 գրության։

1. Բանակի հրամանատարներին, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ զորամիավորումների և Իզմիրի շրջանի հրամանատարներին։

Ջեթեների կազմակերպությանը տրված ռազմական մինիստրության հրամանի բովանդակությունը հետևյալն է.

«*Թեշքիլաթ*»-*ի ջեթեների համալրված [ջոկատները] ուղարկել նշանակված վայրերը։ Մինչ այդ ուղարկվածները շարունակելու են ծառայել [բանակում]։ Այսուհետև վերջ է տրվելու ջեթեների ստեղծմանը։*

Ուղարկված զինվորները բաժանել զորամասերին և կամ պահեստային հրամարտակներին։

Նախագահ — *Այստեղ ոչինչ չի ասված չհամալրված «Թեշքիլաթ»-ի [դպրոցների] մասին։ Խոսվում է միայն համալրվածների մասին և ոչ մի նշում չկա չհամալրված [դպրոցների] մասին։ Ի՞նչ միջոցներ ձեռնարկեցիք։ Դրանք ցրեցի՞ք, թե՞ ըստ ձեր անձնական հայեցողության գործեցիք։*

Ջևադ բեյ — *Բնական է, որ նրանք չընդգրկվեցին [«Թեշքիլաթ»-ի] մեջ, այլ հանձնվեցին բանակի տրամադրությանը և պահեստային զորամասերին։*

Դատապաշտպան Խուլուսի բեյ — *Մեծարգո փաշա, այդ մասին նըշված է ստորև բերված կետերում։*

Նախագահ — *(խոսքն ուղղելով արձանագրող քարտուղարին),— Որ այդպես է, կարդացե՛ք։*

2. Բանտարկյալներին ու դատապարտվածներին բանակի մեջ ընդգրկելու և նրանց ծառայության մասին կազմվում է հատուկ օրենք[41], որի հրապարակումից հետո [վալիները] գործելու են ըստ օրենքի։ Ըստ տեղեկագրերի, տարբեր բանտերից ուղարկված 2267 անձերի մասին առայժմ անհրաժեշտություն չկա որևէ գործողություն ձեռնարկելու։

3. Մի հատուկ նպատակի գործադրման համար կազմակերպվող 531 հոգիանոց ջոկատը անհրաժեշտ է համալրել և ուղարկել նշված վայրը[42]։

4. Բաթումից և շրջակայքից եկած գաղթականներից դեռևս այստեղ գտնվող 335 անձանց անհրաժեշտ է տրամադրել 3-րդ բանակի հրամանատարությանը։

«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հանձնաժողովին. ծանոթանալուց հետո վերադարձնել։
1330 թ. [1914] նոյեմբերի 25

Բանակի շտաբի հրամանատարության անունից [ստորագրել է] Բիհիջը։ Ծանոթացվել է [1914 թ. նոյեմբերի] 26-ին։
պատասխանատու քարտուղար

Նախագահ — *Այստեղ այդպիսի բան չկա, չհամալրված [ջոկատները] ի՞նչ արեցիք։ Ցրեցի՞ք թե՞ համալրեցի՞ք։ Դրա մասին այստեղ նըշում չկա։ Այս հրամանագիրը նախապես տրված հարցումի պատասխանն է։ Այնպես որ, սա ռազմական մինիստրությունից տրված հրաման կամ հրահանգ չէ։*

Ջևադ բեյ — *Հավանական է, որ սրա պատճառաբանությունը գտնըվի թղթապանակներում։ Անշուշտ, ռազմական մինիստրությունից մի*

հրաման չեղած, մայրաքաղաքի պարետային հրամանատարությունը չէր կարող նրանց մասին հրաման արձակել։

Նախագահ — Նրանք ինչպիսի՞ զենքերով և ի՞նչ ռազմամթերքով էին զինված։

Չեվադ բեյ — Նրանք զինված էին ռազմական մինիստրությունից, բանակի շտաբից հատկացված զենքերով։

Նախագահ — Ի՞նչ մակնիշի և տեսակի [զենքերով]։

Չեվադ բեյ — Որքան ես հիշում եմ, սկզբում տրվածը «մարտին»[49] էր։

Նախագահ — Նրանք հեծյալներ կամ թնդանոթաձիգներ ունեի՞ն։

Չեվադ բեյ — Ո՛չ, էֆենդի։

Նախագահ — Բեռներ և ծանրություններ տեղափոխելու հարմարանքնե՞ր։

Չեվադ բեյ — Ո՛չ, էֆենդի։

Նախագահ — Սրանց հրամանատարները ուղղակի ռազմական մինիստրության հետ էի՞ն կապվում, թե՞ ձեզ հետ։

Չեվադ բեյ — Հավանական է, որ նրանց կապը բանակի հրամանատարների հետ էր։

Նախագահ — Ուղղակի նրանց հե՞տ։

Չեվադ բեյ — Բանակի հրամանատարության հետ ուղղակի կապվելու իրավունք չունեին։

Նախագահ — Նրանց գլխավերևում գտնվող հատուկ հրամանատարներն ինչ ձևով էին կապի մեջ մտնում կենտրոնի հետ։

Չեվադ բեյ — Իհարկե, այդպիսի կապ գոյություն ունեցել է։ «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի մեջ այդ թղթակցությունները պահող պաշտոնյաներ կային։ Ես չեմ կարողանում հիշել, թե ի՞նչ ձևով էր կատարվում այդ կապը։

[Ականատեսի նախկին պատգամավոր, «հատուկ կազմակերպության» անդամ՝ Աբիֆ բեյի հարցաքննությունը]

Նախագահ — Ինչպե՞ս ստեղծվեց «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ն։

Աբիֆ բեյ — Բալկանյան պատերազմի վերջերին Սուլեյման Ասքերի բեյը ծառայում էր Արևմտյան Թրակիայում, այնտեղ միևնույն նպատակի համար նրա հետ աշխատակցել էին մի շարք գործընկերներ։ [Պատերազմից] հետո, սրանք դեռևս ծառայելու համար ոչ մի տեղ չէին նշանակվել։ Երբ ընդհանուր զորահավաք հայտարարվեց, նրանց միջոցով ստեղծվեց «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ն։ Զորահավաքի ընթացքում,

երբ գործերը շատացան, չորս հոգի, մի հանձնաժողովի ձևով հավաքվեցինք ռազմական մինիստրությունում։ Այդ թվում եւ, Սուլեյման Ասքերի բեյը, դոկտ. Նազըմը, ինչպես նաև հասարակական անվտանգության տնօրենը։

Նախագահ — Ասացեք նաև հասարակական անվտանգության տնօրենի անունը։

Աբիֆ բեյ — Ազիզ բեյ, էֆենդի ... Տվյալ վայրերի իրադրությանը ծանոթ հայրենասեր մարդկանց ուղարկեցինք Ռուսաստանի խորքերը և նրանց միջոցով մի «Թեշքիլաթ» ստեղծեցինք մահմեդական բնակչության շրջանում։ Մեր բանակը այնտեղ մտնելու դեպքում այդ «Թեշքիլաթ»-ը օժանդակություն էր ցույց տալու և ընդհանրապես հետևելու էր ռուսական բանակի տեղաշարժերին։ Միևնույն ժամանակ, պահեստներն ու այլ կենտրոնատեղինները պայթեցնելու համար ուղարկեցինք անհրաժեշտ ռազմամթերք։ Այսպիսով, [ռազմական] գործողությունները ծավալվելու ընթացքում, ռազմաճակատի թույլ մասերում, այսինքն՝ ապակենտրոնացված ղինվորական շրջաններում, հայրենիքը պաշտպանելու համար կամավոր հիմունքներով ստեղծեցինք մի «կազմակերպություն»։ էֆենդի, մոտավորապես 5—6 չոկատներ ուղարկեցինք, որոնք անձնվիրաբար ծառայելով հայրենիքին՝ երկար ժամանակ պաշտպանեցին Ծովեզրյա և այլ թույլ վայրերը։

Նախագահ — Ինչի՞ց էր կազմված պարետային հրամանատարության տակ գտնվող «Թեշքիլաթ»-ը։

Աբիֆ բեյ — Մեր հանձնաժողովը գտնվում էր այսպիսի վիճակում։ Ռազմական մինիստրության հետ մեր կապը, մեր որոշումների հաղորդումը կատարվում էր Սուլեյման Ասքերի բեյի միջոցով։ Նրա գնալուց հետո կարճ ժամանակով մայրաքաղաքի պարետային հրամանատարությունում նշանակվեց Խալիլ բեյը։ Հետագայում նա էլ մի ղինվորական դիվիզիայի հետ մեկնեց [ռազմաճակատ]։ Այնուհետև պարետային հրամանատարությունում նշանակվեց Ջեվադ բեյը։ Տրիպոլիում[44] և այլ վայրերում հատուկ սպանների ղեկավարության տակ մասնաճյուղեր ունեինք։ Այսինքն՝ «Թեշքիլաթ»-ը ուներ իր մասնաճյուղերը, այնպես, որ, մեր հանձնաժողովը գտնվում էր լեգալ վիճակում։

Նախագահ — «Թեշքիլաթ»-ը քանի՞ մասնաճյուղ ուներ։

Աբիֆ բեյ — էֆենդի, ընդհանուր թիվը չեմ կարողանում լավ հիշել, կարծեմ չորս մասնաճյուղ ուներ՝ Ռումելիի, Կովկասի, Աֆրիկայի և Տրիպոլիի մասնաճյուղերը։

Նախագահ — «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ն որքա՞ն ժամանակ գոյություն ունեցավ։ Ե՞րբ կազմալուծվեց։

Աբիֆ բեյ — Կարծեմ այն կազմալուծվեց զինադադարի ժամանակ։ 1331 (1915) թվականի ապրիլի վերջերին մենք ցրվեցինք։ Այդ թվականին էնվեր փաշայի նշանակումով պաշտոնավորում էր Ջեզաիրցի Ալի բեյը։ Նա ոռճիկով, այսինքն՝ պաշտոնապես էր նշանակված, իսկ մենք ծառայում էինք անվճար։ Այդ ժամանակ էլ մեր հանձնաժողովի պարտականությունը ավարտվեց։

Նախագահ — Ո՞ր թվականին։

Աբիֆ բեյ — 1331 (1915) թվականի ապրիլի վերջին։

Նախագահ — Մինչև այդ թվականը ձեր կապը [ռազմական] մինիստրության հետ էր։

Աբիֆ բեյ — Մինիստրությունը մեզ արտոնություն էր տվել։ Կապը գոյություն ուներ[45]։

Նախագահ — Բնական է, որ այստեղից ուղարկվող չոկատների քանակական թիվը պիտի պահպանվեր։ Ինչպե՞ս էր կատարվում նրանց համալրումը։

Աբիֆ բեյ — Նրանք ենթարկվում էին բանակին։ Նրանց համալրումը կատարվում էր բանակի կողմից։ Միաժամանակ հետո, այսինքն մի քանի ամիս հետո, նրանք անցնում էին բանակի անձնակազմի շարքերը։ Մեզ հետ ոչ մի առնչություն չունեին։ Նույնիսկ առաջին հերթին գնացողներից մնացել էր 50 հոգի։ Նրանց թիվը կատարելապես նվազեց, քանի որ նրանք կռվեցին հերոսաբար։

Նախագահ — Ստացվում է այնպես, որ կանոնավոր զորքը գտնվում էր խառը վիճակում։

Աբիֆ բեյ — Այո՛, մասամբ այդպես էր։ Հատկապես վերջերս, Տրապիզոնի շրջակայքում համարյա թե այդպես էր։

Նախագահ — Դուք գիտե՞ք, որ մի շարք վիլայեթներում այդ չոկատներից մի քանիսը ենթարկվել են վալիների հրամանատարությանը։

Աբիֆ բեյ — Ո՛չ, էֆենդի, երբեք վալիների հրամանատարությանը չեն տրվել։ Միմիայն, սահմանամերձ շրջանում գտնվող վիլայեթների վալիները, այդ թվում Տրապիզոնի և Էրզրումի վալիները, օգնություն են ցուցաբերել։ Այսինքն՝ նրանք մի տեսակ համարվում էին այդ վայրերի «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի մասնաճյուղերի անդամները։ Տվյալ վայրերում մի քանի մասնաճյուղեր էին ստեղծվել։ Հետագայում դրանք էլ վերացվեցին։

Նախագահ — *Այդ գործողությունների ընթացքում նրանք երբևէ ձեզ չե՞ն դիմել։*

Աքիֆ բեյ — *Սկզբնական շրջանում «Մեզ զինվորներ ուղարկեք» ասելով, մի քանի դիմողներ եղան։ Հետագայում ռազմական մինիստրությունը հայտնեց որ «Դուք մի խառնվեք [«Թեշքիլաթ»-ի] գործունեությանը, նրանք ենթարկվում են բանակներին»։ Մենք չմիջամտեցինք։ Միմիայն սկզբնական շրջանում որոշ համագործակցություն է եղել։*

Նախագահ — *Համալրման խնդրում եղած պահանջարկը նրանք ուղղակիորեն ձեզ էի՞ն ներկայացնում։*

Աքիֆ բեյ — *Ո՛չ, էֆենդի, չեմ հիշում։*

Նախագահ — *Երբևէ փող ուղարկվե՞լ է, թե՞ ոչ։*

Աքիֆ բեյ — *Փող ուղարկվելը չեմ կարողանում հիշել։*

Takvim-i Vekayi, 4 Mayis 1335 (1919) № 3543

ԵՐՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ[46]

1919 թ. մայիսի 6

[«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի բարտուղար Միդհատ Շյուրեյի բեյի ցուցմունքը][47]։

Դատախազ՝ Մուստաֆա Նազմի բեյ — *Տեղահանության և կոտորածի հարցում կուսակցության կենտրոնական կոմիտեն ինչպիսի՞ դիրքորոշում ուներ։*

Միդհատ Շյուրեյի բեյ — *Տեղահանության հարցի մասին չգիտեմ, որովհետև այն տեղի է ունեցել զինվորական տեսանկյունից, ինչ որ պատերազմական գործողությունների հետ կապված։ Ուստի այդ հարցի մասին ոչինչ չգիտեմ։ Կոտորածի հարցում կենտրոնական կոմիտեն և բոլոր ընկերներս կատարելապես դեմ էինք։ Նույնիսկ շատ էինք նեղվում, երբ հեռավոր տեղերից կամ կոտորածի վայրերից եկած մարդկանցից այդպիսի լուրեր էինք առնում։ Ես անձամբ այդ մասին զեկուցեցի ներքին գործերի մինիստրությանը՝ հայտնելով. «Իմացանք, որ այսպիսի վատ արարքներ են տեղի ունենում, դա ճիշտ բան չէ ...»։ Իմ զեկույցին ներքին գործերի մինիստրությունից տրվեց հետևյալ պատասխանը. «Ստուգող հանձնաժողով եմ ուղարկելու, վստահ եղեք, հանգիստ եղեք, այդ արարքները կանխվելու են, մի քանի հարյուր հոգի ձերբակալվեցին և հանձնվեցին ռազմական ատյանին, մի քանիսը մահվան են դատապարտվելու»։ Այդ ձևով ինձ կատարելապես հանդարտեցրին, ասելով նաև, որ «դրա համար անհանգստանալու պատճառ չկա»։*

[Կենտրոնական կոմիտեի անդամ Զիա Գյոհալփի հարցաքննությունը]

Նախագահ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցության և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի միջև ինչպիսի՞ կապ կար։*

Զիա Գյոհալփ — *«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը կապ չուներ։ Այն ստեղծված էր ռազմական մինիստրության կողմից և կատարելապես գտնվում էր նրա տրամադրության տակ։ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ռազմական մինիստրության հսկողության ներքո մի պաշտոնական հիմնարկություն էր։ Մենք տեղյակ չենք տեղահանության և կոտորածի հետ նրա ունեցած առնչության մասին։ Այդ մասին մեզ ոչ մի տեղեկություն չի հասել։*

Նախագահ — *Կոտորածի մասին կենտրոնական կոմիտեն ոչ մի բան չէ՞ր լսում։*

Զիա Գյոհալփ — *Շատ ուշ։ Իսկական եղելության մասին մեզ պարզ տեղեկություն չէր հասնում, մեզ շատ թեթև լուրեր էին գալիս։*

Նախագահ — *Ի՞նչ ձեռնարկեցիք այդ կապակցությամբ։*

Զիա Գյոհալփ — *Այդ խնդրի հետ կապված կենտրոնական կոմիտեն պաշտոնապես մի բան ձեռնարկելու իրավասություն չուներ, սակայն կենտրոնական կոմիտեի անդամները անձամբ դիմում էին ներքին գործերի մինիստրությանը կամ էլ մյուս մինիստրներին, հարցնելով այդ խնդրի առաջ գալը կամ ինչ ձևով տեղի ունենալը և ցանկանում էին, որ այն կանխվի։ Իր հերթին ներքին գործերի մինիստրությունը պատասխանում էր, որ մի շարք ստուգող հանձնաժողովներ են ուղարկված, որ ստեղծված են ռազմական ատյաններ, որ հանցագործները հանձնվել են ռազմական ատյանին և հետաքննություններ են կատարվում։*

Նախագահ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցության պատգամավորները և պատասխանատու քարտուղարները մի շարք վայրերում մասնակցություն են ունեցել և նույնիսկ հիմնական դեր են խաղացել [տեղահանության և կոտորածի] խնդրում։ Այս մասին մի՞թե կենտրոնական կոմիտեն տեղյակ չէր։*

Զիա Գյոհալփ — *Ո՛չ։*

Նախագահ — *Օրինակ, Բեհաէդդին Շաքիր բեյը, դոկտ. Նազըմ բեյը. գիտե՞ք, որ իրականում իրենք են կազմակերպել [կոտորածները]։*

Զիա Գյոհալփ — *Տեղյակ չեմ։*

Նախագահ — *Ինչպե՞ս կարող է պատահել, որ կենտրոնական կոմիտեն այդ մասին տեղեկություն չունենա։ Չէ՞ որ նրանք անձամբ [կոտ-*

չագայել են վիլայեթներում, սանջակներում և անհրաժեշտ կարգադրություններ արել։

Զիա Գյոհալփ — Մենք տեղյակ չէինք, այլապես անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեինք։

Նախագահ — Կենտրոնական կոմիտեի իրազեկ լինելու մասին բավականաչափ թվով գրավոր ապացույցներ կան։

Զիա Գյոհալփ — Վիլայեթներից համագումարներին եկած պատգամավորներն այդ մասին ոչ մի բան չեն ասել։ Մենք ո՞րտեղից կարող էինք տեղեկանալ։

Նախագահ — Կենտրոնական կոմիտեի անդամների վիլայեթ գործուղվելու հարցին համագումարն էր հավանություն տալիս։

Զիա Գյոհալփ — Համագումար հկածները, եթե իմանային, որ նրանց մարդիկ միջամտել են վիլայեթներում տեղի ունեցած այդ դեպքերին, անշուշտ մեզ կասեին այդ մասին։ Համագումարում մեկը ձայն վերցնելով կասեր, որ Բեհաէդդին Շաքիր բեյը այսպես է արել և կամ Նայիլ բեյը այնպես է արել։ Բնական է, որ դրա հիման վրա էլ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեին։ Սակայն ո՛չ վիլայեթներից եկած պատգամավորները, ո՛չ էլ պատվիրակները այդպիսի տեղեկություն չեն տրվել։ Ոչ մի բան չեն հայտնել նաև կենտրոնական կոմիտեին[48]։

Նախագահ — Սրանից հասկացվում է, որ նրանք այդ մասին պետք է, որ անպայման տեղեկություն տային։ Բայց, պարզվում է, որ այստեղի կենտրոնն ու արտաքին մասնաճյուղերը միաձայն հավանություն են տրվել այդ գործի իրականացմանը։

Զիա Գյոհալփ — Ինչպե՞ս կարող է պատահել, էֆենդի։ Այդքան պատգամավորների միջից մի՞թե մեկը չէր կարող լուր տալ այդ մասին։

Նախագահ — Բնական է, որ անհրաժեշտ կլիներ լուր տալ, քանի որ հնարավոր չէր գտնվել վիլայեթում և իրազեկ չլինել կոտորածի մասին։ Օրինակ, Տրապիզոնում գտնվող Նայիլ բեյը կոտորածին ականատես լինելով, ինչպե՞ս կարող էր վերադառնար այստեղ և ոչինչ չասեր այդ բոլորի մասին։ Ուրեմն, նշանակում է, որ [կենտրոնական կոմիտեն] ոչ միայն իրազեկ է եղել, այլև հավանություն է տվել այդ խնդրին։

Զիա Գյոհալփ — Անշուշտ, 300 հոգուց բաղկացած համագումարի մեջ պետք է, որ իրազեկ մարդիկ գտնվեին։ Եվ նրանց մեջ կարող էին լինել այնպիսիները, որոնք համամիտ չլինեին կոտորածին։ Ձեր ասածի նման, տվյալ վայրերում կարող էր մեկը համամիտ լինել, իսկ մյու-

սը ոչ։ Հասկանալի է, որ այդպիսի մարդիկ եղել են և նրանք պետք է, որ այդ մասին տեղեկացնեին։

Նախագահ — Իսկ դուք ասում եք, որ այդ մասին տեղեկություն չեն տվել։ Մինչդեռ դրանով ապացուցվում է, որ այդ հարցին միաձայն հավանություն է տրված եղել։ Այնպես որ, համագումարում գտնվող 300 անձերը բոլորն էլ այդ մտքին են եղել։

Զիա Գյոհալփ — Ինչպե՞ս կարող է լինել։ Չէ՞ որ նրանք տարբեր վայրերից են գալիս և նրանց մեջ եղել են տարբեր կրթության հայեր, հույներ, հրեաներ։ Մի խոսքով, նրանց մեջ եղել են բոլոր ազգություններին պատկանող անձինք։ Մի՞թե նրանք կարող էին հավանություն տալ այդ խնդրին։

Նախագահ — Հասկանալի է, որ կոտորածը բոլոր վայրերում տեղի չի ունեցել։ Այն վիլայեթներում, որտեղ կոտորած է եղել, այդտեղի [կուսակցության] մասնաճյուղի անդամն է պատգամավոր ընտրվել։ Եվ համագումարին եկողներն էլ նրանք են, ովքեր իրազեկ էին կոտորածին։

Զիա Գյոհալփ — Ոչ մահմեդական պատգամավորներ են եղել, մի՞թե նրանք էլ հավանություն են տվել։

Նախագահ — Իրենց տեղամասերում ընտրված և «Միություն և առաջադիմություն» կուսակցության համագումարին եկածներից, օրինակ՝ Էրզրումի, Տրապիզոնի, Դիարբեքիրի և այլ տեղերից եկած, կոտորածին 20 հոգու համամիտ լինելը, չի նշանակում, որ համագումարի բոլոր 300 մասնակիցներն էլ համամիտ են եղել։

Զիա Գյոհալփ — Ինչպես մի քիչ առաջ ասացինք, համագումարում մեկը պիտի ասեր, որպեսզի կենտրոնական կոմիտեն տեղյակ լիներ կոտորածի մասին։ Այդ ժամանակ մենք էլ կիմանայինք։

Նախագահ — Կուսակցության գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյն ասաց, որ կենտրոնական կոմիտեն բնաեւակի տեղյակ է եղել կոտորածի մասին և դիմել է ներքին գործերի մինիստրությանը, որ այն կանխվի։

Զիա Գյոհալփ — Այո, այդ ես էլ ասացի։

Նախագահ — Այդ դեպքում, ինչպե՞ս է, որ [կենտրոնական կոմիտեն] իրազեկ չի եղել։

Զիա Գյոհալփ — Այդ մասին ես էլ ասացի, բայց թե գործնականում ովքե՞ր էին կոտորածի մեղսակիցները ...

Նախագահ — Հետաքննության ընթացքում կբացահայտվի։

Զիա Գյոհալփ — Մենք այդ մասին տեղեկացանք շատ ուշ։ Լուրերը արագորեն չէին հասնում։

Նախագահ — Այդ շրջանների պատգամավորներին և պատասխանատու քարտուղարներին պետք է հանցագործ համարենք, այդպես չէ՞

Զիա Գյոհալի — Եթե նրանց կատարած հանցանքը հաստատվեր։

Նախագահ — Ոչ մեկինը չհաստատվե՞ց։

Զիա Գյոհալի — Ֆարրեների պատասխանատու քարտուղարի վերաբերյալ մի բողոք էր եկել։ Պարզելու համար մի պաշտոնյա ուղարկեցինք։ Նա էլ գրեց, որ ոչ մի բան չկա։ Համենայն դեպս, ինչ որ բան եղել է, որ հետաքննող հանձնաժողովը իր զեկուցագրում պահանջում էր նրա պաշտոնանկությունը։ Մենք էլ անմիջապես ընդունեցինք այն։

Նախագահ — Կենտրոնական կոմիտեն ինչպիսի՞ տեսակետ ուներ կոտորածի մասին։ Դեմ էր, թե՞ կողմ։

Զիա Գյոհալի — Անշուշտ դեմ էր։

Նախագահ — Հապա ինչու՞ այդ կապակցությամբ վճիռ չեք կայացրել։ Այդ հարցը քննարկել ե՞ք։

Զիա Գյոհալի — Այդ լուրերը առնելուց հետո բոլորն էլ անիծում և ատելությամբ էին խոսում այդ մասին։

Նախագահ — Տեսնո՞մ եք, պարզվում է, որ կենտրոնական կոմիտեն իրազեկ է եղել։

Զիա Գյոհալի — Թեթևակի և շատ ուշ լուր առնելով ...

Նախագահ — Ուշ կամ կանուխ, իրազեկ լինելուց հետո ի՞նչ որոշում ընդունվեց։

Զիա Գյոհալի — Անշուշտ դիմեցինք մինիստրներին, նրանք էլ հետաքննող հանձնաժողով ուղարկեցին, ռազմական դատարաններ ստեղծվեցին, ստուգումներ կատարվեցին։

Նախագահ — Շատ լավ, այդ որոշմանը կամ միջոցառմանը հետամուտ եղա՞ք։ Դուք վստահ ե՞ք, որ այդպիսի նախաձեռնություններ կատարվել են։

Զիա Գյոհալի — Եթե ստուգումներ տային, ինչպե՞ս կարող էինք վճիռ կայացնել։

Նախագահ — Ուրեմն, միջոցառումներ եղե՞լ են։

Զիա Գյոհալի — Հանձնաժողովների գնալը տեսնում էինք։ Այդ հանձնաժողովները նշանակվում էին այստեղ և այնուհետև ուղարկվում վիլայեթները։

Նախագահ — Շատ լավ։ Դուք յուրաքանչյուր վիլայեթում ներկայացուցիչներ ունեիք։ Այդ հանձնաժողովների գործունեությունը ստուգվում էր նրանց միջոցով, թե՞ ոչ։

Զիա Գյոքալփ — *Մի շարք մարդիկ այնտեղ դատի են տրվել, մահվան են դատապարտվել։ Այս բոլորի մասին տեղեկություն առնում էինք։ Բնական է, որ այդ գործերին վերաբերող փաստաթղթերը գտնվում են պինվորական դատարաններում։*

Դատախազ՝ Մուստաֆա Նազմի բեյ — *Ինչպե՞ս կարող եք ապացուցել, որ կոտորածի հարցում դուք դեմ եք եղել։ Ի՞նչ եք ձեռնարկել այդ ուղղությամբ։*

Նախագահ — *պատասխանե՛ք դատախազի հարցին։*

Զիա Գյոքալփ — *Բազմաթիվ անգամ բողոքարկել ենք մինիստրներին և մենք ենք պատճառ հանդիսացել, որպեսզի այդ հանձնաժողովները ուղարկվեն ... Ուրիշ ի՞նչ կարող էինք անել։*

Նախագահ — *Ձեր դիմումը բանավո՞ր էր կատարվում, թե՞ գրավոր։*

Զիա Գյոքալփ — *Անշուշտ բանավոր, քանի որ պաշտոնապես միջամտելու իրավասություն չունեինք։ Կենտրոնական կոմիտեն պաշտոնապես չէր կարող միջամտել։*

Նախագահ — *Ի՞նչ եք կարծում, տեղի ունեցած այդ վատ արարքների համար պաշտոնյաներին հետաքննության ենթարկելը մի՞թե չէր մտնում ձեր պարտականությունների մեջ։*

Զիա Գյոքալփ — *Տեղեկանալուց հետո անշուշտ կատարում էինք։*

Նախագահ — *Գործնականում ի՞նչ եք արել այս հարցի կապակցությամբ, ո՞ր պատասխանատու քարտուղարին հանդիմանեցիք կամ պատժեցիք։*

Զիա Գյոքալփ — *Ինչպես մի քիչ առաջ ասացի, լսեցինք, որ Բրուսայի մեր պատասխանատու քարտուղարը [հայերի] լքյալ գույքից մի տուն է վերցրել։*

Նախագահ — *Տան հարցը ուրիշ է, կոտորածի վերաբերյալ ...*

Զիա Գյոքալփ — *Այդ մասին լսեցինք։ Այն, ինչ-որ լսում էինք, բնական է, քննարկում էինք։*

Նախագահ — *Տեղեկանալով այդ մասին, մինիստրներին դիմեցի՞ք արդյո՞ք։ Այդ մասին խոսե՛ք։*

Զիա Գյոքալփ — *Էֆենդի, իմացանք, որ կոտորած է տեղի ունենում, բայց մեզ չտեղեկացրին, որ այդ կոտորածների հետ մեր պատասխանատու քարտուղարները կապ ունեն։ Մենք կարող էինք քննության ենթարկել միմիայն մեր պատասխանատու քարտուղարների գործերը։*

Takvim-i Vekayi, 6 Mayis 1335 (1919) № 3547

1335 (1919) թ. մայիսի 8

(Չիա Գյոֆալփի հարցաքննությունը)[51]

Նախագահ — Կուսակցության մի շարք ներկայացուցիչներ, գնալով Սիվաս, Կաստամոնու, Էրզինջան, Յոզղաթ և այլ վիլայեթներ, որոշակի հրահանգներ են տվել։ Դուք տեղեկություն ունե՞ք այդ մասին։

Չիա Գյոֆալփ — Ո՛չ։

Նախագահ — Բնհաէդդին Շաքիր բեյը ծածկագիր ունեցե՞լ է, թե՞ ոչ։

Չիա Գյոֆալփ — Կենտրոնական կոմիտեն ծածկագիր չի ունեցել, որովհետև նա էլ չպետք է ունենար։

Նախագահ — Հատուկ օգտագործելու համար նրան ծածկագիր է տրվել և դրանով նա մի շարք վայրեր գաղտնի հրամաններ է ուղարկել։ Ի՞նչ կասեք այդ մասին։

Չիա Գյոֆալփ — Տեղյակ չեմ։

Նախագահ — Դուք կատարելապես վստա՞հ եք, որ կենտրոնական կոմիտեն չի իմացել այդ մասին։

Չիա Գյոֆալփ — Ես չեմ լսել։

[Ռիզա բեյի հարցաքննությունը]

Նախագահ — Ռիզա բեյ, ասում են, որ երկու տեսակ «Թեշքիլաթ-ը մահմուսեե» է եղել։ Մեկը գործել է ռազմական մինիստրության, իսկ մյուսը՝ «Միության և առաջադիմության» կուսակցության կողմից։ Դուք, ո՞ր մեկի հետ եք աշխատել։

Ռիզա բեյ — Ես չգիտեմ, որ երկու տեսակի «Թեշքիլաթ-ը մահմուսեե» է եղել։ Մինչև զորահավաքը ես գտնվում էի Տրապիզոնում։ Դեռևս, պատերազմը սկսվելուց առաջ այդտեղ էին ուղարկում որոշ մարդկանց։ Ես նրանց ուղարկեցի Կովկաս։ Երբ պատերազմը սկսվեց, իմ ձեռքի տակ 3000 վրացի կար։ Ես ենթարկվում էի բանակի հրամանատարությանը։

Նախագահ — Բնհաէդդին Շաքիր բեյը մի շարք լիվաներ շրջագայելով՝ գաղտնի հրահանգներ է տվել։ Դուք տեղյակ չե՞ք այդ մասին։

Ռիզա բեյ — Ո՛չ, տեղյակ չեմ։

Նախագահ — Բնհաէդդին Շաքիր բեյը ծածկագիր ունեցե՞լ է, թե ոչ։

Ռիզա բեյ — Չգիտեմ։

Նախագահ — *Գիտե՞ք, որ Բնհաէդդին Շաքիր բեյի այդ շրջագայությունից հետո սկսել են տեղի ունենալ [հայերի] տեղահանություններ ու կոտորածներ։*

Ռիզա բեյ — *Ես հետագայում այստեղ իմացա այդ մասին*[51]*։*

Takvim-i Vekayi. 8 Mayis 1335 (1919) № 3549

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ[52]

[Ջեվադ բեյի ճարտաբանությունը]

Նախագահի կարգադրությամբ արձանագրող քարտուղարը ընթերցում է Ջեվադ բեյի կողմից գրված հեռագրերը։

ԲՆՀԱԷԴԴԻՆ ՇԱՔԻՐ ԲԵՅԻՆ

Կոմիտեն պահանջում է գալաթացի Խալիլին պատժել։ Ավանդադրված դրամը փոստատեից վերցվելով՝ անհրաժեշտության դեպքում բաժանվելու է բնակչությանը[53]*։*

Նազըմ, Արիֆ, Ազիզ
համաձայնեցված է՝ Ջևադ

1330 թ. (1915) հունվարի 8
Դրդապատճառը՝ խարդավանք՝ դրամ հավաքելն է։

ՏՐԱԳԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԵԹԻՆ

Քաղաքային կազմակերպության տնօրեն Ահմեդ էյուբ բեյին և գործընկերներին հանձնելու համար հեռագրով 50 օսմանյան լիրա է ուղարկված։ Շտապ վերադառնալու մասին իրենց ծանուցեք։

Ծառամբուլի պարեա Ջևադ

1331 թ. (1915) մարտի 7

Նախագահ — *Մի հեռագիր էլ կա, ուր նշված է դրամ չուղարկելու մասին։ Մինչդեռ, այստեղ դրամ ուղարկելու մասին հեռագիր է տրված։ Այդ դրամը ինչու՞ տվիք այդ մարդկանց։*

Ջևադ բեյ — *Մեծարգո փաշա, բոլորովին չեմ հիշում։*

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսա»-ն ձեր տրամադրության տակ հղած ժամանակ զինվորական կազմակերպություն է եղել, մինչդեռ, դուք դրամը ուղարկել եք ոչ զինվորական պաշտոնյաներին։ Բացի այդ, հեռագրի ներքևի մասում լուսանցքային նշում կա, ուր ասվում է, որ այդպիսի կարևոր հեռագրերի բնագրերը ըստ օրենքի վերադարձվում են, որ այն վերաբերում է «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ին և անհրաժեշտ է քաջքննել։ Ի՞նչ է նշանակում այս (կարդում է հեռագիրը)։*

ԹԵՇՔԻԼԱՔ-Ը ՄԱՀՍՈՒՄԵԻ

Ըստ օրենքի հեռագրերը վերադարձվում են, բայց պահեք այնտեղ։

1915 թ. հունվարի 8 Ջեվադ

Նախագահ — *Խալիլ փաշայի կողմից Միդհատ Շյուքրի բեյին ուղարկված հեռագրերը, որոնք կարդացվելու են հիմա, պարզորոշ ցույց են տալիս, որ «Թեշքիլաթ-ը մահսուսեա-ի և կենտրոնական կոմիտեի միջև ներքին կապ է գոյություն ունեցել։ (Քարտուղարը կարդում է)։*

ՄԻԴՀԱՏ ՇՅՈՒՔՐԻ ԲԵՅ ԷՖԵՆԴԻՆ

Հարգելի եղբայրս.

Ադմրտի, Բրուսայի, Բանդրմայի, Բալըքեսիրի և այլ վայրերի պատասխանատու քարտուղարների միջոցով մեկ շաբաթվա ընթացքում հատուկ մարդկանց գաղտնապահ հավաքելու հնարավորության մասին խնդրված էր տեղեկություն տալ։

13 թեշրին-ի սանի 1330 թ. Ազիզ, Աբիֆ, Նազըմ, Խալիլ
[1914 թ. նոյեմբերի 13]

ԻՋՄԻՏԻ ՄՈՒԹԱՍԱԲՐԻՖՈՒԹՅԱՆ

Առաջնորդ նշանակված երեք հոգու ընտանիքներին հնգական տասնհինգ լիրա ավելի։ Դրամը գտնվում է փոստատանը։ Այս հեռագիրը ցույց ավելի արագիչ պաշտոնյային։ Ջեթեի անվան տակ ցանկություն ունեցող 100 հոգուն ճամփու գրեք գինվորի անվան տակ և այդ մասին տեղեկացրեք մեզ։ Բանտարկյալների ազատ արձակման մասին մինիստրությունից[54] հրաման է տրվելու։

16 թեշրին-ի սանի 1330 թ. Խալիլ
[1914 թ. նոյեմբերի 16]

[Ջեվադ բեյը կցկտուր պատասխաններ է տալիս, որ ինքը Եվրոպայում է գտնվել ավյալ ժամանակ և կապ չի ունեցել այդ բոլորի հետ]։

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի ստեղծման մասին կայսերական հրամանագիր եղե՞լ է, թե՞ ոչ։*

Ջեվադ բեյ — *Չգիտեմ։*

Նախագահ — *Ինչպես կարող է պատահել, որ առանց կայսերական հրամանագրի մի հիմնարկության կից մի մասնաճյուղ ստեղծվի։*

Ջեվադ բեյ — *Տեղեկություն չունեմ։*

Նախագահ — *Ինչպե՞ս թե տեղեկություն չունեք։ Առանց ձեր ծառայության նպատակը իմանալու, ինչպե՞ս եք պաշտոնավարել այդ հիմնարկում։*

Ջեվդէթ բեյ — Ռազմական մինիստրության կողմից նշանակված պաշտոնյաներ, սպաներ են եղել։

Նախագահ — Բեհաէդդին Շաքիր բեյի կողմից ներքին գործերի մինիստրություն Թալաաթ բեյին ուղղված մի հեռագիր կա, որը ցույց է տալիս, որ Բեհաէդդին Շաքիր բեյը կապ է ունեցել «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի հետ։ Նույնիսկ միջամտել է պատերազմական գործողություններին։ Կարդացե՛ք։ (Քարտուղարը կարդում է)։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԹԱԼԱԱԹ ԲԵՅԻ ՄԻՋՈՑՈՎ [ՀԱՆՁՆԵԼ]
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Իսմայիլ Հաքքը[55] բեյի ժամանումից հետո, շտաբում իմ պարտականությունը ավարտված համարելով՝ պատրաստվում էի Արդվինում գտնվող զինվորական ուժերի գլուխը անցնել։ Երեկ մասամբ տեղ հասավ «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի համար հատկացված ռազմամթերքը։ Իսմայիլ Հաքքը բեյի հետ տեսակցեցի։ Ես այն կարծիքին եմ, որ անգործության մատնված մարտիկները, եթե աշխատանքային դումարտակներում գտնվող մահմեդականներին բաժանվի, ապա Արդվինից մինչև Մուրղուլ գտնվող և բոլոր միջոցներից զուրկ «Թեշքիլաթին» որոշակի ուժով օգնած կլինեմ[56]։ Բասենի խոզժերում 250-ի մոտ ընտիր հեծյալներ ունեմ, սրանց Արդվին տեղափոխելու կամ բանակի թիկունքում, բևերին օժանդակելու հարցում դեռևս որոշակի վճիռ չի կայացված։

Բեհաէդդին Շաքիր բեյ

(հեռագրի հակառակ երեսին գրված է)

ԲԵՀԱԷԴԴԻՆ ՇԱՔԻՐ ԲԵՑԻՆ

17 Թեշրին-ի սանի 1330 թ.
[1914 թ. նոյեմբերի 17]

Քանի որ այդտեղ այլևս անելիք չունեք, Արդվինից շտապ շարժվեք դեպի Տքատիզոն առավել կարևոր մի պաշտոն ստանձնելու համար։ Այստեղից եկող Ցակուբ Ջեմիլ բեյը ձեզ կբերի անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը։

Նախագահ — Տեսնում եք, որ Բեհաէդդին Շաքիր բեյը «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի հետ սերտ հարաբերության մեջ է եղել։ Նույնիսկ զինվորական տեղաշարժերի մասին կարծիք է հայտնել։ Հետո, ձեզ չի գրում, այլ ներքին գործերի մինիստրություն։

Ջեվդէթ բեյ — Իմ պաշտոնավարության ընթացքում գնացողները կանոնավորապես կազմակերպված կամավոր ջորախմբեր են եղել։ Ես այդ պիտիներին եմ ուղարկել։ Ավելի ուշ գնացողների մասին տեղեկություն չունեմ։

Նախագահ — Հիմա այս հեռագրից ի՞նչ եք հասկանում։ Մի՞թե չի հասկացվում, որ Բեհաէդդին Շաքիր բեյը «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի մեջ պաշտոնավարություն է ունեցել։

Ջեվադ բեյ — Վսեմափայլ փաշա, այո՛, հասկացվում է։

Նախագահ — Հետո, ձեզ ուղղված հեռագիրը, լինի՝ «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի հրամանատարության կամ նախագահության կողմից, կարևոր չէ։ Այդ պաշտոնը ինչ-որ ձևով ստանձնել է։ Զարմանալին այն է, որ հեռագիրը ձեզ չի հղում, այլ ներքին գործերի մինիստրություն։ Այս հանգամանքն առանձին ուշադրության առիթ է տալիս։ Դուք ինչպե՞ս եք մեկնաբանում այդ։

(Դատապաշտպան [խուլուսի բեյը] ուզում է իմանալ հեռագրի տարեթիվը։ Նախագահը պատասխանում է. — 17 թեշրին-ի սանր 1330 թ. (1914 թ. նոյեմբերի 17)։

Խուլուսի բեյ — Այն Ջեվադ բեյի պաշտոնավարության ընթացքում չի եղել։

Նախագահ — Այո՛, մենք չենք ասում, որ այն տեղի է ունեցել Ջեվադ բեյի պաշտոնավարության ընթացքում։ Մենք մատնացույց ենք անում հեռագրի Թալաաթ բեյին ուղղված լինելը։ Բացի այդ, շատ պարզ երևում է «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի և Բեհաէդդին Շաքիր բեյի միջոցով կենտրոնական կոմիտեի միջև գոյություն ունեցող կապը։ Մի՞թե դուք ևս չեք հաստատում այդ։

Ջեվադ բեյ — Ինչպես ասացի, ես կարծում էի, որ այդ պաշտոնյաները, որոնց հետ ես գործակցում եմ, ռազմական մինիստրությունից են։ Ես չէի կարծում, որ նրանք այլ պարտականություններ ունեն այստեղ։

Նախագահ — Դուք ո՞ր թվականին ստանձնեցիք այդ պաշտոնը։

Ջեվադ բեյ — 15 կանուն-ի էվվել 1330 թվականին (1914 թ. դեկտեմբերի 15)։

Նախագահ — Ցուրեմն, մոտավորապես մեկուկես ամսվա տարբերություն կա։

Ջեվադ բեյ — Այո՛, էֆենդի։ Ես չգիտեմ, թե դրանից հետո ի՞նչ եղավ։ Աբդահանի կամ Կովկասի ռազմական գործողություններն այլ ընթացք ունեցան։ Հրաման եղավ, որպեսզի մերոնք անցնեն երրորդ բանակի հրամանատարության տակ։ Նույնիսկ հաղորդագրություն եղավ, որ նահի հրամանատարության տակ։ Նույնիսկ հաղորդագրություն եղավ, որ այլևս կառավարական կազմակերպության անհրաժեշտությունը չկա ...

[Միդհատ Շյուրհի բեյի հարցաքննությունը]

Նախագահ — *Օգոստոսի 17 թվագրությամբ Էրզրումի վալիի միջոցով ծածկագիր հեռագիր եք ուղարկել, որից պարզվում է, որ կենտրոնական կոմիտեն խառնվել է պետական գործերին։ Ի՞նչ կասեք այդ մասին։*

(Քարտուղարը կարդում է հեռագիրը).

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԱԼԻԻ ՄԻՋՈՑՈՎ [ՀԱՆՁՆԵԼ] ԲԵՀԱԷԴԻՆ ՇԱՔԻՐ ԲԵՅԻՆ

Այստեղ, մի քանիսի կողմից տրված տեղեկություններից, ինչպես նաև 1330 (1914) օգոստոսի 15 թվակիր ձեր գրությունից պարզվում է, որ հայերը հավակնություն չունեն մեզ հետ միատեղ ռազմական գործողություններին մասնակցելու։ Ուստի ձեռնարկվող բոլոր միջոցները պետք է գաղտնի պահվեն նրանցից։ Պետությունը և կառավարությունը փափագում է, որ մեր հայ հպատակները մնան ապահով։ Այս ուղղությամբ ցանկալի է, որ անհրաժեշտ քայլեր գործադրվի՝ նրանց սրտերը հանգիստ պահելու համար[57]։

Միդհատ Շյուրհի բեյ

Միդհատ Շյուրհի բեյ — *Այո՛, էֆենդի, ճիշտ է, հիշում եմ։ Նախապես ինձանից այդպիսի բան հարցրել էին։ Ինչպես ասացի, Բեհաէդդին Շաքիր բեյը զորահավաքի ժամանակ, պատերազմ հայտարարելուց առաջ, հայրենիքին ծառայելու նպատակով՝ գնացել էր այնտեղ։ Մենք տնապես հարաբերության մեջ էինք այդտեղ գտնվող հայերի հետ։ Ընտրություննները միշտ միատեղ էինք անցկացնում դաշնակցության հետ։ Անընդհատ շփման մեջ էինք գտնվում նրանց հետ և հորդորում՝ որպեսզի նրանք ևս պատրաստվեն պատերազմին և ջանք գործադրեն հայրենիքը պաշտպանելու խնդրում։ Սակայն պարզվում է, որ տեղի ունեցած բանակցությունները հաջողություն չեն ունեցել, քանի որ նրանք ասել են. «Մենք չենք կարող բացեիբաց թուրքերի հետ ընկերակցել, պատերազմ ծագելու դեպքում՝ չեզոք ենք մնալու»։ Բնական է, որ նրան բաց հեռագիր ուղարկելը պատշաճ չէր կարող համարվել, ուստի կենտրոնական կոմիտեի պատասխան հեռագիրը առաքեցինք ներքին գործերի մինիստրության միջոցով, որտեղ ասված էր. «Տեսակցե՛ք նրանց հետ և աշխատեք, ինչպես որ հարկն է, մեղմությամբ համաձայնության գալ»։ Մեր այս վարմունքը կառավարության հետ առնչություն չունի։ Այն գրված է եղել պատերազմը սկսվելուց առաջ, օսմանյան ազգությունների միջև բարեկամական հարաբերություններ սերմանելու միտումով։*

Նախագահ — Թևկուզ և [պատերազմից] առաջ գրված լինի, չէ՞ որ դուք դրանով միջամտել եք [կառավարության] գործերին։

Միդհատ Շյուրի բեյ — *Մեծարգո փաշա, ի՞նչ միջամտության մասին է խոսքը։ Մենք տևապես շփման մեջ ենք եղել հայերի հետ։ Բոլոր ընտրությունների ընթացքում թեկնածուների առաջադրումը կատարել ենք դաշնակցության հետ միատեղ։ Նրանք ձայն են տվել մեր թեկնածուներին, մենք էլ՝ նրանց։ Այնպես որ, ընտրվել է ցանկալի թվացող թեկնածուն։ Ինչպես նշվեց, մենք նախաձեռնեցինք, որպեսզի պատերազմի ընթացքում համագործակցենք իրար հետ։ Բայց այդ միջոցները հաջողություն չունեցան։ Նրանց չհամաձայնելու մասին մենք տեղեկացանք հետաքրքրվի նրանց հանդեպ։ Դա մտնում է ոչ թե կառավարության, այլ կուսակցության պարտականությունների մեջ։*

Նախագահ — *Պատերազմ հայտարարելուց առաջ ուրեմն այդպիսի ժողովո՞ւն ունեիք։*

Միդհատ Շյուրի բեյ — *Ինչպիսի՞, էֆենդի։*

Նախագահ — *Պատերազմ հայտարարելուց առաջ, ուրեմն նախօրոք գիտեիք, որ մտնելու եք պատերազմի մեջ։*

Միդհատ Շյուրի բեյ — *Ո՛չ, էֆենդի. զորահավաք հայտարարելու միտքով կարելի էր ամեն ինչ սպասել։ Զորահավաք հայտարարելը մի՞թե «պատրաստ եղիր» չի նշանակում։*

Նախագահ — *Տվյալ ժամանակ պետության դիրքորոշումը զինված չեզոքության մեջ մնալն էր։ Ուստի զորահավաք հայտարարելը անհրաժեշտություն էր։*

Միդհատ Շյուրի բեյ — *Չեզոքությո՞ւն, էֆենդի։*

Նախագահ — *Այո՛, դա զինված չեզոքություն էր։ Զորահավաք հայտարարելը անպայման պատերազմի մեջ մտնել չէ։*

Միդհատ Շյուրի բեյ — *Ո՛չ, էֆենդի. [զորահավաք] հայտարարվել է, որպեսզի Ռուսաստանի կողմից հարձակում լինելու դեպքում գտնվենք պատրաստ վիճակում[58]։*

Նախագահ — *Կարդացե՛ք։*

(Ընթերցվում է Բեհաէդդին Շաքիր բեյի կողմից ներքին գործերի մինիստր Թալաաթ բեյի միջոցով կենտրոնական կոմիտեին ուղղված վերոհիշյալ հեռագիրը)։

Նախագահ — *Տեսնում եք, որ կենտրոնական կոմիտեն ոչ միայն ժողովակցել է ռազմական գործողություններին, այլև հանդես է եկել որոշ նախաձեռնություններով։*

Միդհատ Շյուրի բեյ — *Էֆենդի, կենտրոնական կոմիտեն հանդես է եկել միջնորդի դերում։ Ես ինքս վստահ եմ, որ այն ուղղված է եղել*

«Թևշքիլաթ-ը մահասւսե»-ին, քանի որ գործերին հետևելու համար մեզ ամեն տեղերից գրություններ էր գալիս։

Նախագահ — Անցյալում ասել էիք, որ ծածկագիր չունեք։

Միդհատ Շյուրեի բեյ — Ծածկագիր չուննենք, այդ մեր ծածկագիրը չէ։

Նախագահ — Այսինքն, ներքին գործերի մինիստրություն գրելու փոխարեն, կարող էր ուղղակի ձեզ գրել։

Միդհատ Շյուրեի բեյ — Ներքին գործերի մինիստրություն գրելուց հասկացվում է, որ մենք ծածկագիր չենք ունեցել։ Ուղղակի ներքին գործերի մինիստրություն առաքելը դրա վառ ապացույցն է։

Նախագահ — Շատ լավ, ի՞նչ նպատակ է հետապնդել ներքին գործերի մինիստրությանը միջնորդագրելով։ Ստացվում է այնպես, որ նման ձևով վարվելը ստիպողական անհրաժեշտություն է։

Միդհատ Շյուրեի բեյ — Բացե ի բաց չի կարողացել գրել։ Գաղտնի գրելու համար էլ դիմել է այդտեղի վալիին։

Նախագահ — Կարդացե՛ք, [հեռագրի] հակառակ կողմում գրված հրահանգը։

ԲԵՀԱԷԴԻՆ ՇԱՔԻՐ ԲԵՅԻՆ

Քանի որ այդտեղ այլևս աննշիք չունեք, Արդվինից շտապ շարժվեք դեպի Տրապիզոն առավել կարևոր մի պաշտոն ստանձնելու համար։ Այստեղից եկող Յակուբ Քեմիլ բեյը ձեզ կրկին անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը։

1914 թ. նոյեմբերի 17

Միդհատ Շյուրեի բեյ — Այո՛, էֆենդի, ինչպես ձեզ հայտնի է, դոկտ. Նազըմը ևս ընդգրկված էր «Թևշքիլաթ-ը մահասւսե»-ի մեջ։ Ընդունած, որ բավական ժամանակ է անցել, բայց հիշում եմ։ Կովկասի կողմերը գնալու համար հարձակման պիտի անցնեին։ Յակուբ Քեմիլ բեյի և այլ ուժերի հետ միանալով, գնալու էին այդ հարձակումը իրագործելու։ Կարծում եմ, այդ կապակցությամբ էլ տվյալ պատասխանն ենք գրել։

Նախագահ — Շատ լավ, այդ հրահանգը դուք ե՞ք գրել։

Միդհատ Շյուրեի բեյ — Շատ հավանական է, որ «Թևշքիլաթ-ը մահասւսե»-ից կամ ռազմական մինիստրությունից, կամ էլ մի այլ տեղից գրված լինի։ Այս, մի տեղից անհրաժեշտ եղել է, որ գրել են։ Ըստ երևույթին, այնտեղ գտնվող Բեհաէդդին Շաքիր բեյի հարցումի հիման վրա գրվել է կենտրոնական կոմիտեին կից գտնվող մի հաստատությունից։ Բեհաէդդին Շաքիր բեյին տրված հրահանգից այդպես է երևում։ Այդ է

ձղել նրա պաշտոնը։ Այսինքն՝ տվյալ գործին ուղղակիորեն մասնակցություն չունենալ։ Ձեմ կարողանում մտաբերել, թե այդ ստորագրությունները ու՞մ են պատկանում։

Նախագահ — *Դուք ասացիք, որ Բեհաէդդին Շաքիրը «հայրենիքին ծառայելու» նպատակով պարտականություն էր ստանձնել, ուրեմն՝ մինչև այդ պարտականության ավարտը ձեզ հետ հարաբերություն չպետք է ունենար։ Մինչդեռ նա իր հարաբերությունը չի խզում և անընդհատ ձեզ է գրում։*

Միդհատ Շյուրի բեյ — *Շատ հավանական է էֆենդի, չէ՞ որ նա ֆենաբրոնական կոմիտեի անդամ էր։ Բայց նա այնտեղ չի գնացել կենտրոնական կոմիտեի հետ առնչվող մի պաշտոնով։ Նա գնացել է մի այլ պարտականություն կատարելու։ Նման գրություններ միայն Բեհաէդդին Շաքիր բեյից չէինք ստանում, այլ մի շարք տեղերից ևս։ Պատասխանները տարբեր տեղեր էին առաքվում։ Մեր աշխատակիցներից մեկը այդ գործին հետամուտ լինելով, գրում էր պատասխանները։ Որևէ գրության ուղղակի մեզ գալը չի նշանակում, որ այն ուղարկողի հետ մենք հարաբերության մեջ ենք եղել։ Բեհաէդդին Շաքիր բեյի հեռագիրն էլ, ահա, այդպիսին է եղել։ Այսինքն՝ կենտրոնական կոմիտեն այդպիսի գործերով չի զբաղվել։*

Նախագահ — *Իսկ ո՞րն է դրա իմաստը։*

Միդհատ Շյուրի բեյ — *Իմաստը երևի «հայրենիքի ծառայության» մեջ լինելն է։*

Նախագահ — *Ասում են, որ դա ցույց է տալիս, «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի և կենտրոնական կոմիտեի միջև գոյություն ունեցող կապը։*

Միդհատ Շյուրի բեյ — *Ո՛չ, էֆենդի։ Նման թղթեր մեզ գալիս էին նաև այլ տեղերից։ Օրինակ, «Կարմիր մահիկին» վերաբերող մի շարք գրություններ էինք ստանում։ Պատասխանն ուղարկում էինք «Կարմիր մահիկին», որն էլ իր հերթին գրություն էր ուղարկում համապատասխան կազմակերպությանը։ Օրինակ, շրջաբերականներ էինք ստանում «Որբանոցային կազմակերպություններից», ուր նշված էր լինում՝ «Գրեք ձեր մասնաճյուղերին, որպեսզի նրանց օգնեն»։ Որբանոցը կատարելապես ինքնուրույն կազմակերպություն լինելով հանդերձ, մեզ գրություն էր ուղարկում, հայտնելով, որ մի շարք տեղերում պակասորդ ունեն։ Մենք էլ գրում էինք մեր մասնաճյուղերին, խնդրելով, որ նրանց պակասորդները փոխհատուցվեն։ Դա չի նշանակում, որ որբանոցի և կենտրոնական կոմիտեի միջև կապ գոյություն ունի։ Դա ցույց է տալիս, որ նրանք իրար հետ փոխօգնության մեջ են գտնվել պատերազմի ընթաց-*

քում։ Դրա մեջ վնասակար մի բան եթե նկատեի, ես ընթացք չէի տա։ Բոլոր դեպքերում դրա իմաստը միջնորդ լինելու մեջ է։ Նույնիսկ կենտրոնական կոմիտեում պաշտոն չունենալու դեպքում էլ, եթե նման գրություն անցներ ձեռքս, կգնայի, ջանք կթափեի, պատասխանը կգրեի և կուղարկեի։ Բոլորովին չէի պատկերացնում, որ հետագայում նման վիճակի առաջ կկանգնեմ։

Նախագահ — *Սուլեյման Ասքերի բեյը ի՞նչ հարաբերություն ունի կենտրոնական կոմիտեի հետ։*

Միդհատ Շյուկրի բեյ — Նա միշտ էլ գինվորական է եղել։ Պարզ է, որ սպաների հետ կենտրոնական կոմիտեն չի կարող հարաբերություններ ունենալ։

Նախագահ — *Նրա կողմից Բեհաէդդին Շաքիր բեյին ուղղված մի հեռագիր կա, որը լիովին ցույց է տալիս «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի հետ նրա ունեցած համագործակցությունը։*

Միդհատ Շյուկրի բեյ — *Մեծարգո փաշա, ինչպիսի՞ կապ։*

Նախագահ — *Կարդացե՛ք։*

(Արձանագրող քարտուղար Շեֆիք բեյը ընթերցում է)

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԵԹԻՆ

Վերծանել անձամբ — *ծածկագիրը ուղղված է Բեհաէդդին Շաքիր բեյին.*

Տրապիզոնից Ռիզա բեյը ընտրված է էրզրումի կենտրոնական կոմիտեի անդամ։ Ռիզա բեյի փոխարեն որպես պատասխանատու քարտուղար ուղարկվելու է Մեմդուհ բեյը։

Սուլեյման Ասքերի

9 Թեշրին-ի սանի 1330 թ.։
[1914 թ. նոյեմբերի 9]

Նախագահ — *Կենտրոնական կոմիտեին է գրել։*

Միդհատ Շյուկրի բեյ — *Սուլեյման Ասքերի բեյը «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ից է գրել։ Գրել է էրզրումի հասցեով։ Արդեն Բեհաէդդին Շաքիր բեյը կապ ունի «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ի հետ, այդպես չէ՞ էֆենդի։ Ռիզա բեյը կենտրոնական կոմիտեի [անդամ] ընտրվելու կապակցությամբ մենք պիտի ենք «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ին։ «Գրե՛ք Բեհաէդդին Շաքիր բեյին, որպեսզի Տրապիզոնցի Ռիզա բեյին ուղարկի մեզ մոտ, քանի որ նա ընտրված է կենտրոնական կոմիտեի անդամ։*

Նախագահ — Ի՞նչ նպատակով Սուլեյման Ասքերի բեյը միջնորդ է հանդիսանում։ Այնպես է հասկացվում, որ նրանց միջև ներքին կապ է գոյություն ունեցել։

Միդհատ Շյուրի բեյ — Չէ՞ որ Բեհաէդդին բեյը կապված է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ։ Բեհաէդդին Շաքիր բեյը զորահավաքից հետո հայրենիքին ծառայելու նպատակով գնաց ռազմաճակատ։ Հետևաբար՝ նա ենթարկվելու էր Սուլեյման Ասքերի բեյին։ Ուստի մենք խնդրել էինք Սուլեյման Ասքերի բեյին, որպեսզի Ռիզա բեյին ուղարկի աչքատեղ։ Բավական ժամանակ է անցել, լավ չեմ հիշում։

Նախագահ — Ռիզա բեյին ուղարկում են էրզրումի կենտրոնական կոմիտե։

Միդհատ Շյուրի բեյ — Էրզրումում կենտրոնական կոմիտե չկա։

Նախագահ — Հեռագրում այդպես է գրված։

Միդհատ Շյուրի բեյ — Սուլեյման Ասքերի բեյը «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի գործերին իրազեկ չլինելու պատճառով, այդպես սխալ է գրել։

Նախագահ — Կարդացե՛ք հեռագիրը։

(Արձանագրող քարտուղար Շեֆիք բեյը կարդում է հեռագիրը)

«ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» [ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ] ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Հարգանքներով տեղեկացնում ենք, որ 55 հոգուց բաղկացած 5-րդ չեթեների [խումբ]59 Արզվինցի Թուֆան աղայի հրամանատարությամբ հենց նոր ճանապարհ դրեցինք Ժաոորով60։

Սամսոնի պատասխանատու–քարտուղար Ռյուշդի

16 կանուն-ի էվվել 1330 թ.
[1914 թ. դեկտեմբերի 16]

Ծղրտոց՝ գոկտ. Նազըմ բեյ էֆենդիին ՄԻԴՀԱՏ ՇՅՈՒՔՐՈՒ

Միդհատ Շյուրի բեյ — *Մի քիչ առաջ ասացի, որ մենք ևս պատասխանատու քարտուղարներին գրել էինք, որ հայրենիքին ծառայելու համար ցանկություն ունեցող մարդկանց, որպես կամավորներ հավաքագրեն «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի համար։ Որքան մեզ հայտնի է, այս Ռյուշդի բեյը կապիտանի կոչում ուներ և հրամանատար էր մի զինվորական գասակի։ Ըստ երևույթին, այնտեղ կամավորներ է հավաքել և մեզ ուղարկելու մասին տեղեկություն է տվել։ Հետագայում իմացանք, որ Ռյուշդի բեյը շատ գործեր ունի և խիստ ծանրաբեռնված է։ Լսեցինք նաև, որ ավազակներին հետապնդելու համար մութասարրիֆի կոչմից ներգրավվել է ժանգարմական գործերի մեջ։ Կանչեցինք մեզ*

մոտ։ Խիստ զբաղված և մեր վարած քաղաքականությունից կտրված լինելով՝ հեռացրինք պատասխանատու քարտուղարի պաշտոնից։ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն այդ մասին կարող է մանրամասն տեղեկություն տալ։

Նախագահ — Ասում եք, որ կենտրոնական կոմիտեն «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ առնչություն չի ունեցել, բայց և այնպես հասկացվում է, որ նա հաճախակի միջամտել է նման գործերին։

Միդհատ Շյուրեյ բեյ — Այո՛, մենք կապի մեջ էինք բոլոր հաստատությունների հետ։ Մեզ մոտ եկած գրությունները ուղարկում էինք համապատասխան կազմակերպություններին, ինչպես, օրինակ՝ «Կարմիր մահիկին», որքանոցին, ներքին գործերի մինիստրություն և այլ տեղեր։

Միրլիվա Մուստաֆա փաշա (հանձնաժողովի անդամ) — Կենտրոնական կոմիտեն ուղղակի զբաղվել է «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի գործերով։ Կամավորներ է ուղարկել։ Նշում է, որ «այս կապակցությամբ հրամաններ ավեցինք պատասխանատու քարտուղարներին, պատվիրակներին», որոնք «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն հիմնականում ստեղծված է եղել ձեր կողմից, կենտրոնական կոմիտեի կողմից։

Միդհատ Շյուրեյ բեյ — Ոչ, մեծարգո փաշա։ Պատերազմի ընթացքում յուրաքանչյուր մարդու պարտականություններ էր իր կարողության չափ, մինչև պատերազմի ավարտը օգտակար լինել իր հայրենիքին։ Արդեն պատերազմը հայտարարվելուց հետո մեր ընկերների մեծ մասը սկսեց զբաղվել զինվորական, հայրենիքին ծառայելու գործերով՝ յուրաքանչյուրն ըստ իր կարողության։ Այդ Ռյուշդի էֆենդի ասված անձնավորությունը որպես զինվորական՝ առավել շատ է զբաղվել, նույնիսկ պաշտոնավարել է ժանդարմական ոստիկանությունում։ Այդ մասին տեղեկանալով, մենք կանչեցինք նրան և խիստ զբաղվածության համար հեռացրինք պաշտոնից։

Նախագահ — Ձեր քարտուղարության ընթացքում ինչու՞ հոգատար վերաբերմունք չեք ունեցել դոկտ. Նազըմի կողմից հափշտակված փաստաթղթերի նկատմամբ։ Կուսակցության քաղաքական գործունեության վերաբերող այդ կարևոր փաստաթղթերը մեջտեղից վերացնելը ցույց է տալիս, որ [կուսակցությունը] առնչություն է ունեցել մի շարք գաղտնի գործարքների հետ։ Այս մասին ի՞նչ կասեիք։

Միդհատ Շյուրեյ բեյ — Ցավոք սրտի [նրա] մեկնելուց հետո տեղեկացա այդ մասին։ Մեկ օր հետո մեկնել էր այստեղից։

Նախագահ — Շատ լավ։ Բայց չէ՞ որ այդ բանին ավելի շուտ պետք է հետամուտ լինեիք։

Միդհատ Շյուրի բեյ — Երբեք մտքովս չէր անցնում, որ փաստաթղթերը առնելով՝ հետը կտանի։

Նախագահ — Ուրեմն փաստաթղթերը նախապես պետք է հավաքված, պատրաստված լինե՞ին, որ բոլորը միատեղ առներ ու գնար։

Միդհատ Շյուրի բեյ — Էֆենդի, արդեն կուսակցությունը վերակազմելու ընթացքում բոլոր փաստաթղթերը սնդուկների մեջ էինք դասավորել։ [Այդ ժամանակ] մենք նկատեցինք, որ նա առանձնացնում էր Փարիզում գտնվելու ընթացքում Ահմեդ Ռիզա բեյի[61] հետ ունեցած իր թղթակցությունները։ Ըստ երևույթին, դրանք է փնտրել, տակնուվրա արել, և, չկարողանալով գտնել՝ բոլորը միատեղ վերցնելով՝ գնացել է։

Նախագահ — Ուրեմն, նախապես զգացել եք, որ դոկտ. Նազըմը փախուստի է դիմելու։

Միդհատ Շյուրի բեյ — Ո՛չ, էֆենդի։

Նախագահ — Հապա, ինչու՞ էր ուզում վերցնել։

Միդհատ Շյուրի բեյ — Հրաժարական տալով՝ խզեց իր հարաբերությունը կուսակցության հետ։ Հրաժարական տալու ժամանակ ասաց. «Այս փաստաթղթերը կարևոր են և վերաբերում են ինձ։ Ես չեմ ցանկանում, 20—25 տարի առաջ Փարիզում գտնվելու ընթացքում իմ աշխատանքին վերաբերող փաստաթղթերն այստեղ մնան։ Ես իմ հարաբերությունները խզում եմ։ Նույնիսկ այսուհետև համագումարներին էլ չեմ մասնակցելու»։ Շատ լավ, ասացինք։ Բայց, երբեք չէի պատկերացնում, որ բոլոր փաստաթղթերը կվերցնի։

Նախագահ — Այդ կարևոր փաստաթղթերը այդպես անփութորեն նրան տալու իրավասությունը ունեի՞ք։

Միդհատ Շյուրի բեյ — Էֆենդի, դրանք իր փաստաթղթերն էին, ինքն էր տվել։

Նախագահ — Բայց չէ՞ որ դրանք կուսակցության փաստաթղթերի մեջն էին մտել։

Միդհատ Շյուրի բեյ — Ո՛չ, էֆենդի. նշված էր, որ այդ նյութերը օգտագործվելու են կուսակցության պատմությունը շարադրելու ժամանակ։ Այսինքն՝ այդ փաստաթղթերը պիտի օգտագործվեին «Միություն և առաջադիմություն» կուսակցության ստեղծման, նրա տարբեր փուլերից անցնելու պատմությունը շարադրելու ընթացքում։

Նախագահ — Անցյալ օրը, ձեր տված ցուցմունքի ժամանակ, խոսեցիք Իբրահիմ և պահեստի սպա Ջաֆեր էֆենդիների մասին։ Դուք գիտեք արդյո՞ք, թե ներկայումս նրանք որտեղ են գտնվում։

Միդհատ Շյուրի բեյ — *Նրանք պետք է, որ Ստամբուլում լինեն։*

Նախագահ — *Ո՞ր կողմերում, հասցեն գիտե՞ք։*

Միդհատ Շյուրի բեյ — *Կարծում եմ, որ Իբրահիմ էֆենդին բնակվում է Պեշիկթաշում, իսկ քարտուղար Ջաֆեր էֆենդին Ֆաթիհում կամ էլ Ջահանգիրի շրջանում։ Ճիշտ հասցեն չգիտեմ։*

Նախագահ — *Ասում են, որ պատերազմ հայտարարելուց հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը ձեռնամուխ է եղել [ժողովրդից] նպաստ հավաքելու գործին։ Այդ նպաստը ինչու՞ հավաքվեց, գումարը որքանի հասավ և ի՞նչ նպատակի համար ծախսվեց։*

Միդհատ Շյուրի բեյ — *Այսի՞նքն, էֆենդի։*

Նախագահ — *Պատերազմ հայտարարելուց հետո որոշ նպաստներ են հավաքվել։*

Միդհատ Շյուրի բեյ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցության համար է հավաքվե՞լ։*

Նախագահ — *Այո՛։*

Միդհատ Շյուրի բեյ — *Լուր չունեմ, տեղեկություն չունեմ։*

Նախագահ — *Այդ հասույթից որոշ գումար է ծախսվել։ Այդ դրամը ի՞նչ ձևով եք ծախսել։*

Միդհատ Շյուրի բեյ — *Այո՛, էֆենդի. մոտ 400 000 լիրայի չափ մի գումար էր, որը հետագայում պահ տրվեց բանկերում։ Ձեր ասածը այդ գումարի մասին է արդյո՞ք։*

Նախագահ — *Այդ է, թե՞ այդ չէ, չգիտեմ։ Բացատրություն տվեք։*

Միդհատ Շյուրի բեյ — *Իմ իմացածը այդ գումարի մասին է։ Ինչպես գիտեք, պատերազմ հայտարարելուց առաջ հացի խնդիրը բավականին դժվարացել էր։ Այդ կապակցությամբ քաղաքապետարանը որոշեց գնացուցակ սահմանել։ Բայց այդ գնացուցակը արդյունավետ չեղավ։ Հետագայում այդ գործով զբաղվեց քաղաքապետարանը։ Հացի խնդրին հետևելու համար դիմեցին նաև Քեմալ բեյին։ Նա պարտավորվեց այդ գործին հետևել համատեղության կարգով։ Նա ասաց, որ «ես վեց այդ գործին հետևել համատեղության կարգով։ Նա ասաց, որ «ես հացը վաճառելու եմ այս գնով», իսկ քաղաքապետարանն էլ հավանություն տվեց այդ գնին*[62]։

[Զիա Գյոքալփի հարցաքննությունը]

Նախագահ — *Զիա բեյ, դուք «Ծնի մեջմուա» (Նոր հանդես) հորատգրով հանդես հրատարակում ե՞ք։*

Զիա Գյոքալփ — *«Ծնի մեջմուան» հանդես է, ես նրան թղթակցում եմ*[63]։

Նախագահ — Այդ հանդեսում ինչ-որ թուրանիզմին[64] վերաբերող մի հոդված ունեք։ Այդ հոդվածում օսմանիզմի[65] փոխարեն նախապատվությունը տրվում է թուրանիզմին։ Այս խնդրի վերաբերյալ բացատրեք ձեր տեսակետը։

Զիա Գյոքալփ — «Ի՞նչ է թուրանը» վերնագրով մի հոդված ունեմ, որտեղ ցույց եմ տալիս, որ այսօրվա պատկերացումով այն կուլտուրական թուրան է։ Այսինքն՝ օսմանյան թուրքերը պետք է մեկ կուլտուրա ստեղծեն։ Հետագայում մյուս թուրքերը (թյուրքալեզու ժողովուրդները— Ա. Փ.) այն ընդունելու դեպքում կստացվի կուլտուրական թուրան։ Եվ դա նպաստավոր կլինի նաև օսմանյան պետության համար, քանի որ նախ կղարգանա օսմանյան երկրի հիմքը հանդիսացող բրքուքյունը։ Բնական է, որ կհզորանա նաև պետությունը, հետագայում էլ ամբողջ բրքուքյունը, որոնք կընդունեն օսմանյան թուրքերեն լեզուն։ Ադրբեջանի թուրքերը արդեն սկսել են կուլտուրական թուրանի ուղղությամբ աշխատել։ Թուրքերեն լեզվի տարածումը, օսմանյան գրականության, որպես ազգային գրականություն ընդունելը, բոլոր թուրքերին հոգովարտով կապելու է մեզ հետ։ Բոլոր թուրքերը ընթերցելու են մեզ մոտ լույս տեսած ստեղծագործությունները։ Թերթերի և գրքերի ընթերցողները եթե շատանան, բնական է, որ գրողները, գրականագետներն իրենց ստեղծագործություններից առավել շատ օգուտ կքաղեն։ Ահա այդ հոդվածը սկզբից մինչև վերջ գրված է այս նպատակի համար և պարզ ցույց է տրված, որ այն նպաստավոր կլինի օսմանիզմի համար։

Նախագահ — Այս հանգամանքը արդյոք չի՞ գրգռի ոչ մահմեդական ազգություններին։

Զիա Գյոքալփ — Ո՛չ, էֆենդի, բոլոր օսմանյան ազգություններն իրենց մշակույթի մեջ ազատ են։ Այսինքն՝ յուրաքանչյուրը կարող է իր մայրենի լեզվով գրականություն հրատարակել։ Այնպես որ, այս կարգը փոխանակ նրանց վշտացնելու, պետք է որ գոհացնի։ Այդ ազգությունները կատեն այն մարդկանց, որոնք ասում են, թե թուրքական ազգ, թուրքական կուլտուրա գոյություն չունի, այլ կա միմիայն օսմանյան լեզու և օսմանյան կուլտուրա։ Այսինքն՝ նրանք մյուս ազգերին չեն ճանաչում և ասում են, որ գոյություն ունի միմիայն օսմանյան ազգ։ Մինչդեռ իմ համոզմունքով «օսմանյան» անվանումը վերաբերում է միայն պետությանը, այսինքն՝ Օսմանյան պետությանը։ Եվ այդ պետության մեջ ընդգրկված են արաբ, թուրք, հայ և այլ ազգություններ։ Այս հանգամանքը հաստատում է յուրաքանչյուրի ինչ ազգություն լինելը և միևնույն ժամանակ կապահովի օսմանյան պետության հզորությունը։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Օսմանյան պետությունը, որպես հենարան, կարող է ունենալ ազգերի միջև գոյություն ունեցող միությունն ու փոխադարձ հարգանքը։ Իսկ եթե հայտարարվի, որ բոլորս օսմանցի ենք և ազգություն չունենք, ապա ազգությունների միջև չի կարող միասնականություն լինել։ Հասկանալի է, որ մյուս ազգերը կմերժեն այս թեզը։

Նախագահ — Տեղահանության հարցը ի՞նչ ձևով քննարկվեց կենտրոնական կոմիտեում։

Զիա Գյոքալփ — Բոլորովին չքննարկվեց։ Պատերազմին վերաբերող օրենքներն արդեն հրամանագրի ձևն ունեին։ Դրանք կազմվում էին պատերազմի պատճառով։ Այն կուսակցության ծրագրի հետ առնչություն չունի։ Անհրաժեշտությունից ելնելով հարկադրավոր օրենքներ էին կազմվում։

Նախագահ — Շատերը ասում են, որ այն վճռված է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեում, մի շարք գեկավարների մտահղացմամբ և որոշմամբ։

Զիա Գյոքալփ — Ճիշտ չէ։

Նախագահ — Առաջին հերթին այն տեղի է ունեցել Բեհաէդդին Շաքիր բեյի և դոկտ. Նազըմի հրահրմամբ։

Զիա Գյոքալփ — Կենտրոնական կոմիտեո՞ւմ։

Նախագահ — Այո՛, կենտրոնական կոմիտեում և ձայների մեծամասնությամբ։ Եվ այս հարցը կենտրոնական կոմիտեի կողմից քաջալերվելով՝ նրանք ներգործել են ռազմական մինիստրության վրա և իրագործանացրել այն։

Զիա Գյոքալփ — Կենտրոնական կոմիտեում այդ մասին ոչ մի խոսք չի եղել։

Նախագահ — Տեղահանության ընթացքում մի շարք վայրերում կոտորածներ են տեղի ունեցել, կողոպուտ և հափշտակություն։ Կենտրոնական կոմիտեն մնացել է դիտորդի դերում և ոչ մի որոշում չի ընդունել այդ մասին։

Զիա Գյոքալփ — Կենտրոնական կոմիտեն բավական ուշ իմացավ։ Այն էլ ոչ բոլորի, այլ մասնակի դեպքերի մասին։ Կենտրոնական կոմիտեն տեղեկանալուց հետո պահանջեց, որպեսզի ներքին գործերի և ռազմական մինիստրությունները արգելեն այդ բոլորը և հանցագործներին էլ պատժեն։ Մենք պաշտոնապես կառավարության գործերին միջամտելու իրավասություն չունեինք։ Ուստի այդ ձևով պահանջ ներկայացրինք։ Այդ հարցումի հիման վրա մեզ պատասխանեցին, որ մի շարք

հետաքննող հանձնաժողովներ են ուղարկել և որոշ միջոցներ են ձեռնարկել։ Մեր հարցադրումներին միշտ այդ ձևով էին պատասխանում։

Նախագահ — Համենայն դեպս տեղահանությունն ու կոտորածը շարունակում էր իրագործվել։ Այդպես չէ՞։

Զիա Գյոքալփ — Այդ արարքներին ո՞վ կարող էր արգելք հանդիսանալ։

Նախագահ — Կուսակցության պատգամավորները համեմատաբար կարևորություն չներկայացնող հարցերի նկատմամբ մինիստրների խորհրդում կառավարությունից անմիջապես բացատրություն են պահանջել։ Այդ ինչպե՞ս է եղել, որ այս կարևոր խնդիրը ձեր կողմից անուշադրության է մատնվել։

Զիա Գյոքալփ — Կենտրոնական կոմիտեն պատգամավորների հետ ոչ մի հարաբերություն չունի։ Պատգամավորներն ունեին առանձին կազմակերպություն, որը նախկինում կոչվում էր «Ընդհանուր բյուրո», հետագայում այն ընդունեց «Կառավարող հանձնաժողով» անվանումը։ Այսպիսին էր մինիստրների խորհրդի կազմակերպությունը։ Պատգամավորներին կառավարողը այդ հանձնաժողովն էր։

Նախագահ — Այո, այդպես է։ Սակայն նշվեց, որ կենտրոնական կոմիտեն իր ցանկությունները իրականացրել է ձեր միջոցով, կամ էլ ձեր մյուս պատգամավոր ընկերների օգնությամբ։ Այսինքն՝ ասացին, որ «կենտրոնական կոմիտեում հավանության արժանացած խնդիրները մենք աշխատում էինք իրագործել մինիստրների խորհրդում գտնվող կուսակցականների միջոցով»։ Այսպիսով, ինչպես երևում է, նրանք եռանդագին զբաղվել են բոլորովին կարևորություն չներկայացնող գործերով։

Զիա Գյոքալփ — Նրանք գործել են անձնական նախաձեռնությամբ։

Նախագահ — Կարևորություն չներկայացնող խնդիրների համար նրանք ամեն ջանք գործադրել են, իսկ ինչու՞ կոտորածի հարցով ոչ մի բան չեն նախաձեռնել մինիստրների խորհրդում։ Այստեղից եզրակացվում է, որ կենտրոնական կոմիտեն հավանություն է տվել կոտորածին։

Զիա Գյոքալփ — Ո՛չ, էֆենդի. կենտրոնական կոմիտեն ղեկավարում էր «Թեշքիլաթ-ը հարիջիեն» («Արտաքին կազմակերպություն»)։ Պատգամավորներին պրոպագանդելը արգելված էր։ Սակայն անձնապես ծանոթ պատգամավորների հետ կարող էին որոշ հարցերի մասին խոսել։ Կենտրոնական կոմիտեն ուղղակի չէր կարող նրանց պրոպագանդել։ Պրոպագանդելը չէր մտնում նրա իրավասության մեջ։ Հետապաշտոնները առանձնացված էին։ «Թեշքիլաթ-ը թեշերրուհ-ի («Շա-

բիաթի կազմակերպություն») և «Թեշքիլաթ-ը հարիջե»-ի կառավարող հանձնաժողովները տարբեր էին։

[Աբիֆ բեյի ճարտարճնությունը]

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ստեղծման մասին կայսերական հրամանագիր տրվե՞ց, թե՞ ոչ։*

Աբիֆ բեյ — *Ո՛չ, էֆենդի։*

Նախագահ — *Դուք ասացիք «պաշտոնական հաստատության մասնաճյուղ»։ Առանց կայսերական հրամանագրի արդյո՞ք կարող էր պաշտոնական հաստատության մասնաճյուղ գոյություն ունենալ։*

Աբիֆ բեյ — *Ժամանակավոր հանձնաժողով լինելու համար այն ստեղծվել էր ռազմական մինիստրության կողմից։ Բնական է, որ այդ մասին իրազեկ էին նաև ներքին գործերի մինիստրը, մեծ վեզիրը և մյուսները։*

Նախագահ — *Մինիստրների խորհրդի որոշմա՞մբ։*

Աբիֆ բեյ — *Հավանական է, էֆենդի։*

Նախագահ — *Դուք այնտեղ էի՞ք «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ստեղծումից առաջ։*

Աբիֆ բեյ — *Այնտեղ էի, էֆենդի։ Այդ մասին ինձ տեղեկություն տվեց ռազմական մինիստրը։*

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ստեղծման հրամանը ինչպե՞ս եղավ, գրավո՞ր։*

Աբիֆ բեյ — *Ո՛չ, գրավոր չի եղել, այլ բանավոր։ Այդ մասին առաջին հերթին տեղեկություն տվեց Սուլեյման Ասքերի բեյը։ Նա տեսակցել էր ռազմական մինիստրի հետ։ Հետո ռազմական մինիստրը ինձ ցնծուկանչեց իր մոտ, նա էլ բանավոր հայտնեց այդ մասին։ Ես էլ ընդունկանչեց իր մոտ, նա էլ բանավոր հայտնեց այդ մասին։ Ես էլ ընդունեցի։ Սակայն Ազիզ բեյին այդ մասին հրաման է տվել ներքին գործերի նեցի։ Սակայն Ազիզ բեյին այդ մասին հրաման է տվել ներքին գործերի մինիստրը։ Այստեղից կռահում եմ, որ ներքին գործերի մինիստրն էլ գիտեր այդ մասին։*

Նախագահ — *Ձեր պաշտոնավարության հարցը կարող էր բանավոր տեղեկացվել։ Իսկ մի հաստատության հիմնադրումը չէր կարող բանավոր կատարվել։ Անպատճառ որևէ մինիստրության հրամանը անհրաժեշտ էր։*

Աբիֆ բեյ — *Ըստ երևույթին, այդպիսի մի հրաման եղել է։*

Նախագահ — *Դուք այնտեղ չէի՞ք դրա ստեղծումից առաջ։*

Աբիֆ բեյ — *Այնտեղ էի։*

Նախագահ — *Այդ մասին ձեզ հրաման չեկա՞վ։ Ինչպե՞ս կարող է որևէ հաստատություն առանց հրամանի հիմնվել։*

Աբիֆ բեյ — *Չեմ հիշում, էֆենդի։*

Նախագահ — *Սուլեյման Ասքերի բեյը ի՞նչ հարաբերության մեջ էր «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ։*

Աբիֆ բեյ — *Նա հանձնաժողովի նախագահն էր։ Որոշումները հայտնում էր ռազմական մինիստրություն և ստանում անհրաժեշտ հրահանգներ։*

Նախագահ — *Որտե՞ղ էր նրա պաշտոնատեղին։*

Աբիֆ բեյ — *Նրա համար հատուկ պաշտոնատեղի էր վարձված Նուրի Օսմանիեյում։ «Թասվիր-ի էֆքյար» տպարանի դիմաց, № 32 տանը։*

Նախագահ — *Նա դրամարկղ ունե՞ր։*

Աբիֆ բեյ — *Ի՞նչ։*

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին հատկացված դրամարկղ գոյություն ունե՞ր։*

Աբիֆ բեյ — *Այո՛։*

Նախագահ — *Դրամագլուխ ունե՞ր։*

Աբիֆ բեյ — *Անկասկած։*

Նախագահ — *Սկզբնական շրջանում որքա՞ն գումար էր հատկացված։*

Աբիֆ բեյ — *Քանակը չգիտեմ։*

Նախագահ — *Ո՞րտեղից էիք վերցնում այդ գումարը։*

Աբիֆ բեյ — *Կարծեմ դրա մասին ասացի։ Մի քանի անգամ ստացել ենք ազգային պաշտպանության մինիստրությունից։ Ավելի շատ ստանում էինք ռազմական գաղտնի հաստատությունից։*

Նախագահ — *Փոխարենը ստացական տրվում է՞ր։*

Աբիֆ բեյ — *Միգուցե։*

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի և կենտրոնական կոմիտեի միջև ոչ մի կապ գոյություն չուներ, այդպես չէ՞։*

Աբիֆ բեյ — *Ոչ, ոչ մի կապ գոյություն չուներ։*

Նախագահ — *Այժմ կարդացվելու են մի շարք հեռագրեր և թղթակցություններ։*

Աբիֆ բեյ — *Կարող է թղթակցություն լինի, բայց դրանք չեն կարող այդ կապը հաստատել։*

Նախագահ — *(խոսքն ուղղելով քարտուղարին)՝ կարդացե՛ք։*

«ԻԹԹԻՀԱՏ ՎԵ ԹԵՐԱՔՔԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Քաղաք

Հարգելի եղբայրնե՛ր.

Բերդամայի կազայում, Ռեշադիե նահիեի՝ անձնատուր եղած ավազակներից չեն Համիդ աղան օժանդակություն է խնդրել, ասելով, որ Կոչկասի (....)[66] վիլայեթի բնակիչներից մի քանի հայրենակիցների հետ նպատակադրվել է օգնել բանակին։ Եթե իրեն թույլ տրվի, ապա Դիաբեքիրում մի կարևոր «Թեշքիլաթ» ստեղծելով, շարժվելու է դեպի սահման։ Հետով ենք, որ հիշյալը կարող է այդ ձևով ծառայություն մատուցել։ Կարծում ենք, որ նրանց առաքումը կարող է երկու տեսանկյունով[67] օգտակար լինել հայրենիքի համար։

Թանկագին եղբայրներ, հայրենասիրական նախաձեռնություն համարելով, խնդրում եմ ձեր թույլտվությունը՝ այո կամ ոչ։ Պատասխանեք հեռագրով։

Իզմիրի մյութֆի՝ Ջունդի Ջադե Ահմեդ

23 Թեշրին-ի սանի 1330 թ.
[1914 թ. նոյեմբերի 23]

(Այնուհետև նախագահը ընթերցել է տալիս վերոհիշյալ հեռագրերը)։

Նախագահ — *Ընթերցված բոլոր հեռագրերը ցույց են տալիս, որ «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի և կենտրոնական կոմիտեի միջև ներքին կապ է եղել։*

Աբիֆ բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Ինչպե՞ս թե ոչ։*

Աբիֆ բեյ — *Հիշողությունս թույլ է, չեմ կարող պատասխանել։ Եթե մեկ առ մեկ հարցնեք, կարող եմ ապացուցել, որ կապ գոյություն չի ունեցել։*

Նախագահ — *[Կենտրոնական կոմիտեն] նույնիսկ միջամտել է զինվորական գործողություններին։*

Աբիֆ բեյ — *Բհահէդդին Շաքիր բեյը «Թեշքիլաթ-ը մահսուսա»-ի ուղղակի պաշտոնատար անձը լինելով ...*

Նախագահ — *Շատ լավ, չէ՞ որ Միդհատ Շյուքրի բեյին է գրում։*

Աբիֆ բեյ — *Ուղղակի մեզ հետ թղթակցելու հնարավորություն չի ունեցել, ուստի նրա միջոցով է ուղարկել։*

Նախագահ — *«Ներքին գործերի մինիստրության միջոցով Միդհատ Շյուքրի բեյին» գրելու փոխարեն, թող ձեզ գրի։*

Աբիֆ բեյ — *Եթե չի գրել, դրանում ինքն է մեղավոր։*

Նախագահ — *Ուրեմն այդպես է ցանկացել և այդպես էլ գրե՞լ է։*

Ս.թիֆ բեյ — *Էֆենդի, նա այնքան էլ կարգ ու կանոնի հետևող մարդ չէր։ Երբեմն ինքնուրույն գործեր էր կատարում։ Ոչ մեկը չի կարող ապացուցել, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն կուսակցության հետ հարաբերության մեջ է եղել։*

Նախագահ — *Ինչու՞*

Ս.թիֆ բեյ — *Թող մյուս հեռագրերը կարդան։*

(Ընթերցվում է Խալիլ, Նազըմ և Աղիզ բեյերի ստորագրություններով Միդհատ Շյուքրի բեյին ուղղված հեռագիրը)

Ս.թիֆ բեյ — *Սա ցույց չի տալիս, որ կապ է գոյություն ունեցել։ Ես նախապես էլ ասել եմ, որ կամավորների ստեղծման հարցում դերասում կազմակերպություններ չունենալու պատճառով որոշեցինք օգտվել այլ վայրերում գտնվող [կուսակցության] պատասխանատու քարտուղարներից։ Ուստի այդ մասին գրեցինք կուսակցության կենտրոնական կոմիտեին։*

Նախագահ — *Շատ լավ, գրողը ո՞վ էր։*

Ս.թիֆ բեյ — *Մեր հանձնաժողովը։*

Նախագահ — *Բայց չէ՞ որ այդ հանձնաժողովը ուղղակի հրաման է տալիս կուսակցությանը։*

Ս.թիֆ բեյ — *Դա հրաման չէ։ Նրանց միջնորդությունից օգտվելու համար է, որ դիմել ենք։*

Նախագահ — *Շատ լավ, ասենք թե նման դիմում կարող էիք անել։ Բայց չէ՞ որ այդ թղթակցությունը կարող էիք ուղղակի անել։*

Ս.թիֆ բեյ — *Ուղղակի թղթակցություն ունեցել ենք պատասխանատու քարտուղարների հետ։ Այստեղ գրում ենք Միդհատ Շյուքրի բեյին*[68]*։*

[Ռիզա բեյի հարցաքննությունը][69]

Նախագահ — *Ձեր ցուցմունքից այնպես է հասկացվում, որ տեղահանության ու կոտորածը իրականացնող ջոկատների, զինվորական միավորումների մեջ գտնվել են նաև «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին պատկանող խմբավորումներ։*

Ռիզա բեյ — *Եթե թույլ տաք, այդ էլ կբացատրեմ։ Ես այդ հարցում ինչ-որ սխալ արտահայտություն եմ տեսնում։ Իմ կարծիքով, գոյություն է ունեցել մի «Թեշքիլաթ-ը մահսուսե», որը կազմակերպվել է ռազմական մինիստրության հրամանով և գործել է ռազմաճակատում և ընդհանրապես հակառակորդի գտնված շրջաններում։ Ուզում եմ այս*

հարցը բացատրել ըստ իմ համոզմունքի։ Մյուս՝ երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ստեղծվել է, որպեսզի մի շարք վիլայեթներում, սանջակներում, կազաներում իրականացնի տեղահանությունը, նկատի ունենալով, որ այդ վայրերում ժանդարմական ոստիկանությունը բավարար ուժ չի ունեցել այն գործադրելու։ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ստեղծած խմբերը բոլորովին կապ չեն ունեցել ժանդարմական ուժերի հետ, իհարկե դա, առանձին հարց է։ Օրինակ, հայերին գյուղերից հավաքելու և տարագրելու խնդրում ժանդարմական ուժերը չէին բավարարում։ Ինչպես գիտեք, բանակը ժանդարմին իր հետ ռազմաճակատ էր տարել։ Որևէ գյուղի տեղահանության համար ուղարկվում էր երկու ժանդարմ, իսկ նրանց օգնելու համար էլ նշանակվում էին տվյալ գյուղին կամ շրջանին ծանոթ ձեռնհաս և փորձառու մի քանի մարդիկ։ Հավաքագրում էին։ Ով դա անվանում էին «Թեշքիլաթ-ը մահսուսե»։ Ահա այս գործը շփոթման մեջ էր դրվում մեծ նպատակի համար ստեղծված «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ։

Նախագահ — Շատ լավ, այդ ձևով մեջտեղ եկած «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ո՞վքեր էին կառավարում, վալինե՞րը։

Ռիզա բեյ — Դրանք բոլորն էլ տեղական բնույթ ունեին։

Նախագահ — Տեղական լինելով հանդերձ կառավարումը ո՞մ ձեռքին էր գտնվում, վալիների՞, թե պատասխանատու քարտուղարների։ Այս հանգամանքը բացատրե՛ք։

Ռիզա բեյ — Բացատրելու եմ ըստ իմ հայեցողության, քանի որ անձամբ ներկա չեմ գտնվել։ Դրանք, այնտեղ, որտեղ ստեղծվել են, կառավարվել են այդ շրջանի քաղաքացիական առաջնորդների կողմից։ Տվյալ վայրի պատասխանատու քարտուղարները անպաշտոն խառնվել են այդ գործերին, դրանք ուղղակիորեն տեղական բնույթ ունեցող գործեր են եղել։ Մեծարգո փաշա, կենտրոնական կոմիտեն դրանից տեղյակ չի եղել։

Նախագահ — Կենտրոնական կոմիտեն զինվելու համար տվել է իր համաձայնությունը, նույնիսկ այդ մասին հրամաններ է արձակել։ Այդ բոլորը առկա են փաստաթղթերի մեջ։ Ձեր կողմից այդպիսի բան տեղի ունեցե՞լ է արդյոք։

Ռիզա բեյ — Ոչ, ես նախապես ասել էի, թե իմ ռազմամթերքը ինչպիսի վիճակում է գտնվում։

Takvim-i Vekayi. 12 Mayis 1335 (1919) № 3554

[Միդհատ Շյուրեի բեյի հարցաքննությունը]

Նախագահ — *Միդհատ Շյուքրի բեյ. ասում են, որ կոտորածի խընդրում [կուսակցության] պատասխանատու ներկայացուցիչները ազդեցություն են բանեցրել մի շարք վալիների և մութասարրիֆների վրա, նույնիսկ չհնազանդվողներին պաշտոնազրկել են, ճի՞շտ է արդյոք։*

Միդհատ Շյուրեի բեյ — *Մի քանիսի հեռացումը կատարվել է մեր կողմից։ Այսինքն՝ վալին կամ մութասարրիֆը զրկել են մեզ խորհրդակցելու նպատակով մի շարք գործերի մասին։ Մենք չենք թողել, որ նրանք այդ գործերի մեջ խառնվեն։*

Նախագահ — *Պատասխանատու ներկայացուցիչնե՞րը։*

Միդհատ Շյուրեի բեյ — *Այո՛։*

Նախագահ — *Այդպես չէ։ Ձեր մի շարք պատասխանատու ներկայացուցիչները պաշտոնից հեռացրել են վալիներին։*

Միդհատ Շյուրեի բեյ — *Ձեմ կարծում, որ այդպես եղած լինի։*

Նախագահ — *Ինչպե՞ս թե։*

Միդհատ Շյուրեի բեյ — *Էֆենդի, մեր ներկայացուցիչները մի՞թե կարող էին պաշտոնից հեռացնել վալիներին։*

Նախագահ — *Տեղահանության և կոտորածին վերաբերող հրամաններին չհնազանդվելու համար Անկարայի վալի Մազհար բեյը, Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան անմիջապես պաշտոնանկ են արվել։*

Միդհատ Շյուրեի բեյ — *Մազհար բեյին չեմ ճանաչում։ Նրա պաշտոնանկության մասին տեղեկություն չունեմ։ Ռեշիդ փաշան բարեկամս է, 15 տարուց ի վեր նրան ճանաչում եմ։ Ձեմ կարծում, որ պատասխանատու ներկայացուցչի ցուցումով հեռացված լինի պաշտոնից[71]։ Ընդհակառակը, նա հեռացվել է պաշտոնից հիվանդության պատճառով։ Նա եղել է իմ 15 տարվա մտերիմ ընկերը։ Ինձ երբեք չի ասել, որ ինքը հեռացվել է պաշտոնից պատասխանատու քարտուղարի ցուցումով։*

Նախագահ — *Ձեր պատասխանատու քարտուղարը նրան չի հեռացրել պաշտոնից։ Դա կատարվել է նրա զեկուցագրի հիման վրա։*

Միդհատ Շյուրեի բեյ — *Ո՛չ, էֆենդի. պատասխանատու քարտուղարը պետք է, որ ինձ դրեր այդ մասին, իսկ ես նրա պարկեշտության մասին լավ կարծիք ունենալու համար չէի կարող հավանություն տալ այդ խնդրին։*

Նախագահ — Ձեր պատասխանատու քարտուղարները կարող էի՞ն արդյոք, որևէ հարցով ուղղակի դիմել ներքին գործերի մինիստրությանը։

Միդհատ Շյուրեյ բեյ — Ո՛չ, էֆենդի. չէին կարող։ Այդ մասին եթե իմացվեր, նրանք կհեռացվեին իրենց պարտականությունից։ Եթե մենք տեղեկանայինք, որ նրանք որևէ հարցով դիմել են ներքին գործերի կամ մի այլ մինիստրությանը, ապա անմիջապես կհեռացնեինք։ Դա մտնում էր մեր իրավասության մեջ։ Նրանց խիստ հրաման էր տրված, որ նման թղթակցությունների առկայության դեպքում...

Նախագահ — Մեր ձեռքի տակ այնպիսի փաստաթղթեր կան, որոնք ցույց են տալիս, որ Բեհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ բեյերը թղթակցություն են ունեցել ներքին գործերի մինիստրության հետ։

Միդհատ Շյուրեյ բեյ — Գործին վերաբերո՞ղ։

Նախագահ — Այո՛։

Միդհատ Շյուրեյ բեյ — Կարող է. միգուցե դոկտ. Նազըմը ինքնագլուխ է կատարել այդ։

Նախագահ — Թղթակցել է նաև Բեհաէդդին Շաքիր բեյը, այդ մասին դուք տեղեկություն չունե՞ք։

Միդհատ Շյուրեյ բեյ — Կարող է պատահել, էֆենդի։

Նախագահ — Որ այդպես է, ինչու՞ առանց արտոնության, ինքնագլուխ կերպով նման արարքների համար...

Միդհատ Շյուրեյ բեյ — Բայց դա տեղի է ունեցել նախքան իմ քարտուղարությունը։

Նախագահ — Առանց հավանության, մի՞թե այդ դիմումները կարող էին այդպես հաճախակի կրկնվել։

Միդհատ Շյուրեյ բեյ — Ըստ երևույթին անհրաժեշտություն է զգացվել էֆենդի։ Սրանից 6—7 տարի առաջ նույնիսկ մի քանի պատասխանատու քարտուղարներ ընտրվել են իրենց շրջաններից։ Մեզ հայտնեցին, որ այդպիսիները որոշ հարցերով դիմել են մինիստրություններին։ Նրանք էլ այդ գրությունները ուղարկել էին մեզ, և մենք ենթադրություն անելով գրել էինք, որ կրկնվելու դեպքում նրանք կհեռացվեն իրենց պաշտոնակատարությունից։ Օրինակ, Յակուբ Ջեմիլ բեյը դատապարտվել էր ռազմական ատյանի կողմից նրա համար, որ Ադանայում գտնվելու ընթացքում նա մի քանի բաներ էր հայտնել Մուամմեր բեյին։ Մուամմեր բեյն էլ այդ մասին գրել էր մեզ։ Ուստի, մենք անմիջապես նրան հեռացրինք իր պարտականություններից։ Վալիի գործերին միջամտելու համար մենք նրան հեռացրել էինք մեր անձնակազմից։ Միգուցե,

ինչ-որ բան եղել է, որ ես տեղեկություն չունեմ։ Այդ մասին ոչինչ չեմ կարող ասել։

Նախագահ — *Անկարայի վալի Մազհար բեյը նույնպես մի շարք ապացույցներ է ստացել։ Այդտեղ գնացող կուսակցության գլխավոր քարտուղարներից Աթիֆ բեյի թելադրանքով նա անմիջապես հեռացվել է պաշտոնից, իսկ նրա տեղ վալի է նշանակվել Աթիֆ բեյը։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Կուսակցությունը Աթիֆ բեյ անունով գլխավոր քարտուղար չի ունեցել։*

Նախագահ — *Այդպես են հայտնել։ Գուցե կուսակցական անդամներից մեկը լինի։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Անդամներից չէ, էֆենդի։ Աթիֆ բեյը այդ ժամանակ կենտրոնական կոմիտեի մեջ չէր։*

Նախագահ — *Ինչ որ է, կուսակցության կողմից ուղարկվել է Աթիֆ բեյը և մի շարք գաղտնի հրահանգներ է տվել վալիին։ Մազհար բեյն էլ մերժել է։ Հաջորդ օրը Մազհար բեյը հեռացվել է պաշտոնից, իսկ նրա տեղ նշանակվել է Աթիֆ բեյը։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Բոլորովին տեղեկություն չունեմ։ Ես տեսակցել եմ նրա հետ, եթե այդպիսի բան լիներ, ինձ կասեր անպայման։*

Նախագահ — *Այդ բոլորի մասին մեզ վկայություն է տվել Մազհար բեյը։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Կարող է պատահել, էֆենդի։ Ինձ այդպիսի բան չի ասել, կարող եք իր ներկայությամբ ստուգել։ Ես հիմա եմ տեղեկանում, որ Աթիֆ բեյը այդպիսի հրաման է տվել։*

Նախագահ — *Նույնը պատահել է նաև Ռեշիդ փաշայի և Յոզղաթի մութասարրիֆ Ջեմալ բեյի հետ։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Բոլորովին տեղեկություն չունեմ, էֆենդի։*

Նախագահ — *Պատերազմի ընթացքում կուսակցության որոշումով բռնագրավվել են օտարազգի մի շարք դպրոցներ։ Այդ մասին տեղեկություն ունե՞ք արդյոք։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Կենտրոնական կոմիտեի որոշումո՞վ։*

Նախագահ — *Այո՛։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Բոլորովին ոչ։*

Նախագահ — *Միգուցե՞ Ստամբուլի կենտրոնի որոշումով։*

Միդհատ Շյուրեյ բեյ — *Մեծարգո փաշա, չեմ կարծում։ Դա բոլորովին հնարավոր չէր։ Ես չեմ լսել, որ որևէ դպրոց բռնագրավվի կամ փակվի։ Դրա համար հիմք էլ չի եղել։*

Նախագահ — Եվ այդ շինությունները այլևս չեն օգտագործվել տնօրինողների կողմից։ Որոշ տեղեր քանդել են, իսկ որոշ բաներ էլ ավելացրել։

Միդհատ Շյուրեյ բեյ — Բոլորովին տեղեկություն չունեմ։ Այդպիսի բան չեմ կարողանում հիշել։

Նախագահ — Մի նամակ կա, կարդացե՛ք։

(Քարտուղարը կարդում է)

Հարգարժան եղբայրս.

Կառավարության փոփոխման հետևանքով անվտանգության ընդհանուր տնօրենի մոտ չուզեցի երկար մնալ։ Իմ ցանկությանը ընդառաջելով Ստոկհոլմի դեսպանատան առևտրական կցորդը 7500 ղուրուշ ռոճիկ և 2500 ղուրուշ էլ ավելիով գումար հատկացրեց։ Արտաքին գործերի մինիստրությունից ստացա մինչև մարտ ամսվա սկիզբը ինձ հատկացված ռոճիկն ու հարակից գումարը։ Մեկ ամսից ավելի է, ինչ գտնվում եմ Վիեննայում։ Բեռլինի ճանապարհն այնքան էլ ապահով չլինելու պատճառով ստիպված եղա մնալ այստեղ։ Վաղը մեկնելու եմ Բեռլին, այնտեղից էլ Ստոկհոլմ։ Առողջությունս շատ լավ է։ Երբեմն այցելում եմ Հյուսեյն Հիլմի փաշային[72]։ Անցյալ օրը ինքը և աղջիկը ծանր հիվանդության անցկացրին։ Հիմա կազդուրվել են։ Կարելի է ասել, որ հեղափոխական շարժումների ընթացքում ոչ մեկի քիթը չարյունվեց Վիեննայում։ Հեղափոխությունից հինգ-վեց օր հետո եկա Վիեննա։ Ամենուրեք հանդարտ է։ Մի նամակ էլ կգցեմ Ստոկհոլմից։ Օտար մամուլից իմացա, որ հակառակորդը[73] գրավել է Ադանայի վիլայեթը, բայց ներքին կառավարումը մնացել է մեր ձեռքին։ Այս նամակը ուղարկում եմ Օսման բեյի միջոցով։ Հարկային վարչության ընդհանուր տնօրենը Սըրրի բեյը երկու ամիս է, ինչ գտնվում է Վիեննայում։ Ճանապարհները փակ լինելու պատճառով, Վիեննա ժամանած ուղևորները սպասողական դրության մեջ են... Առայժմ այսքան։

Եղբայրդ Ազիզ[74]

Նախագահ — Կարողացա՞ք մտաբերել։

Միդհատ Շյուրեյ բեյ — Ազիզ բեյին ճանաչում եմ։

Նախագահ — Ո՞րտեղ գտնվելը ...

Միդհատ Շյուրեյ բեյ — Վիեննայից է գրում։

Նախագահ — Հիմա ու՞ր է, որտե՞ղ է գտնվում։ Ո՞վ է այս նամակը ձեզ բերող՝ Օսման բեյը։

Միդհատ Շյուրեյ բեյ — Ես չեմ ստացել այդ նամակը։ Առաջին անգամ եմ տեսնում։ Միգուցե փոստատունն է վերցրել։ Ես հետագայում իմացա, որ Ազիզ բեյը մեկնել է այստեղից։ Նույնիսկ մեկնելուց առաջ փնտրել է ինձ։

Նախագահ — Ո՞վ է այս Օսման բեյը, կարողացա՞ք հիշել։

Միդհատ Շյուրեյ բեյ — Մի Օսման բեյ կար, որը Յուսուֆ Ռադի բեյի եղբայրն էր։ Նա՞ է արդյոք։

Նախագահ — Կարդացե՛ք ծրարի վրա գրվածը։

(Արձանագրող քարտուղար Շեֆիկ բեյը կարդում է)

— Ներքին գործերի մինիստրության իրավաբան-խորհրդատու Օսման փաշա էֆենդի։

Միդհատ Շյուրեի բեյ — Ճանաչում եմ, շատ լավ եմ ճանաչում։

Նախագահ — Սայիդ Հալիմ փաշայի դղյակում տեղի ունեցած ժողովում Սև ծովի պատահարի պատճառով պատերազմ հայտարարվելու մասին անշուշտ տեղյակ եք։

Միդհատ Շյուրեի բեյ — Այո՛, լսել եմ։ Բայց Սայիդ Հալիմ փաշան, ասաց, որ ինքը կաշխատի կանխել։

Նախագահ — Այդ [պատերազմի] հրամանը ի՞նչ ձևով հաղորդվեց և ինչպիսի՞ն էր ձեր համոզմունքը այդ մասին։

Միդհատ Շյուրեի բեյ — Մեզ տեղեկացրին։

Նախագահ — Շատ լավ, ինչպե՞ս տեղեկացրին։

Միդհատ Շյուրեի բեյ — Հինգ տարի առաջ եղած բանը ինչպե՞ս բացատրեմ։ Հիշողությունս այնքան էլ զորավոր չէ։

Նախագահ — Նույնությամբ մի ասեք, այլ ինչ ձևով տեղի ունենալը։

Միդհատ Շյուրեի բեյ — Մեծ վեզիրի ջղագրգիռ վիճակից հասկացա, որ նա պատերազմին կողմնակից չէր։ Նա ասում էր, որ պատերազմի մեջ մտնելը լավ բան չէ։

Նախագահ — Այդ դեպքը ինչպե՞ս տեղի ունեցավ։

Միդհատ Շյուրեի բեյ — Մանրամասն բացատրություն չտվեցին։ [Մեծ վեզիրը] ասաց հետևյալը. «Սև ծովում ինչ-որ բախում է տեղի ունեցել։ Մի նավ են պատրաստել մեզ հանձնելու համար[75]։ Բայց ես աշխատելու եմ պատերազմը կանխել և մի քանիսին էլ պատժել։ Այժմ շփման մեջ եմ դեսպանությունների հետ։ Նրանց վստահեցրել եմ, որ մնալու ենք չեզոք։ Թե ինչ արդյունքի կհասնեմ, չգիտեմ։ Բոլոր դեպքերում դուք հաղորդեք ձեր ակումբներին[76] և բոլորին, որ պատերազմ տեղի չի ունենալու»։

Նախագահ — «Այդ մարդուն պիտի պատժեմ» ասելով, ու՞մ նկատի ուներ։

Միդհատ Շյուրեի բեյ — Այսինքն, ասաց. «Դեսպանություններին կվստահեցնենք, որ մի սխալություն է եղել, հետաքննություն կկատարենք»[77]։

Նախագահ — Դուք ասել էիք, որ կենտրոնական կոմիտեի և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի միջև կապ գոյություն չունի։ Մինչդեռ, այս նա-

մակից, որը հիմա կարդացվելու է, հասկացվում է գոյություն ունեցող կապը։ Ինչ կասեք։ Կարդացե՛ք։

(Արձանագրող քարտուղար Շեֆիք բեյը ընթերցում է նամակը)

ՄԻԴՀԱՏ ՇՅՈՒՔՐԻ ԲԵՅ ԷՖԵՆԴԻԻՆ

Հարգելի եղբայրս.

Պատասխանում եմ երեկ ստացված 1330 (1914) նոյեմբերի 15 թվագրությունը կրող գրությանը։

Սրանից մեկ շաբաթ առաջ ներքին գործերի մինիստրությունից մութասարրիֆությանս հրաման եկավ, որ իմ լիվայի մեջ գտնվող չերքեզներից, բանտարկյալներից և այլ մի հրաման եկավ, որ իմ լիվայի մեջ գտնվող չերքեզներից, բանտարկյալներից և այլ մարդկանցից մոտ 200 հոգի հավաքեմ և ուղարկեմ Կովկասում չեթեություն անելու համար։ Այս գործը արդեն նախաձեռնվել է և հավաքում ենք մարդկանց։ Առանց մանրամասնությունների մեջ մտնելու, մենք դրանց կհավաքենք և կուղարկենք մի քանի օրվա ընթացքում։ Այն ձևով և պայմանով, ինչ կենտրոնական կոմիտեն է պահանջում՝ մեզ մոտ քիչ մարդիկ կգտնվեն։ Կովկասի ժողովուրդներից Կարասիի լիվայում միայն չերքեզներ կան։ Լեզգի, չեչեն, վրացի կամ այլ ժողովուրդներից մարդ չկա։ Այստեղ գտնվող չերքեզները համարյա թե ո՛չ ռուսերեն գիտեն, ո՛չ էլ ծանոթ են Կովկասի տարածքին և ո՛չ էլ երբևէ եղել են այնտեղ։ Բայց և այնպես զինվորական ծառայության մեջ չգտնվող և պահանջված նկարագրով համարձակ մարդիկ կգտնվեն։

Մենք կարող ենք մի քանի հարյուր (300—400) չերքեզ հավաքագրել և ուղարկել, սրանք չեթեություն կանեն բանակի առաջամասերում։ Միայն կապ հաստատելու համար, եթե սահմանափակ թվով մարդկանց կարիքը զգացվի, ապա տարրական կրթությամբ 5—10 հոգի կարելի է գտնել, որոնք քիչ թե շատ կկարողանան Կովկասի գյուղերում երկու խոսք ասել և [ժողովրդին] գրգռել։ Այդ մարդկանց անունները և բնակավայրերը արձանագրված են։ Հետագայում, եթե անհրաժեշտություն և հրաման լինի, մի քանի օրվա ընթացքում կուղարկենք։ Նրանք խոսքի տեր և հարգանքի արժանի մարդիկ են։ Չնայած ներքին գործերի մինիստրության և բարձր հանձնաժողովի[78] պահանջած տարբեր դասի մարդիկ են, բայց անհրաժեշտության դեպքում կվարվենք, ինչպես հարկն է։ Սպասում ենք ձեր պատասխանին։

Էֆենդի եղբայրս, պատրաստ եմ ձեր հրամանները կատարելու[79]։

Հարգանքներով՝ ձերդ Բալըքեսիրի տեսուչ՝ Մուսա։

20 թեշրին-ի սանի 1330 թ.

[1914 թ. նոյեմբերի 20]

Շտապ ծանուցել դոկտ. Նազըմ էֆենդի եղբորս

ՄԻԴՀԱՏ ՇՅՈՒՔՐԻ ԲԵՅ

1914 թ. նոյեմբերի 22

Հագցնել միատեսակ։ Անհրաժեշտ ծախսերը կատարել այդ վայրի բնակչության հաշվին և ուղարկել այստեղ։ Զինվելու են այստեղ։ Բարձր հանձնախմբի պահանջի դեպքում նրանց ստուգումը կատարվելու է Ցակուբ [Ջեմիլ] բեյի կողմից։

Միդհատ Շյուկրի բեյ — ինչպես ասել էի նախօրոք, կենտրոնական կոմիտեն ջանացել էր օժանդակել տվյալ պատերազմին։ Կովկասյան ժողովուրդների մեջ խռովություն հրահրելու համար անհրաժեշտ էր

ուղարկել այդ տեղերին ծանոթ, լեզուներին տիրապետող մահմեդական մարդկանց։ Այս կապակցությամբ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ցանկացել էր, որպեսզի կենտրոնական կոմիտեն իր մասնաճյուղերի միջոցով հարցում կատարի և պատասխաններն էլ տեղեկացնի իրենց։ Մենք էլ հայրենասիրական նվիրումով կատարել ենք այդ հանձնարարականը և ըստացված պատասխանները նույնությամբ հայտնել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին։ Մենք անձնապես չենք զբաղվել այդ հարցով։

Նախագահ — Այնտեղ պարզ երևում է, որ բարձր հանձնախմբի և ներքին գործերի մինիստրության հրահանգները չեն համապատասխանում իրար։

Միդհատ Շյուրի բեյ — Հնարավոր է, որ ներքին գործերի մինիստրությունը գրած լինի այլ դասի մարդկանց վերաբերյալ։ Ես ստույգ չգիտեմ այդ մասին։

Նախագահ — Բարձր հանձնախումբ ասելով, ըստ երևույթին, նկատի ունի ձեր կենտրոնական կոմիտեն։

Միդհատ Շյուրի բեյ — Բնական է, որ իմ կողմից գրված լինելու համար պատասխանատու քարտուղարը չէր կարող զանազանել։ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ինչ դասի մարդկանց անհրաժեշտության մասին որ գրել է, մենք էլ նույնությամբ հաղորդել ենք մեր ակումբներին։ Մենք հայտնել էինք, որ մեր փնտրած մարդիկ՝ նամուսի տեր, լեզու իմացող, Կովկասի իրավիճակին ծանոթ և հեղինակություն վայելող անձնավորություններ լինեն։ Իսկ ներքին գործերի մինիստրությունը մութասարրիֆներից պահանջել է այլ մարդիկ[80]։ Ահա այս կապակցությամբ մեզ հարցում են կատարել։ Այստեղից չի հասկացվում, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն կապ է ունեցել կենտրոնական կոմիտեի հետ։ Վստահ եղեք, որ կենտրոնական կոմիտեն բազմաթիվ թղթակցություններ էր ստանում այնպիսի հիմնարկություններից, ինչպիսիք են՝ որբանոցները, «Կարմիր մահիկը», լուսավորության մինիստրությունը և այլն։ Բնական է, որ ամեն մի գրություն չէր կարող իրար նման լինել։ Հետևաբար, ես այն մտքին եմ, որ պատերազմի ընթացքում այս արարքը արժանի էր գնահատանքի։ Երբեք չէի կաթծում, որ դրա համար հետագայում դատարանում կենթարկվեմ հանդիմանության։ Այս արարքը գնահատման արժանի երևույթ էր, որովհետև ժամանակը այնպիսին էր, որ յուրաքանչյուր մարդ պետք էր սրտանց ջանք թափեր երկրի պաշտպանության համար։ Այս արարքին, որ կողմից էլ մոտենաս, արժանի է գնահատանքի, նման ծառայություն կատարելը յուրաքանչյուրի համար հայրենասիրական պարտականություն էր։

Նախագահ — *Կարդացե՛ք։*

(Սրձանագրող քարտուղար Շեֆիք բեյը ընթերցում է)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ ՀԱՆԶՆԱԽՄԲԻՆ

Սիրելի եղբայրներ.

Պատասխանում ենք 1914 սեպտեմբերի 15-ի թվագրությամբ ստացված դաղտնի հրամանագրերին։

Սրանից առաջ բազմաթիվ նամակներ էին եկել բարձր հանձնախմբի կողմից, ուր նշված էր սահմանների վրա չեթեություն անելու համար Սուլեյման Առքերի բեյին անհրաժեշտ մարդկանց մասին։ Ներկայումս, ըստ երևույթին, դրա անհրաժեշտությունը դադարվել է, որ շտապ հրաման է առաքվել այդ գործը կազմակերպելու և անհրաժեշտ մարդկանց ուղարկելու։ Երկու օր առաջ էլ ներքին գործերի մինիստրությունից վիլայեթին ուղղված ծածկագիր եկավ, ուր հրամայվում էր՝ մեկ շաբաթվա ընթացքում տո անցանք գործի։ Արդեն 200 հոգու դաֆթարը կազմել ենք, բայց երբ ուշադրություն դարձվեց «զինծառայության հետ առնչություն չունենալուն» նշման վրա, բնականորեն, վերոհիշյալ թիվը պակասեց։ Կառավարությունը[82] պահանջում է, որ դատապարտյալներն ու ավազակային նկարագիր ունեցողները նույնպես ուղարկվեն, բայց ձեր կողմից նշված «առավել լավ նկարագիր ունեցող անձանց ուղարկելու» պահանջի վրա, երբ ուշադրություն դարձվի, այդ մարդկանց թիվը նույնպես կնվազի։

1893 և 1894 թվականների ծնվածներն արդեն ընդգրկված են զինվորական ծառայության մեջ։ 19-ից մինչև 45 տարեկան զինապարտների շարքերից նման անհրաժեշտ մարդկանց ընտրելը բավականին դժվար է լինելու։ Ինչպես երևում է, դատապարտվածների և ավազակային նկարագիր ունեցող մարդկանց հավաքագրելն ու ուղարկելը օրենքի գործադրելու տեսանկյունից թույլատրելի է, և այս հանգամանքը առավել նպաստավոր կլինի երկրում հանդարտություն պահպանելու համար։ Զինապարտների, ջահմեդականների և ընդհանրապես 20—40 տարեկան մարդկանց մեջ կան բազմաթիվ նվիրված մարդիկ։ Կառավարության ցանկությամբ, եթե դատապարտվածների ու ավազակային նկարագիր ունեցողների հետ մյուս զինապարտները ևս ընդգրկվեն, ապա հնարավոր կլինի չեթեության համար Բրուսայի լիվայից հավաքագրել 500-ից մինչև 1000 հոգի։ Եթե այս ծրագրին հավանություն տաք, պատասխանեցեք (այո կամ ոչ)՝ հեռագրով։ Բոլոր դեպքերում ես նախապատրաստական աշխատանքներ եմ կատարում, և համաձայն հրահանգի, պատրաստ եմ ներկայացնելու հավաքագրված մարդկանց ցուցակը։

Ճարգանքներով՝ Իբրահիմ

Օսմանյան Իթթիհատ վե թերաքքի կուսակցության Բրուսայի վիլայեթի կենտրոնի կնիքը։

19—9—1330 թ.
[1914 թ. սեպտեմբերի 19]

Միդհատ Շյուրի բեյ — *Ո՞վ է հղված էֆենդի։ Բնական է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսեա»-ին։*

Նախագահ — *Որևէ մեկի նկատմամբ հղում կա՞։*

Շեֆիք բեյ — *Ոչ, չկա*[83]*։*

[Աբիֆ բեյի հարցաքննությունը]

Նախագահ — *Աբիֆ բեյ, «Միության և առաջադիմության» կուսակցության պատասխանատու քարտուղարները մի շարք վիլայեթներում և մութասարրիֆություններում կոտորածին վերաբերող գաղտնի հրահանգներ են տվել վալիներին և մութասարրիֆներին, որոնցից մի քանիսը չեն հնազանդվել։ Այդ մասին հայտնվել է կենտրոնական կոմիտե, որտեղից և շտապ հրաման է տրվել պաշտոնազրկելու մասին։*

Աբիֆ բեյ — *Տեղեկություն չունեմ։ Բայց լսել եմ, որ կատարված հետաքննությունների հիման վրա մի քանիսը հեռացվել են պաշտոնից։ Այս կապակցությամբ Բրուսայի ներկայացուցիչը անմիջապես հեռացվել է ...*

Նախագահ — *Ո՛չ, բողոքը ձեր պատասխանատու քարտուղարի մասին չէ, այլ վալիների։ Այն վալիները և մութասարրիֆները, որոնք հրաժարվել են կատարելու ձեր պատասխանատու քարտուղարների հրահանգները, պաշտոնազրկվել են։*

Աբիֆ բեյ — *Ո՛չ, այդպիսի բան չեմ լսել։ Ոչ մի տեղեկություն չունեմ։*

Նախագահ — *Օրինակ, Անկարայի վալի Մազհար բեյը, Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան, կոտորածի հրամանները չկատարելու համար անմիջապես հեռացվել են պաշտոնից։ Այս մասին չե՞ք լսել։*

Աբիֆ բեյ — *Միմիայն Ռեշիդ փաշայի մասին եմ լսել։ Մի օրենք հանեցին տարիքավոր վալիներին փոխարինելու մասին։ Այդ պատճառով է, որ նա հեռացավ պաշտոնից, հետո էլ պատգամավոր դարձավ։*

Նախագահ — *Անկարայի վալի Մազհար բեյը կենտրոնական կոմիտեի կողմից ուղարկված Աբիֆ բեյի կարգադրությունը չկատարելու համար, հաջորդ օրը պաշտոնազրկվել է, իսկ նրան փոխարինել է Աբիֆ բեյը։ Այդպես են վկայում։ Այդ Աբիֆ բեյը դուք չե՞ք։*

Աբիֆ բեյ — *Ո՛չ, ես Անկարա չեմ գնացել, մյուս Աբիֆ բեյն է*[84]։

Նախագահ — *Հնարավոր է։ Այդ մասին տեղեկություն չունե՞ք։*

Աբիֆ բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Դուք չեք լսե՞լ այդպիսի մի պաշտոնում նշանակվելը։*

Աբիֆ բեյ — *Անկարայի վալիի պաշտոնի համա՞ր։*

Նախագահ — *Այ՛ո։*

Աբիֆ բեյ — *Նշանակում եղավ։*

Նախագահ — *Շատ լավ։ Այդ նշանակման դրդապատճառը քննարկման նյութ չդարձա՞վ։*

Աբիֆ բեյ — Չգիտեմ։

Նախագահ — Այդ պաշտոնի նշանակման խնդրին դուք չե՞ք մասնակցել։

Աբիֆ բեյ — Ո՛չ։

Նախագահ — Ռեշիդ փաշան, ինչպես նաև Յոզղաթի մութասարրիֆ Ջեմալ բեյը այս պատճառով են պաշտոնազրկվել։ Այդ կապակցությամբ որևէ բան լսե՞լ եք։

Աբիֆ բեյ — Ո՛չ, էֆենդի։

Նախագահ — Պատերազմի ընթացքում բռնագրավվել են օտար պետություններին պատկանող մի շարք շինություններ։ Ի՞նչ գիտեք այդ մասին։

Աբիֆ բեյ — Այո՛, լսել եմ, էֆենդի։ Կառավարության կողմից բռնագրավվել են հակառակորդ պետություններին պատկանող շինությունները։ Այդ որոշումը տրվել է կառավարության կողմից։ Բռնագրավվել են լուսավորության [մինիստրության] կողմից։

Նախագահ — Ասում են, որ այդ որոշումը կայացվել է կուսակցության կողմից։

Աբիֆ բեյ — Ջեմ լսել։

Նախագահ — Այդ շինությունները ենթարկվել են որոշակի փոփոխության։ Այսինքն՝ այդ շենքերի որոշ մասերը քանդվել և որոշ տեղերն էլ փոփոխության են ենթարկվել։ Այդ մասին տեղեկություն ունե՞ք։

Աբիֆ բեյ — Լսել եմ ...

Նախագահ — Ընթերցվելու է երկու փաստաթուղթ։ Լսե՛ք և հայտնեք ձեր կարծիքը։

[Արձանագրող քարտուղարը կարդում է վերոհիշյալ վավերագրերը]։

Աբիֆ բեյ — Նախօրոք հայտնել էի, որ [Ստամբուլից] դուրս առանձին կազմակերպություններ չունենալու պատճառով «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն որոշել էր օգտվել կուսակցության մասնաճյուղերից։ Այդ մասին ես խնդրել էի Միդհատ [Շյուքրի] բեյին։ Միդհատ Շյուքրի բեյն էլ գրել է։ Սա դրա պատասխանն է։

Նախագահ — Դուք ասացիք, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն կապված է եղել զինվորականության հետ։ Եթե այդպես է, ապա նման մարդիկ հավաքագրվելու էին զինվորական մասնաճյուղերի կողմից։ Համազդիկ հավաքագրվելու էին զինվորական մասնաճյուղերի կողմից։ Համազդեստը, պարենավորումը, ճանապարհածախսը, զինումը և այլ ծախսերը հոգացվելու էին նրանց կողմից։ Այս գրությունից հասկացվում է, որ այդ գործը կատարվել է հանգանակության միջոցով։ Հետո այդ գործին

միջամտել է ներքին գործերի մինիստրության։ Հրամանները տվել է կենտրոնական կոմիտեն։ Դուք շատ լավ գիտեք, որ ռազմական մինիստրության գործերի մեջ նման բաներ չեն կարող տեղի ունենալ։

Աբիֆ բեյ — Էֆենդի, մենք մտել էինք մի մեծ պատերազմի մեջ։ Պետությունը կենաց մահու պայքար էր մղում։ Ռազմական մինիստրությունը զբաղված էր միմիայն իր բանակներով։ Նա մտածել էր օգտվել այսպիսի աղգային ուժերից, և այդ հարցում օգնելու համար նախատեսել էր մեզ։ Բնական է, որ մենք էլ օգտվեցինք այդ հատուկ ուժերից։

Նախագահ — Ուրեմն «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ստեղծվել է կենտրոնական կոմիտեի կողմից։

Աբիֆ բեյ — Ո՛չ թե ստեղծվել, այլ մասամբ օժանդակել է նրա գործունեությանը։

Նախագահ — Ծառայություն է՞ մատուցել։

Աբիֆ բեյ — Այո՛։

Նախագահ — Բայց և այնպես, [կուսակցության] կենտրոնական կոմիտեի և ներքին գործերի մինիստրության կողմից տրված հրամանների միջև հակասություններ գոյություն ունեն։

Աբիֆ բեյ — Հակասություն չկա, էֆենդի։ Մենք ուզում էինք ուղարկել հատկապես տվյալ վայրին ծանոթ մարդկանց։ Ուզում էինք այնտեղ շեթեներ պատրաստել։ Այսինքն՝ ամեն տեսակից էլ ուզում էինք։

Նախագահ — Չհասկացա։

Աբիֆ բեյ — Ներքին գործերի մինիստրության հետ հակասություն չունեինք։ Մենք՝ այսինքն «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ուզում էր, որ այն լինի ընդհանուր և ամբողջական։

Նախագահ — (*Խոսքն ուղղելով արձանագրող քարտուղարին*)՝ Կարդացե՛ք։

(*Քարտուղարը կարդում է վավերագրերի վերնագիրը*)։

Նախագահ — Տեսնում ե՞ք. վերնագրում ասված է «Կենտրոնական կոմիտեի հարգարժան հանձնախմբին»։

Աբիֆ բեյ — Ո՛չ, էֆենդի. պատասխանատու քարտուղարները անձամբ Միդհատ բեյին են գրում։ «Կենտրոնական կոմիտե» ասվում է, բայց այն ուղղված է Միդհատ բեյին։

Նախագահ — Քիչ առաջվա ընթերցվածը ուղղված էր Միդհատ բեյին։ (*Խոսքն ուղղելով արձանագրող քարտուղարին*)՝ Կարդացե՛ք։

(*Քարտուղարը կրկին ընթերցում է մյուս փաստաթղթերը*)։

Նախագահ — Տեսնում եք, այստեղ կենտրոնական կոմիտեի և ներքին գործերի մինիստրության հրահանգների միջև հակասություն կա։

Մեկը ուզում է հավաքագրել հանցագործներին և օգտագործել նրանց այդ գործերի մեջ, մինչդեռ մյուսը՝ սրան հակառակ կարծիք է հայտնում։ Ի՞նչ կասեք այդ մասին։

Աբիֆ բեյ — *Այդպիսի տարաձայնություն կարող էր լինել։*

Նախագահ — *Կենտրոնական կոմիտեն չի բավարարվում հրահանգ տալով, այլ միջամտելով՝ ասում է՝, «Այս գործը այսպես կամ այնպես արե՛ք»։*

Աբիֆ բեյ — *Այո՛, իր կարծիքն է հայտնում։*

Նախագահ — *Կենտրոնական կոմիտեի հրահանգը կարող է՞ր արդյոք պատասխանատու քարտուղարների կողմից քննարկման նյութ դառնալ։ Չէ՞ որ այն հանձնարարական հրահանգ էր։*

Աբիֆ բեյ — *Կենտրոնական կոմիտեի հրահանգը, բնական է, մի հանձնարարական է. պատասխանատու քարտուղարներն էլ իրենց կարծիքն են հայտնում այդ մասին։*

Նախագահ — *Պատասխանատու քարտուղարն իր կարծիքն է գրում, բայց հասկացվում է, որ ներքին գործերի մինիստրության տված հրահանգը հակասում է ձեր այնինչ թվագրությունը կրող պահանջին։ Եթե «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անձնակազմները հավաքագրվել են ներքին գործերի մինիստրության կողմից, հապա ինչու՞ կենտրոնական կոմիտեն դրան հակառակ հրաման է տվել։ Այս փաստաթղթերում գրված է հակառակ լինելու մասին։ Ձեր ներկայացուցիչը հարցնում է ինչ անելու մասին։ Ներքին գործերի մինիստրությունը կողմնակից է «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ, իսկ կենտրոնական կոմիտեն այլ կարծիք է տալիս։ Դուք ինչպե՞ս լուծեցիք այդ հարցը։*

Աբիֆ բեյ — *Էֆենդի՛, մեզ իրավունք էր տրված այդ մարդկանց այստեղ բերելուց հետո պարենավորել, գինել և ուղարկել։ Ըստ երևույթին, ռազմական մինիստրը հայցել է ներքին գործերի մինիստրի օժանդակության և ասել, որ այդ բոլորը կատարվի ներքին գործերի մինիստրի միջոցով։ Հավանական է, որ նրան բացատրել են այդպես։ Ներքին գործերի մինիստրն էլ այդպես է գրել, իսկ մենք ավելի մանրամասն ենք գրել։ Այդպիսի տարբերություններ կարող են լինել։*

Նախագահ — *Այս երկու հեռագրերը ուղղված են ձեզ։ Դուք ինչպե՞ս վարվեցիք։*

Աբիֆ բեյ — *Ձեմ կարողանում հիշել։ Միգուցե այդ գործին վերաբերող մի բան գտնվի թղթապանակների մեջ։ Հինգ տարի առաջ տեղի ունեցած գեպք է, մանրամասնությունները չեմ կարողանում հիշել։*

Նախագահ — *Հանցագործներին բանտերից հանեցի՞ք։ Այս շատ կարևոր է՝ գլխավոր հարցերից մեկը։*

Աբիֆ բեյ — *Պիտի հանվեին, հետո ասվեց, որ այն օրինականացվի։ Այդ կապակցությամբ օրենք կազմվեց և որքան գիտեմ՝ բանտերից հանվեցին այդ օրենքի հիման վրա։ Այդպիսի հանցագործների ուղարկումը ընդունված է նաև այլ երկրներում։*

Նախագահ — *Այդ ուրիշ հարց է. դուք ո՞ր կողմն էիք պաշտպանում։*

Աբիֆ բեյ — *Բոլորովին չեմ հիշում*[85]։

Takvim-i Vekai, 14 Mayis 1335 (1919) № 3557

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335 Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՅՏԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[86]։

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Նազըմ փաշա.
անդամներ՝ գեներալ-մայոր Ջեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ։
Գերագույն դատախազի օգնական՝ Ֆերիդուն բեյ.

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ[87]
1335 թ. (1919) ճանիս 3

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները — *Սայիդ Հալիմ փաշա, Հայրի էֆենդի, Մուսա Քյազիմ էֆենդի, Խալիլ բեյ, Ահմեդ Նեսիմի բեյ, Իսմայիլ Ջանփոլատ բեյ, Աբբաս Հալիմ փաշա, Իբրահիմ բեյ, Ալի Մյունիֆ բեյ, Շյուքրի բեյ, Մուստաֆա Շերիֆ բեյ, Քեմալ բեյ, Ռիֆաթ բեյ, Հյուսեյն Հաշիմ բեյ։*

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների անունները — *Թալեաթ էֆենդի, Էնվեր էֆենդի, Ջեմալ էֆենդի, զոկտ. Նազըմ բեյ*[88]։

Նախագահ — *(խոսքն ուղղելով Մուսա Քյազիմ էֆենդիին)՝ Ձեր անունը։*

Նախկին շեյխ-ուլ Իսլամ Մուսա Քյազիմ էֆենդի — *Մուսա Քյազիմ։*

Նախագահ — *Հայրանունը։*

Մուսա Քյազիմ էֆենդի — *Իբրահիմ։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*

Մուսա Քյազիմ էֆենդի — *Հիսունութ։*

Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*

Մուսա Քյազիմ էֆենդի — *Թորթումում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Մուսա Քյազիմ էֆենդի — *Ջերրախ փաշա*[89]*։*
Նախագահ — *Ներկա պաշտոնը։*
Մուսա Քյազիմ էֆենդի. — *Ավագանի։*
Նախագահ — *Նախկին պաշտոնը։*
Մուսա Քյազիմ էֆենդի — *Շեյխ ուլ-իսլամ։*
Նախագահ — *(խոսքն ուղղելով Ռիֆաթ բեյին)՝ Ձեր անունը*
Սենատի նախկին նախագահ Ռիֆաթ բեյ — *Ռիֆաթ։*
Նախագահ — *Հայրանունը։*
Ռիֆաթ բեյ — *Հաջի Ահմեդ։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Ռիֆաթ բեյ — *Վաթսուներկու։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Ռիֆաթ բեյ — *Ադանայում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում,*
Ռիֆաթ բեյ — *Շիշլիում*[90]*։*
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Ռիֆաթ բեյ — *Միջնակարգ։*
Նախագահ — *Ներկա պաշտոնը։*
Ռիֆաթ բեյ — *Ավագանի։*
Նախագահ — *Նախկին պաշտոնը։*
Ռիֆաթ բեյ — *Սենատի նախագահ։*
Նախագահ — *(խոսքն ուղղելով Հաշիմ բեյին)՝ Ձեր անունը։*
Փոստի և հեռագրատան նախկին միհիսար Հաշիմ բեյ — *Հյուսեյն Հաշիմ։*
Նախագահ — *Հայրանունը։*
Հաշիմ բեյ — *Մեհմեդ Նասեր։*
Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*
Հաշիմ բեյ — *Քառասունհինգ։*
Նախագահ — *Որտե՞ղ եք ծնվել։*
Հաշիմ բեյ — *Ստամբուլում։*
Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*
Հաշիմ բեյ — *Ուսկյուդար, Սուլթան Թեփեսի թաղում։*
Նախագահ — *Ձեր կրթությունը։*
Հաշիմ բեյ — *Բարձրագույն։*
Նախագահ — *Ներկա պաշտոնը։*

Հաշիմ բեյ — Ներկայումս պաշտոն չունեմ։

Նախագահ — Նախկին պաշտոնը։

Հաշիմ բեյ — Փոստի և հեռագրատան մինիստր։

Նախագահ — (*Խոսքն ուղղելով արձանագրող քարտուղար Շեֆիք բեյին*), Կարդացե՛ք մյուսներին վերաբերող որոշումը։

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ՎՍԵՄԱՓԱՅԼ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

Տեղեկացնում ենք, որ դատաքննության համար պահանջվող անձերը [մայիս] ամսի 28-ին՝ չորեքշաբթի օրը, ժամը 2—30-ին հանձնվել են անգլիական հրամանատարության կողմից ուղարկված մի մայորի տրամադրությանը[91]։

1919 թ. մայիսի 29

Ստամբուլի կալանատան տեսուչ՝ Սեյիդ

Նախագահ — (*Խոսքն ուղղելով դատախազին*)՝ Ի՞նչ կարծիքի եք։

Դատախազի օգնական Ֆեհիդուն բեյ — Բանտում կալանքի տակ գտնվող Սայիդ Հալիմ փաշան[92] և նրա մյուս գործընկերները Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցչության կողմից վերցվելով, տարվել են անհայտ ուղղությամբ։ Քրեական օրենսգրքի կանոնադրության համաձայն պահանջում եմ այդ մարդկանց դատաքննությունը կարճել։

Նախագահ — Այս հարցը անհրաժեշտ է քննարկել։

(*Դատական հանձնախումբը դուրս է գալիս և որոշ ժամանակ անց կրկին վերադառնում է դահլիճ*)։

Նախագահ — (*Խոսքն ուղղելով արձանագրող քարտուղար Շեֆիք բեյին*)՝ վճիռը կարդացե՛ք։

Ստամբուլի կալանատան տեսչության կողմից եկած տեղեկագիրը քննարկվելուց հետո, պարզվեց որ մեղադրյալները՝ նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, նախկին հասարակական աշխատանքների մինիստր Աբբաս Հալիմ փաշան, նախկին շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդին, նախկին արտաքին գործերի մինիստր Ահմեդ Նեսիմի բեյը, նախկին արդարադատության և արտաքին գործերի մինիստր Խալիլ բեյը, նախկին արդարադատության մինիստր Իբրահիմ բեյը, նախկին ներքին գործերի մինիստր Իսմայիլ Ջանփոլատ բեյը[93], նախկին հասարակական աշխատանքների մինիստր Ալի Մյունիֆ բեյը, նախկին հանրակրթական մինիստր Շյուքրի բեյը, նախկին պարենավորման մինիստր Քեմալ բեյը, ինչպես նաև կալանքի տակ գտնվող մյուս 67 մեղադրյալները, դաշնակից պետությունների կողմից վերցվելով, տեղափոխվել են մի այլ վայր։ Այդ իսկ պատճառով կայացվեց հետևյալ որոշումը։

Նկատի ունենալով, որ վերոհիշյալները անկախ իրենց կամքից չեն կարող ներկայանալ [դատարան], առայժմ նրանց հանդեպ հարուցված դատաքննությունը կարճվում է։ Առևտրի և հողագործության մինիստր՝ Մուստաֆա Շերնֆ բեյի մասին առ այսօր որևէ տեղեկություն չկա։ Ուստի, մինչև նրա ներկայանալը, դատավարությունը ըստ օրենքի հետաձգվում է։

Նախագահ — Կարդացե՛ք մեղադրական եզրակացությունը։

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ[94]

... Ոմն գալաթացի Խալիլի մահվան վճիռը[95] բովանդակող փաստաթղթից պարզ երևում է, որ կենտրոնական կոմիտեի անդամները, նրա [շրջանային] պատասխանատու քարտուղարներն ու ներկայացուցիչները անիրավաստու ընդգրկված են եղել կուսակցության պարագլուխների գաղտնի խմբավորման կազմում։ Իսկ մեջլիսի ընդհանուր կազմը բաղկացած է եղել կենտրոնական կոմիտեի անդամներից, մինիստրներից և մի քանի պատգամավորներից։ Այդպիսով, մեջլիսի անդամների կարևոր մասը, եթե բաղկացած լինի կուսակցության նման գաղտնի խմբավորում ունեցող պարագլուխներից, ապա լիովին ակներև կդառնա նրա քուն էությունը։ Հատկապես մեղադրյալ Իսմայիլ Ջանփոլատ բեյի խոստովանությունից պարզ երևում է, որ կառավարությանը վերաբերող հարցերը հաճախակի քննարկման նյութ են դարձել կուսակցության կենտրոնական կոմիտեում։ Այս պարագան ցույց է տալիս, թե ի՞նչ աստիճանի ազդեցություն է ունեցել կենտրոնական կոմիտեն և ինչպե՞ս է միջամտել պետական գործերին։

Ձեռնարկվող միջոցառումներին, ընթացիկ քննարկումներին և ընդունված որոշումներին վերաբերող, և որպես ապացույց հանդիսացող արձանագրությունները անհայտացնելու և կամ ոչնչացնելու երևույթից կարելի է եզրակացնել, որ կենտրոնական կոմիտեն և ընդհանուր մեջլիսը զանազան թաքուն գործերով համագործակցել են իրար հետ։ Հատուկ օրենքի[96] համաձայն, այլ վայրեր տարագրվողների քարավանները ենթարկվել են հատուկ նպատակով կազմակերպված հրոսակախմբերի հարձակումներին և ոչնչացվել, իսկ նրանց ունեցվածքն ու կահկարասին ենթարկվել կողոպուտի։ Եվ այդ [արարքները] երկիրը հասցրել են ծայրաստիճան խոովահույզ և տագնապալի մի իրավիճակի։ Իսկ կառավարությունը ոչ միայն չի պատժել և արգելել այդ կոտորածներն ու կողոպուտները սանձազերծող հանցագործներին, այլ ընդհակառակը, պաշ-

տոնից հեռացրել է այն վալիներին և մութեսարրիֆներին, որոնք պատասխանատվությունը իրենց վրա հանձն առնելով, հրաժարվել են գործադրել այդ տեղահանություններն ու կոտորածները:

Մի առանձին համայնք կազմող ամբողջ ժողովրդին այդ ձևով կոտորելը, բնաջնջելը և ունեցվածքի հափշտակությունը մտահղացվել և իրագործվել է կուսակցության այդ գաղտնի խմբավորման արնախում [մարդկանց] կողմից: Եվ այդ խմբավորման պարագլուխներն են եղել կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Բհհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ, Ռիզա և Աթիֆ բեյերը: Ջեռք բերված և վերծանված ծածկագիր հեռագրերից պարզվում է, որ այս չարագործ հանձնախումբը[97] իշխող դերք է ունեցել պետության վրա, իսկ կառավարությունն էլ պարզ խաղալիք էր դարձել նրանց անարգ մտահղացումները իրագործելու խնդրում:

Նախկին մեծ վեզիր Իզզեթ փաշայի ռազմական մինիստրությունից հրաժարական տալու դրդապատճառը նույնպես հանդիսացել է պետական կառավարման մեջ մի ահաբեկչական ներքին ուժի ազդեցության արդյունքը: Սահմանադրության սկզբունքները կատարելապես ոտնահարված այդ տարօրինակ պետության մեջ, երբ Էնվեր և Ջեմալ էֆենդիները նշանակվեցին ռազմական և ծովային մինիստրների պաշտոններում, կառավարության ղեկը կատարելապես անցավ նրանց իշխանության ձեռքը: Այդպիսով, մեծ ազդեցություն բանեցնելով օրինական կառավարության վրա, սկսեցին բացահայտորեն գործադրել իրենց քմահաճ ցանկությունները ու նպատակները:

«Միություն և առաջադիմություն» [կուսակցության] կենտրոնական կոմիտեի անարգ և նենգ մտահղացումներն ու հիմնական ծրագրերը կյանքի են կոչվել նախկին մեծ վեզիր Թալաաթ էֆենդիի, Էնվերի և Ջեմալի կողմից: Ի սկզբանե կուսակցության որոշումների իրագործմանը հոգեպես և ամբողջ էությամբ նվիրվել են նաև նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, նախկին շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդին, հանրակրթական նախկին մինիստր Շյուքրի բեյը, արդարադատության նախկին մինիստր Խալիլ բեյը, պետական խորհրդի նախկին նախագահ Իբրահիմ բեյը, արտաքին գործերի նախկին մինիստր Ահմեդ Նեսիմի բեյը և պարենավորման նախկին մինիստր Քեմալ բեյը: Ինչպես վերևում մանրամասն բացահայտվեց, սրանց սերտ համագործակցությունը առաջ է բերել մի ահաբեկչական ուժ, որը և գերիշխել է օրինական կառավարության վրա: Այսպիսով, ժողովրդի մեջ վախ ու սարսափ տարածելով՝ երկրի կառավարումը բռնի ուժով շեղել են իր օրինական ընթաց-

քից։ Վերոհիշյալ հանցագործ արարքներն առնչվում են կայսերական քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի և 45-րդ հոդվածի բովանդակության հետ։ Այդ մեղադրանքով էլ նրանց գործը դատաքննության է ենթարկվում ռազմական արտակարգ ատյանում։

Նախկին շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդիի և հասարակական աշխատանքների նախկին մինիստր Աբբաս Հալիմ փաշայի կողմից կատարված հանցագործության աստիճանը դեռևս չի բացահայտված։ Փոստի և հեռագրատան նախկին մինիստր Հյուսեյն Հաշիմ բեյի, Ալի Մյունիֆ բեյի և Մուստաֆա Շերեֆ բեյի մինիստրի պաշտոնում ավելի ուշ նշանակվելու, ինչպես նաև Իսմայիլ Ջանփոլատ բեյը իր վարած պաշտոնում կողմնակի միջամտություններից դժգոհություն հայտնելով՝ հեռանալու հանգամանքները, հիմք են տալիս կարճելու նրանց նկատմամբ հարուցված դատական գործը։

Կալանքի տակ գտնվող մյուս անձանց նկատմամբ այլ հանցանշաններ չլինելու դեպքում ազատ արձակման պահանջ է ներկայացվելու։

1335 թ. (1919) մայիսի 22

ՈՐՈՇՈՒՄ

Տարբեր աստիճաններով դատաքննության ենթարկելու որոշում է կայացվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության այն անդամների և ղեկավարների նկատմամբ, որոնք ամբաստանվել էին մայրաքաղաքում և այլ վայրերում կանխամտածված կերպով կազմակերպված կոտորածների, կողոպուտի, գյուղերի ավերման, տների ու մարդկանց հրկիզման, բռնաբարության և այլ դաժանաբարո հանցագործությունների համար։

Փախուստի մեջ գտնվող մեղադրյալներ՝ Թալաաթ, Ջեմալ և Էնվեր էֆենդիների և նրանց մյուս մեղսակիցների նկատմամբ 1919 թ. ապրիլի 12 թվագրությունը կրող մեղադրականի հիման վրա կատարված դատաքննության ընթացքում, ռազմական արտակարգ ատյանը իրազեկ դարձավ տեղի ունեցած այլ հանցագործություններին ևս, և քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի հիման վրա որոշվեց մանրակրկիտ հետաքննություն կատարել փախուստի մեջ գտնվող հիշյալ մեղադրյալների, նրանց մեղսակիցների, այդ թվում մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի, Խալիլ, Իբրահիմ, Ջեմալ, Ահմեդ Նեսիմի, Ահմեդ Շյուքրի բեյերի, ինչպես նաև նախապես դատարան չներկայացած մյուս մեղսակիցների նկատմամբ։ Դատաքննության ենթարկելու այս պահանջը հաստատվել էր նաև գլխավոր դատախազության 1335 (1919) թվականի մայիսի 3-ի մեղադրա-

կան եզրակացությամբ։ Այսպիսով, հանձնախումբը մանրակրկիտ քննարկեց հարցաքննության նյութերն ու ներկայացված մեղադրականները։

Հայտնի է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը ստեղծվել էր քաղաքական նպատակներով և այդ ուղղությամբ կազմվել էր մի կանոնադրություն։ Կուսակցությունը քաղաքական ուղղությունից բացի ունեցել է նաև լեգալ և անլեգալ զանազան կազմակերպություններ։ Օրինակ՝ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ստեղծվել է [կուսակցության] ամենաազդեցիկ անդամներ՝ դոկտ. Նազըմի, Աբիֆի, Բեհաէդդին Շաքիրի և նրանց մյուս գործընկերների ամենաստեր աջակցությամբ։ Բացի այդ, կենտրոնական կոմիտեի անդամ Քեմալ բեյի և նրա գործընկերների մասնակցությամբ կազմվել է նաև մի «պարենային հանձնախումբ»։

Վերոհիշյալ մեղադրականում[98] մանրամասն նկարագրված է կուսակցության կենտրոնական կոմիտեի և նրա հանձնախմբերի գործունեությունը և այստեղ այդ բոլորը վերստին կրկնելու անհրաժեշտությունը չկա։ Որպես ապացույց բերված գրություններից պարզվում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն իր գաղտնի նպատակներն ու ծրագրերը բոլոր ազգերի նկատմամբ հետևողականորեն իրագործելու համար դիմել է ահաբեկչական տարբեր միջոցների։ Նույնիսկ իր գաղափարներին և ծրագրերին հակառակվող անձանց նկատմամբ կայացրել է մահապատժի վճիռ, ինչպես օրինակ՝ գալաթացի Խալիլը և մյուսները։ Իսկ նրանց պաշտոնում նշանակել է իր մտերիմ կուսակցականներին։ Եվ այդպես, օգտվելով պատերազմական իրավիճակից բխող արտակարգ դրությունից՝ նենգ խարդավանքներով դիզել հսկայական հարստություն։

«Թանին»[99] թերթի 1332 [1917] թվականի սեպտեմբերի 24-ի 2809 համարում համագումարին վերաբերող նյութերից բացահայտորեն երևում է, որ կուսակցությունն իր վրա էր վերցրել Ստամբուլի պարենավորման բոլոր հարցերը։ Եվ զարմանալի չէ, որ այդ նախաձեռնությունից հետո ժողովուրդն ընկավ ծայրաստիճան թշվառության և ծանր կացության մեջ։ Մեկ տարվա ընթացքում հավաքված 700.000 լիրա փոխառության գումարը ևս օգտագործվեց կուսակցության քմահաճ ծախսումների համար։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության հանցագործ արարքներից մեկն էլ կենտրոնական կոմիտեի մտահղացմամբ և որոշմամբ կազմված տեղահանության օրենքն էր, և դրա գործադրման հետևանքով Օսմանյան կայսրության բոլոր կողմերում առաջ եկած ող-

բերգությունը։ Լիովին ապացուցված է, որ արևելյան բոլոր վիլայեթներում տեղի ունեցած տեղահանությունը կյանքի էր կոչվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար անդամներից կազմված «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հանձնախմբի կողմից, որի նախագահը այդ շրջանում Բեհաէդդին Շաքիր բեյն էր։ Իսկ այդ խնդրի իրագործման համար էլ Բեհաէդդին Շաքիր բեյը օգտագործել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարներին, լիազորներին և քննիչներին։

Այսպիսով «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, անտեսելով երկրի գործադիր իշխանությունների իրավասությունները, ահաբեկչական ուժի միջոցով, իր ձեռքն է վերցրել երկրի ամբողջ կառավարումը և երբեմն մի առանձին ժողովրդի, երբեմն էլ ամբողջ Օսմանյան կայսրության ժողովուրդների նկատմամբ իրագործել իր կործանարար նպատակներն ու ծրագրերը։ 1324 (1908) թվականից ի վեր երկրում տեղի ունեցող տարօրինակ իրադարձությունները և հատկապես բալկանյան պատերազմի ընթացքում առաջ եկած ողբերգական դեպքերը նրանց մոլի տենչանքների իրականացման արդյունքը հանդիսացան։

Կուսակցությունը իր թաքուն նպատակներն ու ծրագրերը իրագործելու համար էնվեր բեյին նշանակեց ռազմական մինիստրի պաշտոնում, Իսկ նախկին մեծ վեզիր Ահմեդ Իզզեթ փաշայի քաղիցս հրաժարական տալը նույնպես առնչվում է կուսակցության ահաբեկչական գործունեության հետ։ [Հայերի] տեղահանության ընթացքում մի շարք վիլայեթների վալիներին հատուկ հրահանգներ տալու գաղափարը նույնպես կուսակցության կենտրոնական կոմիտեի մի քանի անդամների չարանենգ մտահղացումների արդյունքն է։ Եվ վերջապես, նրանց օրինազանց գործարքները հաստատվում են էրզրումի վալի Թահսին բեյի տված ցուցմունքներով, ինչպես նաև մի շարք պաշտոնատար անձանց, այդ թվում Յոզղաթի մութասարրիֆ Ջեմալ բեյին, Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշային և Անկարայի վալի Մազհար բեյին պաշտոնազրկելու ապացույցներով։

Գավառներում կատարած իր ահաբեկչական արարքներին դուգընթաց կուսակցությունը սերտ միջամտություն է ունեցել նաև կենտրոնական կառավարության գործունեությանը։ Պետական մինիստրների ընդհանուր մեջլիսի մեջ խցկել է իր ազդեցիկ անդամներին և անիրավասու մասնակցել զանազան հարցերի քննարկումներին։ Այսպես, ընդհանուր մեջլիսում մասնակցել է Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը[100] կնքելու հարցի քննարկմանը։ Կանոնավորապես միջամտել է պա-

րենային հարցի քննարկումներին և սահմանել յուրահատուկ հսկողություն։ Կարծիքներ է փոխանակել պատերազմական իրավիճակի հետ առնչվող հարցերում, և ինչպես բացահայտվեց մեղադրյալների մի քանիսի խոստովանություններից, երկրի համար կենաց մահու նշանակություն ունեցող համաշխարհային պատերազմին մասնակցելու խնդրում իր ծրագրերը իրագործելու համար կուսակցության պարագլուխները հավաքվել են մեծ վեզիրի ծովեզրյա դղյակում և կայացրել վերջնական վճիռ։

Կուսակցության ասպարեզ գալուց հետո, գործադրված արտակարգ բռնություններին զուգընթաց, զանազան պատրվակներ են ստեղծել երկրի ժողովուրդներին թշնամացնելու ուղղությամբ։ Հետևանքը եղել է այն, որ մահմեդական և ոչ մահմեդական տարրերը ստիպված լքել են իրենց բնակավայրերը և գաղթել այս ու այն կողմ։ Դարերից ի վեր հաշտ ու խաղաղ ապրող Անատոլիայի[101] ժողովուրդների մեջ սերմանել են փոխադարձ թշնամանք և ոխակալություն։ Եվ այս իրավիճակը ստեղծողներն ու գործադրողներն եղել են կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներն ու նրանց հետ համագործակցող շրջանային պատասխանատու քարտուղարները։ Լիովին ապացուցված է, որ [կայսրության] բոլոր տարրերի միջև փոխադարձ ոխակալության խորացումը բխել է կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումներից և կատարած գաղտնի գործարքներից։

Այստեղ ընթերցված նախորդ [մեղադրականից] ևս պարզվեց, որ կուսակցությունը իր թաքուն նպատակներն ու ծրագրերը իրականացնելու համար դիմել է ամեն մի միջոցի և այդ ասպարեզում կարողացել է բռնությամբ իրեն ենթարկել կառավարության գործադիր մարմիններին և ինքնիշխանության հասնել՝ պետության մեջ մի նոր պետություն ստեղծելու մոլուցքով տարված։

Այսպիսով, օրինական կառավարության մեջ մի առանձին ահաբեկչական ուժ ստեղծելու, կառավարությունը իր օրինական ուղուց շեղելու, և այլ հանցագործություններ կատարելու համար բավարար չափով հանցանշանների առկայության հիման վրա, ստորև նշված անձինք մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ 55-րդ հոդվածի վերջին մասով։ Այդ թվում կուսակցության գլխավոր նախագահ, ց'այսօր փախուստի մեջ գտնվող Թալաաթ փաշան, ինչպես նաև ընդհանուր մեջլիսի անդամներ՝ նույնպես փախուստի մեջ գտնվող Էնվեր և Ջեմալ էֆենդիները։ Կալանքի տակ գտնվող և դատաքննությունն ավարտված նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, ինչպես նաև մեջլիսի

անդամներ՝ Հայրի և Մուսա Քյազիմ էֆենդիները, Քեմալ, Շյուքրի և Իբրահիմ բեյերը և Աբբաս Հալիմ փաշան։

Սրանցից Իբրահիմ բեյը, նույնպես դատաքննության է ենթարկվելու նշված հոդվածներով, բայց նկատի է առնվելու նրա հանցանքը մեղմացնող դրդապատճառները, այն է՝ կուսակցության մեջ նրա ունեցած պասսիվ դիրքը։ Ալի Մյունիֆ բեյը նույնպես կմեղադրվի վերոհիշյալ հոդվածների հիման վրա, բայց հաշվի կառնվի, որ իր ուղևորության ընթացքում, Ադանայից անցնելու ժամանակ նա պաշտոնապես առնչություն չի ունեցել Ադանայի վիլայեթի տեղահանությունից զերծ մնացած հայերի մի մասի տարագրության հետ։

Այս խնդրում հանձնաժողովը նկատի կառնի ներքին գործերի մինիստրությունից առաքված հեռագրերը և կուսակցության ջանքերով տեղի ունեցած տեղահանության մանրամասնությունները։

Մեղադրյալներ Խալիլ և Ահմեդ Նեսիմի բեյերի դատաքննության ընթացքում նույնպես հաշվի են առնվելու ամբաստանությունը մեղմացնող հետևյալ պարագաները. առաջինի դատաքննության ընթացքում անհրաժեշտ է նկատի առնել, որ պատերազմի սկզբում, մեջլիսի նախագահ լինելով հանդերձ, նա չի մասնակցել ընդհանուր ժողովի քննարկումներին։ Չի մասնակցել նաև տեղահանության քննարկմանը, իսկ տեղի ունեցած ողբերգությունների ընթացքում գտնվել է Եվրոպայում։ Ահմեդ Նեսիմի բեյը, այդ դեպքերի ընթացքում նույնպես եղել է Եվրոպայում։ Դատաքննության չենթարկելու որոշում էր կայացվել մինիստրի պաշտոնում հետագայում նշանակվածի Իսմայիլ Ջանփոլատի նկատմամբ, քանի որ նա ընդհանրապես դեմ է եղել կատարվող այդ ողբերգություններին։ Համանման որոշում էր կայացվել նաև Հաշիմ, Մուստաֆա Շերեֆ և Ռիֆաթ բեյերի նկատմամբ։

Այնուհանդերձ, քննարկման ընթացքում տեղի ունեցած տարաձայնությունների պատճառով նախագահությունը որոշեց բոլորին անխտիր ներկայացնել ռազմական ատյանին։

1335 թ. (1919) մայիսի 26

Օսմանյան պետության օրենսդրությունը խախտելու հանցագործությունը կատարված է վերոհիշյալ մեղադրյալների մասնակցությամբ։ Նկատի ունենալով, որ այդ հանցագործությունները կատարվել են խմբակային, ուստի մեղադրյալներից մի քանիսի նկատմամբ դատաքննության ենթարկելու արգելքը չի կարող օրինական համարվել։ Այնպես որ,

պարտադիր անհրաժեշտություն է, որպեսզի բոլորը միատեղ և անհապաղ ներկայանան ռազմական ատյան։

1335 թ. (1919) մայիսի 26 Ռազմական արտակարգ ատյանի նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Նաղըմ։

Հյուսեյն Հաշիմ, Մուստաֆա Շերեֆ և Իսմայիլ Ջանփոլատ բեյերի նկատմամբ դատաքննության կարճման որոշումը նախագահության կողմից չհաստատվելու պատճառով՝ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի հավելվածի հիման վրա վճիռ կայացվեց վերոհիշյալներին խմբովին ներկայացնելու ռազմական ատյանի դատաքննությանը, իսկ մեծարգո Հայրի էֆենդիին անժամկետ կալանքի տակ պահելու հարցը չեղյալ համարվեց։

1335 թ. (1919) մայիսի 27

Takvim-i Vekayi, 3 Haziran 1335 (1919) № 3571

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ[102]

1919 թ. հունիսի 3

(Շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդիի հարցաքննությունը)

Նախագահ — *Մեծարգո Մուստաֆա փաշան հետևյալ հարցումն ունի. Հայերի հետ կատարված եղելությունը ինքն այլ ձևով է լսել։ Բավականաչափ թվով ընտանիքներ աքսորվել են դեպի Դամասկոս, Մոսուլ, Բաղդադ և հարակից այլ վիլայեթներ, մարդկանց կախաղան են բարձրացրել և ենթարկել դաժան բռնություններին։ Մի՞թե այդ բոլորը այլ ձևով պետք է մեկնաբանվի։*

Մուսա Քյազիմ էֆենդի — *Խոսքը Դամասկոսում տեղի ունեցած մի քանի մահապատիժների մասին է արդյո՞ք։*

Նախագահ — *Այո՛։*

Մուսա Քյազիմ էֆենդի — *Մենք այդ մասին լսեցինք։ Այդ բոլորի մասին առարկելով՝ հավանություն չտվինք։ Այդ մասին ես դիմեցի Սայիդ Հալիմ փաշային և ասացի. «Այս ի՞նչ բան է, այս մարդուն[103] ո՞վ տվեց այդ արտոնությունը, մի՞թե հիմա դրա ժամանակն է»։ Սայիդ Հալիմ փաշան պատասխանեց այսպես. «Այդ բոլորի մասին ես էլ տեղյակ չեմ, այդ մարդը, այդ խենթ մարդը հավանաբար կատարել է ինքնուրույն։ Բայց ի՞նչ կարող ենք անել, եղած վերջացած է արդեն։ Այդ բոլորը կատարել է այդ խենթ մարդը։ Ես էլ տեղյակ չեմ եղել։ Միայն*

տեղի ունենալուց հետո իմացա այդ մասին։ Այդպիսի արարքների մասին տեղեկանում ենք կատարվելուց հետո միայն։ Պատերազմն այսպես բոլորին խելքահան է անում, ոչ ոք չգիտի, թե ի՞նչ է անում»։ Բավական ժամանակ հետո ես էլ լսեցի, որ [հայերին] ընտանիքներով հանդերձ տեղահանում են և աքսորում այս ու այն կողմ։ Բայց այդ բոլորը լսում էինք ոչ թե պաշտոնական աղբյուրներից, այլ դրսից, այս ու այն կողմերից։ Այդ ժամանակ մեր հարցումին պատասխանեցին հետևյալ կերպ։ «Այդ բոլորը անհրաժեշտություն է։ Արդեն այդ մարդը այնտեղ կախազան է բարձրացրել մի քանիսին[104]։ Այս արարքը անկասկած սխալ է։ Այդ մարդիկ ազգականներ ունեն, ազգականներն էլ իրենց հերթին՝ բարեկամներ։ Այնպես որ, այդ արարքների համար նրանք հանգիստ չեն մնալու։ Այդ արարքների համար ոչ տեղն է հարմար և ոչ էլ ժամանակը։ Այս կապակցությամբ էլ, բանակի ապահովման, երկրի անդորրության համար նրանց տեղահանել և աքսորել են այս ու այն կողմ։ Իբրև թե դա անհրաժեշտություն է եղել, որ այլ միջոց չի եղել»։

Հասկանալի է, որ այս բոլորը լսելուց հետո հարցում անելը մտնում էր մեր պարտականության մեջ։ Այդ մասին, այդպիսի պատասխան ստանալուց հետո, մենք ի՞նչ կարող էինք անել։ Մենք ի՞նչ կարող էինք անել, եթե կառավարությունը այդպես մտածելով՝ նման միջոցների է դիմել։ Ոչ մի բան չէինք կարող անել։ Մեծարգո փաշա, ուզում եմ մի բան հայտնել։ Մեր շարիաթը հաշվի է առնում միմիայն տվյալ անհատի պատասխանատվությունը, մյուսներին հաշվի չի առնում։ Այդ մասին նշված է նաև սահմանադրության մեջ, «որ յուրաքանչյուր մինիստր պատասխանատու է՛ իր պաշտոնի համար, իսկ պետության ընդհանուր քաղաքականության համար պատասխանատվությունը խմբակային է»։ Այդ ընդհանուր քաղաքականությունը պատերազմ հայտարարելու նման բան է։ Հետևաբար՝ Ներքին գործերի մինիստրության վերաբերող խնդրի համար շեյխ ուլ-իսլամը պատասխանատու չէ. արտաքին գործերի մինիստրության վերաբերող խնդրի համար շեյխ ուլ-իսլամը պատասխանատվություն չի կրում։ Ռազմական մինիստրության վերաբերող խնդրի համար շեյխ ուլ-իսլամը բոլորովին պատասխանատվություն չի կրում։ Եվ վերջապես, մահմեդական կրոնագիտության վերաբերող գործերի համար ոչ մի մինիստր չի կարող պատասխանատվություն կրել։ Ոմն մյուֆթի ինչ-որ տեղ այսպիսի կամ այնպիսի բան է կատարել, կամ ինչ-որ մյուդերրիս այն արարքն է կատարել։ Դրա համար ոչ մի տեղ, ոչ մի դատարան չի կարող ամբաստանել ներքին գործերի մինիստրությանը։ Մեղադրվում է

շեյխ ուլ-իսլամը։ Ես այսքանը գիտեմ։ Հետևաբար, եթե ես իմ պարտականության մեջ թերանամ, ապա ես եմ պատիժ կրելու կատարված հանցանքի համար։ Նման դեպքում ես ի վիճակի չեմ լինի առարկելու և կկրեմ ինձ համար սահմանված պատիժը։

Նախագահ — Մեծարգո էֆենդի, մենք մի քիչ առաջ նշեցինք, որ մինիստրների հետ առնչվող հարցերը դատաքննության չենք ենթարկում։

Մուսա Քյազիմ էֆենդի — Ուրեմն ինչի՞ մասին է խոսքը։

Նախագահ — Խնդիրը առաջ քաշված հարցի մասին է։ Այդ ողբերգությանը անձամբ տեղյակ լինելով հանդերձ, ոչ մի միջոց չեք ձեռնարկել։

Մուսա Քյազիմ էֆենդի — Ձեռնարկեցինք էֆենդի։ Այդ մասին խոսեցինք։ Այդքանը էֆենդի։ Էլ ի՞նչ կարող էինք անել։ Էլ ի՞նչ ասեմ։

Նախագահ — Ժամանակը ուշ է, հաջորդ դատաքննությունը տեղի կունենա կիրակի օրը ժամը մեկին[105]։

Takvim-i Vekayi, 4 Haziran, 1335 (1919) № 3573

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335 թ. (1919) ՄԱՐՏԻ 8-ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[106]։

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ։

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները — Նախկին շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդի, նախկին շեյխ ուլ-իսլամ Էսադ էֆենդի, նախկին սենատի նախագահ Ռիֆաթ բեյ, նախկին փոստի և հեռագրատան մինիստր Հյուսեյն Հաշիմ բեյ։

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների անունները — Նախկին [մեծ] վեզիր Թալաաթ փաշա, նախկին ռազմական մինիստր Էնվեր էֆենդի, նախկին ծովային մինիստր Ջեմալ էֆենդի, նախկին հանրակրթական մինիստր դոկտ. Նազըմ բեյ, նախկին ֆինանսների մինիստր Ջավիդ բեյ, փոստի և հեռագրատան նախկին մինիստր Օսկան էֆենդի, նախկին առևտրի և հողագործության մինիստր Սուլեյման Էլբիստանի էֆենդի, նախկին առևտրի և հողագործության մինիստր Մուստաֆա Շեռբեֆ բեյ։

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը։

Թեև մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ գործադրված հանցագործությունները և պահանջեցին ազատություն, այսուհանդերձ 1335 (1919) մայիսի 3, 20, 22 և հունիսի 9, 10, 25 թվագրությամբ մեղադրական եզրակացություններով [բացահայտվեց] լուծարքի ենթարկված «Միություն և առաջադիմություն» կուսակցության իրավական դեմքը և հաստատվեց նրա մեղավորությունը կատարված բազմաթիվ հանցագործությունների մեջ։

[Կուսակցության] իրավական դեմքն արտահայտող ընդհանուր մեջլիսի հիշյալ անդամները մեղսակցություն են ունեցել գործադրված հանցագործություններում, ուստի հայց էր հարուցվել լսելու նրանց դատական գործը և որոշելու նրանց պատժի չափը։ Կուսակցության հիմնադրումից ի վեր, եթե ծանր ու թեթև արվի նրա ծավալած գործունեությունը, ապա այսօր էլ կարելի է նկատել հեղափոխությունից առաջ մի շարք անձանց մոտ հանդես եկած հայրենասիրական զգացումների առկայությունը։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել հեղափոխությունից հետո տեղի ունեցած դեպքերի և ծավալված գործողությունների վրա։

Ազատության և արդարության անհամբեր սպասող օսմանցիները 1324 (1908) թվականի հուլիսի 9-ին Ռեսնեի լեռներից զուլալ ջրի նման բխած ազատությունը ընդունեցին երկնային սպեղանու տեղ և եկան այն ընդհանուր համոզմունքին և հավատքին, որ միայն այդ միջոցով կարելի է բուժել զուլումի և կեղեքումի վերքերը։ Այդ ցասկոտ հեղեղի հոսքը մինչև իր բնական տեսքի գալը, մխիթարեց բոլորին, իսկ նրա ազդեցության ոլորտը անարգել տարածվեց բոլոր վայրերում՝ արդարության և ազատության հույս ներշնչելով Օսմանյան կայսրության բոլոր շրջանների ժողովուրդներին։ Եվ մերթ ընդ մերթ լսվող այդ հոսանքի հաճելի ելևէջները ուժ ու եռանդ էին տալիս բոլորին։

Մինչդեռ, անցած ժամանակի ընթացքում կատարված քաղաքական հանցավոր սխալների հետևանքով Օսմանյան կայսրության բազմաթիվ երկրամասեր, տարբեր պատրվակներով ձեռքից գնացին։ Եվ այդ ուղղությամբ բավականին ջանքեր գործադրվեցին, որպեսզի այդ բոլորը վերագրվի նախկին կառավարության վարած սխալ քաղաքականությանը։

կատարվում էր սպասված հույսերի ճիշտ հակառակը։ Չկար մի իսկական նախաձեռնություն, որպեսզի ի չիք դարձներ տեղի ունեցող այդ բազմաթիվ աղետները։

Չնայած որ ազատության հաստատումից հետո անցել էր բավականին ժամանակ, այնուհանդերձ երկիրը լավ հիմքերի վրա դնելու համար չկար մի որոշակի ուղղություն։ Դեռ ավելին, իրար հաջորդող [հողային] կոռուստները, Իտալիայի[107] և բալկանյան[108] պատերազմների ցավալի հետևանքները ազատության կարոտ ժողովրդի համար առավել շատ վիշտ ու մտատանջություն էին պատճառում։ Ազգային կարիքների համար նրանց մտահղացած ծրագրերը մնացին սոսկ որպես նախաձեռնություն, իսկ նենգ նպատակները իրացնելու համար նրանց մի մասը կանգնեց բոլորովին սխալ ուղու վրա։ Այդ հուսաբեր շարժումը[109], որը զուլալ ջրի նման ազատություն էր բերելու ժողովրդին, սկսեց երկրի մի մասը քայքայել, իսկ մյուս մասն էլ հասցնել ամբողջովին ամայացնելու ցավալի վիճակին։ Եվ սրանց մոտ ծագեցին իր նմանը չունեցող անիմաստ մտքեր։ Հետևանքը եղավ այն, որ երկրի կառավարումը իր ուղուց շեղելով՝ սկսեցին զբաղվել անօրեն բախտախնդրություններով։ Եվ այդպես, տևական խարդավանքով զբաղվող այդ մոլորյալ անձերից ստեղծվեց մի գործադիր հանձնաժողով, որը ենթարկելով իրեն օրինավոր կառավարության մինիստրների խորհրդին, աստիճանաբար երկրի ամբողջ կառավարումը վերցրեց իր ձեռքը։ Այսպես [կուսակցության] պարագլուխները սողոսկելով մեջլիս՝ սկսեցին իրագործել իրենց ծրագրերն ու նպատակները։

24—26 թեշրին-ի սանի 1334 [1918 թ. նոյեմբերի] թվագրությամբ պատգամավորների մեջլիսի 5-րդ մասնաճյուղի արձանագրության մեջ ֆինանսների մինիստր Ջավիդ բեյի ելույթից հասկացվում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործադիր կոմիտեն երկրին և ժողովրդին վերաբերող կենսական հարցերը քննարկելու խնդրում կատարել է վերին աստիճանի անհանդուրժելի գործարքներ։ Պատերազմ հայտարարելու խնդրում անհրաժեշտ չի համարել տվյալ հարցը գոնե քննարկել պատգամավորների մեջլիսում, մինչդեռ, վեհապետներն անգամ տարակուսել են նման հարցում անմիջական վճիռ և հրաման արձակել։ Նույնիսկ ընդդիմադիր անձինք, որոնք ինչ-որ չափով համակրություն են ունեցել կուսակցության նկատմամբ, քննադատել են նրա այդ ընթացքը, քանի որ իրենց հեռատեսությամբ կռահել են, որ գործերի նման կառավարումը ի վերջո կունենա վատ հետևանքներ։

Հայտնի է, որ հեղափոխության սկզբնական շրջանում ակամայից հայտարարված արտակարգ դրությունը բավականաչափ երկար տևեց և կուսակցության ղեկավար կազմից մի խմբավորում հարձակվելով Բարձրագույն Դռան վրա՝ սպանեց ռազմական մինիստր Նազըմ փաշային, նրա թիկնապահին և այնուհետև լուծարքի ենթարկեց Քյամիլ փաշայի կաբինետը և կազմեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության կաբինետը[110]։ Փորձառու, պատվավոր և կարող պաշտոնյաները հեռացվեցին և նրանց տեղ նշանակվեցին կուսակցության անդամները, որոնց քմահաճ կառավարումը ոչնչով չէր տարբերվում ինքնակալության շրջանից։ Ինչ խոսք, որ բռնապետությունից դժգոհ էին բոլորը, հատկապես, դժգոհ էին ոչ մահմեդական տարրերը։ Նամանավանդ՝ մեզ բոլորիս խաղաղություն, ապահովություն և արդարություն բերող սահմանադրության հարցում, հայ ժողովրդի գործադրած և ունեցած խորը համոզմունքը նրանք ճիշտ չհասկացան և սկսեցին առաջ քաշել [հայերի] նախկին ազգայնական տենչանքների աճման պատճառաբանություններ, երկպառակություններ ու ոխակալություն սերմանել այլ տարրերի միջև, և նույնիսկ ազգայնական և ցեղային հարցեր առաջ բերել մահմեդական ժողովուրդների միջև։

Օսմանցիներին հասցված վնասը ակնհայտ էր։ Հետևաբար, կատարված հարցաքննությունը, մանրամասն հետաքննությունը, մեղադրական եզրակացությունը և ստորև շարադրված ռազմական ատյանի հինգ հոդվածները լիովին հաստատում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ նրա իրավական դեմքին վերաբերվող հանցագործությունները և մենք բոլորս համոզված ենք, որ կուսակցության պարագլուխները իրենց անհանդուրժելի արարքներով արատավորեցին հիշյալ կուսակցության անունը։

Այսպիսով, գործադրված հանցագործ արարքները չեն կարող վերագրվել կուսակցության բոլոր անդամներին, այլ հիշյալ հանցագործությունների հետ առնչություն կամ մասնակցություն ունեցողներին և նրանց հանդեպ է, որ գործադրվելու են օրենքի պահանջները։

Պաշտպանության ընթացքում դատապաշտպանը[111] նշեց, որ քաղաքական կուսակցությունների առկայությունը բխում է սահմանադրության անհրաժեշտությունից, որ այսօր էլ մեր երկրում գոյություն ունեն այլ կուսակցություններ և վերջապես այն հայտարարությունը, որ «Ազատության և համաձայնության»[112] կուսակցությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցության նման ունի կենտրոնական կոմիտե, ընդհանուր ժողով և մասնաճյուղեր, որ այդ կուսակցության ղեկավարները

ևս հրավիրվում են մեջլիսներին։ Այդ մասին եզրակացնելով՝ անհրաժեշտ է նշել հետևյալը։ Սահմանադրությամբ կառավարվող պետություններում կուսակցությունների գոյությունը, եթե անհրաժեշտություն է, բացարձակապես չի կարող միջամտել կառավարության գործերին։ Ազգային ժողովներում մեծամասնություն կազմելու իրենց նպատակը իրականացնելուց հետո, վստահության արժանացած կաբինետներին պետք է կատարելապես ազատ թողնեն և բոլորովին չխառնվեն նրանց գործունեությունների։ [Կուսակցությունները] կարող են միայն ջանք գործադրել կազմվող օրենքները իրենց ծրագրերին հարմարեցնելու խնդրում և իրենց դուր չեկող կաբինետները ցրելու համար ոչ թե սպառնալիքներ, այլ գուցե չվստահելու ջանքեր գործադրեն։

Ինչ վերաբերում է մեր երկրի կուսակցություններին մինչև օսմանյան ազգային ժողովի բացվելը, քանի որ հայտնի է, թե որ կուսակցությունն է ձայների մեծամասնություն հավաքել, ուստի այն չի կարող իր ազդեցությունը պարտադրել կամ միջամտել կառավարության գործադիր կոմիտեի աշխատանքներին, սահմանադրության դրույթները խախտել և կամ էլ օրենքները փոփոխել։ Այսպիսի անօրեն արարքներ կատարելու դեպքում պարզ է, որ յուրաքանչյուր կուսակցություն նման վախճան է ունենալու։ Այսպիսով, դատավարության ընթացքում վերոհիշյալ դատապաշտպանի ելույթը զուրկ է ամեն մի հիմքից։

Նախապես հայտարարված հինգ հոդվածները հետևյալներն են։

Ա ռ ա ջ ի ն. Ռազմական ատյանի դատավարության վերջում բացահայտվեց, որ Տրապիզոնում, Յոզղաթում, Բոզազլյանում և այլուր տեղի ունեցած կոտորածները կազմակերպվել և գործադրվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից։ Դատապաշտպանության ընթացքում նշվեց, որ այդ կոտորածների մասին իբրև թե նրանք տեղեկացել են գործադրվելուց հետո։ Մինչդեռ, լիովին բացահայտվեց, որ այդ մասին իրազեկ, դառնալուց հետո էլ ոչ մի միջոց չեն ձեռնարկել այդ կոտորածները կանխելու համար։

Ե ր կ ր ո ր դ — [Մեջլիսի] ընդհանուր նախագահ, նախկին [մեծ] վեզիր Սայիդ Հալիմ փաշայի՝ մեջլիսին հղած զեկուցագրի բովանդակությունից պարզվել է, որ նա պատերազմի սկզբում կենտրոնական կոմիտեի անդամներին իր ծովեզրյա ապարանքը հրավիրելով՝ հայտնել է պատերազմին մասնակցելու վտանգավորության մասին և բացատրել, որ պետության համար առավել նպաստավոր դիրքորոշումը չեզոքությունն է, բայց չի կարողացել համոզել նրանց։ Միևնույն ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու

ներկայացուցիչներից Ռիզա բեյը հարցաքննության ժամանակ խոստովանեց, որ պատերազմ հայտարարելուց առաջ Տրապիզոնում կազմակերպված չեթեների խմբին հարձակման նպատակով ուղարկել է Ռուսաստանի խորքերը։

Ստույգ հաստատված է, որ պատերազմը հայտարարվել է առանց մեջլիսի որոշման։ Տվյալ ժամանակի ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը, հասարակական աշխատանքների մինիստր Չյուրյուք Սուլի Մահմուդ փաշան, փոստի և հեռագրատան մինիստր Օսկան էֆենդին և առևտրի մինիստր Սուլեյման էլբիստանի էֆենդին հրաժարականի խնդրանք են ներկայացրել այն պատրվակով, որ պատերազմ հայտարարելու որոշումը կայացվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ցանկությամբ, այլ ոչ թե մինիստրների խորհրդում։

Ե ր ր ո ր դ. Բերված վկայությունների արձանագրությունից եզրակացվում է, որ նախկին մեծարգո վեզիր Ահմեդ Իզզեթ փաշայի ռազմական մինիստրությունից հրաժարական տալը տեղի է ունեցել կուսակցության միջամտության ընթացքում տեղի ունեցած վեճերից հետո։

Չ ո ր ր ո ր դ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Ստամբուլի պատգամավոր Քեմալ բեյը պարենավորման հարցերով նշանակվել է պաշտոնի և այնուհետև նրա պաշտոնավարությունը հաստատվել է ընդհանուր ժողովում և համագումարում։ [Քեմալ բեյի] կողմից ստեղծվել են նախ առևտրական հանձնախմբեր, հետո մի քանի ընկերություններ և հաստատություններ։ Այսպիսով, առևտրական գործերի մենավաճառությունը իրենց ձեռքը առնելով՝ սկսել են բռնագրավել ժողովրդի ունեցվածքը և հանձնել վերոհիշյալ ընկերություններին և մի շարք անձանց։ Այս պարագան պատճառ է հանդիսացել օսմանցիների աղքատացման, հուսահատության և նույնիսկ մահվան։ Վերջապես այդ բոլորը նպաստել են երկրի պաշտպանողական ուժի թուլացմանը։ Կառավարական մի շարք պաշտոնների նշանակումը տեղի է ունեցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության Ստամբուլի կենտրոնի միջամտությամբ։ Այս բոլորի մասին հայտնի է դարձել 1332 թ. [1916] համագումարում ընդունված բանաձևի բովանդակությունից, ինչպես նաև այս խնդրին վերաբերող քաղաքային տեսչության ուղարկած ներփակ գրությունից։

Հ ի ն գ ե ր ո ր դ. Երբ սենատում քննարկվում էր Շարիաթական դատարանը արդարադատության մինիստրությանը փոխադրելու հարցը, շեյխ ուլ-իսլամ Քյազիմ էֆենդին ասել է. «Իմ կարծիքը մի հարցնեք, կուսակցությունն այնպես է ուզում, ուրեմն՝ այնպես էլ պիտի լինի»։ Դա-

տավարության ընթացքում այս խնդրի արծարծումը ցույց է տալիս կուսակցության՝ պետական գործերին միջամտելու փաստը։

Վերևում բերված հինգ հոդվածները և զանազան տարաձայնություններով տեղի ունեցած քննարկումներն ու նրանցից բխած եզրակացությունները ցույց են տալիս, որ պետության կարևոր գործերի մի մասը կյանքի է կոչվել իրենց իսկ նպատակների և մտադրությունների համաձայն և անմիջական միջամտությամբ, առանց հաշվի առնելու պետության մինիստրների կարծիքն ու տեսակետը։ Հետաքննությունը ցույց տվեց, որ օսմանյան պետության օրենքներն ստեղծվել են «երեքի զորությամբ» և այդ օրինազանցությունը կատարվել է ահաբեկչական ուժ գործադրելու միջոցով։ Այսպիսով, վերոհիշյալ հանցագործ արարքների անմիջական հեղինակներն են «Միություն և առաջադիմություն» կուսակցության իրավական դեմքն արտահայտող նրա պարագլուխները ոչ ընդհանուր մեջլիսի անդամները։ Այդ թվում՝ փախուստի մեջ գտնվող նախկին մեծ վեզիր Թալաաթ փաշան, նախկին ռազմական մինիստր՝ այժմ զինվորական շարքերից վտարված Էնվեր փաշան, նախկին ծովային մինիստր՝ նույնպես զինվորական շարքերից վտարված Ջեմալ էֆենդին և նախկին հանրակրթական մինիստր դոկտ. Նազըմ էֆեդին, որոնց անմիջական հեղինակությամբ կատարվել են այդ հանցագործությունները։ Տվյալ հանցագործություններին անուղղակիորեն մասնակցել են նաև հիշյալ մեջլիսի անդամներից նույնպես փախուստի մեջ գտնվող նախկին ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը, ինչպես նաև առևտրի և հողագործության մինիստր Մուստաֆա Շերեֆ բեյը։ Բացահայտված է, որ կատարված հանցագործություններում իրեն մեղսակցություն է ունեցել նաև նույն ընդհանուր ժողովի անդամներից՝ դատարանում ներկա գտնվող նախկին շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին։

Թեև դատապաշտպանը և դատախազը իրենց ելույթներում նշեցին նրա առաքինի, լավ հատկանիշները, կրոնական գիտելիքները, բարձր նկարագրի մասին և տարակուսանք հայտնեցին հիշյալ կոտորածների հղացման և մասնակցության հարցում նրա ունեցած դերին, այնուհանդերձ հաստատվեց, որ հեղափոխությունից հետո նա եղել է հիշյալ կուսակցության կարևոր պարագլուխներից մեկը և ունեցել է մեծ ազդեցություն։

Արդ, դատախազի և դատապաշտպանի նման զարգացած անձնավորությունները, եթե հարկադրաբար լավ կարծիք են արտահայտում նրա նկատմամբ և կուսակցության գործունեությունը համարում օրինական, ապա բնական է, որ բոլորովին ֆյուր կարծիք պիտի ստեղծվեր նաև ոչ

բավարար կրթություն ստացած տգետ մարդկանց մոտ։ Հայտնի է, որ Մուսա Քյազիմ էֆենդին ղեկավարել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կրոնագիտական մասնաճյուղը։ Երբ հարցում եղավ շարիաթի պատվիրաններին հակառակ կատարված արարքների ու քարոզների վերաբերյալ, նա պատասխանեց, որ նման արարքների նշաններ չկան, որ ինքը տվյալ խնդրին վերաբերող իր քարոզներում հավանություն չի տվել։ Սակայն խոստովանեց նաև, որ հիշյալ արարքի (տեղահանության և կոտորածի—Ա. Փ.) արգելման համար էլ գործնական ոչ մի միջոց չի ձեռնարկել։ Իսկ դատավարության ընթացքում նրա արած այն համեմատությունը, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից դուրս գալը նշանակում է իսլամի կրոնից հրաժարվել, չի կարող համընկնել նրա առաքինի, լավ նկարագիր ունենալու մտքի հետ։ Այս պարագան նույնպես համարվում է ծանրացուցիչ գործոններից մեկը։ Հարցաքննությունից և հետաքննությունից պարզվեց, որ վերոհիշյալը առավելաբար զբաղված լինելով կուսակցության կրոնագիտական հարցերով, ուղղակի չի գտնվել հիշյալ կոտորածների բուն կազմակերպիչների շարքում, այնուամենայնիվ նա ունեցել է անուղղակի մասնակցություն։

Այսպիսով, լիովին բացահայտվում է, որ կոտորածի գործադրման որոշումը հիմնականում համաձայնեցվել է երեքի միջև։

Հետաքննության ընթացքում սենատի նախկին նախագահ Ռիֆաթ բեյի, «Միություն և առաջադիմություն» կուսակցության քննարկումներին մասնակցելու հարցը չհաստատվեց։ Պարզվեց նաև, որ հիշյալ կոտորածների գործադրման խնդրում ինքը մասնակցություն չի ունեցել։ Այսպիսով, բոլորի համաձայնությամբ նա անմեղ ճանաչվելով՝ ազատ է արձակվում։ Բացահայտվեց նաև, որ փոստի և հեռագրատան նախկին մինիստր՝ Հաշիմ բեյը, Բեռլինում գտնվելու ընթացքում, առանց իր համաձայնության նշանակվել է [մինիստրի պաշտոնում] և Ստամբուլ վերադառնալուց հետո, ինքնաբերաբար անցել է պաշտոնի։ Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ մինիստրի պաշտոնում նրա նշանակվելը զուգադիպել է «Իթթիհատի» կաբինետի վերջին տարիների գործունեության հետ։ Ըստ իր խոստովանության, երեք անգամ ներկա է գտնվել ընդհանուր մեջլիսի խորհրդակցություններին, որտեղ կանոնադրությունից դուրս քննարկումներ չեն եղել և, ինքն էլ մնալով սոսկ ունկնդրի դերում, գործունյա մասնակցություն չի ցուցաբերել։ Այս արդարացուցիչ հանգամանքը նրա անմեղությանը տեղիք տալով՝ ձայների մեծամասնությամբ որոշվեց նրան ևս ազատ արձակել։

Վերոհիշյալ [մեղադրյալների] պատժի չափը քննարկելու ընթացքում նկատի առնվեց, որ Թալաաթի, Էնվերի, Ջեմալի և դոկտ. Նազըմի կատարած հանցագործ արարքները չափազանց ծանր են, ուստի որոշվեց նրանց դատել կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով։ Ջավիդի, Մուստաֆա Շերեֆի և Մուսա Քյազիմի համար նկատի առնվեց հիշյալ հոդվածի երկրորդ և նույն կայսերական օրենսգրքի 55-րդ հոդվածի վերջին մասերը, ուր ասված է.

«Մի խումբ անձնավորություններ մի ոճրագործություն կամ հանցանք խմբովին կատարելու դեպքում, կամ մի խումբ անձնավորություններ բազմաթիվ արարքներից բաղկացած մի ոճրագործություն կամ հանցանք գործելիս, ոճրագործության ընթացքում նրանցից յուրաքանչյուրը այդ արարքներից որևէ մեկը կամ մի քանիսը կատարելու դեպքում նույնպես գործակից են համարվում և պատժվում են իսկական հանցանք կատարողի նման»։

«Սահմանադրությունը, կառավարության ձևն ու էությունը, կամ վսեմ սուլթանությունում գոյություն ունեցող կարգերը բռնի կերպով փոխելու կամ հեղաշրջելու նախաձեռնության մեջ գտնվող անձնավորությունների գործունեությունը հաստատվելու դեպքում սահմանվում է մահապատիժ»։

«Մի ոճրագործության կամ հանցագործության անուղղակի մասնակցություն ունեցած անձնավորությունները, օրենքի չբացահայտված մասերում, պատժի են ենթարկվում հետևյալ կերպ. եթե գլխավոր հանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանվում, ապա մեղսակիցներին 10 տարուց ոչ պակաս ժամանակավոր բանտարկություն...»։

Օրենսգրքում առկա այս հոդվածների հիման վրա Թալաաթը[113], Էնվերը[114], Ջեմալը[115] և դոկտ. Նազըմը[116] դատապարտվում են մահվան, իսկ Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը, Մուսա Քյազիմը 15-ական տարի ժամկետով աքսորի։ Փախուստի մեջ գտնվողներին զրկել քաղաքացիական իրավունքներից, իսկ բռնագրավված ունեցվածքի հարցում գործել համաձայն օրենքի։ Վերոհիշյալ Ռիֆաթ և Հաշիմ բեյերին վերաբերող անմեղության որոշումը ընդունված է իրենց պաշտոններից բխած հանգամանքների բերումով և հետագայում գերագույն դատարանում ենթակա չէ քննության։

Հետաքննությունը բացահայտեց նաև, որ փոստի և հեռագրատան նախկին մինիստր Օսկան էֆենդին և առևտրի նախկին մինիստր Սուլեյման էլբիստանի էֆենդին երկար ժամանակ եմբոպաուում գտնվելու

պատճառով, հնարավոր չի եղել նրանց հրավիրել դատաքննության։ Հավանաբար, իրազեկ լինելու դեպքում էլ նրանք [Ստամբուլ] վերադառնալու հնարավորությունը չէին ունենա։

Սույն դատավճիռը միաձայն ընդունվեց ի բացակայություն Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, դոկտ. Նազըմի, Ջավիդի, ինչպես նաև Մուստաֆա Շերեֆի, Օսկան և Սուլեյման Էլբիստանի էֆենդիների, իսկ իրենց ներկայությամբ՝ Ռիֆաթի, Հաշիմ և Մուսա Քյազիմ բեյերի[117]։

5 թեմմուզ 1335 թ.
[1919 թ. հուլիսի 5]

Ռազմական արտակարգ ատյանի նախագահ՝ սպայակույտի գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ բեյ Ահմեդ

Ռազմական արտակարգ ատյանի անդամ՝ սպայակույտի գեներալ-մայոր Ալի Նազըմ

Ռազմական արտակարգ ատյանի անդամ՝
հետևակային գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ Մեհմեդ Ալի

«Այս դատավճռին մասնակից լինելով հանդերձ՝ ես այն համոզմունքին եմ, որ մեղադրյալ Հաշիմ բեյը անուղղակի կերպով մասնակցություն է ունեցել նշված հանցագործություններին, քանի որ իր ցուցմունքներն ու առկա ապացույցներն այդ են վկայում»։

Ռազմական արտակարգ ատյանի անդամ՝
սպայակույտի գեներալ-մայոր Մեհմեդ Ջեքի

«Կենտրոնական կոմիտեի կողմից ձեռնարկված կոտորածների հարցում Մուսա Քյազիմ էֆենդին իրեն անմեղ է համարում, նկատի ունենալով, որ ինքը ծառայել է հիշյալ կենտրոնին՝ կրոնի և կրոնագիտության պարտականություններից ելնելով։ Ես կողմնակից եմ նրանց հետ, ովքեր հաստատում են հանցագործության հետ նրա ունեցած առնչությունը, քանի որ գործադրված հանցագործություններից ո՛չ մեկի նկատմամբ նա արդելք չի հանդիսացել և նույնիսկ չի հեռացել իր պաշտոնից։ Հաշիմ բեյի ցուցմունքներից ևս բացահայտվում է, որ նա նույնպես կապված և հավատարիմ է եղել հիշյալ կենտրոնին և վերոհիշյալ հանցագործությունների կատարման ընթացքում ո՛չ մեկի դեմ չի պայքարել։ Մինչդեռ դատաքննության օրերին նա իրեն արդարացնում էր, որ ինքն առնչություն չի ունեցել հիշյալ կենտրոնի կատարած հանցագործ արարքների հետ։ Ես նույնպես կողմնակից եմ նրանց հետ, որոնք դա-

տապարտում են նրան անուղղակի մասնակցություն ունենալու մեղադրանքով։

Ռազմական արտակարգ ատյանի անդամ՝
սպայակույտի գեներալ-մայոր Մուստաֆա
բեյ Ազիզ Սուլեյմանի

Հաստատվում է.

Դատավճռի սույն արձանագրությունը վավերացված է ռազմական արտակարգ ատյանի անդամների կնիքներով։

5 թեմմուզ 1335 թ.
[1919 թ. հուլիսի 5]

[կնիք]
ՌԱԶՄԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ
ԱՏՅԱՆ

[ստորագրություն]
ՆԱԶԸՄ

Ռազմական արտակարգ ատյանի արձանագրական հանձնախմբի պետ՝ Աբիդին Դավեր

Takvim-i Vekayi, 5 Temmuz 1335 (1919) № 3604

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

«ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՈՒ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335 թ. (1919) ՄԱՐՏԻ 8-ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.
Անդամներ՝ գեներալ-մայոր Ջեֆքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ։
Գլխավոր դատախազի օգնական՝ Ֆերիդուն բեյ։

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1335 թ. (1919) հունիսի 21, շարաթ

Դատաքննության ենթակա մեղադրյալների անունները՝ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Ահմեդ Միդհատ բեյ, Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար դոկտ. Բեսիմ Ջուհդի բեյ, կուսակցության Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավնի բեյ, կուսակցության էդիրնեի քննիչ-լիազոր Աբդուլ Ղանի բեյ, «Միություն և առաջադիմություն» վերակազմյալ[2] կուսակցության Բեյօղլուի պատասխանատու քարտուղար Սելահեդդին բեյ, կուսակցության Միրգունի մասնաճյուղի պատասխանատու քարտուղար Մահմեդ Ջեմալ բեյ։*

Նախագահ — *(խոսքն ուղղելով Աբդուլ Ղանի բեյին)* — Ձեր անունը։

Աբդուլ Ղանի բեյ — Աբդուլ Ղանի։

Նախագահ — Հայրանունը։

Աբդուլ Ղանի բեյ — Հաջի Հյուսեյն։
Նախագահ — Քանի՞ տարեկան եք։
Աբդուլ Ղանի բեյ — Քառասուն։
Նախագահ — Որտե՞ղ եք ծնվել։
Աբդուլ Ղանի բեյ — Էրզինջանում։
Նախագահ — Որտե՞ղ եք բնակվում։
Աբդուլ Ղանի բեյ — Կաղը Քյոյ, Ջեվիզլիքում[3].
Նախագահ — Ձեր կրթությունը։
Աբդուլ Ղանի բեյ — Բարձրագույն։
Նախագահ — Նախկինում դատվածություն ունեցե՞լ եք։
Աբդուլ Ղանի բեյ — Ո՛չ, էֆենդի։
Նախագահ — Ձեր ներկա պաշտոնը։
Աբդուլ Ղանի բեյ — Ներկայումս պաշտոն չունեմ։ Նախկինում եղել եմ «Իթթիհատ»-ի ներկայացուցիչ։
Նախագահ — Նախկին պաշտոնը։
Աբդուլ Ղանի բեյ — Զինվորական եմ եղել, լեյտենանտի կոչումով։
Նախագահ — (Խոսքն ուղղելով Բեսիմ Ջուհդի բեյին)՝ Ձեր անունը։
Բեսիմ բեյ — Բեսիմ Ջուհդի։
Նախագահ — Հայրանունը։
Բեսիմ բեյ — Ջուհդի։
Նախագահ — Քանի՞ տարեկան եք։
Բեսիմ բեյ — Քառասուներեք։
Նախագահ — Որտե՞ղ եք ծնվել։
Բեսիմ բեյ — Օդեմիշում[4]։
Նախագահ — Որտե՞ղ եք բնակվում։
Բեսիմ բեյ — Էսկիշեհիրում։
Նախագահ — Ձեր կրթությունը։
Բեսիմ բեյ — Ավարտել եմ ռազմական բժշկական ուսումնարանը։
Նախագահ — Ձեր ներկա պաշտոնը։
Բեսիմ բեյ — Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար։
Նախագահ — Ամուսնացած ե՞ք։
Բեսիմ բեյ — Այո՛։
Նախագահ — Նախկինում դատվածություն ունեցե՞լ եք։
Բեսիմ բեյ — Ո՛չ։
Նախագահ — (Խոսքն ուղղելով դոկտ. Ահմեդ Միդհատ բեյին)՝ Ձեր անունը։
Միդհատ բեյ — դոկտ. Ահմեդ Միդհատ։

Նախագահ — *Հայրանունը։*

Միդհատ բեյ — *Հաջի Հասան։*

Նախագահ — *Որտեղացի՞ եք։*

Միդհատ բեյ — *Կեսարացի։*

Նախագահ — *Որտե՞ղ եք բնակվում։*

Միդհատ բեյ — *Բրուսայում։*

Նախագահ — *Ձեր ներկա պաշտոնը։*

Միդհատ բեյ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար։*

Նախագահ — *Ձեր կրթությունը։*

Միդհատ բեյ — *Բարձրագույն։*

Նախագահ — *Քանի՞ տարեկան եք։*

Միդհատ բեյ — *Երեսունչորս։*

Նախագահ — *Նախկինում դատվածություն ունեցե՞լ եք։*

Միդհատ բեյ — *Այո, զինվորական մի հարցով դատաքննության եմ ենթարկվել ռազմական ատյանում։*

Նախագահ — *Ի՞նչ պատճառով։*

Միդհատ բեյ — *Ընտրությունների երկրորդ շրջանում ես վանի պատգամավոր էի։ Հրաժարական տալու անհրաժեշտություն չկար։ Քաղաքական հարցերով զբաղվելու համար ռազմական ատյանը ինձ զրկեց զինվորական աստիճանից[5]։*

Նախագահ — *(խոսքն ուղղելով արձանագրող քարտուղարին)՝ կարդացե՛ք (քարտուղարը ընթերցում է)։*

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ՎՍԵՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

Այսօր ժամը 3.35-ին ռազմական արտակարգ ատյանի կողմից շտապ պահանջված 7 անձերից Ջեմալ բեյը հիվանդության պատճառով գտնվում է Գյումուշ խանեի հիվանդանոցում։

21—6—1335 թ.
[1919 թ. հունիսի 21]

Կալանատան տեսուչ կայմակամ Ալի

Նախագահ — *(խոսքն ուղղելով գլխավոր դատախազի օգնականին) էֆենդիներից մեկը հիվանդության պատճառով գտնվում է Գյումուշ խանեի հիվանդանոցում։ Տվե՛ք ձեր կարծիքը այդ մասին։*

Գլխավոր դատախազի օգնական Ֆերիդուն բեյ — *Պահանջում եմ նրա դատաքննությունը հետաձգել։*

Նախագահ — Դատաքննությունը հետաձգելու վճիռը հաստատվում է։ (Խոսքն ուղղելով քարտուղարին)՝ կարդացե՛ք։

(Արձանագրող քարտուղարը ընթերցում է մեղադրական եզրակացությունը)։

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներքին ապահովությունը վտանգելու ամբաստանությամբ տարբեր ժամանակներում կալանքի տակ են վերցվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավնի բեյը, վերակազմյալ կուսակցության Բեյօղլուի պատասխանատու քարտուղար Հասան Սելահեդդին բեյը, Անկարայի նախկին պատգամավոր Հիլմի բեյը, [կուսակցության] Բալուի պատասխանատու քարտուղար Բեսիմ Ջուհդի բեյը, կուսակցության Հալեպի պատասխանատու քարտուղար Մեհմեդ Ջեմալ բեյը, Կարահիսարի նախկին պատգամավոր Աղաօղլու Ահմեդ բեյը, Բրուսայի պատասխանատու քարտուղար կեսարացի դոկտ. Միդհատ բեյը, Սուարիի կայմակամությունից թոշակառու Մումթազ բեյը, Սինոպի նախկին պատգամավոր Հասան Ֆեհմի բեյը, Սարուխանի նախկին պատգամավոր և վերակազմյալ կուսակցության անդամ Սաբրի բեյը, Միրգունի ազգային պաշտպանության նախագահ՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղարի տեղակալ Ջևվդեթ բեյը, Ստամբուլի նախկին պատգամավոր Սելահեդդին Ջիմջոզ բեյը, էրզրումի նախկին պատգամավոր՝ ազգային գործակալության տնօրեն Հյուսեյն Թոսուն բեյը, Ստամբուլի բանկի ներկայացուցիչ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Սալոնիկի նախկին պատասխանատու քարտուղար Հասան Նամըք բեյը, Բրուսայի պատասխանատու քարտուղար Ալի Ռիզա բեյը, Կոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ Աբդուլ Քադիր բեյը, Կոնիայի նախկին վալի Սամիհ Ռիֆաթ բեյը, Կոնիայի ոստիկանության նախկին պետ՝ Սադեդդին բեյը, կուսակցության Կոնիայի նախկին ներկայացուցիչ՝ բեռնակիրների վերակացու Ֆերիդ բեյը, Ակշեհիրի Ջիհանբեյլի նահիյեի կառավարիչ Ֆեհմի բեյը, Ակշեհիրի քաղաքագլուխ Մյուֆթի զադե Ջյամիլ բեյը, Ակշեհիրի ոստիկանապետի նախկին տեղակալ՝ Սպարտայի բանտում կալանքի տակ գտնվող Հասան Բասրի բեյը, կուսակցության Աղաբազարի ներկայացուցիչ Համիդ բեյը, Հալեպի շրջակայքի չեթեների խմբի առաջնորդ Հյուսեյն Նեջատի բեյը, կուսակցության Սիվասի ներկայացուցիչ Ղանի բեյը, կուսակցության Բոլվադինի ներկայացուցիչներ Մյուֆթի Մեհմեդ Ալի, Հաջի Աթա և Կարակադը Հասան-Հյու-

սեյն բեյերը, կուսակցության էդիրնեի ներկայացուցիչ Աբդուլ Ղանի բեյը, (...)[6] էնվեր էֆենդիի հայրը՝ Հաջի Ահմեդ փաշան։

Վերոհիշյալ անձնավորություններին վերաբերող 1335 (1919) թվականի հունիսի 10-ի որոշման մի շարք կետերն ամբողջացնելուց հետո, դատարանի նախագահությանը և դատախազությանը հնարավորություն տրվեց զանազան փաստաթղթերի հիման վրա կազմելու մեղադրական եզրակացությունը։ Նախագահության որոշումով տեղի ունեցած ընդհանուր հետաքննությունից հետո պարզվեց, որ մեղադրյալ Ավնի բեյը Մանիսայում գտնվելու ընթացքում Հերդեմ, Իսմայիլ, Ջերքեզ Մեհմեդ և Հաջի Հասան անուններով մարդկանցից փոխառության մուրհակներ առնելու ընթացքում բռնություն է գործադրել և 1330 (1914) թվականի հուլիսին պատասխանատու քարտուղար նշանակվելուց հետո, անձամբ մասնակցել է 1332 (1916), 1333 (1917), 1334 (1918) թվականներին տեղի ունեցած կուսակցության համագումարներին։ Կուսակցության Հալեպի պատասխանատու քարտուղար Ջեմալ բեյը սահմանադրության հռչակումից հետո եղել է Կոնիայի և Հալեպի «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղարը։ Հասան Սելահեդդին բեյը 1329 (1912) թվականից սկսած կատարել է հիշյալ կուսակցության Ստամբուլի պատասխանատու քարտուղարի և Քեմալ բեյի գրասենյակի քարտուղարության պարտականությունները։ Միրգունի ազգային պաշտպանության նախագահությունում գտնվելու ընթացքում Ջևդեթ բեյը միաժամանակ փոխարինել է Միրգունի պատասխանատու քարտուղար Ֆերիդ բեյին։ Բեսիմ Ջուհդի բեյը 1330 (1914) թվականին պատասխանատու քարտուղար է եղել Աֆիոն Կարահիսարում, իսկ երեք տարի անց՝ Էսկիշեհիրում։ Միդհատ բեյը Բալկանյան պատերազմից հետո Բալուում ստանձնել է պատասխանատու քարտուղարի պաշտոնը և մինչև 1331 (1915) թվականի վերջը գտնվել է այդ պաշտոնում, իսկ հետագայում փոխարինել է Բրուսայի պատասխանատու քարտուղար Իբրահիմ բեյի տեղը նշանակված Նեսիմի բեյին։ Աբդուլ Ղանի բեյը սահմանադրության հռչակումից առաջ ստանձնել է կուսակցության էդիրնեի հսկիչի պարտականությունը։ Այսպիսով վերոհիշյալները մինչև կուսակցության լուծարքի ենթարկվելը զբաղեցրել են նշված պաշտոնները։

Սահմանադրության հռչակումից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը շարունակել է մնալ որպես քաղաքական կուսակցություն և ուժի դիրքերից ելնելով, երկրի կառավարումը վերցրել է իր ձեռքը։ Կուսակցության պատասխանատու քարտուղարներն իրենց գործունեության ընթացքում անընդհատ միջամտել և իրենց կամքն են

թելադրել պետական բոլոր գործերում, իսկ կարևոր հարցերն էլ լուծվել են կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշումներով։ Ընդունված հատուկ օրենքի համաձայն, այլ վայրեր տարագրվող [հայերի] քարավանները ոչնչացվել են ճանապարհին՝ կուսակցության կողմից ստեղծված քրեական հանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գույքն ու ունեցվածքը կողոպտվել և հափշտակվել է։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդները մի ներքին ահաբեկչական ուժ ստեղծելով՝ զանազան ձևերով այլափոխել են Օսմանյան կայսրության սահմանադրական օրենքները և իրենց քմահաճ գործարքներն իրականացրել են վիլայեթներում «պատասխանատու քարտուղարներ» և «լիազորներ» անվան տակ իրենց մարդկանց միջոցով։ Բացի այդ, հարստություն դիզելու մոլուցքով տարված, օգտագործել են պատերազմական իրավիճակը, և ժողովրդին խիստ անհրաժեշտ պարենի հարցում՝ զբաղվել չարաշահումներով և սպեկուլյացիայով։ Իրենց այս արարքին արտաքուստ օրինական ձև տալով՝ գործել են ըստ անձնական շահերի։ Ինչպես պարզաբանված էր վերոհիշյալ հունիսի 10 թվագրությունը կրող որոշման մեջ, այդ բոլորն իրենց խոստովանությամբ բացահայտվել էր նախնական հարցաքննության ընթացքում։ Առաջին հերթին ուշադրությունը բևեռվում է կատարված հանցագործությունների անմիջական մասնակիցների, իսկ այնուհետև նրանց հետ անուղղակիորեն կապ ունեցողների վրա։

Նրանց կատարած ոճրագործություններն առնչվում են քրեական օրենսդրության 45-րդ հոդվածի համաձայն 55-րդ հոդվածի վերջին մասին։ Միևնույն ժամանակ քրեական օրենսդրության 89, 204 հոդվածների համաձայն նրանք վերցվել են կալանքի, իսկ նրանց նկատմամբ հարուցված դատական գործը նպատակահարմար է եղել լսել ռազմական արտակարգ ատյանում։ Ինչ վերաբերում է մյուս մեղադրյալներին, ապա կուսակցությանը նրանց [ակտիվ] ծառայելու հարցը ակնհայտորեն չի ապացուցված, հետևաբար հիշյալների հետաքննությունը շարունակելու որևէ օրինական պատճառ գոյություն չունի։ Այդ թվում Համիդ բեյի՝ սահմանադրության հռչակումից հետո կուսակցության հետ առնչություն ունենալու հարցը չի պարզաբանված, ինչպես նաև Նեջատի էֆենդիի համագործակցությունը «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ և Բաբ-ը Ալիի[7] դեպքին նրա մասնակցություն ունենալու հարցը։ [Կուսակցության] Իզմիրի հսկիչ Իսմայիլ Հաքքը բեյը եղել է Ադաբազարի հարկային տեսուչը։ Իհսան Նամըք բեյը մինչև 1329 (1913) թվականի ապրիլ ամիսը եղել է Սալոնիկի «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը

պատկանող դպրոցի տնօրենը և կատարել է կուսակցության լիազորի պարտականությունը։ Այնուհետև ստանձնել է [քաղաքի] բանկի տեսուչի պաշտոնը և ներքին կանոնադրության համաձայն պահպանել է իր կապը կուսակցության հետ, բայց որոշակի ակտիվ համագործակցություն չի ունեցել։ Հիլմի բեյը 1330 (1914) թվականին ընտրվել է Անկարայի պատգամավոր և զբաղվել է առևտրի հարցերով։

Տեղահանության ընթացքում մի շարք մարդկանց դրամը, գույքն ու ունեցվածքը հափշտակելու և կոտորածին օժանդակելու հանցանշաններով մեղադրվում են Կոնիայի նախկին վալի Ռիֆաթ Սամիհ բեյը, Կոնիայի ոստիկանության նախկին պետ Սադեդդին բեյը, գյուղատնտեսության տեսուչ Թոտորաքի բեյը, Ակշեհիրի Ջիհանբեյլի Նահիեի կառավարիչ Ֆեհմի էֆենդին, Ակշեհիրի քաղաքագլուխ Մյուֆթիզադե Քյամիլ էֆենդին և Սպարտայի բանտում կալանքի տակ գտնվող ոստիկանապետի նախկին տեղակալ Հասան Բասրի էֆենդին ...[8]։

1919 թ. հունիսի 19

Նախագահ — (*Խոսքն ուղղելով մեղադրյալներին*) - Պարզվում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի և մնջլիսի անդամների գործադրած ոճրային արարքներին և այլ հանցագործություններին դուք ևս մասնակցություն եք ունեցել։ Այժմ ձեր մեղսակցությունն այդ հարցում քննվելու է գլխավոր դատախազության կողմից, ուշադիր եղե՛ք։

Գլխավոր դատախազի օգնական Ֆերիդուն բեյ — էֆենդիներ, դատարանում ներկա գտնվող մեղադրյալները եղել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից վիլայեթներում և սանջակներում նշանակված հատուկ լիազորներ։ Այս անձնավորություններն իրենց պաշտոնավարության ընթացքում «Միություն և առաջադիմություն» կուսակցության և կառավարության կողմից ստացված բանավոր կամ գրավոր հրամանների համաձայն սերտ միջամտություն են ունեցել կառավարության գործերին։ Այս մարդիկ մասնակցել են մեղադրյալ Թալեաթ փաշայի և նրա գործընկերների կատարած հանցագործություններին, որոնց նպատակն էր ուժի դիրքից շեղել պետությունն իր օրինական ուղուց։

Նրանց գործադրած հանցանքի չափը բացահայտվելու է սույն դատավարության ընթացքում։ Այս տեսանկյունից պահանջում եմ նրանց ենթարկել դատաքննության։

Նախագահ — (*Խոսքն ուղղելով մեղադրյալներին*)-Դատապաշտպաններ ունե՞ք։

Ալֆի բեյ — *Դեռևս չենք ընտրել։*

Նախագահ — *Այդ մասին նախապես հայտնել էինք. մի՞թե ձեզ չեն ասել։*

Ավնի բեյ — *Ո՛չ, չեն ասել։ Մենք տեղեկություն չունեինք։*

Սելահեդդին բեյ — *Մեծարգո փաշա, մենք այսօր իմացանք այդ մասին։ Կես ժամ առաջ հայտնեցին, որ ենթարկվելու ենք դատաքննության։ Ուստի հնարավոր չէր դատապաշտպան ընտրել։*

Նախագահ — *Դատաքննությունը հետաձգվում է մինչև երկուշաբթի, ժամը մեկը։*

Պատրաստ եղե՛ք։

Tekvim-i Vekayi, 21 Haziran 1335 (1919) № 3586

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ[9]

1335 թ. հունիսի 23, երկուշաբթի

Նախագահ — *(խոսքն ուղղելով մեղադրյալներին)* — *Այս էֆենդիներին դատապաշտպան ընտրել ե՞ք։*

Մեղադրյալներ — *Այո՛, էֆենդի։*

[Այնուհետև մեղադրյալները հարցաքննության են ենթարկվում մեկ առ մեկ]։

[Կուսակցության էդիրնեի[10] պատասխանատու քարտուղար Աբդուլ Ղանի բեյի հարցաքննությունը]

Նախագահ — *Էդիրնեում տեղահանություն տեղի ունեցա՞վ, թե՞ ոչ։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այո՛, էդիրնեում հայերին տեղահանեցին։*

Նախագահ — *Ինչպե՞ս տեղի ունեցավ։*

Աբդուլ Ղանի բեյ — *Տեղեկություն չունեմ։ Մի օր վաղ առավոտյան, երբ դեռ անկողնում էի, ինձ մոտ եկան մի քանի ծանոթ հայեր և սկսեցին պատմել տեղի ունեցած դեպքերի մասին. «Մերոնց մի մասին տարան, մյուսներին ևս տանելու են» ասելով, ինձանից օգնություն խնդրեցին։ Նրանք ինձ օժանդակել էին բուլղարների նվաճման ժամանակ[11]։ Ասացի, որ կդիմեմ վիլայեթի վարչություն և հնարավորին չափ կաշխատեմ օգնել։ Այնուհետև միասին գնացինք վիլայեթ։ Վալիին ասացի, որ նրանք ոչ մի առնչություն չունեն «Կոմիտեի»[12] հետ, որ անմեղ մարդիկ են և խնդրեցի նրանց տեղահանության չենթարկել։ Վալին ասաց. «Այս մարդկանց մասին ես էլ եմ մտահոգված, բայց հրամանը խիստ է և վերաբերում է բոլորին[13] (ընդգծումը մերն է Ա. Փ.) Հիմա այդ ուղղությամբ ջանք եմ գործադրում, գուցե կարողանամ մի բան անել»։ Այս*

խոսակցությունը նույնությամբ հայտնեցի իրենց։ Այդ մարդիկ տեղահանության չենթարկվեցին, բայց թե ինչպես եղավ, դա ես էլ չգիտեմ։

Նախագահ — *Շատ լավ, նախքան այդ հայերի ձեզ դիմելը, ոչ մի բան չէի՞ք լսել այդ մասին։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ոչ մի տեղեկություն չունեի։*

Նախագահ — *Չէ՞ որ տեղահանությունը նրանց գալուց առաջ էր տեղի ունեցել։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Մինչ այդ ոչ մեկը չէ՞ր տեղահանվել։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Շատ լավ, այդ մասին տեղեկանալուց հետո որևէ միջոց ձեռնարկեցիք արդյո՞ք «Միություն և առաջադիմություն» կուսակցության ձեր մասնաճյուղի մեջ։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ո՛չ փաշա, ոչ մի միջոց չձեռնարկեցինք։*

Նախագահ — *Բայց չէ՞ որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության մասնաճյուղերը միմիայն մահմեդական տարրերի համար չեն ստեղծվել, այլ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համար և բարի գործի համար աշխատողը ...*

Աբդուլ Ղանի բեյ — *Արդեն անունը «Օսմանյան» է։ Միայն «Միություն և առաջադիմություն» չէ ...*

Նախագահ — *Շատ լավ, տվյալ վայրից տեղահանվող հայերի նկատմամբ ի՞նչպես եղավ, որ ոչ մի միջոց չձեռնարկեցի՞ք։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, տեղահանությունը տեղի էր ունենում օրենքի հիման վրա։ Մենք կարո՞ղ էինք արդյոք հակառակվել պետության հաստատած օրենքին։*

Նախագահ — *Օրենքի մեջ այդպիսի բացահայտ բան կա արդյո՞ք։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ինչ-որ տեղահանության օրենք են ասում, դրա հիման վրա էին կատարում։ Այն գործադրվում էր տվյալ վիլայեթի վալիի կողմից, նույնիսկ ոստիկանության և ժանդարմի միջոցով։ Մենք ինչպե՞ս կարող էինք միջամտել։ Չէ՞ որ օրենք կար, ժանդարմ կար։*

Նախագահ — *Օրենքի մեջ ասված է, որ տեղահանությունը կատարվելու է ռազմական տեսանկյունից անհրաժեշտ եղած վայրերում։ Մի՞թե դուք չէիք նկատում, որ ձեզ մոտ դրա անհրաժեշտությունը չկար, և մի՞թե չէիք կարող դրա ավելորդ լինելու հարցը քննարկել և ինչ-որ բան ձեռնարկել այդ ուղղությամբ։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, ռազմականապես անհրաժեշտ լինելու կամ չլինելու մասին մենք ի՞նչ իմանայինք, որ դրա համեմատ*

որևէ մի բան ձեռնարկեինք: Վիլայեթը իր վալին ուներ, որը կառավարության ներկայացուցիչն էր: Օրենքի հիման վրա կատարվող այդ գործի համար մենք կա՞րող էինք արդյոք «իրավացի ես» կամ էլ «անիրավացի ես» ասել նրան:

Նախագահ — Վալին նույնպես հրաման էր ստացել: Այդ հրամանի անտեղի լինելու մասին կարող էր հայտնել:

Աբդուլ Ղանի բեյ — Մեզ այդպիսի բան չասաց: «Դուք ասացեք», «Գրեք ձեր կենտրոնին և դադարեցրեք տեղահանությունը» ասելով, երբևէ կարգադրություն չարեց: Վալին եթե ասեր, գուցե մենք էլ գրեինք այդ մասին: Մեծարգո փաշա, բոլոր դեպքերում, ես չեմ ասում, որ այդ բոլորը ճիշտ էին: Իրականում այդ հայերը կատարյալ պատվի տեր մարդիկ էին: Նրանք բուլղարների նվաճման ընթացքում փրկեցին բավականին [թուրք] սպայական ընտանիքներ: Այս բոլորը մենք շատ լավ տեսնում էինք: Էդիրնեն հանկարծակի հակառակորդի ձեռքն անցնելու ընթացքում բավականին ցավալի դեպքեր տեղի ունեցան: Ես ինքս վիրավորված վառվում էի հիվանդանոցում՝ ջերմության մեջ:

Նախագահ — Համենայն դեպս, այդքան տեղեկություն ունենալուց հետո, դուք պարտավոր էիք անձամբ դիմելու և ձեր ժողովում քննարկելուց հետո, բոլորդ միատեղ դիմեիք ...

Աբդուլ Ղանի բեյ — Մեծարգո փաշա, մեր ժողովներում նման հարցեր չեն քննարկվում: Ես ինքս վալիի մոտ չեմ գնացել, որպես «Միության և առաջադիմության» կուսակցության ներկայացուցիչ, այլ այդ [հայերի] արժանիքներն են ստիպել ինձ:

Նախագահ — Բայց և այնպես, օսմանցի որևէ մեկի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը լսելով, ինչպե՞ս է եղել, որ ոչ մի միջոց չեք ձեռնարկել:

Աբդուլ Ղանի բեյ — Այդ հարցը մեր ժողովի հետ առնչություն չունի: Դա բոլոր օսմանցիներին ուղղելու հարց է: Ինչու՞ եք միմիայն ինձ հարցնում:

Նախագահ — Ո՛չ, բոլոր օսմանցիներին չի վերաբերում: Հարցը [պատերազմական] գործողությունների ընթացքում հրամանատարների անհրաժեշտ գտած վայրերի տեղահանության մասին է:

Աբդուլ Ղանի բեյ — Ես հրամանատարների հետ որևէ կապ չեմ ունեցել:

Նախագահ — Ես չեմ ասում, որ ունեցել ես: Մի՞թե դուք չէիք հաստատում, որ էդիրնեի հայությունը բանակի կամ ռազմական գործողությունների հետ ոչ մի առնչություն չուներ:

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, էդիրնեն պատերազմական գոտու մեջ էր մտնում։*

Նախագահ — *Ամբողջ երկիրը պատերազմական գոտու մեջ էր։*

Աբդուլ Ղանի բեյ — *Գալիպոլիի[14] վրա հարձակվելու դեպքում կատարելապես պատերազմական գոտու մեջ էր գտնվելու, դրա համար էլ մենք ոչ մի բանի չէինք խառնվում։*

Նախագահ — *Էդիրնեից տեղահանվածները մեծ մասամբ դնացին դեպի Թեքֆուր լեռը[15], այդպես չէ՞։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այդ մասին կառավարությունը տեղյակ էր։*

Նախագահ — *Բնական է, որ դուք էլ գիտեիք այդ մասին։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այո՛, գիտեի։ Իզմիտի կողմից եւս դարձրին և մեծ մասը գնաց դեպի Թեքֆուր լեռը։*

Նախագահ — *Էդիրնեից հանելով՝ դեպի Թեքֆուր լեռը ուղարկելը արդյո՞ք ապահովում էր իրադրությունը։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, այդ արդեն վալիի գործն է։*

Նախագահ — *Շատ լավ, մի՞թե անհրաժեշտություն չկար վալիի անօրինական արարմունքի մասին զեկուցելու։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, ի՞մ մասին է խոսքը։*

Նախագահ — *Կուսակցության մասին է։*

Աբդուլ Ղանի բեյ — *Կուսակցության համար կարող էր անհրաժեշտ չլինել։ Մեր կուսակցությունը երբևէ չէր կարող միջամտել վալիի գործունեությանը։ Դրա անհրաժեշտությունը նույնիսկ չկար։ Եթե մի բան էլ նկատեր, ապա խնդրանքի ձևով կարող էր ասել։ Բոլոր կուսակցությունները այդպես են վարվում ...*

Նախագահ — *Ես հրամայելու նկատառումով չասացի։ Մուստաֆա փաշան հարցնում է,— «Բոլոր մահմեդականների օգտին» ասելով ի՞նչ եք հասկանում։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, ի՞նչը բոլոր մահմեդականների օգտին է։*

Նախագահ — *Մի քիչ առաջ ասացիք ...*

Աբդուլ Ղանի բեյ — *Ես այդպիսի բան չասացի։ Երբ դուք «Միություն և առաջադիմություն» ասացիք, ես էլ նշեցի, որ այդ իր մեջ ընդգրկում է բոլորին, քանի որ կրում է «Օսմանյան միություն և առաջադիմություն» անունը։*

Նախագահ — *Դուք չնկատեցիք արդյո՞ք, որ տեղի ունեցող այդ արարքները անօրինական են։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ի՞նչ արարքներ ...*

Նախագահ — *Էդիրնեի տեղահանությունը։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, ես այդ գործով չեմ զբաղվել Էդիրնեում, ուստի չգիտեմ այդ հարցում իրավացի էին, թե ոչ։ Ես չգիտեմ տեղահանվող հայերի մեջ կային արդյո՞ք այնպիսի մարդիկ, որոնք առնչություն ունենային «Կոմիտեի» աշխատանքների հետ կամ ձգտեին խափանել ռազմական գործողությունները։ Այս մասին անտեղյակ լինելու պատճառով չեմ կարող որոշակի կարծիք հայտնել։ Մեծարգո փաշա, ձեզ հայտնի է, որ ես Էդիրնեցի չեմ։ Ես Էդիրնեում եմ գտնվել պաշարման ժամանակ, այն էլ՝ վիրավոր վիճակում։ Բնակչության հետ շփում չեմ ունեցել, որպեսզի կարողանայի կարծիք հայտնել մարդկանց լավ կամ վատ հատկանիշների մասին։ Իմ իմացածը միայն այդ մի քանի պատվավոր մարդիկն են, որոնք կապալառու լինելու հանգամանքով հաճախ այցելում էին իմ պառկած հիվանդանոցը։ Էդիրնեն գրավելու ընթացքում նրանք բուլղարներից պաշտպանեցին մեր զինվորականների տներն ու ընտանիքները։ Այդ ժամանակ ես հասկացա, որ այդ մարդիկ կատարելապես լավ օսմանցիներ են։ Բուլղարական դրոշը բարձրացվելուց հետո, մի շարք մարդիկ, այդ թվում և քրիստոնյա մեր հայրենակիցները, բուլղարներից առավել, սկսեցին խաղալ մահմեդականների պատվի հետ։ Հակառակ այդ բոլորին, այս մարդկանցից ոչ մեկը նման արարք չգործադրեց։ Ուստի նրանց մասին ինչ որ գիտեի, գնացի և հայտնեցի վալիին։ Իսկ վալիի կատարած արարմունքի իրավացի կամ անիրավացի լինելը միայն ոստիկանության տեսուչը կարող է հայտնել։ Տվյալ ժամանակ ես բնավ չեմ զբաղվել կարգապահական հարցերով։*

Նախագահ — *Պատասխանե՛ք մեծարգո փաշայի հարցին։*

Հաճնճաժողովի անդամ՝ գեներալ-մայոր Ջեմի փաշա — *Այս արարքի իրավացի կամ անիրավացի լինելու հարցը հասկանալու համար փայլուն օրինակ է ձեզ ծանոթ պատվավոր մարդկանց տեղահանելու նախաձեռնությունը։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այդ նախաձեռնության հարցը ինձ համար մութ է։ Միտքս կխատ մնաց։ Նրանք եկան ինձ ասացին այդ մասին, ես էլ գնացի հայտնեցի վալիին։ Ինչպես երևում է, դրանից հետո տեղահանություն տեղի չունեցավ։ Ես չգիտեմ, գուցե, իմ բարեխոսելուց հետո այդ երկուսի տեղահանությունը չկատարվեց։*

Ջեմի փաշա — *Մի՞թե այդ արարքը լիովին չի բացահայտում տեղահանության իրավացի կամ անիրավացի լինելու հարցը։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ինձ նկատի ունեք, փաշա։ Ըստ իս, այդ արարքը բավարար չէ։ Այդ երկու հոգին արդեն տեղահանության չենթարկվեցին։*

Ջեֆի փաշա — *Այդ պատվավոր մարդկանցից երկո՞սը։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այո՛։*

Ջեֆի փաշա — *Այդ պատվավոր մարդկանց տեղահանության ենթարկելը անիրավացի մի արարք է։*

Աբդուլ Ղանի բեյ — *Հնարավոր է։*

Ջեֆի փաշա — *Քանի որ այդ արարքը օրինական չէ, ուրեմն այդ երկու հոգու համար էլ անիրավացի է։ Հետևաբար ձեր [շրջանային] կոմսակցությունը կարող էր հիշեցնել, կամ ինչ-որ այլ ձևով մերժել կառավարության կողմից անօրինական կատարվող այդ տեղահանությունները։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, այսուհանդերձ էդիրնեում համընդհանուր տեղահանություն տեղի չունեցավ։ Ես խնդրում եմ, որպեսզի դուք տարբերեք էդիրնեի դեպքը այլ վիլայեթներում տեղի ունեցած [տեղահանության և կոտորածի] հետ։ Տեղահանությունը առանձին գործ է։ Այդ մասին կառավարությունը օրենք հրապարակեց։ Ուրեմն կառավարությունը, մինիստրները հավանություն տվել են այս խնդրին, և ինչի հիման վրա հավանություն տալը չի առնչվում «Միության և առաջադիմության» կոմսակցության էդիրնեի մասնաճյուղի հետ ...*[16]։

[Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար դոկտ. Բեսիմ Չուճդի բեյի հարցաքննությունը]

Նախագահ — *Էսկիշեհիրում տեղահանություն տեղի ունեցա՞վ, թե՞ ոչ։*

Չուճդի բեյ — *Այո՛, բայց ես տեղյակ չեմ։*

Նախագահ — *Դուք այդտեղ չէի՞ք։*

Չուճդի բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Դրա հետևանքների մասին որևէ բան չե՞ք լսել։*

Չուճդի բեյ — *Մեծարգո փաշա, ինչի՞ մասին։*

Նախագահ — *Դուք չե՞ք լսել, արդյոք, որ հայերի տեղահանության ժամանակ վատ արարքներ են կատարվել, այսինչ ճամփով են գնացել, մի մասը կոտորվել է, մի մասի նկատմամբ բռնություններ են գործադրվել, նրանց ունեցվածքը կողոպտվել է և այլն։*

Չուճդի բեյ — *Մեծարգո փաշա, տեղյակ չեմ։*

Նախագահ — *Էսկիշեհիրում այդպիսի բաներ եղե՞լ են, թե՞ ոչ։*

Զուհդի բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Լքյալ գույքի մասին որևէ բան գիտե՞ք։*

Զուհդի բեյ — *Լքյալ գույքի հարցով զբաղվում էր «հատուկ հանձնաժողովը»։ Դրա համար էլ ես այդ հարցով չեմ զբաղվել։*

Նախագահ — *Նախքան էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար լինելը, ի՞նչ պաշտոն եք ունեցել։*

Զուհդի բեյ — *Կարահիսարում էի։*

Նախագահ — *Կարահիսարում պատասխանատու քարտուղար էի՞ք։*

Զուհդի բեյ — *Այո՛։*

Նախագահ — *Այդտեղ տեղահանության տեղի ունեցա՞վ, թե՞ ոչ։*

Զուհդի բեյ — *Այո՛, տեղի ունեցավ։*

Նախագահ — *Ինչպե՞ս տեղի ունեցավ։*

Զուհդի բեյ — *Տեղի կառավարությունը տեղահանության վերաբերյալ հրաման էր ստացել, և դրա հիման վրա տեղահանությունը կատարվեց։*

Նախագահ — *Բայց գիտե՞ք, որ բավականին բռնություններ են գործադրվել։*

Զուհդի բեյ — *Մեծարգո փաշա, ես տեղյակ չեմ։*

Նախագահ — *Մենք այդ բոլորի մասին տեղյակ ենք, որովհետև կարահիսարում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ մի գործ ունենք։*

Զուհդի բեյ — *Ես չեմ կարծում, որ Կարահիսարում այդպիսի բռնություններ են տեղի ունեցել, որովհետև ես ինքս այնտեղ էի գտնվում։ Բոլորն էլ գոհ էին։*

Նախագահ — *Ձեր գտնված տեղը Կարահիսար-ի Շարքին չէ՞ր*[17]*։*

Զուհդի բեյ — *Ո՛չ էֆենդի, Աֆիոն Կարահիսարն էր։*

Նախագահ — *Մինչև լքյալ գույքի հանձնաժողովի կազմվելը էսկիշեհիրում մի շարք անօրինական արարքներ են տեղի ունեցել։ Ինչպե՞ս է եղել, որ դուք այդ մասին տեղյակ չեք։*

Զուհդի բեյ — *Այդ բոլորը իմ ժամանակ տեղի չի ունեցել, դուցե իմ պաշտոնավարությունից առաջ է եղել։*

Takvim-i Vekayi, 23 Haziran 1335 (1919) № 3589

ԵՐՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1335 թ. (1919) հունիսի 28, շաբաթ

Նախագահ — *Աբդուլ Ղանի բեյը թող մնա, մյուսներին տարե՛ք։ (Աբդուլ Ղանի բեյից բացի, մյուս մեղադրյալները դուրս են հանվում*

պատարանի դահլիճից, այնուհետև նախագահը խոսքն ուղղելով արձանագրող քարտուղար Շեֆիք բեյին, ասում է)։

— Մի հեռագիր է ստացվել, կարդացե՛ք։

(Քարտուղարը կարդում է)։

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԱՏՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

Թերթերում կարդացինք «Միություն և առաջադիմություն» կուսակցության էդիրնեի պատասխանատու քարտուղար Արդուլ Ղանի բեյի դատավարության մասին։ Նրա տված ցուցմունքները բոլորովին չեն համապատասխանում իրականությանը։ Գոյություն ունեցող փաստերն ապացուցում են, որ ինքը մասնակցել է էդիրնեի հայերի տեղահանությանը։ Օրինակ, տեղահանվածների մի մասի գույքը հափշտակելուց հետո մյուսներինը վաճառել են իրենց մերձավորներին, այն էլ՝ իր արժեքի 2—3 տոկոսով։ Մեր կրած կորուստը չափազանց ծանր է։ Տարագրվածներից ետ են վերադարձել 100-ից միմիայն 30 տոկոսը։ Բոլորին հայտնի է, թե վերոհիշյալը ինչպիսի՞ ազդու ներգործություն է ունեցել տեղահանության հարցում։ Մենք խնդրում ենք արդարությունը միանգամայն քացահայտելու համար մի անկողմնակալ հանձնախումբ ուղարկել էդիրնե։

Լևոն Մերամեճյան, Կարապետ Յազըճյան, Արմենակ Կյուրճյան, Ալթունյան, Ալեքսան Ճըրըքյան, Հայկ Քյուրքճյան, Աստուր Բոզարճյան, Թաթէոս Օրալյան, Բյուզանդ Ջուալյան, Տիգրան Էսերյան, Գրիգոր Չաքըքյան, Արթին Օհանյան, Արթին Թերզյան, Շնորք Ավետիքյան, Խաչիկ Նազարյան։

Նախագահ — *Դուք ի՞նչ կասեիք այս հեռագրի մասին։*

Արդուլ Ղանի բեյ — *Ինչ ասեմ, այն ազգային ոխակալության արգյունք է։ Յուրաքանչյուր մարդ իր ուզածի պես կարող է արտահայտվել։ Այնուհանդերձ բոլորն էլ պարտավոր են իրենց ասածը փաստելու, այդպես չէ՞, մեծարգո փաշա։ Հետևաբար, նրանք պետք է, որ դատարան ներկայանան և ապացուցեն, թե ես ինչ ձևով առնչություն և ինչպիսի ազդեցություն եմ ունեցել տեղահանության վրա։ Մեծարգո փաշա, ես միշտ ասել եմ և կպնդեմ ճշմարտությունը, որ բոլորովին առնչություն չեմ ունեցել տեղահանության հետ և այդ առթիվ ոչ մի ազդեցություն չեմ բանեցրել, ապրանք չեմ վերցրել և ոչ էլ չարաշահել եմ իմ [պաշտոնը]։ Մեծարգո փաշա, նրանց ուղարկած հեռագիրը, ըստ էության, ինձ չի վերաբերում, այլ ուղղված է իմ ազգի հասցեին, որովհետև իմ միջոցով ուզում են դատապարտել իմ ազգը։*

Նախագահ — *Տեղահանության ընթացքում դուք էդիրնեում էի՞ք։*

Արդուլ Ղանի բեյ — *Այո՛, էդիրնեում էի։*

Նախագահ — *Դուք մշտապես այդտեղ էի՞ք գտնվում։*

Արդուլ Ղանի բեյ — *Երբեմն գալիս էի Ստամբուլ։*

Նախագահ — *Ինչու՞ էիք գալիս Ստամբուլ։*

Աբդուլ Ղանի բեյ — Թույլտվություն էի վերցնում։ Ընտանիքս այստեղ էր։ Բարեկամներս, աղգականներս նույնպես այստեղ էին գտնվում։

Նախագահ — Տեղահանությունը որքա՞ն տևեց։

Աբդուլ Ղանի բեյ — Ես ուշադրություն չեմ դարձրել դրան։ Ես ճիշտ եմ ասում, տեղահանության հետ առնչություն չեմ ունեցել։ Ճշմարտությունը կբացահայտվի այն ժամանակ, երբ այդ հարցումները ուղղվեն էդիրնեի վալիին, ոստիկանապետին, ժանդարմին, [տեղահանության] հանձնաժողովին։ Հետաքննչական հանձնաժողով են պահանջում էդիրնեից։ Ես էլ եմ ուզում։ Թող մի անկողմնակալ հանձնաժողով գնա և ամեն ինչ բացահայտի։

Նախագահ — (Խոսքն ուղղելով դատախազին) Այս հեռագրի կապակցությամբ որևէ հարց ունե՞ք։

Դատախազի օգնական Սաֆիք բեյ — Ո՛չ, մեծարգո փաշա, հետաքննչական հանձնաժողովի անհրաժեշտությունը չկա։

Նախագահ — Էդիրնեում տեղահանությունը երկար չի տևել։ Այդ կարճ ժամանակամիջոցում մի քանի անգամ Ստամբուլ գնալ գալը՞ ...

Աբդուլ Ղանի բեյ — Ո՛չ, էֆենդի, այդ մասին չգիտեմ։ Թեև թույլտաք տեղի ունեցածը կբացատրեմ։ Ինչ-որ կատարվում էր, ես տեղեկանում էի թերթերից։ Այլ վայրերում տեղահանության համար հատուկ օրեր էին նշանակում և մարդկանց զգուշացնում, որ 10—15 օր հետո ենթարկվելու են տեղահանության։ Մեծարգո փաշա, էդիրնեում այդպիսի բաներ տեղի չունեցան։ Ինչպես ասացի, մի առավոտ նկատեցինք, որ տեղահանություն է կատարվել։ Մի շարք վայրերում էդիրնեն սահմանամերձ գոտուց գտնվում էր 40—50 մետր հեռավորության վրա։«Կում» թաղամասում սահմանը գտնվում էր 50 մետր հեռավորության վրա, ուստի բավական թվով փախստականներ ելումուտ էին անում այդ կետերից։ Այս երևույթը կանխելու համար էլ տեղահանությունը գործադրվեց։ Կարծում եմ ամեն ինչ պարզ է։ Տեղահանությունը տեղի էր ունեցել մեկ գիշերվա ընթացքում։ Այդ մասին իմացանք առավոտյան։ Այնպես որ, տեղահանությունը ամիսներ չտևեց։ Այն գործադրվեց մեկ գիշերվա ընթացքում։ Մեծարգո փաշա, այդ օրը ես գտնվում էի էդիրնեում։ Ես չեմ թաքցնում իրողությունը։ Եթե տեղահանության ընթացքում էդիրնեում գտնվելը մի հանցանք է, ուրեմն տվյալ ժամանակ բոլոր այնտեղ գտնվողները մասնակից պետք է դառնային կատարված այդ հանցագործությանը։

Նախագահ — Բնական է, որ էդիրնեում գտնվելը չի կարող հանցանք համարվել։ Տեղահանության ընթացքում մի շարք բռնություն-

ներ են տեղի ունեցել, դուք թաքցնում եք այդ բոլորը՝ «չգիտեմ» ասելով։

Աբդուլ Ղանի բեյ — Ո՛չ փաշա, իմ չիմացած բանի մասին ի՞նչ կարող եմ ասել։

Նախագահ — Տեսե՛ք, դուք տեղահանության մասին իրազեկ եք, իսկ գործադրված բռնությունների մասին ձեզ անտեղյակ եք պահում։

Աբդուլ Ղանի բեյ — Մեծարգո փաշա, տվյալ ժամանակ Էդիրնեում ով գտնվեր, այդ տեղահանության մասին տեղյակ պիտի լիներ։ Ես հիմա ենթարկվում եմ հարցաքննության, ուստի այդ առթիվ ձեզ հայտնում եմ։ Թեև հիմա էդիրնեի քաղաքագլխին էլ բերեք, նա ևս նույն պատասխանն է տալու։ Հետո, էդիրնեի թաղերից մեկում գտնվող սրճարանապետ Հասան աղային էլ բերեք, նա ևս նույն պատասխանն է տալու։ Այս է իրողությունը։ Բացի այդ, «չարաշահում» են ասում, բայց չէ՞ որ այդքան ֆինանսական քննիչներ եկան և ստուգեցին։ Էդիրնեում կառավարական գործերը սովորական ընթացք են ունեցել։ Այս էլ բնական է, որ կառավարությունը բացահայտում է տեղի ունեցող չարաշահումները։ Ես ի՞նչ կարող եմ ասել այդ չարամիտ հեռագրի մասին։ Կառավարության կողմից կատարված հետաքննությամբ եթե ապացուցվի իմ հանցագործությունը, ապա այդ ժամանակ ես ոչ մի ասելիք չունեմ։ Էդիրնեն շատ մոտ է Ստամբուլին. նույնիսկ այդտեղ ինչ-որ կատարվում էր, Ստամբուլը անմիջապես տեղյակ էր լինում։

Նախագահ — Էդիրնեում տեղահանությունը այլ վայրերի նման տեղի չի ունեցել, այդպես չէ՞։ Էդիրնեում հայերի հետ տեղահանվել են նաև հույները։

Աբդուլ Ղանի բեյ — Էդիրնեո՞ւմ, փաշա. ո՛չ, այդպիսի բան տեղի չի ունեցել։

Նախագահ — Նրանք բոլորը միանգամից տեղահանվեցի՞ն։

Աբդուլ Ղանի բեյ — Էֆենդի, չեմ կարծում, որ էդիրնեում այդպես եղած լինի, լավ չեմ հիշում։ «Բալկաններին», «Իսթիրանջայի»[19] կողմերի ծովեզրյա շրջանի հույներին տեղափոխեցին մի այլ տեղ։ Այդ մասին ես այդպես եմ լսել։

Նախագահ — Էդիրնեից միայն հայերին տեղահանեցի՞ն։

Աբդուլ Ղանի բեյ — Այո՛, էդիրնեից միայն հայերին տեղահանեցին, այն էլ ոչ ամբողջովին։

Նախագահ — Ինչու՞։

Աբդուլ Ղանի բեյ — Ես այդ մասին չգիտեմ։

Նախագահ — Ասում են, որ հաճախակի Ստամբուլ գնալով, դուք հրահանգներ եք ստացել կենտրոնական կոմիտեից։

Աբդուլ Ղանի բեյ — *Ի՞նչ հրահանգ։*

Նախագահ — *Տեղահանության մասին։*

Աբդուլ Ղանի բեյ — *Տեղահանության ժամանակ ես ինքս տարին մեկ-երկու անգամ եմ եղել Ստամբուլում։ Այն տարի, երբ տեղի ունեցավ տեղահանությունը, ես սեպտեմբերին եկա [Ստամբուլ], որովհետև համագումար կար։ Ես համագումարի համար էի եկել։ Նույնիսկ ինձ հետ բերեցի իմ ընտանիքը։ Թույլտվություն վերցրի և մոտ 3 ամիս մնացի Ստամբուլում։ Տեղահանության վերաբերյալ ես հրահանգ չեմ ստացել։ Տեղահանության վերաբերյալ կենտրոնական կոմիտեից միայն մեկ անգամ գրություն եմ ստացել։ Ըստ իմ իմացածի, այդպիսի գրություն ստացան բոլոր [պատասխանատու քարտուղարները]։ Այն գրված էր «Ընդհանուրին» անվան տակ։ Բրուսայի լիազոր Իբրահիմ բեյը, ինչպես նաև մյուս պատասխանատու քարտուղարներից մի քանիսը, անունները չեմ հիշում, տուն գնելու համար կուսակցությունից հեռացվեցին։ Մի հրաման էլ եկավ, որտեղ ասված էր. «Ձգույշ եղե՛ք, ո՛չ մեկը ապրանք չվերցնի»։ Սրանցից բացի ո՛չ մի հրահանգ չեմ ստացել։*

Նախագահ — *Դուք էդիրնեում քննիչ էի՞ք։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այո՛։*

Նախագահ — *Որքա՞ն ժամանակ աշխատեցիք որպես քննիչ։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մինչև վերջ։*

Նախագահ — *Ձեր մասնաճյուղում ոչ մահմեդական անդամներ կա՞ին։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այո՛, կային, բայց ո՛չ կենտրոնական հանձնախմբի մեջ։*

Նախագահ — *Հապա որտե՞ղ։*

Աբդուլ Ղանի բեյ — *Շարքայիններիի մեջ։*

Նախագահ — *Ո՞ր ազգից։*

Աբդուլ Ղանի բեյ — *Հրեաներ էլ կային, այլ ազգերից էլ կային։*

Նախագահ — *Հայերից կա՞ին։*

Աբդուլ Ղանի բեյ — *Կարծեմ կային, բայց չեմ կարողանում հիշել, մեծարգո փաշա, շատ անուններ կային։ Բոլոր անդամների թիվը 1500-ից ավելի էր, դրա համար էլ չեմ կարողանում հիշել։ Ինչպես գիտեք, արտակարգ դրության պատճառով ժողովներ տեղի չէին ունենում, ուստի անդամների մեծ մասին չեմ ճանաչում։*

Նախագահ — *Այդ հայերից ոչ մեկը ձեզ չդիմե՞ց։ Տեղահանության վերաբերյալ որևէ բողոք կամ նախաձեռնություն ...*

Աբդուլ Ղանի բեյ — *էֆենդի, եկան դիմեցին և իրենց չտարագրելու համար միջամտեցինք, այս մասին առաջին հարցաքննության ժամանակ էլ ասացի։ Ուրիշ որևէ մեկը այդ հարցով չի դիմել։ Անձնական հարցերով անկուսակցական հայեր շատ են եկել մոտս։*

Նախագահ — *Ոչ մեկը չբողոքե՞ց։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ո՛չ, մեծարգո փաշա, մինչև հիմա ոչ մի բողոք չի եղել։*

Նախագահ — *Ինչ-որ մի հայ պատգամավոր է եղել էդիրնեից, որին արտաքսել են դեպի Թեքֆուր լեռը, ճանաչու՞մ եք նրան։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այո՛, մեծարգո փաշա, ճանաչում եմ։*

Նախագահ — *Այդ անձնավորությունն այդ ժամանակ աքսորվե՞ց։*

Աբդուլ Ղանի բեյ — *Այո՛, փաշա։*

Նախագահ — *Նա տարագրվել է իր ընտանիքի հետ։*

Աբդուլ Ղանի բեյ — *կարծում եմ, փաշա։*

Նախագահ — *Այդ պատգամավորի գույքն ու ունեցվածքը կողոպտվել, վաճառքի է ենթարկվել և ընդհանրապես ծայր աստիճան չարաշահումներ են եղել։*

Աբդուլ Ղանի բեյ — *Մեծարգո փաշա, կողոպուտից տեղեկություն չունեմ, բայց տեղահանվածների ամբողջ ունեցվածքը վաճառվեց։ Բնավ չեմ կարծում, որ նրանց ունեցվածքը ենթարկված լինի հափշտակության։ Ես երեք տարի պաշտոնավարել եմ տեղահանությունից հետո։ Այդ ժամանակ կողոպուտի մասին լսեցինք, հիմա ենք լսում։ Եթե քննություն կատարվի, կբացահայտվի, որ դա լոկ խոսակցություն է։*

Նախագահ — *Խոսակցություն է, թե ոչ, չգիտեմ, բայց իր խնդրագրում[20] ասում է. «...Չնայած որ աղջիկս զինվորականի կին էր, բայց միայնակ մնալով՝ ուղարկեցին այստեղ։ Մեր տան բոլոր կահկարասիները վաճառվեցին։ Ինքս էլ մի ծեր հոգևորական լինելով՝ զրկված էի ապրուստի բոլոր միջոցներից։ Չնայած որ դիմեցի վալիին և այլ անհրաժեշտ պաշտոնատեղիներ, բայց ոչ մի արդյունքի չհասա։ Ի վերջո աղջիկս մահացավ քաղցից»։ Տեսնում եք, մի ծեր քահանա տարիներով առանց ապրուստի է մնացել Թեքֆուր լեռում։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ես ի՞նչ կապ ունեմ դրա հետ։*

Նախագահ — *Հարցն այն է, որ դուք ճանաչել եք նրան։ Այսպիսի հարցով նա դիմել է արդյո՞ք ձեզ։*

Աբդուլ Ղանի բեյ — *Ո՛չ, չի դիմել։*

Նախագահ — *Նա դիմել է մի շարք պաշտոնատեղիներ, մի՞թե այդ հարցով ձեզ չի դիմել։*

Աբդուլ Դաճի բեյ — *Ո՛չ, մեծարգո փաշա։*

Նախագահ — *Այդպիսիների նկատմամբ մի՞թե անհրաժեշտ չէր օգնության ձեռք մեկնել։*

Աբդուլ Դաճի բեյ — *Իմ չիմացած բանի համար ինչպե՞ս օգնեի։ Ծժանդակության հարցով ինձ մոտ եկած որևէ մեկին, եթե հնարավորություն լիներ, ես կօգնեի։*

Նախագահ — *Խոսքը ոչ թե նյութական օգնության, այլ նման ծանր կացությունից փրկելու մասին է։ Շատ լավ, դուրս տարեք դահլիճից։*

[Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար Բեսիմ Ջունդի բեյի հարցաքննությունը]

Նախագահ — *Էսկիշեհիրում «Թեշքիլաթ-ը մահսուսե» կա՞ր, թե՞ ոչ։*

Ջունդի բեյ — *Չկար։*

Նախագահ — *Երբևէ կազմակերպվե՞ց։*

Ջունդի բեյ — *Ո՛չ։*

Նախագահ — *Տվյալ վայրը, գտնվում է բանուկ ճանապարհի վրա, տեղահանության ընթացքում ինչպիսի՞ տեսարանների ականատես եղաք կամ ինչպիսի՞ բողոքներ եղան։*

Ջունդի բեյ — *Ինչպես նախապես նշեցի, տեղահանության ընթացքում ես էսկիշեհիրում չէի, այլ Աֆիոն-Կարահիսարում, ուստի տեղյակ չեմ, թե ի՞նչ է տեղի ունեցել այնտեղ։*

Նախագահ — *Շատ լավ, վերադարձից հետո ի՞նչ իմացաք այդ մասին։*

Ջունդի բեյ — *Ես 1333 (1917) թվականին եկա։ Տեղահանության մասին ոչինչ չեմ լսել։*

Նախագահ — *Էսկիշեհիրում տեղահանություն տեղի ունեցել էր արդյո՞ք։*

Ջունդի բեյ — *Այո՛։*

Նախագահ — *Անշուշտ, դրա հետքերը պետք է որ նկատած լինեի՞ք։*

Ջունդի բեյ — *Ինչպիսի՞ հետքեր, փաշա։*

Նախագահ — *Շատերի խանութներն են փակվել, շատերի տան կահկարասին է վաճառքի ենթարկվել, շատերի տներն են բռնագրավվել։*

Ջունդի բեյ — *Դա տեղի է ունեցել ամեն տեղ։ Այդտեղ մի հանձնախումբ կար, երևի ստացած հրամանի համաձայն, դրսից եկող գաղթականներին[21] տեղահանված հայերի տներն էին տեղավորում։ Ես չգիտեմ փոխարենը մի բան վերցնում էին, թե՛ ոչ։*

Նախագահ — Նրանց հանդեպ ի՞նչ կարծիք ունեիք։ Այն, ինչ կատարվում էր, կարող է՞ր արդարացի համարվել։

Ջուդի բեյ — Այդ իմ պարտականության մեջ չէր մտնում, մեծարգո փաշա։ Ես չեմ զբաղվել։

Նախագահ — Մի՞թե երկրի ամբողջ բնակչության վերաբերող հարցերի քննարկումը ձեր պաշտոնավարության մեջ չէ՞ր մտնում։

Ջուդի բեյ — Մեծարգո փաշա, ես զբաղվում էի ժողովների գումարման հարցերով։

Նախագահ — Մի՞թե այդ հարցը ժողովի օրակարգ չէր կարող դառնալ։

Ջուդի բեյ — Այն մտնում է կառավարության պարտականության մեջ։

Նախագահ — Ես չեմ ասում, որ դուք ինչ որ բան ձեռնարկեիք, այլ այն, որ ձեր տեսած կամ լսած դեպքերն ի՞նչ միտք էին առաջացնում ձեր մոտ։ Դուք հավանություն տալի՞ս էիք կատարվող իրադարձություններին, թե՞ անտեղի արարք էիք համարում այն։

Ջուդի բեյ — Անկասկած, անտեղի արարք էի համարում։

Նախագահ — Այդ դեպքում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ կենտրոնական կոմիտեին կամ վիլայեթի ղեկավարությանը որևէ զեկուցագիր կամ բանավոր տեղեկություն տվեցի՞ք, թե ոչ։

Ջուդի բեյ — Ես անհրաժեշտ չէի գտնում այդ հարցի կապակցությամբ հարցում անել։ Ինձ թվաց, որ տեղահանության վերաբերյալ իմ կարծիքն եք հարցնում։

Նախագահ — Տեղահանության վերաբերյալ ձեր անձնական կարծիքը, եթե հայտնեք, ավելի լավ կլինի։ Դուք ինչպիսի՞ միջոցներ ձեռնարկեցիք երկրում կատարվող տեղահանությունների և կամ գործադրվող բռնությունների նկատմամբ։

Ջուդի բեյ — Մեծարգո փաշա, այդ խնդիրն իմ իրավասության մեջ չէր մտնում։ Ուստի այդ հարցի կապակցությամբ ոչինչ չեմ կարող ասել։

Նախագահ — Ես հարցը դնում եմ ոչ թե պաշտոնական պարտականություն ունենալու, այլ հայրենասիրական պարտքի զգացումից ելնելով կամ էլ ժողովների օրակարգ դարձնելու տեսանկյունից։

Ջուդի բեյ — Մեծարգո փաշա, ես ինքս լիազոր էի։ Գիտեք, որ լիազորի պարտականություններն այնքան էլ բարձր պաշտոն չի համարվում։ Այդպիսի գործերով զբաղվողները պետք է, որ օրենսդրական իշխանություն ունենան, այսինքն՝ պատգամավորներ կամ ծերակույտի անդամներ լինեն։

Նախագահ — Օրենսդրական իշխանությունը ձեր միջոցով տեղյակ պիտի լինի։ Նրանց ընտրել և այդպես թողնելը ճիշտ չէ։

Ջուդի բեյ — Ես ինքս չգիտեի, որ օրենսդրական իշխանությունը մեր միջոցով տեղյակ պիտի լինի այդ հարցերի մասին։

Նախագահ — Ես չեմ կարծում, որ այդ խնդրում չգիտենալու բան լինի։ Չէ՞ որ դուք մասնակցում եք օրենսդրական իշխանությունը կազմող պատգամավորների ընտրություններին։

Ջուդի բեյ — Անկասկած։

Նախագահ — Ուրեմն՝ ընտրելուց հետո պատգամավորներին օգնելը անհրաժեշտություն է։

Ջուդի բեյ — Մեր պարտականությունը միմիայն այն է, որ նրանց շատ ձայն տրվի։

Նախագահ — Բայց չէ՞ որ նրանց քաջալերողներին է վերաբերվելու լավ կամ վատ պաշտոնավարության ընթացքում ձեռք բերված թե՛ հաջողությունն և թե՛ ամոթանքը։ Չէ՞ որ դուք ներքին կարգով դիմում եք ժողովրդին, որ «այս մարդը արժանի է երեսփոխան ընտրվելու համար»։ Այնպես որ, տվյալ անձնավորության լավ պաշտոնավարության համար մի՞թե այդ թաղամասից օժանդակություն ցույց տալը անհրաժեշտություն չէր։ Այդպիսով, ձեր ջանադրությամբ ընտրված պատգամավորներին ձեր կողմից թեկուզ և մի փոքր տեղեկություն տալը, կարծում եմ, որ լավ բան կլիներ, քանի որ նրանք իրենց հերթին կօգնեին և կբարեխոսեին մինիստրներին։ Այդպիսի բան տեղի ունեցավ, թե՞ ոչ։

Ջուդի բեյ — Ո՛չ, էֆենդի։

Նախագահ — Վերջապես, գիտեք ինչ, [մարդիկ] եկել են այն համոզման, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության մի շարք ղեկավարների նախաձեռնությամբ տեղի ունեցած տեղահանության և կոտորածի հարցում եթե մասնաճյուղերը օժանդակություն ցույց չտային նրանց, ապա այդ աստիճանի ողբերգություն տեղի չէր ունենա։ Հետևաբար, նշվում է, որ կուսակցության մասնաճյուղերն անուղղակի մասնակցություն են ունեցել [տեղահանությանը և կոտորածներին]։ Իսկ մասնաճյուղերի պատասխանատվությունն էլ ընկնում է լիազորների և քարտուղարների վրա։ Ի՞նչ կասեք այդ մասին։

Ջուդի բեյ — Ես չեմ կարծում և չեմ էլ հիշում, որ իմ գտնված վայրերում տեղահանությունների ընթացքում դեպքեր պատահած լինեն։

Նախագահ — Կարող է պատահել, որ տեղահանությունը ձեր գրանըված վայրերում էլ տեղի է ունեցել։ Ինչպես երևում է, հարցը լավ

չկարողացա ձևակերպել։ Այսպես, ասում են, որ տեղահանությունների ընթացքում բավականաչափ կոտորածներ, կողոպուտ և հափշտակություններ են եղել։ Դա հաստատվեց նաև այստեղ տեղի ունեցած մի շարք դատաքննություններում։ Այնպես որ, այդ ողբերգությունը շատ սահմանափակ ձևով կկատարվեր, եթե մասնաճյուղերը միահամուռ կերպով չհամագործակցեին [կենտրոնական կոմիտեի] հետ։ Մեղավորներն իրենց պատիժը կկրեին, և այս հարցն էլ այսքան երկար չէր ձգձգվի։ Այսպիսով, դուք էլ, մասնաճյուղի լիազոր և պատասխանատու քարտուղար լինելով հանդերձ, մասնակցություն եք ունեցել այդ գործին։ Ի՞նչ կասեիք այդ մասին։

Զուիդի բեյ — Մեծարգո փաշա, ձեր բացատրությունից ես հասկացա, որ տեղահանության հետևանքով մի շարք կոտորածներ և այլ բաներ են տեղի ունեցել, և այդ բոլորը խրախուսվել է մասնաճյուղի կողմից...։

Նախագահ — Կամ էլ օժանդակություն է ցույց տրվել։

Զուիդի բեյ — Այո՛, կամ էլ օժանդակություն է ցույց տրվել, ես այդպես էլ հասկանում եմ։ Ուրեմն՝ իմ շրջանում տեղի ունեցած տեղահանության ընթացքում կոտորած և այլ բռնություններ չլինելու պատճառով ակներև է դառնում, որ այդ խնդրին մասնակցություն կամ ազդեցություն չեմ ունեցել։

Նախագահ — Ես մի քիչ առաջ հարցրեցի, Էսկիշեհիրում ձեր տեսած կամ լսած վատ արարքների մասին որևէ դժգոհություն հայտնեցի՞ք, կամ բողոքարկեցի՞ք, թե՞ ոչ։ Այդ մասին ասե՛ք։

Զուիդի բեյ — Չեմ արել։

Նախագահ — Ձեզ նման լիազորները և պատասխանատու քարտուղարները, եթե բողոքեին, ապա ակնհայտ է, որ այդ խնդիրը այդպիսի լայն ծավալ չէր ընդունի։ Ինչո՞ւ որևէ միջոց չձեռնարկեցիք։ Գիտեք, որ անտարբերության համար դուք ևս անուղղակի կերպով մասնակից եք համարվում [հանցագործությանը]։

Զուիդի բեյ — Ես չեմ կարծում, որ քարտուղարի պաշտոնը երկրի կառավարման համար պատասխանատվություն կրի։

Նախագահ — Ոչ թե երկրի վատ կառավարման համար, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից կատարված վատ արարքների կապակցությամբ։

Զուիդի բեյ — Այդ արարքը ոչ թե «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից է կատարված, այլ՝ կառավարության կողմից։

Նախագահ — *Մի՞թե կառավարությունն այդպիսի վատ արարքներ կկատարեր։ Ասացե՛ք, այդ վատ արարքները կառավարության ո՞ր պաշտոնյայի կողմից կարող էր կատարվել։*

Զունդի բեյ — *Այն կատարվեց տեղահանության կանոնադրությամբ։*

Նախագահ — *Օրենքով կատարված գործողությունների համար ոչ մեկին պատասխանատվության չենք ենթարկում։* Իրականությունն այն է, որ տեղահանության քողի տակ կոտորած են սարքել *(ընդգծումը մերն է— Ա. Փ.)։ Ահա այս արարքի համար է, որ պատասխանատվության եք ենթարկվում։*

Զունդի բեյ — *Իմ իրավասության տակ գտնվող վայրում, եթե այդպիսի բան տեղի ունենար, իմ խղճի թելադրանքով ես կդիմեի, բայց ինձ մոտ այդպիսի բան տեղի չի ունեցել։*

Նախագահ — *Այն ժամանակ, երբ դուք էսկիշեհիր եկաք, ձեր տեսածն արդյոք բոլորովին չազդե՞ց ձեր վրա։*

Զունդի բեյ — *Ես 1333 (1917) թվականին եկա։ Նախկին իրավիճակը վերականգնվել էր։*

(Նախագահի թելադրանքով Զունդի բեյը դուրս է հանվում դահլիճից)[22]։

[Բրուսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյի հարցաքննությունը]

Նախագահ — *Այսուհանդերձ Բրուսայում տեղահանություն կատարվել է և նույնիսկ մի շարք բռնություններ են տեղի ունեցել։*

Միդհատ բեյ — *Այո՛։*

Նախագահ — *Դուք իրազեկ ե՞ք դրանց մասին։*

Միդհատ բեյ — *Մեծարգո փաշա, ես այնտեղ գնացի մեկ տարի հետո։*

Նախագահ — *Շատ լավ, թող մի տարի հետո լինի։ Ոչ մի բան չլսեցի՞ք։*

Միդհատ բեյ — *Այդ ընթացքում կառավարությունը քննող հանձնաժողով էր ուղարկել, որն արդեն ավարտել էր իր ստուգումները։ Տեղահանության մասին ոչ մի հարցադրում չէր եղել։ Իմ այնտեղ գտնվելու ընթացքում ո՛չ մի բողոք, ո՛չ մի վատ արարքի համար բողոքարկում չէր եղել*[23]։

Նախագահ — *Ասում են, որ Բրուսայում տեղահանված հայերի տների ավերածությունները չափազանց ակնհայտ են եղել։*

Միդհատ բեյ — *Այո՛։*

Նախագահ — *Ինչպե՞ս է լինում, որ դուք չեք տեսել։*

Միդհատ բեյ — *Մեծարգո փաշա, հայերի լքյալ գույքը գտնվում էր պետական կալվածատիրական հիմնարկության պաշտոնյաների իրավասության տակ։ Ուստի, մենք դրա հետ առնչություն չոնեինք։ Իսկ այնտեղ տեղավորել էին գաղթականներին։ Անկասկած այդ ավերածությունները կատարվել են գաղթականների կողմից։ Այդ շինություններ համար պատասխանատվությունը ընկնում էր պետական պաշտոնյաների և պահակների վրա։ Նրանք էին զբաղվում այդ խնդրով։*

Նախագահ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, քանի որ հայրենիքին ծառայելու պարտականություն էր ստանձնել, ուրեմն, երկրի ընդհանուր առաջընթացին և բարգավաճմանը խանգարող այս խնդրում չպետք է անտարբեր մնար։*

Միդհատ բեյ — *«Միություն և առաջադիմություն» կուսակցության լիազորները ոչ մի պատասխանատվություն չունեն, հետևաբար, ոչ մի ծառայություն ...*

Նախագահ — *Գործադրման տեսանկյունից այդպես է։ Բայց և այնպես նրանք[24] կարող էին իրենց վերադասին զեկույց ներկայացնել կամ էլ հետագայում համագումարի համար ինչ-որ բան պատրաստել։*

Միդհատ բեյ — *Մեծարգո փաշա, համագումարի հարցերով ես չեմ զբաղվել։*

Նախագահ — *Ոչ մի միջոց չձեռնարկեցի՞ք։*

Միդհատ բեյ — *Մեծարգո փաշա, ո՛չ։*

Նախագահ — *Դրա՞ համար էլ մեղադրական եզրակացությունում ասված է. «Միություն և առաջադիմություն» կուսակցության մասնաճյուղային լիազորները, իր ժամանակին, եթե այդ բռնությունների մասին հայտնած լինեին իրենց վերադասին և արգելեին դրանք, այդ բռնությունները տեղի չէին ունենա, և կոտորածն այդ աստիճան լայն ծավալ չէր ընդունի։ «Միություն և առաջադիմություն» կուսակցության մի շարք ղեկավարների կատարած հանցագործություններին անուղղակիորեն մասնակցություն ունենալու համար մասնաճյուղային քարտուղարները ևս պատասխանատվություն են կրում։*

Միդհատ բեյ — *Մեծարգո փաշա, ես ինքս պատասխանատու քարտուղար եմ և ոչ մի ժամանակ այդ հանցագործությանը անձամբ չեմ մասնակցել։ Իմ հանդեպ ոչ մի բողոքարկում չի եղել։ Պատասխանատու քարտուղարները գործադիր իշխանություն չեն ունեցել։ Եթե տեղահանության ընթացքում բռնություններ և կամ լքյալ գույքի նկատմամբ*

չարաշահումներ են եղել, ապա այդ բոլորի համար պատասխանատու են պետական պաշտոնյաները և անհրաժեշտ է, որ նրանք պատիժ կրեն։ Այնպես որ, պատասխանատու քարտուղարներն այդպիսի խնդրի հետ չեն կարող առնչություն ունենալ։ Ըստ իս, ես կապ չեմ ունեցել։

Նախագահ — Պատասխանատու քարտուղարները մի՞թե տվյալ մասնաճյուղի գործունեությունը չեն ղեկավարում։

Միդհատ բեյ — Ո՞ր մասնաճյուղի, մեծարգո փաշա։

Նախագահ — Օրինակի համար Բրուսայի «Միություն և առաջադիմություն» կուսակցության մասնաճյուղը։ Այս մասնաճյուղն ուներ իր կենտրոնը, ուներ իր անդամներն ու ղեկավարները։ Նրա գործունեության ղեկավարումը մի՞թե պատասխանատու քարտուղարի ձեռքին չէր։

Միդհատ բեյ — Այո՛, ղեկավարում էր, բայց ինքը պետական գործերին միջամտելու իրավասու չէր։

Նախագահ — Հարցը կառավարության գործերին չմիջամտելու մասին չէ։ Ասում են, որ ձեր գտնված վայրում և ընդհանրապես այլ տեղերում էլ այդպիսի վատ արարքներ են տեղի ունեցել և դրանց հանդեպ քանի որ ոչ մի միջոց չեք ձեռնարկել, ուրեմն, դրանով խրախուսել եք նախաձեռնողներին և ընթացք եք տվել նրանց կատարած դաժանությունների ծավալմանը։

Միդհատ բեյ — Ես անձնապես, եթե իրազեկ լինեի, գուցե միջոցներ ձեռնարկեի։ Սակայն, մեծարգո փաշա, ես նման քայլի չեմ դիմել որովհետև տեղյակ չեմ եղել ոչ մի վատ արարքի։

Նախագահ — Նույնիսկ ոչ մի տեղեկություն չունենալու դեպքում էլ, չէ՞ որ դուք Բրուսայում տեսել էիք տների ավերածությունները։

Միդհատ բեյ — Գաղթականները տիրացել էին լքյալ գույքին։ Իսկ գաղթականությունը ուներ իր տեսչությունը, կար նաև պետության կողմից նշանակված վալին։ Հետևաբար, եթե ավերածություններ են տեղի ունեցել, ուրեմն՝ դրանք կատարվել են գաղթականների կողմից։ Այնպես որ, պատժել է պետք գաղթականների գործով զբաղվող անձանց։

Նախագահ — Իսկ ինչու՞ իմ տված հարցին չեք պատասխանում։ Դուք ավերածություններ չտեսա՞ք։

Միդհատ բեյ — Տեսա, մեծարգո փաշա։

Նախագահ — Շատ լավ, եթե տեսաք, ինչու՞ գոնե մեկ անգամ չդիմեցիք վալիին և կամ գաղթականների տեսչությանը։ Ինչ է, նրանք իրավասություն չունեի՞ն։

Միդհատ բեյ — *Ես անձամբ առնչություն չունեմ, այն իմ պարտականության մեջ չէր մտնում։*

Նախագահ — *Մի՞թե ձեր պարտականության մեջ չէր մտնում ձեր վերադասին հայտնել երկրում տեղի ունեցած ամեն մի պատահարի կամ ձեր կողմից իմացած վատ արարքների մասին։*

Միդհատ բեյ — *Հայտնել էր պետք, բայց մեծարգո փաշա, այդ հարցերով անձամբ չեմ զբաղվել։*

Նախագահ — *Ստացվում է այնպես, որ ցանկություն չեք ունեցել այդ անելու։*

Միդհատ բեյ — *Այդ վատ արարքներին, եթե իրազեկ լինեի, արգելք կհանդիսանայի, բայց իրազեկ չլինելու պատճառով բնական է, որ ...*

Նախագահ — *Ձեր տեսած այդ ավերված տները մի՞թե վատ արարքների հետևանք չէին։*

Միդհատ բեյ — *Մեծարգո փաշա, դրանց հետ առնչություն ունեցող պետական պաշտոնյաներ կային։*

Նախագահ — *«Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի համար Բրուսայից մի շարք մարդկանց եք ուղարկել։ Այդ մարդիկ ի՞նչ նպատակի համար հավաքագրվեցին և ի՞նչ պայմանով ուղարկվեցին։ Չգիտե՞ք։*

Միդհատ բեյ — *Մեծարգո փաշա, չգիտեի, ես Բրուսա եմ եկել 1337 (1918) թվականին։*

Takvim-i Vekayi, 28 Haziran 1335 (1919) № 3596

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[25]

Նախագահ՝ գեներալ-մայոր Էսադ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի փաշա,
գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա,
գնդապետ Սուլեյման Շաքիր բեյ։

«ԻԹԹԻՀԱՏ ՎԵ ԹԵՐԱՔՔԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները — *Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավնի բեյ, Բեյօղլուի պատասխանատու քարտուղար Հասան Սելահեդդին բեյ, Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար դոկտ. Բեսիմ Զուհդի բեյ, Բրուսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյ, Միրգունի պատասխանատու քարտուղարի տեղակալ Ջեվդեթ բեյ, Հալեպի պատասխանատու*

քարտուղար Ջեմալ բեյ, էդիրնեի քննիչ Աբդուլ Ղանի բեյ, Կոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ Աբդուլ Քադիր էֆենդի, Կաստամոնուի պատասխանատու քարտուղարի տեղակալ Հասան Ֆեհմի էֆենդի, Կարահիսարի սանիտարական հանձնաժողովի նախկին նախագահ Ակյահ բեյ, Կարահիսարի նախկին պաշտոնյա Հայրեդդին բեյ։

Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին բոլոր դատական փաստաթղթերն ու արձանագրությունները։

Պարզվեց, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղարներն ու լիազորները զինադադարից անմիջապես հետո, գրեթե երկրի բոլոր շրջաններում ծավալել են երկպառակտչական քայքայիչ գործունեություն, սանձարձակորեն սկսել են խռովություններ առաջացնել ժողովրդի մեջ, խանգարել մարդկանց անդորրը։ Հայրենիքը հասցրել են կործանման եզրին։

Հետաքննչական փաստաթղթերի հիման վրա ներքին գործերի մինիստրությունը հավանություն էր տվել նրանց կալանքի տակ առնելու և Ստամբուլի ռազմական ատյանի քննության ուղարկելու որոշմանը։

Վերոհիշյալ պատասխանատու քարտուղարների և լիազորների հարցաքննություններից պարզվեց, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, ամբողջ երկրի կառավարումն իր ձեռքը վերցնելուց հետո, երկիրը ներքաշել է համաշխարհային պատերազմի մեջ, կատարել տեղահանություններ, կոտորածներ և կողոպուտ։ Միևնույն ժամանակ զբաղվել է առևտրի չարաշահումներով, և այլ անօրեն գործարքներով քայքայել է Օսմանյան կայսրության հզորությունը, երկիրը հասցրել ծայրաստիճան թշվառության ...։

Տեղահանված հայերի մի քանիսի բնակարաններն ակումբի վերածելով կահավորել են լքյալ գույքով։ Ընտրությունների ընթացքում փոխանակ արդար մոտեցում ունենալու, բռնել են անիրավությունների ուղին և, ուժի դիրքից ելնելով, բազմիցս միջամտել են կառավարության գործերին և ճնշումներ գործադրել ժողովրդի վրա։ Հակառակ այս ահաբեկչական քաղաքականությանը, սակավաթիվ են եղել այն մարդիկ, որոնք համարձակվել են օրինականությունը պաշտպանել, սակայն [կենտրոնական կոմիտեի անդամները] տարբեր ձևերով սպառնացել

են նրանց։ Եվ, վերջապես, սահմանադրությունը խախտելով՝ ստեղծել են նմանը չունեցող մի քմահաճ կառավարություն։

Նպաստ հավաքելիս և ներքին փոխառության տոմսեր վաճառելիս պատասխանատու քարտուղարները, կառավարության աչքի առաջ շարաշահելով իրենց դիրքը, բռնություններ են գործադրել և հակառակ օրենքի կալանավորել, բանտարկել են այնպիսի մարդկանց, որոնք հանդգնել են բողոքել հավելյալ արժեքով վաճառք կատարողների դեմ։

[Պատասխանատու քարտուղարները] մասնակցել են պետության գործերին միջամտող «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կատարած վնասաբեր հանցագործություններին։ Նրանք հատկապես մասնակցել են տեղահանություններին, կոտորածներին և հափշտակված, կողոպտված ապրանքների շնորհիվ դիզել հսկայական հարստություն։ 1331 (1915) թվականի մայիսի 14-ին տեղահանության վերաբերող հրապարակված ժամանակավոր օրենքն օգտագործել են անձնական շահույթ ձեռք բերելու նպատակով։ Վերջնականապես բացահայտված է, թե ինչպես վերոհիշյալ պատասխանատու քարտուղարներից և լիազորներից մի քանիսը նպաստել և օժանդակել են կենտրոնական կոմիտեի ծրագրին և իրենց մասնաճյուղերում հավաքագրված մարդասպանների և այլ հանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը և կողոպտել նրանց ունեցվածքը։ Զբաղվել են հարստահարությամբ և տիրացել նրանց լքյալ գույքին։

Մյուս դատավարությունների ընթացքում նշվեց, որ կենտրոնական կոմիտեի անդամ և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյը էրզրումից՝ Խարբերդի պատասխանատու քարտուղար, այժմ փախուստի մեջ գտնվող Ռեսնելի Նազըմ բեյին առաքված ծածկագիր հեռագրում գրել է. «Ձեր միջոցով ուղարկվող հայերը ոչնչացվում են, թե ոչ»։ Իսկ Յոզղաթի լիվայում և Բողազլյանի կազայում տեղի ունեցած կոտորածի փաստաթղթերից, ինչպես նաև մեր ռազմական ատյանում տեղի ունեցած դատաքննություններից բացահայտվեց, որ Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջատի բեյի կողմից Յոզղաթի նախկին մութասարրիֆ Ջեմալ բեյին առաջարկված է եղել չհակառակվել հայերի բնաջնջման խնդրին։ Իսկ վերոհիշյալ Ջեմալ բեյի պաշտոնանկությունից հետո Բողազլյանի կայմակամ, ներկայումս կախաղան բարձրացված Քեմալը նշանակված էր եղել Յոզղաթի մութասարրիֆի պաշտոնին։

Բերված փաստերից պարզորոշ երևում է, որ Կաստամոնուի շրջանի հայերը, ընդհանուր բնակչության թվի հետ համեմատած, շատ

քիչ տոկոս են կազմել, և տեղահանության օրենքի համաձայն նրանք չպետք է ենթարկվեին տարագրության։ Այնուհանդերձ, այն ժամանակ, երբ Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան, ըմբոստանալով տեղահանության դեմ պնդել է, հետևյալ խոսքերով՝ «Ես իմ ձեռքերս արյան մեջ չեմ թաթախի», վերջինս իսկույն հեռացվել է պաշտոնից՝ նույն Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդիի նախաձեռնությամբ և առաջարկով, իսկ նրա տեղ նշանակվել է Աթիֆ բեյը, որը և եռանդագին իրագործել է տեղահանությունը և պատճառ հանդիսացել ողբերգական իրադարձությունների։

Այս նույն ձևով էլ Միդհատ բեյը, գնալով Ստամբուլ, ըմբոստության համար հեռացնել է տվել պաշտոնից Բալուի մութասարրիֆի տեղակալ Ալի Իլմի բեյին։ Իսկ Բալուի տեղահանության ընթացքում պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյը ժողովրդին հորդորել է, ասելով, որ «հայերին չենք ուղում» և իր հրահանգով և ներգործությամբ իրականացվել է Բալուի տեղահանությունը։

Ահա այս ձևով և օրենքի բուն ոգուն հակառակ, տեղահանությունը համատարած կերպով ծավալվել է բոլոր շրջաններում և առաջ բերել ողբերգական ծանր իրավիճակ։ Բոլոր ապացույցներն ու փաստերը լիովին հաստատում են, որ կոտորածները անմիջականորեն իրականացվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության ստեղծած «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի կողմից, իսկ պատասխանատու քարտուղարները իրենց մասնակցությամբ նպաստել ու հեշտացրել են այդ գործը։

Այսպիսով, կատարված հանցագործությունները բոլոր ամբաստանյալներին հավասար չափով չի կարելի վերագրել։ Նրանց մասնակցության չափն ու աստիճանը բացահայտելու համար անհրաժեշտ եղավ ուշադրություն դարձնել յուրաքանչյուրի առանձին կատարած հանցանքին։

Ըստ վկաների տված ցուցմունքի, Կաստամոնուի նախկին վալի Ռեշիդ փաշան հեռացվել է իր պաշտոնից նույն Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդիի[26] նախաձեռնությամբ։ Հասան Ֆեհմի էֆենդին մահմեդական ժողովրդին շարունակաբար հրահրել է հայերի դեմ, ասելով, որ մեր վալին ամբողջ հայության վալին է, ավելի ճիշտ անհավատների վալին է։ Այսպիսի զառանցագին խոսքերով խռովություններ է սերմանել ժողովրդի մեջ. միջամտել է պետական պաշտոնյաների գործերին և նույնիսկ համարձակվել է իր անձնական նախաձեռնությամբ նրան վտարել պաշտոնից և վիլայեթից էլ հեռաց-

նելու պահանջով ծածկագիր հեռագիր է ուղարկել ներքին գործերի մինիստրությունը։

Մի այլ վկա՝ զորացրված մայոր Իսմայիլ Հաքքը բեյը հայտնել է, որ ըստ իր լսածի, Հասան Ֆեհմի բեյը եղել է այն անձնավորություններից մեկը, որոնք յուրացրել են [հայերի] լքյալ գույքից բավականաչափ արժեքավոր ապրանքներ։

Մեկ ուրիշի, հանգուցյալ մարշալ Ասաֆ Փաշազադե Ջեմալ բեյի վկայությամբ, Հասան Ֆեհմի էֆենդու տան մեջ և ակումբի հրկիզման ընթացքում ի հայտ եկած ապրանքները անհերքելի ապացույց են, թե նա ինչպիսի չարաշահումներ է թույլ տվել լքյալ գույքի կողոպտման խնդրում։ Իսկ տեղահանությունը գործադրվել է նրա և վալի Աթիֆ բեյի սերտ համագործակցությամբ։

Մի այլ վկայի՝ Վահիդ էֆենդիի ցուցմունքով, նույնպես ապացուցվում է, որ Հասան Ֆեհմի էֆենդին եղել է տեղահանության անմիջական կազմակերպիչն ու գործադրողը և լքյալ գույքի կողոպտիչներից մեկը։

Իններորդ կանոնավոր զորագնդի հրամանատարությունից թոշակի անցած և այնուհետև կայմակամի պաշտոնը ստանձնած Խուրշիդ բեյի դեկուցագրում նշված է, որ Հասան Ֆեհմի էֆենդին միջամտել է պետական գործերին, իսկ Աթիֆ բեյը վալիության պաշտոնը ստանձնելուց հետո [Կաստամոնուի վիլայեթի] ամբողջ կառավարումը վերցրել է իր ձեռքը։

Կաստամոնուի նախկին ժանդարմական գումարտակի հրամանատար մայոր Մուստաֆա Շերեֆ բեյը, որն այսօր գտնվում է Սիլիֆկեի ժանդարմական գումարտակի հրամանատարությունում, տեղահանության վատ հետևանքները կանխազգալով գժտվել է Աթիֆ բեյի հետ։ Մի այլ վկայությամբ պարզվում է, որ Հասան Ֆեհմի բեյը հանգուցյալ Իզզեթ բեյին ասել է. «Հայության տեղահանությանն արգելք հանդիսանալու համար պատմությունը և ապագա սերունդն անիծելու է քեզ»։ Այստեղ նույնպես հաստատվում է, որ Հասան Ֆեհմի բեյը եղել է տեղահանության անմիջական կազմակերպիչն ու հրահրողը։

Մի այլ վկայության մեջ, Ջելդեթ և Սելիմ էֆենդիները հայտնում են, որ Հասան Ֆեհմի բեյը միջամտել է լքյալ գույքի հանձնաժողովի գործունեությանը։ Այդ գույքն աճուրդի հանելուց առաջ նա հանձնախմբի անդամների ընկերակցությամբ մտել է նշանակված խանութները և իրեն անհրաժեշտ իրերն իր մարդկանց միջոցով պարկերի և կողովների մեջ լցնելուց հետո ուղարկել է իր բնակարանը։ Միմիայն այս

արարքից հետո նա թույլատրել է խանութները բացել և աճուրդի հանձարկել լքյալ գույքը: Նրանք հայտնում են նաև, որ Հասան Ֆեհմի էֆենդիի այդ գործարքին արգելք հանդիսանալը անիմաստ էր, քանի որ տվյալ ժամանակ նա մեծ ազդեցություն ուներ վալիի [Աբիֆ բեյի] վրա:

Կաստամոնուում հանրահայտ անձնավորություններ Հաջի Թեվֆիկ բեյը, մեջլիսի նախկին գլխավոր քարտուղար Բեսիմ բեյը, ուսուցիչ Մեհմեդ էֆենդին, առևտրական Ահմեդ էֆենդին, փաստաբան Իզզեթ էֆենդին և կայմակամ Ջելալ բեյը իրենց ցուցմունքներում նույնպես հաստատում են Հասան Ֆեհմի բեյի կատարած բռնությունների ու չարաշահումները, ինչպես նաև պետական գործերին նրա ունեցած բացահայտ միջամտության փաստերը:

Բալուի, իսկ ավելի ուշ Բրուսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյի մասին նշված է, որ դեռևս Բալուում պատասխանատու քարտուղար եղած ժամանակ կառավարության որոշման համաձայն հայությունը զերծ էր մնալու տեղահանությունից, քանի որ բնակչության ընդհանուր թվի համեմատ հայերը քիչ տոկոս էին կազմում: Սակայն իր անձնական նախաձեռնությամբ նա ժողովրդի մեջ պտելություն է սերմանել՝ «հայերին չենք ուղում» նշանաբանով: Իսկ երբ Բալուի մութասարրիֆի տեղակալ Ալի Իլմի բեյը հակառակվել է տեղահանության իրագործմանը, [դոկտ. Միդհատը] նրան հեռացրել է պաշտոնից: Այսպիսով, նա նպաստել է տեղահանության գործադրմանը և պատճառ հանդիսացել նրա ողբերգական հետևանքներին: Այս բոլորը պաշտոնապես արձանագրված է Բալուի մութասարրիֆության տեղեկագրում: Նույնիսկ Բրուսայում գտնվելու ընթացքում նա իր կամքն է թելադրել կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին, միջամտել պատգամավորների ընտրություններին, իսկ Կեմլիկում հանգանակություն հավաքելիս՝ [բնակչությունը] պաշտոնապես բողոքարկել է նրա անօրինական վարմունքի դեմ:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության էդիրնեի քննիչ Աբդուլ Ղանի բեյի մասին նշված է, որ ըստ էդիրնեի վիլայեթի 1335 (1919) հուլիսի 27, 30 թվագրությունը կրող տեղեկագրի բովանդակության, Քըրք Քիլիսեի և Դեմիր Քյոյի պատգամավորների ընտրության ընթացքում [Աբդուլ Ղանի բեյը] ազդել է պետական պաշտոնյաների վրա և նույնիսկ միջամտել վիլայեթի կառավարչության գործերին: Նա յուրացումներ է կատարել ազգային պաշտպանության բյուջեից և յուրացրել [բնակչությունից] հավաքված նպաստը:

Էդիրնեի դատական քննիչի կողմից արձանագրված հարցաքննության ընթացքում Արթին (Հարություն) և Հովհաննես Ալթունյանները, Ալեքսան Սարաֆյանը, Խաչիկ Կյուրճյանը և մյուսները վկայություն են տվել, որ հայության ոչնչացման նպատակը հետապնդող տեղահանության խնդրում Աբդուլ Ղանի բեյը եռանդագին ազդեցություն է գործել բոլորի վրա։ Տեղահանության ընթացքում նա զինված չեթեների հետ շրջագայել է ամենուր։ Ոստիկանատնից դուրս բերվող հայերից բռնագրավել է նրանց փողերը։ Գազազյան եղբայրների կտորեղենի խանութը 1000 լիրայով գնել է իր որդու՝ Հայրուլլահի համար։ Միևնույն ժամանակ հայերի լքյալ գույքը շատ չնչին գումարով վաճառել է իր համախոհներին։

Հիշյալ Աբդուլ Ղանի բեյի հարցաքննության տեղեկագրում նշված է, թե իբր նա դիմել է վալիին՝ հայերին տեղահանության չենթարկելու, մինչդեռ Ավետիսյան և Ալեքսանյան էֆենդիները իրենց տված վկայության մեջ հայտնել են, որ տեղահանության բուն նպատակը եղել է հայության ոչնչացումը, և Աբդուլ Ղանի բեյը, լինելով մարդկային առաքինություններից զուրկ մի անձնավորություն, մեծ ազդեցություն է գործել տեղահանության խնդրում, որ նա գործարքի մեջ մտնելով տեղի առևտրականների հետ, դիզել է մեծ հարստություն։ Թեև այլ վայրերում տեղահանվողներին քիչ թե շատ պայմանաժամ են տվել, Էդիրնեում տեղահանվողներից դրամն ու թանկարժեք իրերը վերցնելուց և ապրուստի միջոցներից զրկելուց հետո, առանց պայմանաժամի քշել են դեպի Թեքֆուր լեռը։ Դատաքննության ընթացքում Աբդուլ Ղանի բեյի տված ցուցմունքի համաձայն, իբր [տեղահանությունը] եղել է Էդիրնեի գրավման ժամանակ [թուրքերի մոտ] առաջ եկած վրեժխնդրության զգացման հետևանքով։ Ըստ նրա հայտնած տեղեկության, Էդիրնեում տեղահանությունն իբր տեղի է ունեցել մի գիշերվա ընթացքում, այն էլ՝ մեկ քարավանով։ Մինչդեռ Էդիրնեից եկած մեր հարցումի պատասխանագրում, ասված է, որ տեղահանությունը տեղի է ունեցել երեք քարավանով, որոնք ուղարկվել են մինչև Տեր-Զոր։

Այնպես որ, այս խնդրում ևս նրա տված կեղծ ցուցմունքը ակներև է։ Վերոհիշյալ մեղադրյալներ՝ Հասան Ֆեհմի, դոկտ. Միդհատ, Աբդուլ Ղանի, Ավնի, դոկտ. Բեսիմ Զուհդի, Հասան Սելահեդդին, Ջեմալ, Մյունիր, Ջևդեթ և Աբդուլ Քադիր էֆենդիների և բեյերի ամբաստանության վերաբերող նյութերը ցույց են տալիս, որ նրանք շեղվել են կառավարության օրենքից և այդպիսով վտանգել երկրի ներքին ապահովությունը ...։

Հաթան Ֆեհմի էֆենդուլ դոկտ. Միդհատ և Աբդուլ Ղանի բեյերի ամբաստանության վերաբերող նյութերը, ինչպես պարզաբանվեց վեճում, հաստատում են, որ նրանք, իրազեկ լինելով կենտրոնական կոմիտեի կատարած անօրինական գործարքներին և այն նախաձեռնողների բուն նպատակներին, նպաստել և անուղղակիորեն մասնակցել են հոտորածի և կողոպուտի խնդրում կատարված հանցագործություններին։

Ներքին փոխառության պարտատոմսեր թողարկելիս Ավնի բեյը ևս ընդգրկվել է հանձնաժողովի կազմի մեջ։ Մի շարք մարդկանց, այդ թվում Հերգեմին, մանիսացի Հաջի Հասանին, Իսմայիլին և Ֆարուխան պրոպից Մեհմեդին կանչելով՝ հանձնաժողովի առաջ ծեծել են և հակառակ օրենքի՝ բանտարկել։ Այնուհետև պարտադրել են նրանց կարողությունից բարձր ներքին փոխառության պարտատոմսեր։ Այդ մասին վկայություն են տվել թե՛ լսողները, թե՛ տուժածները, իսկ նա խոստովանել է, որ ընդգրկված է եղել այդ հանձնաժողովի կազմի մեջ։

Այսպիսի անօրինական գործարքներով պատասխանատու քարտուղարները հանդգնել են կառավարության աչքի առաջ կատարելու նման արարքներ։ Իսկ Ավնի բեյը, բերված գրավոր վկայությունների համաձայն, ձայների մեծամասնությամբ հանցավոր է ճանաչվում, քանի որ լինելով ազդեցիկ մարդկանցից մեկը՝ ծեծել է, ստորացրել և հակառակ օրենքի կալանավորել մարդկանց։ Ինչ վերաբերում է Բեհիմ Ջուհդի բեյի արարքներին, ինչպես բացահայտվեց հարցաքննության ընթացքում, Ռաֆայել Շիրինյան էֆենդիից վերցրած գորգերը ոչ թե բռնության հետևանք է, այլ՝ սովորական առևտրական գործարք, քանի որ հետագայում այդ գորգերը վերադարձվել են տիրոջը[27]։

Takvim-i Vekayi, 9 Ocak 1336 (1920) № 3772

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅՈԶԳԱԹԻ, ՏՐԱՊԻԶՈՆԻ, ԲՅՈՒՅՈՒՔ ԴԵՐԵՒ ԵՎ ԽԱՐԲԵՐԴԻ ՁԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱՇԻՇԱՀԻ 1335 թ. (1919) ՄԱՐՏԻ 8-ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա։
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ։

ՅՈԶԳԱԹԻ ՏՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատաքննության[1] ենթակա մեղադրյալների անունները — *Յոզղատի մութասարրիֆի տեղակալ և Բողազլյանի[2] կայմակամ Քեմալ բեյ։ Յոզղաթի ժանդարմական պետ, մայոր Թևֆիկ բեյ։*

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն գատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը։

Մեղադրյալները և նրանց դատապաշտպանները չանացին ապացնալ կատարված հանցանքը և պահանջեցին ազատ արձակել։ Բայց խալամի բարձր դրույթները, օսմանյան օրենքները ընդհանուր են բոլոր հպատակների համար և պաշտպանում են նրանց կյանքն ու պատիվը, ունեցվածքը, և հասարակական իրավունքները հավասարապես։ Եվ այս բոլորի անխափան գործադրումը կատարելապես մտնում է պետության պաշտոնյաների պարտականությունների մեջ։

Մեղադրյալներ՝ Յողղաթի մութասարրիֆի տեղակալ և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյը, ինչպես նաև Յողղաթի ժանդարմական պետ մայոր Թեվֆիկ բեյը իրենց պաշտոնավարության ընթացքում, առանց ուշադրություն դարձնելու պաշտոնապես հաղորդված հրամանների բացառություններին, տեղահանության են ենթարկել նույնիսկ թուլակազմ կանանց, անչափահաս երեխաներին՝ ոտնահարելով նրանց անձնական իրավունքները։ Ունեցվածքն ու դրամը կողոպտելուց հետո, նրանց քարավանները ճամփու են դրվել կյանքի ապահովության բոլոր միջոցներից զուրկ։ Նույնիսկ, մի շարք ստոր մարդկանց գաղտնի հրահանգները կատարելով, ոչ միայն ուշադրություն չեն դարձրել նրանց կյանքը ապահովելու խնդրին, այլ, ընդհակառակը, ամուր կապելով բոլոր աղամարդկանց ձեռքերը՝ զրկել են նրանց ինքնապաշտպանության բոլոր հնարավորություններից։ Եվ այդպես՝ կանխամտածված կերպով առիթ են տվել, որ այդ ողբերգությունը գործադրվի։ Մեղադրյալները նույնիսկ ուշադրություն չեն դարձրել սպանությունները կանխելու իրենց վերադասի հորդորանքներին և պատասխանատու պաշտոնյաների վրա ինչ-որ պատահական մարդկանց ղեկավար նշանակելով, գաղտնաբար ցանկացել են իրագործել իրենց բարբարոսային արարքները։ Նրանց միջոցով կատարված այդ կոտորածներն ու կողոպուտները, իսլամի դրույթներով էլ մեծ մեղք և հանցանք համարվելով, անհարիր են մարդկության և քաղաքակիրթ աշխարհի սկզբունքներին։

Վկաների համոզիչ ցուցմունքները, բարձրաստիճան զինվորականության միջև կատարված պաշտոնական թղթակցությունների և հեռագրերի բովանդակությունը, մեղադրյալների մանրակրկիտ հարցաքննությունը, ինչպես նաև քարավաններում գտնվող կանանց ու երեխաների իրենց ամուսիններից կանխամտածված անջատումը լիովին բացահայտում է մեղադրյալների կատարած հանցանքն ու նենգ նպատակները, թեև դատապաշտպանները և մեղադրյալները իրենց վերջին խոսքերում նշեցին, որ իբրև թե մի շարք թեթևամիտ կուսակցությունների[3] հրահանգով և Օսմանյան կայսրության մյուս կողմերում գտնվող իրենց հայրենակիցների դրդումով, հատկապես հակառակորդի կողմից գրավված վայրերում, հայերը անցել են թշնամու կողմն ու միացել ապստամբական շարժումներին[4]։ Այս բացատրությունները չեն կարող կատարված վայրագությունները արդարացնելու համար հիմք ծառայել, որովհետև եթե հայ ժողովրդի մի մասը երբեմն միացել է այդ շարժումներին, ապա մյուս մասը տարբեր ձևերով արտահայտել է իր հավատարմությունը [իշխանություններին]։

Այնպես որ, յուրաքանչյուր պետական պաշտոնյայի համար, անկախ իր ազգայնական զգացումներից և անձնական վրեժխնդրությունից, ստիպողական անհրաժեշտություն է գործավարել Հոր նման, առանց ցեղային և կրոնական խտրականության, պաշտպանելու իրեն ավանդված բնակչության զգացումներն ու իրավունքները։

Քեմալ բեյը իր պաշտոնական խոսքում արծարծեց այն միտքը, թե իբր Յոզղաթում կատարված այդ արարքները բխել են Վանի, Էրզրումի և Բիթլիսի կողմերում մահմեդականների դեմ հայերի ցուցաբերած վատ վերաբերմունքից։ Մինչդեռ, օրենքի և խղճի տեսակետից, ապստամբական շարժման հետ ոչ մի առնչություն չունեցող Յոզղաթի հայ բնակչության նկատմամբ գործադրված վրեժխնդրությունն ու անձնական ոխակալությունն անհամատեղելի են վերոհիշյալ մտքի հետ։ Փաստերը վկայում են, որ հայերին կոտորելու համար նա նույնիսկ ոտքի է հանել ոչ միայն իր տրամադրության տակ գտնվող սանջակի թուրքերին, այլև կոչ է արել բոլոր մահմեդականներին՝ ոտքի կանգնել հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու համար։

Իր ձեռագրով գրված փաստաթղթերից մեկում, նա, անպաշտոն երեք մարդկանց վերահսկիչ նշանակելով, քարավանները առաջնորդող պաշտոնական պահապանների վրա, ստիպել է վերջիններին, որպեսզի հնազանդվեն և ենթարկվեն նրանց հրամաններին։ Բոլորովին կասկած չի հարուցում, որ նրանց տված հրահանգի հիման վրա էլ քարավանները ենթարկվել են կոտորածի։ Այս և այլ հավաստի ապացույցները հօդս են ցնդեցնում մեղադրյալների փաստաբանների դատապաշտպանությունը վերաբերող ջանքերը։

Քաղաքացիական քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի հիման վրա նրանց դատելու դատախազության պահանջարկը [դատական հանձնախմբի] կողմից հավանության չարժանացավ։ Հանձնաժողովը միաձայն որոշեց մեղադրյալներին դատապարտելու քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածով։

Դատի չափը քննարկության նյութ դառնալուց հետո որոշվեց. ըստ կատարված հանցագործության երկուսին էլ առանձին-առանձին դատել 45-րդ հոդվածի հիման վրա «հանցագործության անմիջական մասնակցություն ունենալու» մեղադրանքով։

Քեմալ բեյը տվյալ սանջակի ամենաբարձր պաշտոնատար անձը լինելով, ինքն է կազմակերպել [Յոզղաթի հայության] կոտորածն ու ունեցվածքի կողոպուտը և հանդիսանում է գլխավոր հանցագործը, քանի որ ինքն է նշանակել մի շարք անպաշտոն մարդկանց, որպեսզի

ուղեկցեն քարավաններըը և միևնույն ժամանակ ստիպել է քաթավանի պաշտոնական առաջնորդ Շյուքրի չավուշին, որ նա հետազոտվի և կատարի նրանց հրամաններըը։

Առկա հանցանշանների համաձայն, վերոհիշյալ Թևֆիկ բեյը կոտոքածի և կողոպուտի իրականացման խնդրում անուղղակի մասնակցություն ունենալու համար դատապարտվեց 45-րդ հոդվածով, իսկ գլխավոր հանցագործ Քեմալ բեյը՝ կայսերական ռազմական քրեական օրենսգրքի 171-րդ և կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածների հիման վրա։

Այսպիսով, [դատարանը] միաձայն վճիռ կայացրեց, որ Քեմալ բեյը[5] դատապարտվում է մահվան՝ ըստ 171-րդ հոդվածի, ուր ասված է. «Եթե մի խումբ մարդիկ կանխամտածված ճնշում բանեցնելով, զինված կամ անզեն, խորտակելով դռներն ու ցանկապատերը՝ կողոպտեն և կամ փշացնեն պարենամթերքը, վաճառքի ապրանքները ...դատապարտվում են մահվան», ինչպես նաև կայսերական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով, ուր ասված է. «Կանխամտածված սպանություն կատարողները, կամ իրենց մերձավոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածվածության սպանողները մահվան են դատապարտվում»։ Իսկ Թևֆիկ բեյը դատապարտվում է 15 տարվա տաժանակիր աքսորի, վերոհիշյալ 45-րդ հոդվածի երկրորդ մասի հիման վրա, ուր ասված է. «Եթե գլխավոր հանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանվում, ապա նրա մեղսակիցներին՝ 10 տարուց ոչ պակաս ժամանակավոր բանտարկություն»։

6 ահջեր 1337 թ.
(1919 թ. ապրիլի 8)

Նազըմ, Ջեքի, Մուստաֆա, Ալի Նազըմ, Ռեջեբ Ֆերդի

Ռազմական արտակարգ տույանի տրձանագրող
հանձնախմբի պետ՝ Աբիդին Դավեր

Takvim-i Vekayi. 8 Nisan 1335 (1919) № 3617

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ։

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱՑԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ[6]

Դատի տրված ներկա գանվող մեղադրյալների անուններբ — *Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյ, Տրապիզոնի ատիկանապետ Նուրի բեյ, Տրապիզոնի [գաղտնի] գործակալության տեսուչ Մուստաֆա էֆենդի, Տրապիզոնի ժանդարմի քննչական տեսուչի օգնական՝ կայմակամ Թալաաթ բեյ, Տրապիզոնի հյուրանոցի տնօրեն Նիազի էֆենդի, Տրապիզոնի առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյ։*

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների անունները — *Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյ, [կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյ]*[7]։

ԴԱՏԱՎԱՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը։

Մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ կատարված հանցանքը և պահանջեցին ազատ արձակել։ Բայց իսլամի բարձր դրույթները, օսմանյան օրենքները ընդհանուր են բոլոր հպատակների համար և պաշտպանում են նրանց կյանքն ու պատիվը, ունեցվածքը և հասարակական իրավունքները հավասարապես։ Եվ այս բոլորի անխափան գործադրումը կատարելապես մտնում է պետության պաշտոնյաների պարտականությունների մեջ։

Մեղադրյալները՝ Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի բեյը, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը սերտորեն համագործակցել են ստացված գաղտնի հրամանագրերը իրականացնելու գործում։ Արտաքուստ նրանք իբրև թե գործել են տեղահանության օրենքի հիման վրա, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների համաձայն իրակա-

ցումը համարձակություն է տվել նրանց՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին կոտորելու և բնաջնջելու։

Մի շարք հանցագործ, անառակ մարդկանցից և նույն մակարդակի մի քանի ժանդարմներից նրանց կազմած հրոսակախմբերը իբրև թե ուղեկցելու էին տեղահանված հայերի քարավանները։ Մինչդեռ շտապ տեղահանության ենթարկված և պաշտպանության միջոցներից զուրկ հայերի քարավանները քաղաքից հեռացվելուց հետո, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից և վերոհիշյալ հանցագործներից կազմված չեթեների հրոսակախմբերը հարձակվելով՝ կողոպտել են նրանց իրերը և այնուհետև աներևակայելի դաժանությամբ ոչնչացրել և բնաջնջել բոլորին։ Իսկ խեղճ կանանց մի այլ վայր տանելով՝ հափշտակել են նրանց զարդեղեններն ու շորերը և ենթարկել բռնաբարությանը։ Այնուհետև ամիսներով ճանապարհներին քարշ գալուց հետո, շատերը մահացել են՝ բոլորովին հյուծված, տառապալի ուղևորությունից, սովից և ծարավից։ Իսկ [ողջ]մնացածներին էրզինջանի ճանապարհով ուղարկել են հեռավոր վայրեր։

Տրապիզոնում մնացած կանանց ու երեխաների մի մասին իբրև թե պաշտպանելու պատրվակով տեղավորել են հիվանդանոցներում և դերվիշների տներում[8]։ Այնուհետև, ծովային ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նավերը և տեսադաշտից հեռու ծովի խորքերը տանելով՝ գցել են ջուրը և խեղդելով ոչնչացրել բոլորին։ Այս դատավարության վերջին նիստում պարզվեց և մենք բոլորս համոզված ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտահղացված է եղել ոչ թե Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ կանոնավոր ու խիստ կազմակերպված։

Վերոհիշյալ մեղադրյալներից հարկային տեսուչ Մեհմեդ Ալի էֆենդին, վազեմի ծանոթ լինելով վալի Ջեմալ Ազմի բեյին, սերտ համագործակցել է նրա հետ, կատարել նրա հրամանները և նպաստել վալիի կատարած չարագործություններին և այդ ողբերգական արարքների իրականացմանը։ Իսկ վալի Ջեմալ Ազմի բեյը օգտագործել է նրան, նկատի ունենալով, որ նա սերտորեն առնչություն ունի լքյալ դույքի, դոհարեղենների, ռազմական արտակարգ հարկային պաշտոնյաների, ռազմական շինությունների, կապի հանձնաժողովների, զինվորական, հեռախոսային և անձնագրերի ատուգման տեսչությունների, ինչպես նաև «Կարմիր մահիկ» հիվանդանոցի և «Կանանց ընկերության» հետ։

Մեհմեդ Ալի բեյի թույլտվությամբ հայ կանանց և աղջիկներին իբրև թե «պատսպարման» քողի տակ հապճեպորեն հավաքել են մար-

դասիրական նպատակներով կառուցված հիվանդանոցում, դերվիշների տներում և այնուհետև հայրենասիրական գործ կատարած լինելու պատրվակով, որպես աղախին և կին օգտագործելու նպատակով բաժանել տարբեր մարդկանց տները։ Նվ այդպես, նրա մեղքով շատերը կուսապղծվել և ենթարկվել են այլևայլ բռնություններին։ Այդ դժբախտներին տվյալ վայրերում հապճեպորեն հավաքելու և կարճ ժամանակամիջոցում քաղաքից դուրս հանելու, կուսապղծելու և այլ բռնություններ ենթարկելու մասին գոյություն ունեն հավաստի վկայություններ։ Նույնիսկ իրենից ստորադաս հարկային տեսչության քննիչը բազմիցս գրավոր և բանավոր զգուշացրել է, որ իր պաշտոնի հետ առնչություն չունեցող այդ ստոր գործերի մեջ խառնվելը կարող է ունենալ խիստ վտանգավոր հետևանքներ։ Իսկ նա (Մեհմեդ Ալի էֆենդին) բոլորովին կարևորություն չտալով դրան, գիտակցաբար շարունակել է օժանդակել հիշյալ Ջեմալ Ազմի բեյի քաղաքի ներսում կատարած անմարդկային, դաժանաբարո բոլոր հանցագործություններին։

Ոստիկանապետ Նուրի էֆենդին, որը այլ պաշտոնատար անձնավորությունների հետ նշանակվել է հետևելու քաղաքի կարգուկանոնին, միևնույն ժամանակ ընդգրկված է եղել տեղահանության կազմակերպման, գաղտնի ոստիկանության և դոհարեղենների պահպանության հանձնաժողովների մեջ։ Նրան է հանձնարարվել հավաքելու, գրանցելու տեղահանված հայերի լքյալ գույքը։ Մինչդեռ նա ոչ մի գործնական միջոց չի ձեռնարկել լքյալ գույքի պահպանման հարցում։ Ավելին, նրա թույլտվությամբ հայերի լքյալ գույքի պահեստավորումը կատարվել է անվստահելի մարդկանց միջոցով, անկազմակերպ և առանց «դաֆթար» կազմելու։ Այսպիսով, նրա մեղավորությամբ լքյալ գույքը հափշտակվելով մատնվել է կատարյալ կորստի։

Ջնայած որ նա այդ ապրանքների գողության մեջ մեղադրվող մի քանի պաշտոնատար անձնավորությունների ուղարկել է ռազմական ատյանի հետաքննությանը, այնուհանդերձ ո՛չ մի պաշտոնական կամ անպաշտոն միջոց չի ձեռնարկել Ջեմալ Ազմի բեյի և նրա պաշտոնակատարների արարքները սանձահարելու, ինչպես նաև սաստելու այն ոստիկաններին և ժանդարմներին, որոնք օգտվելով գիշերային պարետային ժամից», զբաղվել են թալանով և հափշտակությամբ։ Նա նույնիսկ ականատես լինելով այդ ողբերգական տեսարաններին՝ ոչ մի արգելք չի հարուցել, երբ ժանդարմները և ոստիկանները քաղաքում մնացած կանանց և երեխաներին խեղդելու նպատակով նավ բարձրացնելով՝ տարել են ծովի խորքերը։

Ըստ նրա տված ցուցմունքի, իբրև թե խորապես ազդվելով իր ներկայությամբ կատարված մի շարք դեպքերից, քաշվել է իր սենյակը և այն աստիճան հուզմունք ապրել, որ նույնիսկ չի կարողացել միաժամանակ դուրս գալ փողոց: Այդ բոլորով հանդերձ, նա աչք է փակել վալիի կատարած արարքներին և նույնիսկ քաջություն չի ունեցել կամովին հեռանալու և պաշտոնը զիջելու մեկ ուրիշին, որը գուցե կարողանար կանխել այդ հանցագործությունները:

[Գաղտնի ոստիկանության] գործակալ Մուստաֆա բեյը, միաժամանակ զինվորական լինելով, կարողացել է վաղուց ի վեր շահել Ջեմալ Ազմի բեյի համակրանքը և սերտ հարաբերություն հաստատել նրա հետ: Օգտվելով այդ մտերմությունից, Մուստաֆա բեյը ձեռք է բերել զինվորական շատ կարևոր պաշտոններ, ինչպիսիք են նավահանգստային և առևտրական զինվորական տեսչությունները: Մուստաֆա բեյը կարողացել է նաև իր պաշտոնավարությունը երկարաձգել շնորհիվ Ջեմալ Ազմի բեյին ենթակա զինվորական հրամանատարների աջակցության և կենտրոնական կառավարության հովանավորության: Հայերից հափշտակված գույքի տեղափոխության ընթացքում նա, չարաշահելով իր պաշտոնը, զինվորական փոխադրական միջոցները տրամադրել է վալիին և նրա պաշտոնակատարներին:

Նրան պաշտպանելու միտումով վկայություն տվողները նշեցին, որ նա լավ հարաբերության մեջ գտնվելով վալիի հետ, իբր կարողացել է մի շարք հայերի ազատել տեղահանությունից: Լինելով քաղաքի մեծահարուստներից մեկը, իր անձնական շահի համար չի զոհաբերել իր պատիվը: Նույնիսկ վալի Ջեմալ Ազմի բեյի ագահ բերանը փակելու համար, իրեն հանձնված գանձարկղի զարդեղենն ու դրամը առանց հաշվարկի տրամադրել է նրան և նյութական վնաս կրել:

Նուրի բեյի, Մեհմեդ Ալիի և գործակալ Մուստաֆա էֆենդիի օգտին տրված այդ վկայությունները, ինչպես նաև նրանց դատապաշտպանների կողմից առաջ քաշված պարզաբանումները, իրականության հետ ո՛չ մի առնչություն չունեն և բոլորովին անհիմն են:

Այսպիսով, [ռազմական ատյանը] միաձայն որոշում կայացրեց, որ ոստիկանապետ Նուրի էֆենդին, [գաղտնի ոստիկանության] գործակալ Մուստաֆա բեյը, իրենց պաշտոնավարության ընթացքում կատարած չարաշահումների համար հանցավոր են ճանաչվում: Վալի Ջեմալ Ազմի բեյը, [կուսակցության] պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը, [հարկային տեսուչ] Մեհմեդ Ալի էֆենդին մեղադրվեցին կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածով:

Տեղի ունեցած խորհրդակցությունից հետո [սույնը] Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերին ճանաչեց որպես հանցագործության անմիջական մասնակից և պատժի չափ սահմանեց վերոհիշյալ 45-րդ հոդվածի առաջին մասը, ուր ասված է.

«Մի խումբ անձնավորություններ մի ոճրագործություն կամ հանցանք խմբովին կատարելու դեպքում, կամ մի խումբ անձնավորություններ բազմաթիվ արարքներից կազմված մի ոճրագործություն կամ հանցանք գործելիս, ոճրագործության ընթացքում նրանցից յուրաքանչյուրը այդ արարքներից որևէ մեկը կամ մի քանիսը կատարելու դեպքում նույնպես գործակից են համարվում և պատժվում են ուղղակի հանցանք կատարողի նման»:

Մեհմեդ Ալի էֆենդին, հանցագործությանը անուղղակի կերպով մասնակցություն ունենալու համար մեղադրվում է վերոհիշյալ հոդվածի երրորդ մասով, ուր ասված է.

«Որևէ հանցագործության կամ ոճրագործության իրականացմանը ինչ-որ ձևով օժանդակողները, այսինքն՝ սպառնալիքով կամ խարդավանքով գործարքի մեջ մտնել, դրամ կամ նվեր տալ, պաշտոնը չարաշահելով ազդեցություն բանեցնել. զենք, այլևայլ գործիքներ կամ միջոցներ հայթհայթելով նախապատրաստական գործունեություն ծավալել, ինչ-որ ձևով հանցագործությանը նպաստել, դատապարտվում են այդ հանցագործությանը կամ ոճրագործությանը անուղղակի մասնակցություն ունենալու մեղադրանքով»:

Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերը դատապարտվում են կայսերական զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ և քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածներով: Հիշյալ 171-րդ հոդվածում ասված է.

«Եթե մի խումբ մարդիկ, կանխամտածված ճնշում բանեցնելով, զինված կամ անզեն՝ խորտակելով դռներն ու ցանկապատերը կողոպտեն կամ փշացնեն պարենամթերքը, վաճառքի ապրանքները ... պատժապարտվում են մահվանով:

170-րդ հոդվածում ասված է.

«Կանխամտածված սպանություն կատարողները կամ իրենց մերձավոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածվածության սպանողները մահվան են դատապարտվում»:

Այս հոդվածների հիման վրա վերոհիշյալ Ջեմալ Ազմի[9] և Նայիլ[10] բեյերը դատապարտվում են մահվան, իրենց ունեցվածքի բռնագրավումով:

Մեհմեդ Ալին վերոհիշյալ քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի տարև բերված երկրորդ մասի հիման վրա դատապարտվում է 10 տարվա բանտարկության.

«Մի ոճրագործության կամ հանցագործության անուղղակի մասնակցություն ունեցած անձնավորությունները, օրենքի չբացահայտված մասերում, պատժի են ենթարկվում հետևյալ կերպ. եթե գլխավոր հանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանվում, ապա մեղսակիցներին 10 տարուց ոչ պակաս ժամանակավոր բանտարկություն։

[Դատարանի ատենակալության] գործակալ Մուստաֆա էֆենդին, ատենակալապետ Նուրի բեյը տարև բերված քաղաքացիական քրեական օրենսգրքի 172-րդ հոդվածի հիման վրա, դատապարտվում են մեկական տարվա բանտարկության և երկուական տարի ժամկետով պաշտոնազրկման։

«Օրենսգրքում լուսաբանված հոդվածներից բացի, ինչ ձևով էլ պատահած լինի, պաշտոնը չարաշահող անձնավորությունը իր պաշտոնավարության աստիճանի համաձայն դատապարտվում է (...)[11] մինչև երեք տարի բանտարկության։ Եթե մեղմացնող հանգամանքներ լինեն, 15-ից (...)[12] ոչ պակաս ժամկետով բանտարկություն է հասնում, կամ էլ 5-ից մինչև 100 լիրա տուգանք։ Բոլոր դեպքերում տևապես կամ առժամյա պաշտոնազրկումը պարտադիր է»։

Պաշտոնական (... ilk)[13]-ից հայտնված է, որ մեղադրյալ Նիազի էֆենդին ծովից հայտնաբերված ինքնաշարժ տորպեդները հավաքելու և տեղափոխելու նպատակով երկու անգամ մոտորային նավով մեկնել է Ստամբուլ, որտեղ նավը վերանորոգելու համար որոշ ժամանակ մընացել է այնտեղ։ Այնուհետև նրա Տրապիզոն վերադարձը չի համընկնում հայերի տեղահանության տարեթվի հետ։ Նրա առնչությունը տեղահանության, կոտորածի և լքյալ գույքի հափշտակման հետ բավարար ապացույցներով չի հաստատվում։ Միայն պարզվում է, որ Ջեմալ Ազմի բեյի կարգադրությամբ լքյալ գույքի մի մասը աճուրդով և էժան գնով ծախելու համար հանձնվել է հիշյալին։ Այս վաճառքը և էժան գնով ծախելու պարագան ղեպագիսկել է պատերազմի ամենավատանգավոր ժամանակամիջոցին, այսինքն՝ ռմբակոծության շրջանին։ Բացի այդ, Ջեմալ Ազմի բեյի կարգադրությամբ այդ ինքնաշարժ տորպեդների տեղափոխման խնդիրը քննհատել է վերոհիշյալ վաճառքի աշխատանքները։ Փաստեր չկան նաև, որ նա կաշառք կամ շահույթ ձեռք բերելու նպատակով գործարքի մեջ մտած լինի որևէ մեկի հետ։ Քրեական օրենս-

գրքում չկա նաև մի հոդված, որը դատապարտեր աճուրդի հետ կապված նրա գործունեությունը։ Հետևաբար՝ նա պատասխանատվությունից դուրս է մնում, քանի որ չի մասնակցել կոտորածին, կողոպուտին և ընդհանրապես տեղի ունեցած այլ հանցագործություններին։

Կատարված հանցագործություններին չի մասնակցել նաև կայմակամ Թալաաթ բեյը։ Դատարանում տրված մի շարք վկայությունների համաձայն, «սովորութային հարկերի»[14] հավաքման հանձնախմբում իր պարտականությունները կատարել է առանց չարաշահումների։

Այսպիսով, [կայմակամ] Թալաաթ և Նիազի բեյերը վերոհիշյալ հանցագործությունների հետ առնչություն չունենալու պատճառով, բանտից ազատ են արձակվում։ Մեղադրյալ՝ առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյի նկատմամբ որոշակի հանցանշան չլինելու պատճառով՝ դատաքննությունը կարճվում է։

[Ռազմական ատյանի] միաձայն որոշումը հրապարակվեց բոլորի ներկայությամբ, իսկ Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերի նկատմամբ՝ հեռակա կարգով։

1919 թ. մայիսի 22

Նազըմ, Ջեքի, Մուստաֆա, Ալի Նազըմ, Ռեջեբ Ֆերդի

Ռազմական արտակարգ ատյանի արձանագրական
հանձնախմբի պետ՝ Աբիդին Դավեր.

Takvim-i Vekayi, 22 Mayis 1335 (1919) № 3616

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335 թ. (1919) ՄԱՐՏԻ 8-ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[15]

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա.
անդամներ՝ գեներալ-մայոր Ջեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ։

ԲՅՈՒՅՈՒՔ ԴԵՐԵԻ, ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները — Բյույուք Դերեի նախկին ոստիկանապետ Քերիմ բեյ, Բյույուք Դերեի մուֆթի Ջելալ էֆենդի, Բյույուք Դերեի երևելի մարդկանցից սալոնիկցի Թեֆիկ Հըֆզը բեյ, Բյույուք Դերեի բնակիչ՝ Հաֆըզ Մահմուդ էֆենդի։

Նույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը։

Մեղադրյալներ՝ Բյույուք Դերեի նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ բեյը, սալոնիկցի Ռեֆիկ բեյը, Ռիզալի Ջելալ և Հաֆըզ Մահմուտ էֆենդիները նշված շրջանի ոչ մահմեդական բնակչության տեղահանության համար կառավարության կողմից նշանակված որոշակի պայմանաժամը թաքցնելով, իրենց անձնական շահը և նենգ մտադրությունները իրականացնելու միտումով՝ տեղահանվողներին հատկացրել են շատ կարճ ժամանակամիջոց։ Այդպիսով, տեղահանվողները ստիպված են եղել իրենց ունեցվածքը, կահկարասին թողնել և հեռանալ։ Այնուհետև նրանց լքյալ գույքը կողոպտել են, իսկ թաքցրած ապրանքները հայտնաբերել հատուկ գործիքներով և յուրացրել։

Վերոհիշյալ մեղադրյալներից Աբդուլ Քերիմ և Ռեֆիկ բեյերը, ձերբակալին խղճմտանքի նշույլն անգամ չունենալով, կողոպուտի և ավերածության են ենթարկել տեղահանվողների լքյալ գույքը։ Նույնիսկ յուրացնելու ագահությամբ տարված, նրանք գործադրել են հայտնաբերելու համար թաքցված ապրանքները։

Հիշյալ մեղադրյալներից Աբդուլ Քերիմ բեյը իր պաշտոնավարության ընթացքում պարտավոր էր հետևել իսլամի վսեմ դրույթներին, օսմանյան օրենքներին, և առանց խտրականության պաշտպանել բոլորի կյանքն ու պատիվը, ունեցվածքն ու հասարակական իրավունքները, բայց պատերազմական դրության և դինվորական տնօրինկոմից անհրաժեշտ համարվող տեղահանության գործում ոչ մի միջոց չի ձեռնարկել ապահովելու շարժական և անշարժ գույքը։ Իր պաշտոնավարության ընթացքում հանդես է բերել կատարյալ անփութություն, անտարբերություն և, ձեռ վնաս հասցնելով, կորստի է մատնել տեղահանվողների շարժական և անշարժ գույքը։

Ինչ վերաբերում է Ռեֆիկ բեյին, նա կառավարության կողմից երբևէ պատասխանություն կամ իրավունք չի ունեցել խառնվելու տեղահանության գործին, սակայն բարձր խավի մարդկանց հետ սերտ շփում ունենալով՝ կատարել է քաղաքացիական պաշտոնատար անձնավորություններին և ռազմական անձնակազմի իրավասություններին վերաբերող մի քանի առաջադրանքներ։ Այսպիսով, ականատեսների վկայությունները, ինչպես նաև դատաքննության նյութերը լիովին հաստատեցին նրա կող-

մից թուլլ տրված մարդկային ամենատարրական իրավունքների ոտնահարման փաստերը։ Այնպես որ, դատախազության կողմից հիշյալին ազատ արձակելու փաստարկը, ինչպես նաև դատապաշտպանների նեդրած ջանքերը համոզիչ չեն և չեն կարող ընդունելի համարվել։ Լիովին բացահայտվեց, որ Աբդուլ Քերիմ բեյը չարաշահել է իր պաշտոնը, իսկ Ռեֆիկ բեյը առանց արտոնության և իրավունքի խառնվել է պաշտոնատար անձնավորությունների գործերին, և, կատարելով մի շարք գործարքներ, դարձել է մեղսակիցների մեղսակիցը։

Աբդուլ Քերիմ բեյի հանցանքը առնչվում է կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 102, իսկ Ռեֆիկ բեյինը՝ նույն օրենսգրքի 130-րդ հոդվածների հետ։ Այդ հոդվածներում ասված է.

«Պետական պաշտոնյաներից որևէ մեկը իր պարտականությունները կատարելու ընթացքում, եթե առանց էական պատճառի անփութություն և անտարբերություն ցուցաբերի և կամ առանց էական պատճառի չկատարի օրենքի ուժից բխած իր վերադասի հրամանը, ապա իր պաշտոնի աստիճանի համեմատ պատժի է ենթարկվում երեքից մինչև 100 լիրա տուգանքով։ Եթե անփութության և անտարբերության հետևանքով և կամ օրենքի ուժից բխած վերադասի հրամանը չկատարելու դեպքում վնաս հասցվի պետության շահերին, ապա պաշտոնի աստիճանի համեմատ կալանքի է վերցվում (...)[17] մեկ շաբաթից մինչև երեք տարի ժամկետով և ժամանակավորապես կամ մշտապես զրկվում է իր զբաղեցրած պաշտոնից։ Կատարված այդ արարքների ընթացքում, եթե որևէ մեկին անձնական վնաս հասցվի, ապա մեղադրյալը տուժի է ենթարկվում այլ պատժամիջոցներով»։

«Պետության կողմից արտոնություն և իրավունք չունեցող որևէ մեկը ինքնուրույնաբար քաղաքացիական պաշտոնատների և դիվանատնության հետ գործարքի մեջ մտնելու և կամ նրանց գործերին միջամտելու դեպքում բանտային պատժի է ենթարկվում երեք ամսից ոչ պակաս ժամկետով»։

Այս հոդվածներից բխած օրենքի ուժի համաձայն, Աբդուլ Քերիմ բեյը, կալանքի տակ վերցվելու օրվանից 1919 թ. (փետրվարի 13), պատիժ է կրելու մեկ տարի բանտարկության ժամկետով և մեկ տարի էլ զրկվելու է իր պաշտոնից։

Ինչ վերաբերում է Ռեֆիկ բեյին, դատաքննության ժամանակ բացահայտվեց, որ ինքը ձկնաբուծարան ունենալու անհրաժեշտությունը չի ունեցել, սակայն թարմ ձուկ ուտելու համար, իբր վարձակալել է Արփա և Օմեր էֆենդիներին պատկանող ձկնաբուծարանը։ Միևնույն ինքնա-

Նաեւ այդ ձկնաբուծարանի համաձայնագիրը ակամայից դարձել է իր անունով։ Այնուհետեւ, դրանով էլ չբավարարվելով, 35 լիրա վարձակալության արժեքի դիմաց, տիրացել է ամբողջ ձկնաբուծարանին, որի արժեքը ուսկաններով և այլ եկամուտներով կազմել է մոտ 1800 լիրա։ Այս ծանրացուցիչ հանցանքը նկատի առնելով՝ Ռեֆիկ բեյը նույնպես ձերբազատվելու օրվանից (1919 թ. ապրիլի 22) ձայների մեծամասնությամբ դատապարտվեց երկու տարի ժամկետով բանտարկության։

Զեյալ և Հաֆըզ Մահմուդ էֆենդիներին վերաբերող ամբաստանությունը օրինականապես չապացուցվեց, ուստի ձայների մեծամասնությամբ որոշվեց նրանց ազատ արձակել։

Ըստ օրինականության, դատաքննության են ենթարկվելու նաև այն անձինք, որոնք օժանդակել են վերոհիշյալ հանցավոր գործարքներին։

Դատավճիռը ընթերցվեց բոլորի ներկայությամբ։
1919 թ. մայիսի 24

Նազըմ, Զեքի, Ալի Նազըմ, Մուստաֆա[18], Ռեշեթ Ֆերդի

Ռազմական արտակարգ ատյանի արձանագրող
հանձնախմբի պետ Աբիդին Դավեր։

Takvim-i Vekayi, 2 Mayis 1335 (1919) № 3618

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[19]

Նախագահ՝ գեներալ-մայոր Էսադ փաշա.
անդամներ՝ գեներալ-մայոր Իհսան փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա Քեռիմի փաշա,
գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա,
գնդապետ Սուլեյման Շաքիր բեյ.

ԽԱՐԲԵՐԴԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետակա կարգով դատի տրված մեղադրյալների անունները — «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թնշքիլաթ-ը մահսուսեե-ի նախագահ դոկտ. Բեհաէդդին Շաքիր, «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազըմ բեյ։

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները — Դերսիմի նախկին պատգամավոր Հաջի Բալյուս-զադե Մահմեդ Նուրի բեյ, Խարբերդի հանրակրթական նախկին տեսուչ Ֆերիդ բեյ։

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին բոլոր դատական փաստաթղթերը։ Կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ մեղադրյալ դոկտ. Բեհաէդդին Շաքիր բեյը, որպես «Հատուկ կազմակերպության» նախագահ, Ստամբուլից դուրս գալով, սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում։ Միևնույն ժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին և նրանց ունեցվածքը յնթարկել կողոպուտի։ Նա իր նենգ ծրագրերը իրագործելու համար, այն վայրերը, ուր տեղի ունեցան այդ ողբերգական դեպքերը, ուղարկում էր նաև անտեղյակ և դյուրահավատ այնպիսի մարդկանց, որոնք միանում էին վերոհիշյալ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին՝ ակամա ստելությամբ և կամ շահույթ ստանալու մոլի ցանկությամբ համակված։ Իր պարտականությունները կատարելու ընթացքում հաճախ բանավոր կարգադրություններ և երբեմն էլ ծածկագիր գաղտնի հրահանգներ է ուղարկել [այս ու այն կողմ] և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հրոսակախմբերին օգտագործել է իր անմիջական հրամանատարության ներքո՝ հայերին կոտորելու և բնաջնջելու նպատակով։

Հիշյալ Բեհաէդդին Շաքիր բեյը «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար, այժմ փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Ռեսնելի Նազըմ բեյին Խարբերդի վալի Սաբիթ բեյի միջոցով Էրզրումից ուղարկած 1915 մայիսի 4-ի թվագրությունը կրող ծածկագիր հեռագրով հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրեք, այդտեղից ուղարկվող հայերին ջրաուռմ եք, թե՞ ոչ։ Վտանգավոր մարդկանց, որոնց վտարումն ու աքսորումն եք հայտնել, ոչնչացնում եք, թե՞ ճամփու եք դնում»։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կնիքը կրող Ղեթապանակի փաստաթղթերի մեջ գտնվող ծածկագիր հեռագրերից մեկում Էրզրումի վալի Մյունիր բեյը հայտնում է.

«Քըղիի ճանապարհով Էրզրումից ուղարկված հարուստ հայերի քարավանները, հարձակման ենթարկվելով Բեհաէդդին Շաքիր բեյի կազմած հրոսակախմբերի և դերսիմցիների կողմից, կոտորվել են, իսկ նրանց ունեցվածքը՝ կողոպտվել»։

Կաստամոնուի նախկին վալի Ռեշիդ փաշան հայտնում է, որ ինքը հիշյալ Բեհաէդդին Շաքիր բեյից ծածկագիր հեռագիր է ստացել ան-

զահանութեան մասին։ Իսկ Վեհիբ փաշան[20] հայտնում է, որ «Հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպես նաև ռանեցվածքի հափշտակումն ու կողոպուտը նախապես վճռվել էր «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտեի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում արնախում[21] հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Բեհաէդդին Շաքիր բեյն էր»։

Անթալիայի նախկին մութասարրիֆ Սաբուր Սամի բեյը հայտնում է, որ Բեհաէդդին Շաքիր բեյը էրզրումից ուղարկած ծածկագիր հեռագրով հետևյալ հարցումն է արել։

«Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսվել են Մոսուլի և [Տեր]-Զորի կողմերը, իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»[22]։

Ռազմական ատյանի արձանագրություններում հավաստի փաստարկներով բերված մի շարք վկայություններում ևս հաստատվում են վերոհիշյալ ողբերգական իրադարձությունների ընթացքում Բեհաէդդին Շաքիր բեյի և նրա համախոհների համատեղ կատարած հանցագործությունները։

Ինչ վերաբերում է փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Ռեսնելի Նազըմ բեյին, ռազմական ատյանի երեք անդամները նրան ևս մեղսակից ճանաչեցին վերոհիշյալ ոճրագործությունների մեջ, քանի որ տեղահանության ընթացքում նա սերտորեն համագործակցել է Բեհաէդդին Շաքիր բեյի հետ։ Դա ապացուցվում է Նազըմ բեյին ուղղված 1915 մայիսի 4-ի թվագրությամբ վերոհիշյալ հեռագրի բովանդակությամբ, ինչպես նաև Խարբերդի վալի Սաքիթ բեյի, [կուսակցության] կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյի և այլ վկաների կատարած հայտարարություններից։ Ուշագրավ փաստարկ է նաև այն հանգամանքը, որ դատական հետաքննության նախօրեին նա թաքնվից և ց'այսօր գտնվում է փախուստի մեջ։

Բացի այդ, փաստաթղթերի մեջ գտնվող մյուս թղթակցությունների բովանդակությունից ևս հասկացվում է, որ նա մասնակցություն է ունեցել հիշյալ ոճրագործություններին։

Օրենքի տեսանկյունով, հիշյալ հանցագործության ընթացքում Նազըմ բեյը իսկական մեղսակիցների նման որոշակի հանցանշան չի թողել, բայց Բեհաէդդին Շաքիր բեյի հետ նրա ունեցած թղթակցությունները և վկաների ցուցմունքները հաստատում են, որ նա անուղղակի մասնակցություն է ունեցել տվյալ հանցագործությանը, քանի որ նա դիտակցորեն օժանդակել է այդ ոճրագործության մեղսակիցներին։

Այսպիսի իրավիճակում, օրենքի պահանջներից ելնելով՝ ձայների մեծամասնությամբ որոշում կայացվեց, որ Նաղըմ բեյը ենթակա է դատապարտման՝ հանցագործությանը անուղղակիորեն մասնակցություն ունենալու ամբաստանությամբ։ Վերոհիշյալների կատարած հանցագործության պատժի չափը որոշվեց հետևյալ կերպ։ Քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի թելադրանքով, 170-րդ հոդվածի հիման վրա Բեհաէդդին Շաքիր[23] բեյը դատապարտվեց մահվան, իսկ Ռեսնելի Նաղըմ բեյը նույն օրենսգրքի 45-րդ հոդվածի երկրորդ մասով՝ 15 տարվա տաժանակիր աքսորի։ Բռնագրավված ունեցվածքը տնօրինվելու է ըստ օրենքի։ Նաղըմ բեյը զրկվում է նաև քաղաքացիական իրավունքից։

Մյուս մեղադրյալներն են Դերսիմի նախկին պատգամավոր Մեհմեդ Նուրի բեյը և Խարբերդի նախկին հանրակրթական տնօրեն՝ Ֆերիդ բեյը։ Տրված վկայության համաձայն Մեհմեդ Նուրի բեյի ագարակի շրջակայքում գտնվող Հոլովենկ գյուղի հայությունը նույնպես ենթարկվել է տեղահանության և կոտորվել։ Հայերին գյուղից տեղահանելու ընթացքում [Մեհմեդ Նուրի բեյը] ժանդարմների ներկայությամբ ասել է. «Ձեր բոլորին ուղարկելու եմ Կեմիկլի գյուղը, իսկ այստեղ ցանելու եմ գարի»։ Այդ իրադարձությունների մեղադրանքով նրան ուղարկել էին ռազմական ատյանի հարցաքննության։ Դատաքննության ժամանակ տիկին Մարգարիտը ամբաստանելով նրան՝ ասաց, որ տեղահանության ընթացքում Մեհմեդ Նուրի բեյը երբ եկել է Հոլովենկ գյուղը, իրենց թախանձագին խնդրանքը մերժելով, ասել է.—«Դուք գնալու եք ձեր ամուսինների գնացած վայրը, այստեղ ես գարի եմ ցանելու»։ Նա հայտնել է նաև հետևյալը. «Ով որ իր ունեցվածքը Կարապետի տանը թողնի, կարող է երեք ամիս հետո գալ և վերցնել»։ Այս մասին իրը մի աղդարիր է փակցրել պատին և այնուհետև իր ձին նստելով՝ հեռացել։

Մի այլ գանգատվող՝ Գասպար Մովսիսյանը, որը տեղահանության ժամանակ գտնվել է Ստամբուլում, հաստատեց տիկ. Մարգարիտի տրված վկայությունը և ասաց, որ Մեհմեդ Նուրի բեյը դրամ է շորթել շատերից, որ Կարապետի տանն, իրոք մի ժանդարմի միջոցով կարմիր թերթիկներ է կնքել տվել։ Մի շարք կանանց պաղատագին խնդրանքը նա մերժել է և «այս գյուղը գարի եմ ցանել տալու» ասելով՝ ձի է նստել և հեռացել։ Նրա գնալուց հետո չեթենների հրոսակախմբերը սրընթաց հարձակվել են գյուղի վրա։ Հիշյալի Կարապետի տան պատի վրա Մեհմեդ Նուրի բեյի թողած աղդագրի մասին տեղյակ չլինելը տարակուսանքի առիթ տվեց։ Այդ կապակցությամբ Կարապետը դատաքննության ընթացքում հայտարարեց, որ [Գասպար Մովսիսյանը] սուտ է ասում,

որ Մեհմեդ Նուրի բեյը իրոք իր տան ճակատին մի աղդագիր փակցրել է, որ ինքը, թաքնվելով Մեհմեդ Նուրի բեյի չիֆթլիքում, ազատվել է տեղահանությունից և մինչև վերջ նրա տանը մնալով՝ փրկվել մահից։ Նա հայտնեց նաև, որ ինքը չի նկատել, թե Մեհմեդ Նուրի բեյի քենակալ Ասըմ բեյը հայերից հափշտակված ապրանքը տեղափոխել է Մեհմեդ Նուրիի բնակարանը։ Ինչ վերաբերում է Մեհմեդ Նուրի բեյի՝ բանտում փող վերցնելու հարցին, այն կարող է այլ տեսանկյունից ուշադրության արժանանալ։

Չնայած որ տվյալ ժամանակ կառավարությունը հրաման էր արձակել այն մասին, որ տեղահանված հայերին իրենց տանը պատսպարող մարդկանց մահվան պատիժ է սպառնում, այնուհանդերձ, Մեհմեդ Նուրի բեյը համարձակվել էր Հոլովենկ գյուղի բնակչության մի մասին թաքցնել իր չիֆթլիքում և փրկել մահից։ Այս հարցում բոլորովին չեզոք կողմ հանդիսացող ամերիկացի միստր Ռեքսը նույնպես հայտնեց, որ տեղահանության ընթացքում Մեհմեդ Նուրի բեյը բավականաչափ թվով հայերի կարողացել է ազատել՝ պատսպարելով իր ագարակում։ Դա հաստատվեց նաև մյուս վկաների ցուցմունքներով։

Կառավարության կողմից կազմակերպված համընդհանուր տեղահանության և կոտորածին մասնակցելու խնդրում ստույգ հանցանշաններ չլինելու պատճառով հանրակրթական տեսուչ Ֆերիդ բեյը ազատ է արձակվում։ Մեհմեդ Նուրի բեյը նույնպես անմեղ է ճանաչվում, նկատի ունենալով, որ նա առնչություն չի ունեցել Հոլովենկ գյուղի հայ բնակչության տեղահանության և կոտորածի խնդրում։ Նրա քենակալ Ասըմ բեյը, հայերի ունեցվածքը տեղափոխելու և Մեհմեդ Նուրի բեյի տանը պահելու ամբաստանությունից անմեղ է ճանաչվում։

Այսպիսով ռազմական ատյանի միաձայն որոշումը հրապարակվեց Մեհմեդ Նուրի բեյի և Ֆերիդ բեյի ներկայությամբ, իսկ Բեհաէդդին Շաքիր և Ռեսնելի Նազըմ բեյերի նկատմամբ՝ հեռակա կարգով։

13 կանունի սանի 1336 թ. (1920 թ. հունվարի 13) — Մուստաֆա Քերիմի, Իհսան

«Մենք միանալով այս դատավճռին, այն կարծիքին ենք, որ մեղադրյալ Ռեսնելի Նազըմ բեյը նույն աստիճանի հանցագործ է, ինչ Բեհաէդդին Շաքիր բեյը»։

Սուլեյման Շաքիր, Իսմայիլ Հաքքը, Էսադ։

Takvim-i Vekayi, 13 Ocak 1336 (1920) № 3771

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջաբան

1 *Թուրքական բուրժուակալվածատիրական, ազգայնական կուսակցություն։ Կազմավորվել է 1889-ին, Կ. Պոլսում։ 1908 թվականի հեղափոխությունից հետո անցավ իշխանության գլուխ։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո կուսակցությունը ենթարկվեց ինքնալուծարքի։*

2 *Եղեռնի վերաբերյալ վերջին շրջանում լույս են տեսել բազմաթիվ արժեքավոր աշխատություններ, որտեղ փաստացի նյութերի հիման վրա հերքվում են նաև ժամանակակից թուրք պատմաբանների հակագիտական դրույթները։ Տե՛ս* Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան, *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963։ Անգլերեն հրատ. տե՛ս* Vital issues in Modern Armenian History. Watertown, Mass., 1965. Ե. Ղ. Սարգսյան, *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, 1914—1918 թթ., Երևան, 1964։* *Р. Г. Саакян.* Геноцид армян в оценке передовой общественности, «Известия АН Арм.ССР», Общественные науки, 1965, № 4. Ա. Ն. Մնացականյան, *Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965։* Ջ. Ս. Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914—1916 թթ., Երևան, 1965, երկրորդ հրատ., 1971։ Տե՛ս նաև ռուսերեն թարգմանությունը, Երևան, 1971։* Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна, составители: М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Ереван, 1966, вт., доп. изд. Ереван, 1982. *Е. К. Саркисян,* Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972. С. С. Степанян, Армения в политике империалистической Германии конец XIX—начало XX века, Ереван, 1975. Ջ. Ս. Կիրակոսյան, *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Երևան, 1982, գիրք երկրորդ, Երևան, 1983։ Տե՛ս նաև ռուսերեն թարգմանությունը, Երևան, 1986։ Ռ. Գ. Սահակյան, Հայկական ցեղասպանության պատմությունը ֆրանսիական հրատարակություններում։ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտ.», 1988, № 4։ Հուշամատյան Մեծ Եղեռնի, Պէյրութ, 1965։ Հ. Գ. Ղազարյան, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968։ Լեոն Վարդան, Հայկական տասնհինգը և [illegible], Պէյրութ, 1970։ Գրիկէր, Եղեռնապատում [illegible] պատմութիւնը, Նիւ Եորք, 1980։* *U. Trumpener.* Germany and the Ottoman Empire 1914—1918, Princeton University Press, 1968; *D. H. Boyajian,* Armenia: The Case for a Forgottan Genocide, Westwood, New Jersey, 1972; *Sh. Toriguian,* The Armenian Question and International Law, Beirut, 1973;

Jean-Marie Carzou, Un génocide exemplaire. Arménie 1915. Paris: Flammarion, 1975; *Yves Ternon,* Les Arméniene. Histoire d'un génocide. Paris: Editions du Seuil, 1977. *Տես նաև գերմաներեն թարգմանությունը, 1981 (Գ.Հ.)։ Walker Cristopher*, Armenia, The Survival of a Nation, N. Y., 1980; *R. D. Kloian,* The Armenian Genocide-first 20-th century Holocaust, San Francisco 1980. Second edition 1981; Justicier du génocide arménien. Le procès de Tehlirian. Paris Editions Diasporas, 1981; *Yves Ternon*, La Cause Arménienne. Paris, 1983; *A. Beylérian*, Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les archives françaises (1914—1918), Recueil de documents, Paris, 1983; *Gérard Chaliand, Yves Ternon*, Les Génocide des Arméniens, Bruxelles, 1983; A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent Peoples Tribunal. London, 1985. *(Տե՛ս նաև ֆրանսերեն հրատ. Փարիզ, Ֆլամարիոն հրատ., 1984)։ Pascual C. Ohanian*, Turquia, estado genocida (1915—1923). Documentos, tomo 1, Buenos-Aires, 1986. The Armenian Genocide in Perspective, edited by *Richard O. Hovhannisian*. New Briunswick, New Jersey, 1986.

[3] *Mevlan Zade Rifat,* Türkiye inkilabının iç yüzü, 1-ci fasil, Halep, 1929, s. 119. *(արաբատառ)։*

[4] *Юрий Барсегов,* Геноцид армян-преступление против человечества. (*«Вестник общественных наук» АН Арм. ССР, Ереван 1987, № 4 с. 34. Հմմտ. ֆրանսերեն աղբյուրը,* Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens.... № 29, p. 23.

[5] *Osman Nuri,* Abdul Hamid Sani ve devri saltanatı, Istanbul, 1327, s. 838 *արաբատառ)։*

[6] *Նույն տեղում, էջ 582։*

[7] *«Փորձ», ազգային և գրական ամսագիր հանդես», № 7—8, Տիղիս, 1879, էջ 204—205։*

[8] *Osman Nuri, նշվ, աշխ., էջ 828, 858։*

[9] *Osman Nuri, նշվ, աշխ., էջ 866, Տե՛ս նաև Sadik Shahid bey,* Islam, Turkey and Armenia, and how they happened. Turkish Mysteries Unveiled, St. Louis, 1898, p. 207.

[10] *Celal Nuri,* Osmanlı Imparatorlugunun tarih-i tedennisi, Istanbul, 1331, s. 90 *(արաբատառ)։*

[11] Геноцид армян..., стр. 202.

[12] *Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, էջ 67—72։*

[13] *Ա. Ալպոյաճեան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Զոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 210։*

[14] *Aram Andonian,* The Memoirs of Naim bey, Watertown, AHRA, 1960 p. 33—34.

[15] *Mevlan Zade Rifat, նշվ. աշխ., էջ 108։*

[16] *Տե՛ս Ս. Մ. Հակոբյան, Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում և իմպերիալիստական Գերմանիայի պատասխանատվության հարցը («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 62)։*

17 Նույն տեղում, էջ 64։ Համմ. գերմաններեն աղբյուրը „Stenographische Bericht über die Verhandlungen des Deutschen Reichstages“. Բևռլին, հատ. 306, էջ 5122։

18 Memoirs of Halide Edip, New-York, London, p. 389.

19 *Mevlan Zade Rifat*, Նշվ. աշխ., էջ 145։

20 *Falih Rıfkı Atay*, Zeytindagı, Istanbul, 1957, s. 79.

21 Ա. Հ. Փափազյան, Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին (ՀՍՍՀ ԳԱ Գիտ. ինֆորմացիոն բյուլետեն, Երևան, 1983, № 2 (56), էջ 16—18)։

22 Զավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, վավերագրեր, Գահիրե, 1917, էջ 318։

23 *Morgenthau Henry*, Ambassador Morgenthau's Story. New York, 1918. Մեջբերվում է ըստ՝ Ամերիկյան դեսպան Մորգենթաուի յիշատակները և հայկական հարցին գաղտնիքները, կ. Պոլիս, 1919, էջ 258։

24 Լևոն Վարդան, Նշվ. աշխ., էջ 94—100։

25 Հ. Գ. Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 301։

26 Ջ. Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, էջ 174։

27 Տե՛ս ժողովածուի առաջին մասը։

28 *Ллойд Джордж*, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, стр. 200.

29 Որոշումը կայացրել է Ահմեդ Թևֆիկի կաբինետը (1918 թ. նոյեմբերի 11-ից-1919 թ. մարտի 4-ը)։

30 Այդ նյութերի կարևոր մասը հավաքել և հրատարակել է Գրիկէրը։ Տե՛ս «Ցուզատի հայասպանության վավերագրական պատմությունը, էջ 11—67։ Մամուլի նյութերը մանրամասն վերլուծված են Ջ. Կիրակոսյանի գրքում։ Տե՛ս Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 2։

31 Տե՛ս Գրիկէր, Նշվ. աշխ., էջ 309—310։

32 Տվյալ ժամանակ կաբինետը գլխավորում էր Դամադ Ֆերիդ փաշան (1919 թ. մարտի 4-ից հոկտեմբերի 1-ը)։

33 1919 թ. դատաքննություններն անցկացնող հանձնաժողովի անգամներն էին՝ Գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա (նախագահ), գեներալ-մայոր Ջևդի փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա փաշա, գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա, գնդապետ Ռեջեփ Ֆերդի բեյ։

34 Մեր ձեռքի տակ գտնվող նյութերում, 6-րդ նիստից հետո բացակայում են 114—116 էջերը։

35 Մեհմեդ Էսադ էֆենդին (1846—1919) շեյխ ուլ իսլամ է եղել 1913—1914 թթ., Մուստաֆա Հայրի էֆենդին (1867—1921)՝ 1914—1915 թթ., Մուսա Քյազիմ էֆենդին (1858—1919)՝ 1915—1917 թթ.։

36 «Թաքվիմ-ի վեքայի», 13 հունվար 1920 թ., № 3771, էջ 246։

37 «Թաքվիմ-ի վեքայի», 27 ապրիլ 1919 թ., № 3540, էջ 5։

38 Talât paşanın hatıraları, Istanbul, 1946, s. 72, 73.

39 Halide Edip, Նշվ. աշխ., էջ 387։

40 «Թաքվիմ-ի վեքայի», 12 մայիս 1919 թ., № 3554, էջ 85։

41 «Թաքվիմ-ի վեքայի», 12 մայիս 1919 թ., № 3554, էջ 88։

42 «Թաքվիմ-ի վեքայի», 4 հունիս 1919 թ., № 3573, էջ 148։

43 «Թաքվիմ-ի վեքայի», 5 հուլիս 1919 թ., № 3604, էջ 219։

44 1920 թ. կազմված ռազմական Առաջին արտակարգ ատյանի հանձնաժողովի անդամներն էին՝ գեներալ-մայոր Հայդար փաշա (նախագահ), գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի փաշա, գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա, գնդապետ Սուլեյման Նաջիբ բեյ։

45 Գավառներին վերաբերող դատաքննությունների արձանագրությունները կանոնավոր լույս չեն տեսել թուրքական մամուլում։ «Թաքվիմ-ի վեքայի»-ում ամբողջապես լույս են տեսել միայն դատավճիռները։

46 «Թաքվիմ-ի վեքայի», 22 մայիս 1919 թ., № 3616, էջ 50։

47 Վերոհիշյալ բոլոր մեղադրյալների անունները քաղել ենք դատավարությունների արձանագրությունների սկզբում բերված նյութերից։ Իրականում հանցագործների թիվը բազմաթիվ է։ Ընթերցողը այն կնկատի մեղադրական եզրակացությունների, որոշումների և այլ փաստագրական նյութերի մեջ։

48 Տե՛ս Documents relatifs aux atrocités Commises par Arméniens sur population musulmane. Publication du Congrès National. Constantinople. 1919.

49 «Թաքվիմ-ի վեքայի», 25 հունիս 1919 թ., № 3594, էջ 189։

50 Армянский вопрос на страницах турецкой прессы (1982—1983), Научно-информационный бюллетень АН Арм. ССР, Ереван, 1984, № 5, с. 48—49.

51 «Takvim-i Vekayi»—«Լրաբեր» (բառացի «Իրադարձությունների օրացույց»)—1831 թ. սկսած Օսմանյան կայսրությունում առաջին թուրքերեն լեզվով հրատարակվող թերթը։

52 *Jean-Marie Carzou*, Un Génocide Exemplaire, p. 233—246.

53 Геноцид армян..., второе, дополненное изд., Ереван, 1982, стр. 557—575.

54 Գրիկէր, նշվ. աշխ., էջ 297—304։

55 Հ. Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ։

56 Տե՛ս Գրիկէր, նշվ. աշխ., էջ 83։

Մաս առաջին

1 «Թաքվիմ-ի վեքայի», 27 ապրիլ 1919 թ., № 3540։ Թերթի ծանոթագրության մեջ նշված է, որ հարցաքննությունը արձանագրվել է նույնությամբ և ոճական որոշ ձևակերպումներից բացի ոչ մի ուղղում չի կատարվել։

2 Այստեղ և հետագայում քառակուսի փակագծերի մեջ տրված են մեր ծանոթագրությունները։

3 Թաղամաս Կ. Պոլսում։

4 Գտնվում է Փոքր Ասիայի հարավարևմտյան մասում։

5 Թաղամաս Կ. Պոլսում։

6 Թաղամաս Կ. Պոլսում։

7 Քաղաք Դարդանելի նեղուցի արևելյան ափին։

8 Թաղամաս Կ. Պոլսում։

9 Թաղամաս Կ. Պոլսում։

10 Թաղամաս Կ. Պոլսում։

11 Նկատի ունի «Տրապիզոնի տեղահանության և կոտորածին» վերաբերող դատաքննությունը։

12 Թազամաս Կ. Պոլսում։

13 Գյուղաքաղաք Միջերկրական ծովի ափին, Մերսին քաղաքի մոտակայքում։

14 Թազամաս Կ. Պոլսում։

15 Թազամաս Կ. Պոլսում։

16 Թազամաս Կ. Պոլսում։

17 Թազամաս Կ. Պոլսում։

18 Նկատի ունի այն քուրք պաշտոնյաներին, որոնք հրաժարվում էին իրագործել կուսակցության գնկավարների նենգ ծրագրերը։

19 Այստեղ և հետագայում խոսքը ռազմական Արտակարգ ատյանի որոմագրության տակ գտնվող մեղադրական փաստաթղթերի մասին է։ Այդ փաստաթղթերը ամփոփված են եղել 293 թղթապանակներում։ Տե՛ս Գրիկէր, նշվ. աշխ., էջ 33։

20 Խոսքը վերաբերում է հայերի ինքնապաշտպանական կռիվներին։

21 «Tasvir-i efkar» (Գազափարների տեսություն)։ Լույս է տեսել Կ. Պոլսում 1861 թվականից։

22 Նկատի ունի Դերսիմի քրդերին։

23 Փաստերը ցույց են տալիս, որ դեռևս 1915 թ. հուլիսի 12-ին Վանգենհայմը Բարձրագույն Դռանը հղել է մի հուշագիր, որտեղ կտրականապես պահանջել է միջոցներ ձեռք առնել Դիարբեքիրի վալի դոկտ. Ռեշիդ բեյի դեմ, որպեսզի նրա գաժան քաղաքականությունը չհանգեցնի այդ շրջանի քրիստոնյաների գլխովին ոչնչացմանը։ (Ռ. Գ. Սահակյան, Նոր փաստաթղթեր 1915 թ. եղեռնում կայսերական Գերմանիայի դերի մասին. «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1970, № 2, էջ 139)։

24 Ջնելու բերդը դեմ է եղել Կոնիայի հայերի տեղահանությանը։

25 Տվյալ ժամանակ մայորի աստիճանով կատարում էր «Հատուկ կազմակերպության» հրահանգչի պարտականությունը։

26 Այսինքն՝ «Միության և առաջադիմության» կուսակցության և «Հատուկ կազմակերպության» միջև։

27 Հոդվածների բովանդակությունը տրված է դատավճիռներում։

28 Մեղադրական եզրակացության ռուսերեն թարգմանությունը տե՛ս «Геноцид армян в Османской империи...», с. 557—568.

29 Իրականում մահմեդականությունը մշտապես քարոզել է սեւական սրբազան պատերազմ (ջիհատ) մղել անհավատների, այսինքն՝ ոչ մահմեդական դավանանքին հարանների դեմ, նվաճել նրանց երկիրը և ստրկացնել նրա ժողովրդին։

30 Դատախազը բացահայտ սրգարանալու փորձեր է կատարել։ Դրանք եղել են ոչ թե սովորական բախումներ, այլ կառավարության կողմից կազմակերպված ջարդեր։ Հատկապես 19-րդ դարում զանգվածային կոտորածի ենթարկվեցին սերբերը (1813 թ.), հույները (1826 թ.), բուլղարները (1876 թ.), հայերը (1894—1896 թթ.) և Օսմանյան կայսրության տակ գտնվող այլ հպատակներ։

31 Հավանաբար նկատի ունի ինքնապաշտպանական կռիվներին մասնակցած հայերին։

32 Սուլթան Մեհմեդ Վահիդեդդին VI (1918—1922)։

33 Նկատի ունի ռազմական արտակարգ ատյանը։

34 Իրենց կալվածներում նույն միտքն են արտահայտել նաև մյուս դատապաշտպանները՝ Մադեդդին Ներիմ բեյը, Մահմուդ Մահիր էֆենդին, Ջեմալ Մոնլու բեյը։

35 «Թաքվիմ-ի վեքայիե», 4 մայիս 1919 թ., № 3543։ Այս դատավարության սկզբում, պաշտոնավարության հարցի վերաբերյալ դատարանը հավատարկիններով օրոշում է կայացնում մեղադրյալների դատաքննությունը լսել ռազմական արտակարգ ատյանում։ Այնուհետև սկսվում է մեղադրյալների հարցաքննությունը։ Առաջին հերթին հարցաքննության են ենթարկվում Միդհատ Շյուքրի բեյը, Զիա Գյոքալփը, Ջյաւըդ Թալաաթը, իսկ այնուհետև դահլիճ են բերում Ջևդաթ բեյին։ Վերոհիշյալների հարցաքննության ընթացքում նախագահ Նազըմ փաշան ուշադրությունը կենտրոնացնում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներքին կարգապահական հարցերին, համագումարների գումարմանը, ընդունված որոշումների գործադրմանը, շրջանային մասնաճյուղերի գործունեությանը և այլն։

36 Այսինքն՝ կուսակցության կողմից հավաքված փոխառությունների հաշվին։

37 Նախագահի հարցը ընթեռնելի չէ։

38 Խոսքը վերաբերում է Բեհաէդդին Շաքիրին, դոկտ. Նազըմին։ Տե՛ս «Տրապիզոնի տեղահանության և կոտորածի դատավարությունը»։

39 Էնվեր փաշայի հորեղբայրը։ 1916—18 թթ. 6-րդ բանակի հրամանատարն էր, իսկ 1918 թ.՝ «Արևելյան զորքերի» հրամանատարը։

40 Նկատի ունի «Հատուկ կազմակերպությունը»։

41 Մի շարք վկաներ, վախենալով հետագա պատասխանատվությունից, պահանջել են օրինականացնել կալանավորներին բանտից ազատ արձակելու հարցը։

42 Պարզաբանենք, որ 2-րդ և 3-րդ կետերում խոսքը վերաբերում է արևմտահայության կոտորածն իրականացնող «Հատուկ կազմակերպությանը», որն իր ջարդարարական գործունեությունը ծավալեց 1915—1916 թթ.։ Այս հարցը մանրակրկիտ հետաքննության ենթարկվեց դատավարության 5-րդ և 6-րդ նիստերում։

43 Մեկ փողանի հրացան։

44 Նկատի ունի Լիբիական Տրիպոլին (Trablusgarb)։

45 Այստեղ, պատճենավորված օրինակում կան անընթեռնելի բառեր։

46 «Թաքվիմ-ի վեքայիե», 6 մայիս 1919 թ., № 3547։

47 Այստեղ առևտրին և զանազան ընկերություններին վերաբերող հարցաքննության նյութերը դանց են առնված։

48 Հարկ է նշել, որ 1916 թվականի սեպտեմբերի 28-ին «Միություն և առաջադիմություն» կուսակցության համագումարում քննարկվել էին հայերի հանդեպ գործադրված բռնությունները և որոշվել էր ստեղծել հանձնաժողովներ ուղարկելու իրականում այդ նախաձեռնությունը ձևական բնույթ էր կրում, քանի որ գործնականում ոչ մի միջոց չձեռնարկվեց կոտորածներին վերջ տալու հարցում։ (Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 2, էջ 159)։ Ընդհակառակը, համաշխարհային հասարակայնությունը երբ իրազեկ դարձավ հայ ժողովրդի հանդեպ գործադրված վայրագությունների, թուրքական կառավարությունը, որպեսզի արդարացնի իր չարանենգ գործունեությունը, հրապարակեց «Հայ կոմիտեների հեղափոխական շարժումներն ու ծրագրերը» գիրքը, որն զրպարտանք ու կեղծիք էր արևմտահայության հասցեին։ Տե՛ս Ermeni komitelerinin amal ve harekat-ı ihtilalyası, Istanbul, 1331 (արաբատառ)։ Ֆրանսերեն թարգ., Aspirations et agissements révolutionnaires des comités Arméniens. Constantinople, 1917.

49 «Թասվիր-ի էֆքյար», 8 մայիսի 1919 թ., № 3549։

50 Զորբաջը դատավարության ընթացքում հարցաքննության են ենթարկվել նաև Միդհատ Շյուքրի, Ռիզա, Աթիֆ, Քյուչյուկ Թալաաթ և Ջևադ բեյերը։ Նախագահը հիմնականում կանգ է առել առևտրական կազմակերպությունների հետ կենտրոնական կոմիտեի ունեցած կապի, կուսակցության դրամագլխի, կատարված ծախսումների և այլ հարցերի վրա։

51 Այս հարցերը նույնությամբ տրվել են նաև մյուս մեղադրյալներին։ Նրանք ևս ուրանալով ձևացնում են, թե իբր անտեղյակ են։

52 «Թասվիր-ի էֆքյար», 12 մայիսի 1919 թ., № 3554։

53 Հավանական է, որ գալաթացի Խալիլը պատժվել է տեղահանության և կոտորածի խնդրում կուսակցության կենտրոնական կոմիտեի հրահանգը չկատարելու համար։ Դատաքննության ընթացքում բերված փաստերը ցույց են տալիս, որ այդ գումարը հատկացվել է այն ընտանիքներին, որոնց ամուսինները հավաքագրված են եղել «Հատուկ կազմակերպության» մեջ։

54 Նկատի ունի ներքին գործերի մինիստրությունը։

55 Հավանաբար նկատի ունի 15-րդ հետևակային դիվիզիայի շտաբի հրամանատար, գնդապետ Բերբուք Իսմայիլ Հաքքը բեյին։

56 Նշված շրջանը տվյալ ժամանակ գտնվում էր Ռուսաստանի տիրապետության տակ։

57 Միդհատ Շյուքրի բեյի խոսքերը չի կարելի անկեղծ համարել, քանի որ հայերի տեղահանությունն ու կոտորածը որոշվեց անմիջապես պատերազմի սկզբում։

58 Իրականում Թուրքիան առաջինը ռազմական գործողություններ սկսեց Ռուսաստանի դեմ։ Էնվեր փաշայի հրամանով Սև ծովում գնդակոծվեցին Սևաստոպոլ, Թեոդոսիա և Նովոռոսիյսկ քաղաքները։

59 «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերից յուրաքանչյուրը բաղկացած է եղել 50 հոգուց։

60 Տարժիշով նավ։

61 Ահմեդ Ռիզա բեյ (1859—1930) — Երիտթուրքական շարժման հայտնի գործիչներից մեկը։ 1889 թվականից մինչև Աբդուլ Համիդի տապալումը ապրել և գործել է Փարիզում։ 1895 թ. սկսել է թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակել «Մեշվերեթ» («Խորհուրդ») և «Շուրա-ի ումմետ» («Ազգային ժողով») թերթերը։

62 Այստեղ Միդհատ Շյուքրի բեյը աշխատել է խուսանավել։ Փաստերը վկայում են, որ այդ գումարի մի մասը հատկացվել է «Հատուկ կազմակերպության» միջոցառումներին և հավաքագրված չեթեների ընտանիքներին։

63 Զիա Գյոքալփը բացահայտ ստել է։ «Ենի մեջմուան» հիմնված է եղել իր կողմից 1909 թ. Կ. Պոլսում։ Մալթայի աքսորավայրից վերադառնալուց հետո (1922 թ.), նա Դիարբեքիրում սկսել է հրատարակել «Քյուչուկ մեջմուա» («Փոքր հանդես») հանդեսը։ Տե՛ս I. A. Gövsa, Türk meşhurları ansiklopedisi. Ankara, 1946, s. 152.

64 Մոլի ազգայնական գաղափարախոսություն, որի նպատակն էր միավորել թուրքալեզու բոլոր ժողովուրդներին Թուրքիայի գլխավորությամբ մեկ պետության մեջ։ Պանթուրքիզմը Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության բռնի թրքացման խնդրում երիտթուրքերի կուսակցության գլխավոր զենքերից մեկն էր։ Պանթուրքիզմի գաղափարախոսությունը աշխուժացավ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանից հողային տարածքներ նվաճելու ձգտումով։ Այնպես որ, ար-

պաշտպանելու միտումով բերված Զիա Գյոքալփի մեկնաբանությունները կեղծ են։ Մանրամասն տե՛ս Ն. Ղ. Սարգսյան, Պանիսլամիզմի և պանթուրքիզմի դոկտրինները երիտթուրքերի ներքին քաղաքականության մեջ (Արևելագիտության հարցեր, պրակ. 1—2, Երևան, 1983, էջ 5—19)։

65 «Օսմանիզմի» հետադիմական տեսությունը ծնունդ է առել XIX դարի վերջին՝ Թուրքիայի այլազգի բոլոր ժողովուրդներին բռնի թուրքացնելու նպատակով։ 1908 թ. հեղափոխությունից հետո «Օսմանիզմը» դարձավ երիտթուրքերի պաշտոնական գաղափարախոսությունը. այն է՝ միաձուլել Թուրքիայի ոչ մահմեդական ժողովուրդներին մեկ «Օսմանյան» ազգության մեջ։ Իրականում այն ժխտում էր ոչ թուրք ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքը։ (Մանրամասն տե՛ս Р. А. Сафрастян, Доктрина османизма в политической жизни Османской империи, Ереван, 1985.

66 Բառը ջնջված է։ Հավանաբար նկատի ունի Չեչենիան։

67 Մեկը հայությունը կոտորելու, մյուսը՝ Չեչենիայում ժողովրդին դրդելու։

68 Նախագահը հարցեր է տալիս նաև էնաֆի, ամերիկյան ընկերությունների հետ կապակցությամբ ունեցած հարաբերության, կուսակցության փաստաթղթերի անհետացման վերաբերյալ։

69 Կրկին կարդացվում են վերահիշյալ հեռագրերը։ Հարցաքննության ընթացքում նախագահը կանգ է առնում կենտրոնական կոմիտեի և «Հատուկ կազմակերպության» միջև գոյություն ունեցող կապի վրա։ Ռիզա բեյը ևս մյուսների նման խուսափում է ճշգրիտ պատասխաններ տալուց։ Տվյալ հարցաքննությունից բերել ենք առավել ուշադրության արժանի հատվածը։

70 «Թագվիմ-ի վեքայի», 14 մայիս 1919 թ., № 3557։

71 Միդհատ Շյուքրի բեյը և մյուսները բացահայտորեն ստում են։ Տեղահանության և կոտորածի հրամանները չկատարելու համար պաշտոնից հեռացվել են նաև Բաղդադի նախկին մութասարրիֆ Ջեմալ բեյը, Կոնիայի և այնուհետև Հալեպի վալի Ջելալ բեյը, Քյութահիայի մութասարրիֆ Ֆայիք Ալի բեյը, Բասրայի մութասարրիֆի տեղակալ Ալի Իլմի բեյը և ուրիշներ։

72 Հյուսեյն Հիլմի փաշա (1855—1921)—Օսմանյան կայսրության վերջին մեծ վեզիրներից մեկը։ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում եղել է Թուրքիայի դեսպանը Վիեննայում։

73 1918 թվականի վերջերին անգլիական, իսկ այնուհետև ֆրանսիական զորքերը գրավեցին Կիլիկիան։

74 Նախկին հասարակական անվտանգության մինիստր, «Հատուկ կազմակերպության» անդամ, որը հետագա կարգով դատի էր տրված ռազմական արտակարգ ատյանի կողմից։

75 Նկատի ունի գերմանական «Գյոբեն» և «Բրեսլաու» հածանավերը, որոնք իբրև թե վաճառվելով Թուրքիային, վերանվանվեցին «Յավուզ Սելիմ» և «Միդիլլի»։ 1914 թվականի հոկտեմբերի 29-ին այս հածանավերը իրենց գերմանական անձնակազմով մուտք գործեցին Սև ծով։ Տե՛ս նաև ծանոթ. № 58։

76 Նկատի ունի «Միության և առաջադիմության» կուսակցության ակումբները։

77 Միդհատ Շյուքրի բեյը խուսափում է ստույգ պատասխանից։ Հավանական է, որ խոսքը վերաբերում է էնվերին։

78 Նկատի ունի «Միության և առաջադիմության» կուսակցության կենտրոնական կոմիտեն։

79 Այս և հաջորդ փաստաթղթերից պարզ երևում է, թե ինչպես առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին երիտթուրքերը պանթուրքիստական մեծապետական իրենց ծրագրերը իրագործելու համար Ռուսաստանի սահմանակողմերում բնակեցված շրջաններն էին ուղարկում մեծ թվով գործակալներ ու լրտեսներ։ Այդ նպատակներով ստեղծված «Հատուկ կազմակերպության» գործակալների ցանցային գործունեության հիմնական օջախներից մեկը անշուշտ Անդրկովկասն էր։ Նրանց հիմնական պարտականությունն էր թուրքական զինվոր շտաբի համար տեղեկություններ հավաքել, իսկ Ռուսաստանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում սահմանային ազգաբնակչությանը նախապատրաստել ապստամբության։ Մանրամասն տե՛ս Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, էջ 101—127։

80 Հայերին անդամահատելու և կոտորելու համար ներքին գործերի մինիստրությունը հավաքագրել է բանտերում գտնվող մարդասպաններին և այլ քրեական հանցագործներին։

81 Հավանաբար նկատի ունի Բրուսայի վիլայեթի վալիին։

82 Նկատի ունի ներքին գործերի մինիստրությունը։

83 Հավանաբար այստեղ վրիպակ է թույլ տրված, քանի որ հարցաքննությունը ընդհատվում է։ Բոլոր դեպքերում, Միդհատ Շյուքրի բեյը իզուր է փորձել արդարանալ որևէ մեկի նկատմամբ հղում չլինելու պատրվակով։ Իրականում «Հատուկ կազմակերպության» հանձնախումբը բաղկացած էր կենտրոնական կոմիտեի անդամներից։

84 Նկատի ունի Անկարայի պատգամավոր Աթիֆ բեյին։

85 Հարցաքննության ընթացքում այս հարցերը տրվում են նաև Ռիզա, Քյուչուկ Թալաաթ և Ջևադ բեյերին, որոնք տալիս են համապատասխան պատասխաններ՝ իրենց անտեղյակության մասին։

86 «Թաքվիմ-ի վեքայի», 3 հունիս 1919 թ., № 3571։

87 Յոթանասունյոթ մեղադրյալների Մալթա կղզի աքսորելու կապակցությամբ առաջին փուլի դատաքննությունները ընդհատվում են։ 1919 թվականի հունիսի 3-ից սկսվում է մյուս մեղադրյալների նկատմամբ երկրորդ փուլի դատաքննությունը։

88 Հաջորդ դատական նիստերի խորագրերում նշվում է նաև հեռակա կարգով դատի տրված մյուս մեղադրյալների անունները։

89 Թաղամաս Կ. Պոլսում։

90 Թաղամաս Կ. Պոլսում։

91 Մեղադրյալների մի մասին Կ. Պոլսի կալանատնից Մալթա կղզի տեղափոխելու փաստը ցույց է տալիս, որ դաշնակիցները տատանողական դիրք են ունեցել հանցագործներին դատարանով պատժելու հարցում։ Ֆրեզնոյում հրատարակվող «Մշակ» թերթը շատ տեղին գնահատական է տվել անգլիացիների այդ երկերեսանի արարքին. «Մալթայի մեջ այդ աքսորականները կերան, խմեցին, հղփացան և մեկ-մեկ գործիչներ դարձան Անգլիայի ձեռքին՝ նոր քաղաքական և տնտեսական շահերը ապահովելու համար Թուրքիո մեջ։ Մալթան արդարության օջախը չհանդիսացավ։ Մալթան ամոթի և նախատինքի համազոր թատերաբեմը եղավ միայն» (Մեջբերումն արված է Ջ. Կիրակոսյանի գրքից։ Տե՛ս «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», հ. 2, էջ 368)։

92 Սայիդ Հալիմ փաշան Մալթայի աքսորավայրից ազատ արձակվելուց հետո, 1921 թվականին Հռոմում սպանվեց ժողովրդական վրիժառու Արշավիր Շիրակյանի կողմից։

93 1917 թվականի փետրվարի 5-ին, երբ Թալաաթը նշանակվեց մեծ վեզիրի պաշտոնում, Ջանփոլատը հաջորդեց նրան։

94 Մեղադրական եզրակացության սկզբում խոսվում է կուսակցության օրինազանցությունների և չարաշահումների մասին։

95 Տե՛ս հեռագիրը, էջ 73։

